Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1565

Ն. ԼԵՆԻՆ

# „ՁԱԽՈՒԹՅԱՆ" ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՄԵՋ

Библиотека Института ... Академии Наук ... ССР

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1926

3К23
Ձ-18

Ea 1381
3К23
Д-18
14 NOV 2009
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

Ն. ԼԵՆԻՆ

# „ՁԱԽՈՒԹՅԱՆ" ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՄԵՋ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1926

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽ-Арм. ССР
им. А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
59266-66

№ 436 Գլավլիտ № 808 (ն) Տիրաժ 5000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

# I.

## Ի՞ՆՉ ՄՏՔՈՎ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԽՈՍԵԼ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ·

*Յերբ Ռուսաստանում պրոլետարիատը քաղաքական իշխանությունը նվաճեց* (25/X=7/XI 1917 *թ.*), *առաջին ամիսներին կարող եր թվալ, թե հետամնաց Ռուսաստանի և արևմտա-յեվրոպական առաջացած յերկրների ահագին տարբերության հետևանքով պրոլետարիատի հեղափոխությունը վերջին յերկրներում շատ քիչ նման պիտի լինի մեր հեղափոխության: Այժմ մենք բավականաչափ միջազգային փորձ ունենք, որ կատարյալ ստուգությամբ ասում է մեզ, թե մեր հեղափոխության միքանի հիմնական գծերն ունեն վո՛չ թե տեղական, վո՛չ թե ազգային-ինքնահատուկ, վո՛չ թե ռուսական, այլ միջազգային նշանակություն: Յեվ յես խոսում եմ այստեղ միջազգային նշանակության մասին՝ բառիս վոչ լայն իմաստով. մեր հեղափոխության վոչ թե միքանի, այլ բոլոր հիմնական և շատ ուրիշ յերկրորդական գծերը միջազգային նշանակություն ունեն, նրա բոլոր յերկրների վրա ունենալիք ներազդեցության իմաստով: Վոչ, բառիս ամենանեղ իմաստով, այսինքն՝ միջազգային նշանակություն խոսքը հասկանալով միջազգային արժեք կամ պատմական անխուսափելիություն, վորի համաձայն միջազգային չափով պիտի կատարվի այն, ինչ վոր կատարվել է մեզանում: Պետք է ընդունել, վոր այդպիսի նշանակություն ունեն մեր հեղափոխության միքանի հիմնական գծերը:*

*Անշուշտ, ամենամեծ սխալ կլիներ չափազանցել այդ ճշմարտությունը, տարածել այն մեր հեղափոխության միքանի հիմնական գծերից այն կողմ: Նույնպես սխալ կլիներ աչքաթող անել այն, վոր թեկուզ մի առաջավոր յերկրի պրոլետարական հեղափոխությունից հետո, ամենայն հավանականությամբ, առաջ կգա կտրուկ թեքում, այսինքն՝ Ռուսաստանը անմիջապես նրանից հետո կլինի վո՛չ թե օրինակելի, այլ դարձյալ հետամնաց մի յերկիր («խորհրդային» և սոցիալիստական իմաստով):*

Բայց ներկա պատմական մոմենտին խնդիրը հենց այնպես է դրված, որ ռուսական օրինակը մյուս բոլոր յերկրներին մի ինչ-վոր բան է ցույց տալիս և այն շատ էական բան՝ նրանց անխուսափելի և վոչ շատ հեռու ապագայից: Բոլոր յերկրների առաջադեմ բանվորները վաղուց են հասկացել այս, իսկ շատ հաճախ վոչ այնքան հասկացել են, վորքան հեղափոխական դասակարգի բնազդով գլխի յեն ընկել, հոտն առել են: Այստեղից է առաջանում խորհրդային իշխանության (բառիս նեղ իմաստով), ինչպես և բոլշևիկյան թեորիայի ու տակտիկայի հիմունքների միջազգային նշանակությունը: Այս բանը չեն հասկացել II Ինտերնացիոնալի «հեղափոխական» ղեկավարները, ինչպես Կաուցկին[1] Գերմանիայում, Օտտո Բաուեր[2] և Ֆրիդրիխ Ադլեր[3] Ավստրիայում, վորոնք այդ պատճառով իսկ յերևան յեկան վորպես հետադիմականներ, ամենավատ օպպորտյունիզմի և սոցիալ-դավաճանության պաշտպաններ: Իմիջիայլոց Համաշխարհային «Հեղափոխություն» («Weltrevolution») խորագրով անհայտ հեղինակի բրոշյուրը, վոր լույս տեսավ 1919 թվին Վիեննայում (Sozialistische Bücherei, Heft 11, Ignaz Brand), չափազանց ակներև կերպով ցույց է տալիս մտքի ամբողջ ընթացքն ու մտքի ամբողջ շրջանը, կամ ավելի ճիշտ, ամբողջ խորքը անմտության, պեդանտության, ստորության և բանվոր դասակարգի շահերի հանդեպ հանդես բերած դավաճանության—և այդ բոլորը «համաշխարհային հեղափոխության» գաղափարի «պաշտպանության» դիմակի տակ:

Բայց ավելի մանրամասն առիթ կունենանք կանգ առնելու այդ բրոշյուրի վրա մի ուրիշ անգամ: Այստեղ նկատենք մի կետ ևս. շատ հին, հին ժամանակներում, յերբ Կաուցկին դեռ մարքսիստ եր և վոչ ռենեգատ՝ հարցին մոտենալով վորպես պատմագետ, նա նախատեսել եր հավանականությունը այնպիսի մի դրության առաջացման, յերբ ռուս պրոլետարիատի հեղափոխականությունը օրինակ կդառնար Արևմտյան Յեվրոպայի համար: 1902 թվին եր այդ, յերբ Կաուցկին հեղափոխական «Искра»-ի մեջ[4] գրեց «Սլավոնները և հեղափոխությունը» խորագրով հոդվածը: Ահա թե ինչ եր գրում նա այդ հոդվածում.—

«Ներկա ժամանակում (հակառակ 1848 թվին) կարելի յե կարծել, վոր սլավոնները վոչ միայն մտել են հեղափոխական ժողովուրդների շարքը, այլ և այն, վոր հեղափոխական մտքի և հեղափոխական գործի ծանրության կենտրոնը ավելի և ավելի յե շարժվում դեպի սլավոնները: Հեղափոխական կենտրոնը Արևմուտքից շարժվում է դեպի Արևելք: Տասնիններորդ դարի առաջին կիսում նա գտնվում եր Ֆրանսիայում, ժամանակ առ ժամանակ Անգլիայում: 1848 թվին Գերմանիան մտավ հեղափոխական ազգերի շարքը... Նոր հարյուրամյակն սկսվում է այնպիսի անցքերով, վոր մտածել է տալիս, թե մենք կանգնած ենք հեղափոխական կենտրոնի հետագա շարժման հանդեպ,



այսինքն նրա տեղափոխության դեպի Ռուսաստան: Ռուսաստանը, վոր այնքան հեղափոխական նախաձեռնություն է ընդունել Արևմուտքից՝ այժմ, յերևի.թե—ինքն է պատրաստ Արևմուտքի համար հեղափոխական յեռանդի աղբյուր լինելու: Ավելի ու ավելի բորբոքվող Ռուսաստանի հեղափոխական շարժումը, կարող է պատահել, վոր դառնա ամենաուժեղ միջոցը՝ դուրս նետելու համար խարխլած ֆիլիստերության և խոհեմ պոլիտիկանության այն վոգին, վոր սկսում է տարածվել մեր շարքերում, և նորից բռնկել տալու լուսավոր բոցով կռվի ծարավը և ջերմ անձնվիրությունը մեր մեծ իդեալներին: Ռուսաստանը վաղուց արդեն դադարել է Արևմտյան Յեվրոպայի համար ռեակցիայի և աբսոլյուտիզմի սոսկ հենարան լինելուց: Հիմա կարելի յե մինչև իսկ հակառակն ասել: Արևմտյան Յեվրոպան դառնում է Ռուսաստանի ռեակցիայի և աբսոլյուտիզմի հենարանը... ցարի հետ ռուս հեղափոխականները վաղուց արդեն իրենց հաշիվները վերջացրած կլինեյին, յեթե նրանք միաժամանակ հարկադրված չլինեյին կռիվ մղելու և նրա դաշնակցի—յեվրոպական կապիտալի դեմ: Հուսանք, վոր այս անգամ նրանք կհաջողեն յերկու թշնամիների հետ ևս իրենց գործը վերջացնել և վոր նոր «սրբազան դաշնակցությունը» ավելի շուտ կխորտակվի, քան խորտակվեցին նրա նախորդները: Բայց, ինչպես էլ վերջանա այժմյան կռիվը Ռուսաստանում, արյունն ու բախտը այն նահատակների, վոր նա կծնի դժբախտաբար ավելի քան հարկավոր է—զուր չեն կորչի: Նրանք կբեղմնավորեն սոցիալական հեղաշրջման բողբոջներն ամբողջ քաղաքակիրթ աշխարհում և նրանց աճումը կդարձնեն ավելի արագ ու ավելի փարթամ: 1848 թվին սլավոնները ճաքճքացող սառնամանիք եյին, վոր ցրտահար արին յեվրոպական գարնան ծաղիկները: Թերևս այժմ նրանց վիճակված է լինել այն մրրիկը, վոր պիտի խորտակի ռեակցիայի սառույցը և անդիմադրելի կերպով իր հետ պիտի բերի նոր, բախտավոր գարուն ժողովուրդների համար: (Կարլ Կաուցկի. «Սլավոնները և հեղափոխությունը». հոդված ռուս սոցիալ-դեմոկրատական հեղափոխական լրագիր «Искра»-ում, №. 18. 1902 թ. 10 մարտի):

Լա՛վ եր գրում Կարլ Կաուցկին 18 տարի սրանից առաջ:

## II.

## ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ.

Հավանորեն, այժմ արդեն ամեն մեկը տեսնում է, վոր բոլշևիկներն իշխանության գլուխ չեյին մնա վոչ միայն յերկուսուկես տարի, այլև յերկուսուկես ամիս, յեթե չլիներ մեր կուսակցության խստագույն, իսկապես յերկաթե դիսցիպլինը, յեթե բանվոր դասակարգը կա-

տարյալ և անձնվեր պաշտպանություն ցույց չտար մեզ իր ամբողջ զանգվածով, այսինքն այն բոլորով, ինչ վոր կա նրա մեջ խորհող, ազնիվ, անձնազոհ, ազդեցիկ, ընդունակ տանելու իր հետ և կամ գրավելու հետամնաց շերտերը։

Պրոլետարիատի դիկտատուրան նոր դասակարգի ամենաանձնվեր և ամենաանխնա պատերազմն է ընդդեմ ավելի հզոր թշնամու, ընդդեմ բուրժուազիայի, վորի դիմադրությունը տասնապատկված է նրա խորտակման փաստով (թեկուզ և մի յերկրի մեջ), և վորի հզորությունը թաքնված է վոչ միայն միջազգային կապիտալի ուժի, բուրժուազիայի միջազգային կապերի ամրության և ուժի մեջ, այլև սովորության ուժի, մանր արտադրության ուժի մեջ։ Քանի վոր՝ մանր արտադրությունը մնացել է դեռևս աշխարհում դժբախտաբար շատ և շատ մեծ չափով, իսկ մանր արտադրությունը ծնում է կապիտալիզմ և բուրժուազիա անդադար կերպով, ամեն օր, ամեն ժամ, տարերայնորեն և մասսայական չափերով։ Բոլոր այդ պատճառներով՝ պրոլետարիատի դիկտատուրան անհրաժեշտ է, և հաղթանակը բուրժուազիայի վրա անկարելի յե առանց յերկար, համառ, կատաղի պատերազմի, պատերազմ, վոր մըղվում է վոչ թե կյանքի, այլ մահվան գնով, վոր պահանջում է դիմացկունություն, դիսցիպլին, կայունություն, անսասանություն և կամքի կենտրոնացում։

Կրկնում եմ, պրոլետարիատի հաղթական դիկտատուրայի փորձը Ռուսաստանում ակներև կերպով ցույց տվեց բոլորին, վորոնք չեն կարողանում մտածել և կամ նրանց, վոր առիթ չեն ունեցել մտածելու տվյալ խնդրի մասին՝ թե անպայման կենտրոնացումը և պրոլետարիատի խստագույն դիսցիպլինը ներկայանում են բուրժուազիայի վրա տանելիք հաղթանակի հիմնական պայմաններից մեկը։

Այս բանի վրա հաճախ կանգ են առնում։ Բայց շատ քիչ են մտածում այն մասին, թե ինչ է նշանակում այդ և թե ինչ պայմանների մեջ է հնարավոր։ Խորհրդային իշխանության և բոլշևիկների հասցեյին ուղղած վողջույնի կոչերին պետք չէ արդյոք հաճախ միացնել ամենալուրջ անալիզը այն բանի, թե ինչո՛ւ բոլշևիկները կարողացան մշակել հեղափոխական պրոլետարիատի համար անհրաժեշտ դիսցիպլին։

Բոլշևիզմը գոյություն ունի վորպես քաղաքական մտքի հոսանք և վորպես քաղաքական կուսակցություն 1903 թվականից։ Միայն բոլշևիզմի պատմությունը նրա գոյության ամբողջ շրջանի ընթացքում՝ կարող է բավարար չափով բացատրել, թե ինչու նա կարողացավ մշակել և պահել ամենադժվարին պայմանների մեջ այն յերկաթե դիսցիպլինը, վոր անհրաժեշտ է պրոլետարիատի հաղթանակի համար։

Յեվ, նախ և առաջ, մի հարց է ծագում—ինչո՞վ է պահվում պրոլետարիատի հեղափոխական կուսակցության դիսցիպլինը, ինչով է նա ստուգվում, ինչո՞վ է նա ամրանում։ Ամենից առաջ՝ պրոլետարական ավանգարդի գիտակցությամբ, հեղափոխական անձնվիրությամբ, նրա դիմացկունությամբ, զոհողությամբ, հերոսությամբ։ Յերկրորդ՝ նրանով, վոր պրոլետարիատը կարողանա կապվել, մոտենալ և, յեթե ուզում եք, մինչև վորոշ աստիճան ձուլվել աշխատավորական ամենալայն մասսաների հետ, և առաջին հերթին պրոլետարական, բայց նաև վոչ պրոլետարական, աշխատավոր մասսաների հետ։ Յերրորդ՝ քաղաքական ղեկավարության ճշտությամբ, վոր պիտի իրագործվի պրոլետարական ավանգարդի կողմից, նրա քաղաքական ստրատեգիայի և տակտիկայի ճշտությամբ, այն պայմանով, վոր ամենալայն մասսաները սեփական փորձով համոզվեն նրա ճշտության։ Առանց այդ պայմանների հեղափոխական կուսակցության դիսցիպլինը անիրագործելի յե, հեղափոխական կուսակցություն, վոր իրապես ընդունակ է առաջավոր դասակարգի կուսակցությունը լինելու, կարող տապալելու բուրժուազիային և վերակազմելու ամբողջ հասարակությունը։ Առանց այս պայմանների՝ դիսցիպլին ստեղծելու փորձերն անխուսափելի կերպով կդառնան դատարկ բան, ֆրազ, ծամածռանք։ Իսկ մյուս կողմից, այս պայմանները չեն կարող ծագել հանկարծակի։ Նրանք մշակվում են միայն յերկար աշխատանքով, դժվարին փորձով. նրանց մշակությունը հեշտանում է շնորհիվ հեղափոխական ճշգրիտ թեորիայի, վոր իր հերթին դոգմա չէ, այլ վերջնականորեն ձևավորվում է իրապես մասսայական և իրապես հեղափոխական շարժման գործնականի հետ սերտորեն կապված։

Յեթե բոլշևիզմը կարողացավ մշակել և հաջող կերպով իրականացնել ամենախիստ կենտրոնացում և յերկաթե դիսցիպլին 1917—1920 տարիներին անասելի ծանր պայմաններում—ապա դրա պատճառը պետք է վորոնել պարզապես Ռուսաստանի մի շարք պատմական առանձնահատկությունների մեջ։

Մի կողմից՝ բոլշևիզմը ծագեց 1903 թվականին, մարքսիզմի թեորիայի ամենաամուր հիմքի վրա։ Իսկ այս հեղափոխական թեորիայի—և միայն այս թեորիայի—ճշտությունը ապացուցեց վոչ միայն ամբողջ տասնիններորդ դարի համաշխարհային փորձը, այլև առանձնապես Ռուսաստանի հեղափոխական մտքի մոլորումների և տատանումների, սխալների և հիասթափությունների փորձը։ Մոտ կես դար շարունակ, անցյալ հարյուրամյակի 40-ական թվականից մինչև 90-ական թվականը, առաջավոր միտքը Ռուսաստանում՝ չտեսնված վայրենի և հետադիմական ցարիզմի լծի տակ՝ ագահորեն վորոնում էր ճիշտ հեղափոխական թեորիա, զարմանալի յեռանդով և մանրակրկիտ կերպով դիտելով Յեվրոպայի և Ամերիկայի ամեն մի «վերջին խոսքին» այդ բնագավառում։ Մարքսիզմը, վորպես միակ ճշմարիտ հեղափոխական թեորիա, Ռուսաս-

տանը իսկապես վոր յերկնեց չլսված տանջանքների և զոհողությունների իր կես-դարյան պատմությամբ, չտեսնված հեղափոխական հերոսության, անհնարին յեռանդի և վորոնումների, անձնվիրության, գործնական կյանքի փորձությունների, կրթության, հիասթափությունների, ստուգումների, յեվրոպական փորձի համեմատության իր վողջ պատմությամբ: Հեղափոխական Ռուսաստանը՝ ցարիզմի պատճառով արտասահման անցած էմիգրանտների շնորհիվ, տասնիններորդ դարի յերկրորդ կեսում միջազգային կապերի այնպիսի մեծ հարստություն ուներ, այնպիսի գերազանց իրազեկություն հեղափոխական շարժման համաշխարհային ձևերի և թեորիաների նկատմամբ, վորպիսին չուներ վոչ մի յերկիր աշխարհում:

Մյուս կողմից՝ ծագելով այդ գրանիտի թեորիական հիմքի վրա՝ բայլշևիզմը անցավ տասնհինգ տարվա գործնական պատմություն, վոր իր փորձի հարստության տեսակետով հավասարը չունի ամբողջ աշխարհում, քանի վոր վոչ մի յերկիր այս տասնհինգ տարվա ընթացքում, մինչև իսկ մոտավոր կերպով, չապրեց այնքան շատ բան հեղափոխական փորձի իմաստով, շարժման զանազան ձևերի արագության և փոփոխության իմաստով, շարժում, վոր յեղավ լեգալ և անլեգալ, խաղաղ ու փոթորկալից, գաղտնի և բացարձակ, խմբակցական և մասսայական, պարլամենտական և տերրորիստական: Վոչ մի յերկրում չի յեղել կենտրոնացած, այդքան կարճ ժամանակի ընթացքում, այնքան հարստություն՝ ժամանակակից հասարակության բոլոր դասերի պայքարի ձևերի, մեթոդների և յերանգավորման, և այն էլ այնպիսի պայքարի, վոր յերկրի հետամնացության և ցարիզմի լծի ծանրության ուժով առանձնապես արագ կերպով հասունացավ, առանձնապես ագահությամբ և հաջողությամբ յուրացրեց յեվրոպական և ամերիկյան քաղաքական փորձի «վերջին խոսքը»:

III.

## ԲԱՅԼՇԵՎԻԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԵՏԱՊՆԵՐԸ.

Հեղափոխությունը նախապատրաստող տարիներ (1902—1905): Ամեն տեղ զգացվում է մեծ մրրկի մոտեցումը: Բոլոր դասակարգերի մեջ խմորում և նախապատրաստություն: Արտասահմանում էմիգրանտական մամուլը դնում է թեորիապես հեղափոխության բոլոր հիմնական խնդիրները: Յերեք հիմնական դասակարգերի, յերեք գլխավոր քաղաքական հոսանքների ներկայացուցիչները՝ լիբերալ-բուրժուական, մանր-բուրժուական-դեմոկրատական («սոցիալ-դեմոկրատ» և «սոցիալ-հեղափոխական» ուղղությունների ցուցանակի տակ ծածկված) և պրոլետարական-հեղափոխական ներկայացուցիչները ծրագրային և տակտիկական հայացքների կատաղի պայքարով նախերգում և նախապատրաստում են դասակարգերի ապագա բացարձակ կռիվը: Այն բոլոր խնդիրները, վորոնց շուրջը մղվեց մասսաների զինված կռիվը 1905—1907 և 1917—1920 թվականներին՝ կարելի յե (և պետք է) տեսնել այն ժամանակների մամուլի մեջ սաղմնային ձևով: Իսկ այս յերեք գլխավոր ուղղությունների միջև անշուշտ կան միջանկյալ, անցողական և անկատար ձևեր՝ վորքան կամենաք: Ավելի ճիշտը՝ մամուլի օրգանների, կուսակցությունների, ֆրակցիաների, խմբակցությունների պայքարի մեջ բյուրեղանում են այն իդեական-քաղաքական ուղղությունները, վորոնք իրոք դասակարգային են: Դասակարգերը դարբնում են իրենց համար համապատասխան իդեական-քաղաքական զենք՝ գալիք ճակատամարտների համար:

Հեղափոխության տարիներ (1905—1907): Բոլոր դասակարգերը հրապարակ են դուրս գալիս բացարձակ կերպով: Ծրագրային և տակտիկական բոլոր հայացքներն ստուգվում են մասսաների գործողությամբ: Աշխարհում չտեսնված գործադուլային լայն և սուր կռիվ է սկսվում: Տնտեսական գործադուլը հասունանալով վերածվում է քաղաքականի և քաղաքականը՝ ապստամբության: Գործնական ստուգում՝ ղեկավարող պրոլետարիատի և ղեկավարվող, տատանվող ու յերերուն գյուղացիության փոխհարաբերությունների: Պայքարի տարերային զարգացման մեջ ծնվում է կազմակերպության խորհրդային ձևը: Այն ժամանակվա վեճերը խորհուրդների նշանակության մասին՝ նախազգուշակում են 1917—1920 թվականների մեծ կռիվը: Կռվի պարլամենտական և վոչ պարլամենտական ձևերի փոփոխությունը, պարլամենտարիզմի բոյկոտի տակտիկայի ու պարլամենտարիզմի մասնակցության տակտիկայի, կռվի լեգալ և անլեգալ ձևերի, ինչպես և նրա զանազան ձևերի փոխհարաբերության ու կապի փոփոխումը—այս բոլորն աչքի յեն ընկնում բովանդակության զարմանալի հարստությամբ: Այդ ժամանակաշրջանի ամեն մեկ ամիսը հավասար էր «խաղաղ», «սահմանադրական» զարգացման մի ամբողջ տարվան՝ մասսաների և ղեկավարների, դասակարգերի և կուսակցությունների կողմից քաղաքական գիտության հիմունքները յուրացնելու մտքով: Առանց 1905 թվականի «ընդհանուր փորձի» 1917 թվականի հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակն անկարելի կլիներ:



Ռեակցիայի տարիներ (1907—1910): Ցարիզմը հաղթանակեց: Բոլոր հեղափոխական և ընդդիմադրական կուսակցությունները ջախջախվեցին: Անկում, բարոյալքում, պառակտումներ, քայքայում, ռենեգատություն, պոռնոգրաֆիա՝ քաղաքականության փոխարեն: Ուժեղացած ձգտում դեպի փիլիսոփայական իդեալիզմը, միստիցիզմը դարձած հակա-հեղափոխական տրամադրությունները ծածկելու միջոց: Բայց

միաժամանակ ճիշտ այդ մեծ պարտությունը հեղափոխական կուսակցություններին և հեղափոխական դասակարգին իսկական և շատ օգտակար դաս է տալիս, պատմական դիալեկտիկայի դաս, ինչպես և քաղաքական կռիվ վարելու հասկացողություն, հմտություն ու արվեստ: Բարեկամները ճանաչվում են դժբախտության մեջ: Ջախջախված բանակները լավ են սովորում:

Հաղթանակող ցարիզմը հարկադրված է շտապով խորտակելու նախաբուրժուական, նահապետական կենցաղի մնացորդները Ռուսաստանում: Նրա բուրժուական զարգացումը նշանակալից կերպով արագ է առաջ ընթանում: Արտադասակարգային, վերդասակարգային պատրանքները, կապիտալիզմից խուսափելու հնարավորության պատրանքները (իլյուզիա) փոշի յեն դառնում: Դասակարգային կռիվը արտահայտվում է բոլորովին նոր ձևով և ավելի ցայտուն կերպարանքով:

Հեղափոխական կուսակցությունները պետք է շարունակեն սովորել: Նրանք սովորել եյին հարձակվում գործել, այժմ հարկադրված են հասկանալ, թե հարձակման գիտությունը անհրաժեշտ է լրացնել ավելի կանոնավոր կերպով նահանջելու գիտությամբ: Հարկավոր է լինում հասկանալ—և հեղափոխական դասակարգն իր սեփական դառն փորձով սովորում է հասկանալ—վոր չի կարելի հաղթել՝ առանց սովորելու կանոնավոր կերպով հարձակվել և կանոնավոր կերպով նահանջել: Ընդդիմադրական և հեղափոխական բոլոր ջախջախված կուսակցությունների մեջ բոլշևիկները նահանջեցին ամենից ավելի կանոնավոր կերպով, իրենց «բանակի» ամենաքիչ վնասով, ամենից շատ պահպանելով նրա միջուկը, ամենից քիչ պառակտումներ ունենալով (խորությամբ և անբուժելիությամբ), ամենափոքր բարոյալքումով և ամենամեծ ունակությամբ՝ վերսկսելու աշխատանքը ավելի ևս լայնորեն, կանոնավոր և յեռանդուն կերպով: Յեվ բոլշևիկները հաջողեցին այդ միայն այն պատճառով, վոր անխնա կերպով մերկացրին և դուրս վտարեցին փրազի հեղափոխականներին, վորոնք չեյին կամենում հասկանալ, թե անհրաժեշտ եր նահանջել, թե պետք եր կարողանալ նահանջել, թե պետք է անպայման կերպով սովորել լեգալ աշխատելու ամենահետադեմ պարլամենտներում, ամենահետադեմ արհեստակցական, կոոպերատիվ, ապահովագրական և նման կազմակերպությունների մեջ:

*Վերելքի տարիներ (1910—1914)*: Սկզբում վերելքը չափազանց դանդաղ է, ապա 1912 թ. Լենայի դեպքերից հետո քիչ ավելի արագ: Հաղթահարելով չլսված դժվարություններ՝ բոլշևիկները հետ մղեցին մենշևիկներին, վորոնց դերը իբրև բուրժուական ագենտների բանվորական շարժման մեջ 1905 թվականից հետո շատ լավ հասկացավ ամբողջ բուրժուազիան և վորոնց այդ պատճառով հազար ու մի ձևերով բուրժուազիան պաշտպանում եր բոլշևիկների դեմ: Բայց բոլշևիկ-



ները յերբեք չեյին կարող հասնել այս հետևանքին, յեթե նրանք չմիացնեյին անլեգալ աշխատանքը «լեգալ հնարավորությունները» անպայման կերպով օգտագործելու ճիշտ տակտիկայի հետ: Ամենահետադիմական Դումայի մեջ բոլշևիկները կարողացան նվաճել ամբողջ բանվորական կուրիան[6]:

*Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը (1914—1917 թվական)*: Լեգալ պարլամենտարիզմը, «պարլամենտի» ծայրահեղ հետադիմականության պայմաններում, շատ օգտակար ծառայություն է անում հեղափոխական պրոլետարիատի կուսակցության՝ բոլշևիկներին: Բոլշևիկ պատգամավորները գնում են Սիբիր[7]: Եմիգրանտական մամուլի մեջ կատարյալ արտահայտություն են գտնում սոցիալ-իմպերիալիզմի, սոցիալ-շովինիզմի, սոցիալ-պատրիոտիզմի, անհետևողական և հետևողական ինտերնացիոնալիզմի, պացիֆիզմի և պացիֆիստական պատրանքների հեղափոխական բացասման ամեն յերանգի հայացքները: Յերկրորդ Ինտերնացիոնալի գիտուն հիմարները և պառավ տատերը—վորոնք արհամարհանքով ու մեծամտությամբ կնճռում եյին քթերը ռուսական սոցիալիզմի «ֆրակցիաների» շատության ու նրանց միջև տիրող կատաղի կռվի առիթով—յերբ պատերազմը վերացրեց բոլոր առաջադեմ յերկրներում այնքան գովված «լեգալությունը», չկարողացան գեթ մոտավոր կերպով կազմակերպել մտքերի այնպիսի ազատ (անլեգալ) փոխանակություն և ճիշտ հայացքների այնպիսի ազատ (անլեգալ) մշակում, վորպիսին կազմակերպեցին ռուս հեղափոխականները Շվեյցարիայում և մի շարք ուրիշ յերկրներում: Յեվ ճիշտ այս պատճառով՝ թե իսկական սոցիալ-պատրիոտները և թե «կաուցկիականները» բոլոր յերկրներում հանդես յեկան վորպես պրոլետարիատի վատթարագույն դավաճաններ: Իսկ յեթե բոլշևիզմը կարողացավ հաղթել 1917—1920 թվականներին, ապա այդ հաղթանակի հիմնական պատճառներից մեկն էլ այն է, վոր բոլշևիզմը դեռ 1914 թվի վերջից անխնա կերպով մերկացնում եր ստորությունը, գարշելիությունն ու լրբությունը սոցիալ-շովինիզմի և «կաուցկիզմի» (վորին համապատասխանում է լոնգեիզմը[8] Ֆրանսիայում, անկախ բանվորական կուսակցության[9] և ֆաբիանականների[10] ղեկավարների հայացքները Անգլիայում, Տուրատին[11] Իտալիայում և այլն), և մասսաներն էլ հետո իրենց սեփական փորձով եյին ավելի ու ավելի համոզվում բոլշևիկների հայացքների ճշտության:

*Յերկրորդ հեղափոխությունը Ռուսաստանում (1917 թվի փետրվարից մինչև հոկտեմբեր)*: Ցարիզմի չափազանց զառամությունն ու պառավությունը ստեղծել եր (ավերող պատերազմի հարվածների ու ծանրության տակ) քայքայման մի չտեսնված ուժ, վոր ուղղված եր նրա դեմ: Միքանի օրվա ընթացքում Ռուսաստանը դարձավ դեմոկրա-

տական բուրժուական հանրապետություն, ավելի ազատ—պատերազմի պայմաններում— քան որևէ ուրիշ յերկիր աշխարհիս վրա։ Ընդդիմադրական և հեղափոխական կուսակցությունների ղեկավարներն սկսեցին կառավարություն կազմել, ինչպես «ամենախիստ-պարլամենտական» հանրապետությունների մեջ, վորով պարլամենտի ընդդիմադրական կուսակցության ղեկավարի կոչումը—վորքան ել այդ պարլամենտը ամենահետադիմականը լիներ—հեշտացնում եր այդպիսի ղեկավարի հետագա դերը հեղափոխության մեջ։

Մենշևիկները և «սոցիալ-հեղափոխականները» միքանի շաբաթվա մեջ փառավոր կերպով յուրացրին II Ինտերնացիոնալի յեվրոպական հերոսների, մինիստրականների և օպպորտյունիստական մյուս տականքների բոլոր միջոցներն ու ձևերը, փաստաբանություններն ու սոփեստությունները։ Այն ամենը, ինչ մենք կարդում ենք այժմ Շայդեմանների[12] ու Նոսկեների[13], Կաուցկու և Հիլֆերդինգի, Ռենների[14] և Աուստերլիցի[15], Օտտո Բաուերի և Ֆրից Ադլերի, Տուրատիի և Լոնգեյի, Ֆաբիանցիների և անգլիական անկախ բանվորական կուսակցության ղեկավարների մասին—այդ բոլորը թվում է մեզ (և իրոք ել այդպես է) հին, ծանոթ յեղանակի ձանձրալի կրկնություն ու նեյնիմներ։ Այդ բոլորը մենշևիկների մոտ մենք տեսել ենք արդեն։ Պատմությունը կատակ է արել և ստիպել է, վոր հետամնաց յերկրի օպպորտյունիստները նախերգեն մի շարք առաջավոր յերկրների օպպորտյունիստներին։

Յեթե II Ինտերնացիոնալի բոլոր հերոսները սնանկացան, խայտառակվեցին խորհուրդների ու Խորհրդային իշխանության դերի և նշանակության խնդրում, յեթե առանձնապես «ցայտուն» կերպով խայտառակվեցին ու մոլորվեցին այդ խնդրում II Ինտերնացիոնալից այժմ դուրս յեկած յերեք շատ կարևոր կուսակցությունները (այսինքն գերմանական անկախ սոցիալ-դեմոկրատ կուսակցությունը, ֆրանսիական լոնգեիստական և անգլիական անկախ բանվորական կուսակցությունը), յեթե նրանք բոլորն ել յերևան յեկան վորպես մանր-բուրժուական դեմոկրատիայի նախապաշարումների ստրուկներ (ճիշտ 1848 թվի մանր բուրժուաների պես, վոր իրենց «սոցիալ դեմոկրատ»[16] եյին անվանում) – ապա մենք արդեն մենշևիկների օրինակի վրա տեսել ենք այդ բոլորը։ Պատմությունը այնպիսի կատակ արավ, վոր 1905 թվին Ռուսաստանում ծնվեցին խորհուրդները[17], վոր նրանց կեղծեցին 1917 թվի փետրվար-հոկտեմբերին մենշևիկները, վոր սնանկացան նրանց դերն ու նշանակությունը չհասկանալու հետևանքով։ Պատմությունը կատակ արավ նույնպես, վոր այժմ ամբողջ աշխարհում ծնվեց Խորհրդային իշխանության գաղափարը, վոր չտեսնված արագությամբ տարածվում է բոլոր յերկրների պրոլետարիատի շարքերում, ըստ վորում II Ինտերնացիոնալի հին հերոսները ամեն տեղ նույնպես սնան-



կանում են խորհուրդների դերն ու նշանակությունը չըմբռնելու պատճառով, վորպես սնանկացան մեր մենշևիկները։ Փորձը ցույց տվեց, վոր պրոլետարական հեղափոխության միքանի շատ եյական խնդիրներում բոլոր յերկրներին անխուսափելի կերպով վիճակված է կատարել այն, ինչ վոր կատարել է Ռուսաստանը։

Բայլշևիկներն իրենց հաղթական պայքարը պարլամենտական (փաստորեն) բուրժուական հանրապետության և մենշևիկների դեմ սկսեցին շատ զգույշ և պատրաստեցին այն վոչ այնքան հասարակ կերպով հակառակ այն կարծիքներին, վոր այժմ հաճախ հանդիպում ենք Յեվրոպայում և Ամերիկայում։ Մենք մատնանշված ժամանակի սկզբում կոչ չեյինք անում կառավարությունը տապալելու, այլ բացատրում եյինք, թե նրա տապալումն անհնարին կլինի, յեթե խորհուրդների կազմի և տրամադրությունների մեջ նախապես փոփոխություն չառաջանար։ Մենք բոյկոտ չեյինք հայտարարում բուրժուական պարլամենտի, սահմանադրի դեմ, այլ ասում եյինք, և 1917 թվի ապրիլյան[18] մեր կուսակցության կոնֆերենցիայից հետո ասում եյինք պաշտոնապես կուսակցության անունից, թե բուրժուական հանրապետությունը սահմանադիր ժողովով ավելի լավ է նույնպիսի հանրապետությունից առանց սահմանադիր ժողովի, իսկ «բանվորա-գյուղացիական», խորհրդային հանրապետությունը շատ ավելի լավ է ամեն տեսակ բուրժուական-դեմոկրատական, պարլամենտական հանրապետությունից։ Առանց այսպիսի զգույշ, հանգամանալից, շրջահայաց և յերկարատև նախապատրաստության մենք վոչ կարող եյինք հաղթություն տանել 1917 թվի հոկտեմբերին, վոչ ել պահել այդ հաղթությունը։

## IV.

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԵՐՍՈՒՄ Ի՞ՆՉՊԻՍԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՀԵՏ ԿՌՎԵԼՈՎ ԱՃԵՑ, ԱՄՐԱՑԱՎ ՅԵՎ ԿՈՓՎԵՑ ԲԱՅԼՇԵՎԻԶՄԸ.

Ամենից առաջ և գլխավորապես պայքարելով օպպորտյունիզմի դեմ, վոր 1914 թվականին վերջնականապես դարձավ սոցիալ-շովինիզմ, վերջնականապես անցավ բուրժուազիայի կողմը՝ ընդդեմ պրոլետարիատի, օպպորտյունիզմը բնականաբար բայլշևիզմի գլխավոր թշնամին եր բանվորական շարժման ներսում։ Այս թշնամին գլխավորն է մնում նաև միջազգային մասշտաբով։ Այս թշնամուն բայլշևիզմը նվիրել է և նվիրում է ամենից շատ ուշադրություն։ Բայլշևիկների գործունեության այս կողմը այժմ արդեն բավականաչափ հայտնի յե նաև արտասահմանում։

Ուրիշ բան պետք է ասել բայլշևիզմի մյուս թշնամու մասին.

բանվորական շարժման ներսում։ Արտասահմանում դեռևս շատ անբավարար չափով գիտեն, վոր բոլշևիզմը աճեց, կազմավորվեց և կոփվեց յերկար տարիներ կռվելով մանր-բուրժուական հեղափոխականության դեմ, վոր նմանում է անարխիզմին և կամ նրանից վորոշ գծեր է փոխ առնում, վոր նահանջում է ամենաէական կետերում պրոլետարական հետևողական դասակարգային կռվի պայմաններից ու պահանջներից։ Թեորիապես մարքսիստների համար բոլորովին պարզ է,— և յեվրոպական բոլոր հեղափոխականների ու հեղափոխական շարժումների փորձով կատարելապես հաստատված է,— վոր մանր սեփականատերը, մանր տնտեսատերը (սոցիալական մի տիպ, վոր յեվրոպական շատ յերկրներում ունի լայն, մասսայական ներկայացուցչություն) կապիտալիզմի ժամանակ շարունակ ճնշվելով և շատ հաճախ ղարմանալի կտրուկ և արագ կերպով քայքայվելով ու ավերվելով՝ հեշտությամբ անցնում է ծայրահեղ հեղափոխականության կողմը, բայց ընդունակ չէ յերևան հանելու դիմացկունություն, կազմակերպվածություն, դիսցիպլին, անդկունություն։ Կապիտալիզմի սարսափներից գազազած մանր բուրժուան, դա սոցիալական մի յերևույթ է, վոր ինչպես և անարխիզմը հատուկ է կապիտալիստական բոլոր յերկրներին։ Այսպիսի հեղափոխականության անկայունությունը, նրա անպտղաբերությունը, արագությամբ հնազանդության, ապատիայի, ֆանտաստիկականության վերածվելու հատկությունը, ինչպես և մինչև իսկ այս կամ այն բուրժուական «մոդային» հոսանքներով «կատաղորեն» գրավվելու հատկությունը—այս բոլորը հայտնի յեն ամենքին։ Բայց այս ճշմարտությունների թեորիական, վերացական ճանաչումը դեռևս վոչ մի կերպ չի ազատում հեղափոխական կուսակցություններին հին սխալներից, վոր ամեն մի անակնկալ առիթով հայտնվում են նորից, մի փոքր նոր ձևով, առաջներում չունեցած դիմակով կամ շրջապատով, ինքնատիպ, ավելի կամ նվազ ինքնատիպ պայմաններում։

Անարխիզմը հաճախ հանդես էր գալիս վորպես բանվորական շարժման ոպպորտյունիստական մեղքերի համար մի տեսակ պատիժ։ Յերկու այլանդակությունները փոխադարձաբար լրացնում եյին միմյանց։ Յեվ յեթե Ռուսաստանում—չնայելով նրա բնակչության ավելի մանր-բուրժուական կազմին յեվրոպական յերկրների համեմատությամբ—անարխիզմը յերկու հեղափոխությունների միջոցին (1905 և 1917) և նրանց նախապատրաստական ժամանակում համեմատաբար աննշան ազդեցություն է ունեցել, ապա այդ մասամբ պետք է համարել բոլշևիզմի ծառայություններից մեկը, վոր միշտ անհաշտ և ամենաանխնա կռիվ է մղել ոպպորտյունիզմի դեմ։ Ասում եմ «մասամբ», քանի վոր անարխիզմը Ռուսաստանում թուլացնելու ավելի կարևոր դեր է կատարել այն պարագան, վոր անարխիզմը հնարավո-



րություն է ունեցել անցյալում (19-րդ դարի 70-ական թվականներին) արտասովոր փարթամությամբ և մինչև վերջը ցույց տալու իր անճշտությունը, իր անպետքությունը, վորպես ղեկավար թեորիա հեղափոխական դասակարգի համար։

Բոլշևիզմը 1903 թվականին իր ծագման շրջանում յուրացրեց անխնա պայքարի տրադիցիան մանր-բուրժուական, կիսա-անարխիստական (կամ անարխիզմին սիրաշահող) հեղափոխականության դեմ, մի տրադիցիա, վոր ունեցել է միշտ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, և վոր առանձնապես ամրապնդվել է մեզանում 1900—1903 թվերին, յերբ Ռուսաստանում դրվում եյին հեղափոխական պրոլետարիատի մասսայական կուսակցության հիմքերը։ Բոլշևիզմը յուրացրեց և շարունակեց պայքարը մանր-բուրժուական հեղափոխականության տենդենցների ամենից շատ արտահայտող կուսակցության՝ սոցիալիստ-հեղափոխականների դեմ՝ յերեք գլխավոր կետերում։ Ամենից առաջ այդ կուսակցությունը բացասելով մարքսիզմը՝ համառությամբ չեր կամենում (գուցե ավելի ճիշտ լինի ասել՝ չեր կարող) հասկանալ դասակարգային ուժերի և նրանց փոխհարաբերությունների խիստ ոբյեկտիվ հաշվառքի անհրաժեշտությունը՝ ամեն մի քաղաքական գործողությունից առաջ։ Յերկրորդ՝ այդ կուսակցությունը իր առանձին «հեղափոխականությունը» կամ «ձախությունը» տեսնում եր անհատական տեռորի, մահափորձերի մեջ, ինչ վոր մենք, մարքսիստներս, վճռականապես հետ եյինք մղում։ Անշուշտ, մենք անհատական տեռորը հետ եյինք մղում միայն նպատակահարմարության պատճառներով, իսկ նրանց, վորոնք «սկզբունքով» ընդունակ եյին դատապարտելու ֆրանսիական մեծ հեղափոխության տեռորը կամ ընդհանրապես հաղթանակող հեղափոխական կուսակցության և ամբողջ աշխարհի բուրժուազիայի կողմից պաշարման յենթարկված կուսակցության տեռորը—այդպիսի մարդկանց դեռ Պլեխանովը[19] 1900—1903 թվականներին, յերբ Պլեխանովը մարքսիստ եր և հեղափոխական, յենթարկում եր ծաղրի ու ծանակի։ Յերրորդ՝ «սոցիալիստ-հեղափոխականները» «ձախություն» եյին տեսնում այն բանի մեջ, վոր ծիծաղում եյին գերմանական սոցիալ-դեմոկրատիայի համեմատաբար փոքր ոպպորտյունիստական մեղքերի վրա՝ նմանվելով միաժամանակ այդ կուսակցության ծայրահեղ ոպպորտյունիստներին, օրինակի համար, ագրարային կամ պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրներում։

Պատմությունը—հարևանցի կերպով ասած—այժմ խոշոր համաշխարհային-պատմական մասշտաբով հաստատել է այն կարծիքը, ինչ վոր մենք հաճախ պաշտպանել ենք, այսինքն՝ վոր գերմանական հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան ամենից ավելի մոտ է յեղել այնպիսի կուսակցության, ինչ վոր հարկավոր է պրոլետարիատին՝ նրա հաղթանակի

համար․ (Նկատեցեք, որ դեռ Պլեխանովը 1900-1903 թվականներին պահանջում էր Բեռնշտայնի[20] արտաքսումը կուսակցությունից, իսկ բոլշևիկները, միշտ շարունակելով այդ տրադիցիան, 1913 թվին մերկացնում էին Լեգինի[21] ամբողջ ստորությունը, ցածությունը և դավաճանությունը)։ Այժմ, 1920 թվին, պատերազմական եպոխայի և նրան հաջորդող տարիների բոլոր խայտառակ սնանկությունից և կրիզիսներից հետո պարզ նկատելի յե, որ բոլոր արևմտյան կուսակցություններից հատկապես գերմանական հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան է տվել լավագույն ղեկավարներ, ինչպես և նա բուժվեց, շտկվեց, նորից առողջացավ մյուսներից առաջ։ Այդ բանը նկատվում է թե սպարտակյան[22] կուսակցության և թե «Գերմանիայի անկախ սոցիալ-դեմոկրատ կուսակցության» ձախ, պրոլետարական թևի վրա, որ համառ պայքար է մղում Կաուցկիների, Հիլֆերդինգների, Լեդեբուրների[23], Կրիսպիների[24] օպորտյունիզմի և բնութագրկության դեմ։ Յեթե այժմ մի ընդհանուր հայացք նետենք լիովին կերպով ավարտված պատմական շրջանի վրա, այսինքն՝ սկսած Պարիզի Կոմմունայից մինչև առաջին Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը՝ ապա միանգամայն որոշ և անվիճելի տեսք է ընդունում մարքսիզմի դիրքը անարխիզմի վերաբերմամբ։ Մարքսիզմը վերջիվերջո իրավացի դուրս յեկավ, և յեթե անարխիստները արդարացի կերպով մատնանշում էին սոցիալիստական կուսակցությունների մեծամասնության մեջ տիրապետող օպորտյունիստական տեսակետները պետության վերաբերմամբ՝ ապա նախ և առաջ այդ օպորտյունիզմը կապված է յեղել Մարքսի պետության մասին ունեցած հայացքների աղավաղման և նույնիսկ բացարձակ ծածկելու հետ. («Պետություն և հեղափոխություն» գրքիս մեջ յես նկատել եմ, որ Բեբելը[25] 36 տարի, սկսած 1875 թվից մինչև 1911 թվականը, փականքի տակ էր պահում Էնգելսի[26] նամակը, որ առանձնապես որոշ, կտրուկ, ուղղակի, պայծառ կերպով մերկացնում էր պետության մասին շրջող սոցիալ-դեմոկրատական հայացքների օպորտյունիզմը)․ յերկրորդ՝ այդ օպորտյունիստական հայացքների ուղղագրությունը, Խորհրդային իշխանության և բուրժուական պարլամենտական դեմոկրատիայի հանդեպ նրա ունեցած գերազանցության ճանաչումը—այս բոլորը ամենաարագ և լայն կերպով ծագում են յեվրոպական և ամերիկյան սոցիալիստական կուսակցությունների ամենից ավելի մարքսիստական հոսանքների խորքից։

Յերկու դեպքում բոլշևիզմի պայքարն իր սեփական կուսակցության «ձախ» թեքումների դեմ ընդունել է առանձնապես մեծ չափեր—1908 թվին՝ ամենահետադիմական «պարլամենտին» և ամենահետադիմական օրենքներով սահմանված բանվորական լեգալ ընկերություններին[27] մասնակցելու խնդրում և 1918 թվականին (Բրեստի հաշտությունը) այս կամ այն «կոմպրոմիսը»[28] թույլատրելու հարցում։



1908 թվին «ձախ» բոլշևիկներն արտաքսվեցին մեր կուսակցությունից, որովհետև համառ կերպով չցանկացան հասկանալ հետադիմական «պարլամենտում» մասնակցելու անհրաժեշտությունը։ «Ձախերը»,—որոնց թվում կային շատ հիանալի հեղափոխականներ, որ հետագայում էին (և շարունակում են պատվավոր կերպով մնալ) կոմմունիստական կուսակցության անդամներ,—հենվում էին առանձնապես 1905 թվի բոյկոտի հաջող փորձի վրա։ Յերբ 1905 թվականի օգոստոսին ցարը հայտարարեց խորհրդակցական «պարլամենտի» գումարումը՝[29] բոլշևիկները նրա դեմ բոյկոտ հայտարարեցին հակառակ բոլոր դիմադրական կուսակցություններին և հակառակ մենշևիկներին, և 1905 թվի հոկտեմբերյան հեղափոխությունն էլ իրապես քշեց-սրբեց նրան։ Այդ ժամանակ բոյկոտն իրավացի յերևաց ոչ թե այն պատճառով, որ իրավացի յե առհասարակ հետադիմական պարլամենտներին չմասնակցելը, այլ այն պատճառով, որ ճիշտ է յեղել հաշվի առած այն օբյեկտիվ կացությունը, որ մասսայական գործադուլներն արագ կերպով դարձնում էր քաղաքական, ապա հեղափոխական գործադուլ և հետո ապստամբություն։ Բստ որում կռիվն այն ժամանակ մղվում էր այն խնդրի շուրջը՝ թողնե՞լ արդյոք ցարի ձեռքում առաջին ներկայացուցչական հիմնարկության հավաքումը, թե՞ փորձել խլել այդ հավաքումը հին իշխանության ձեռքից։ Այնքան, որքան չկար և չէր կարող լինել նման օբյեկտիվ վիճակի գոյության հավաստիացում, ինչպես և հավաստիացում այն բանի, որ այդ կացությունը պիտի զարգանա նույնանման թափով և ուղղությամբ—այնքան բոյկոտը դադարում էր ճիշտ լինելուց։

1905 թվին բոլշևիկյան բոյկոտը «պարլամենտին» հեղափոխական պրոլետարիատը հարստացրեց չափազանց թանգարժեք քաղաքական փորձով, ցույց տալով, որ կռվի լեգալ և անլեգալ, պարլամենտական և արտապարլամենտական ձևերի հարակցության ժամանակ յերբեմն օգտակար է և մինչև իսկ պարտադիր է՝ կարողանալ հրաժարվել պարլամենտական ձևերից։ Բայց այդ փորձի կույր, ընդօրինակող, անքննադատ գործադրությունը ուրիշ պայմանների և ուրիշ կացության մեջ կդառնա մեծագույն սխալ։ Նույնպիսի սխալ էր 1906[30] թվին «դումայի» բոլշևիկյան բոյկոտը, թեև ոչ այնքան մեծ, դյուրին կերպով ուղղագրելի սխալ*։ Ավելի լուրջ և դժվար կերպով ուղղա-

* Քաղաքականության յեվ կուսակցությունների մասին—համապատասխան փոփոխություններով—կարելի յե ասել նույնը, ինչ որ առանձին մարդկանց մասին։ Խելոքը նա չէ, ով սխալներ չի անում։ Այդպիսի մարդիկ չկան յեվ չեն կարող լինել։ Խելոքը նա յե, ով անում է ոչ եյական սխալներ յեվ ով կարողանում է նրանց ուղղագրել արագ յեվ դյուրին կերպով։



S9266.66
ИНСТИ… Востокове… Академи… ССР
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀԱՍՌ-Арм ССР

գրելի սխալ էր 1907, 1908 և հետագա տարիների բոյկոտը, յերբ մի կողմից չէր կարելի սպասել հեղափոխական ալիքի շատ արագ բարձրացումը և նրա փոխվելը ապստամբության, և յերբ, մյուս կողմից, լեգալ և անլեգալ աշխատանքի հարակցության անհրաժեշտությունը բղխում էր նորացման յենթարկվող բուրժուական միապետության ամբողջ պատմական կացությունից: Այժմ, յերբ հետ ենք նայում կատարելապես վերջացած պատմական շրջանի վրա, վորի կապը հետագա շրջանների հետ լիովին պարզ է արդեն, առանձնապես ակներև է դառնում, վոր բոլշևիկները 1908—1914 թվականներին չէին կարող պահել (չենք ասում դեռ՝ ամրապնդել, զարգացնել, զորացնել) պրոլետարիատի հեղափոխական կուսակցության ամուր միջուկը, յեթե նրանք ամենախիստ կռվի միջոցին չպաշտպանեյին լեգալ և անլեգալ ձևերի հարակցության ստիպողականությունը, պարտադիր մասնակցությունը ամենահետադիմական պարլամենտի և հետադիմական օրենքներով շրջապատված մի շարք հիմնարկությունների մեջ (ապահովագրական կասսաներ և այլն):

1918 թվականին բանը պառակտման չհասավ: Այդ ժամանակ «ձախ» կոմմունիստները մեր կուսակցության ներսում կազմեցին միայն մի առանձին խմբակ կամ «ֆրակցիա» և այն էլ վոչ յերկար ժամանակով: Նույն 1918 թվականին «ձախ կոմմունիզմի» ականավոր ներկայացուցիչները, օրինակի համար՝ ընկերներ Ռադեկը[31] և Բուխարինը[32] բացահայտ կերպով ընդունեցին իրենց սխալը: Նրանց թվում էր, թե Բրեստի հաշտությունը պրոլետարիատի հեղափոխական կուսակցության համար սկզբունքապես անթույլատրելի և վնասակար կոմպրոմիս է յեղել իմպերիալիստների հետ: Սա իրոք վոր կոմպրոմիս էր իմպերիալիստների հետ, բայց այնպիսի կոմպրոմիս և այնպիսի պարագաների մեջ, վոր պարտադիր էր:

Այժմ, յերբ յես հարձակումն եմ տեսնում Բրեստի դաշնագիրը ստորագրելու միջոցին մեր ունեցած տակտիկայի դեմ, օրինակի համար, «սոցիալիստ-հեղափոխականների» կողմից, կամ թե լսում եմ ընկեր Լենսբերիի դիտողությունը ինձ հետ ունեցած խոսակցության ժամանակ՝ թե «մեր անգլիական տրեդ-յունիոնների ղեկավարները ասում են՝ թե կոմպրոմիսները թույլատրելի յեն նաև նրանց համար, քանի վոր նրանք թույլատրելի յեն յեղել բոլշևիզմի համար»,—յես նախ և առաջ պատասխանում եմ մի պարզ և «ժողովրդական» համեմատությամբ. յերևակայեցեք, թե ձեր ավտոմոբիլը կանգնեցնում են զինված բանդիտներ: Դուք տալիս եք նրանց ձեր դրամը, անցագիրը, ատրճանակը, ավտոմոբիլը: Դուք այդպիսով ազատվում եք բանդիտների հաճելի հարևանությունից: Կասկած չկա, վոր կոմպրոմիս է այս: „Do ut des“ (քեզ «տալիս եմ» դրամը, զենքը, ավտոմոբիլը, վորպեսզի դու «տաս» հնարավորություն վողջ-առողջ հեռանալու): Բայց դժվար է գտնել չխելագարված մարդ, վոր այսպիսի «կոմպրոմիսը» «սկզբունքապես անթույլատրելի» հայտարարեր և կամ թե բանդիտների հետ կոմպրոմիս անող մարդուն բանդիտներին գործակից հայտարարեր (թեև բանդիտները ավտոմոբիլը նստելով կարող եյին այն և զենքը ոգտագործել նոր ավազակությունների համար): Մեր կոմպրոմիսը գերմանական իմպերիալիզմի բանդիտների հետ նման էր այսպիսի կոմպրոմիսի:



Իսկ յերբ մենշևիկները և էսէրները Ռուսաստանում, շայդեմանականները (և նշանակալի չափով կաուցկիականները) Գերմանիայում, Օտտո Բաուերը և Ֆրիդրիխ Ադլերը (չխոսելով այլևս Ռեններների և ընկերության մասին) Ավստրիայում, Ռենոդելները[33] և Լոնգեները և ընկերությունը Ֆրանսիայում, ֆաբիանականները, «անկախականները» և «աշխատավորականները»[34] («լեյբուրիստները») Անգլիայում 1914—1918 և 1918—1920 թվականներին կոմպրոմիսներ արին իրենց հայրենի և յերբեմն «դաշնակից» բուրժուազիայի բանդիտների հետ իրենց յերկրի հեղափոխական պրոլետարիատի դեմ—ահա այդ ժամանակ բոլոր այդ պարոնները վարվեցին վորպես բանդիտիզմի գործակիցներ:

Եզրակացությունը պարզ է. «սկզբունքապես» ժխտել կոմպրոմիսները, ժխտել առհասարակ կոմպրոմիսների ամեն տեսակ թույլատրությունն՝ ինչ բնույթի յել լինեն նրանք—յերեխայություն է, վորի մասին լուրջ չի կարելի խոսել: Այն քաղաքագետը, վոր ուզում է հեղափոխական պրոլետարիատին օգտակար լինել, պետք է կարողանա տարբերել իսկ և իսկ այնպիսի կոմպրոմիսների կոնկրետ դեպքերը, վորոնք անթույլատրելի յեն, վորոնց մեջ արտահայտվում է օպպորտյունիզմ և դավաճանություն, և պիտի ուղղի իր քննադատության ամբողջ ուժը, անխնա մերկացման և անհաշտ կռվի բոլոր սրերը այդպիսի կոնկրետ կոմպրոմիսների դեմ, թույլ չտա բազմափորձ «գործեր տեսնող» սոցիալիստներին և պարլամենտական յեզվիտներին՝ «ընդհանրապես կոմպրոմիսների» մասին դատողություններ անելով փախչել ու խուսափել պատասխանատվությունից: Անգլիական տրեդ-յունիոնների, ինչպես և ֆաբիանական ընկերության և «անկախ» բանվորական կուսակցության պարոն «ղեկավարները» իսկ և իսկ այդպես խուսափում են իրենց կատարած դավաճանության պատասխանատվությունից, իրենց կատարած այնպիսի կոմպրոմիսից, վոր իրապես նշանակում է ամենավատթար օպպորտյունիզմ, դավաճանություն և մատնություն:

Կան կոմպրոմիսներ և կոմպրոմիսներ: Պետք է կարողանալ վերլուծել ամեն մեկ կոմպրոմիսի կամ կոմպրոմիսների զանազան տեսակ

ների կոնկրետ պայմաններն ու պարագաները: Պետք է կարողանալ տարբերել այն մարդուն, որ բանդիտներին դրամ ու զենք է տվել՝ նրանց պատճառած չարիքը մեղմելու և նրանց ձերբակալության ու գնդակահարության գործը դյուրացնելու—այն մարդուց, որ բանդիտներին դրամ ու զենք է տալիս՝ նրանց կողոպուտի բաժանման մասնակից լինելու նպատակով: Քաղաքականության մեջ այս բանը միշտ էլ այնքան դյուրին չէ, ինչպես այս պարզ ու մանկական օրինակի մեջ: Բայց նա, ով ցանկանար բանվորների համար այնպիսի դեղատոմս հնարել, որ կյանքի բոլոր դեպքերի համար առաջուց պատրաստ լուծումներ տա, կամ նա, ով խոստանար, թե հեղափոխական պրոլետարիատի քաղաքականության մեջ չեն լինի ոչ մի դժվարություններ և ոչ մի խճճված կացություններ—այդպիսին պարզապես շարլատան կլիներ:

Որպեսզի ծուռ մեկնությունների տեղ չտամ՝ կփորձեմ մատնանշել թեկուզ և շատ կարճ կերպով մի քանի հիմնական դրույթներ՝ կոնկրետ կոմպրոմիսները վերլուծելու նպատակով:

Գերմանական իմպերիալիստների հետ կոմպրոմիս կապող, այսինքն՝ Բրեստի դաշնագիրն ստորագրող կուսակցությունը գործնականի մեջ իր ինտերնացիոնալիզմը մշակել է 1914 թվականի վերջից: Նա չի վախեցել հայտարարելու ցարական միապետության պարտությունը և խարազանելու «հայրենիքի պաշտպանությունը» երկու իմպերիալիստական գիշատիչների միջև մղվող պատերազմի մեջ: Այդ կուսակցության պատգամավոր-պարլամենտականները Սիբիր գնացին, փոխանակ գնալու այն ուղին, որ տանում էր դեպի բուրժուական կառավարության մինիստրական պորտֆելները: Հեղափոխությունը, որ ցարիզմը տապալեց և հաստատեց դեմոկրատական հանրապետություն՝ այդ կուսակցությանը նոր և մեծագույն ստուգման հնարավորություն տվեց.—Նա ոչ մի տեսակի համաձայնություն չկայացրեց «իր» իմպերիալիստների հետ, այլ պատրաստեց նրանց տապալումը և տապալեց նրանց: Ձեռք առնելով քաղաքական իշխանությունը՝ այդ կուսակցությունը քարը քարի վրա չթողեց ո՛չ կալվածատիրական, ո՛չ կապիտալիստական սեփականությունից: Հրատարակելով և ոչինչ հայտարարելով իմպերիալիստների գաղտնի դաշնագրերը՝ այդ կուսակցությունը հաշտություն առաջարկեց բոլոր ժողովուրդներին և ենթարկվեց Բրեստի գիշատիչների բռնության միայն այն ժամանակ, երբ անգլո-ֆրանսիական իմպերիալիստները հաշտությունը վիժեցրին, իսկ բոլշևիկները մարդկայնորեն ամեն հնարավորը արին՝ արագացնելու համար հեղափոխությունը Գերմանիայում և մյուս երկրներում: Այս տեսակ կոմպրոմիսի կատարյալ իրավացիությունը, կատարված այսպիսի կուսակցության կողմից և այսպիսի պարագա-



ներում, որ-որի վրա դառնում է ավելի պարզ և ավելի ակներև ամենքի համար:

Մենշևիկներն ու էսէռները Ռուսաստանում (ինչպես և II Ինտերնացիոնալի բոլոր ղեկավարները ամբողջ աշխարհում 1914—1920 թվերին) սկսեցին դավաճանությամբ, արդարացնելով ուղղակի թե անուղղակի կերպով «հայրենիքի պաշտպանությունը», այսինքն իրենց կողոպտիչ բուրժուազիայի պաշտպանությունը: Նրանք շարունակեցին դավաճանությունը՝ մտնելով իրենց երկրի բուրժուազիայի հետ կոալիցիայի մեջ և պայքարելով իրենց բուրժուազիայի հետ միասին իրենց երկրի հեղափոխական պրոլետարիատի դեմ: Նրանց բլոկը սկզբում Կերենսկու[35] և կադետների, ապա Կոլչակի[36] և Դենիկինի[37] հետ Ռուսաստանում, ինչպես և նրանց արտասահմանյան համախոհների բլոկը իրենց երկրների բուրժուազիայի հետ՝ նշանակում էր անցնել բուրժուազիայի կողմը ընդդեմ պրոլետարիատի: Նրանց կոմպրոմիսը իմպերիալիզմի բանդիտների հետ սկզբից մինչև վերջ կայանում էր այն բանի մեջ, որ նրանք իրենց դարձրին իմպերիալիստական բանդիտիզմի գործակիցներ:

V.

## «ՁԱԽ» ԿՈՄՄՈՒՆԻԶՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ: ՂԵԿԱՎԱՐՆԵՐ—ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ—ԴԱՍԱԿԱՐԳ—ՄԱՍՍԱ.

Այն գերմանական կոմմունիստները, որոնց մասին մենք պիտի խոսենք այժմ, իրենց անվանում են ոչ թե «ձախ», այլ, եթե ես չեմ սխալվում՝ «սկզբունքային օպոզիցիա»: Բայց որ նրանք կատարելապես ընկնում են «ձախության մանկական հիվանդության» նշանների տակ, այդ ակներև կդառնա մեր հետագա շարադրանքի մեջ:

Այդ օպոզիցիայի տեսակետի վրա կանգնած բրոշյուրը՝ «Գերմանական կոմմունիստական կուսակցության (սպարտակյանների միության) պառակտումը», հրատարակված «Ֆրանկֆուրտ-Մայնի տեղական խմբակի» կողմից՝ չափազանց ցայտուն, ճիշտ, պարզ ու հակիրճ ձևով ներկայացնում է այդ օպոզիցիայի հայացքների էությունը: Մի քանի ցիտատներ բավական կլինեն ծանոթացնելու համար ընթերցողին այդ էության հետ.—

«Կոմմունիստական կուսակցությունը ամենավճռական դասակարգային կռվի կուսակցությունն է...».

«...Քաղաքականապես այդ անցողական ժամանակը» (կապիտալիզմի և սոցիալիզմի միջև) «պրոլետարական դիկտատուրայի շրջանն է...».

«... Խնդիր է ծագում. ո՞վ պիտի լինի դիկտատուրայի կրողը, Կոմմունիստական կուսակցությո՞ւնը, թե՞ պրոլետարական դասակարգը...

Սկզբունքապես պետք է ձգտել կոմմունիստական կուսակցության դիկտատուրային կամ պրոլետարական դասակարգի դիկտատուրային...»։

(Ցիտատի ընդգծումները ամեն տեղ բնագրինն են)։ Ապա բրոշյուրի հեղինակը մեղադրում է գերմանական կոմմունիստական կուսակցության «կենտկոմին» այն բանի համար, թե այդ «կենտկոմը» կոալիցիայի ճանապարհներ է վորոնում Գերմանիայի անկախ սոցիալ-դեմոկրատ կուսակցության[38] հետ, թե այդ «կենտկոմը» առաջ է քաշել կռվի «բոլոր քաղաքական միջոցների սկզբունքային ընդունելության խնդիրը», նրանց թվում նաև պարլամենտարիզմը, ծածկելու համար միայն անկախների հետ կոալիցիա կնքելու նրա գլխավոր և իսկական ձգտումները։ Յեվ բրոշյուրը շարունակում է.—

«Օպպոզիցիան ընտրել է ուրիշ ճանապարհ։ Նա այն կարծիքին է, թե կոմմունիստական կուսակցության տիրապետության և կուսակցության դիկտատուրայի խնդիրը տակտիկական խնդիր է միայն։ Համենայն դեպս կոմմունիստական կուսակցության տիրապետությունը կուսակցության ամեն տիրապետության վերջին ձևն է։ Սկզբունքապես պետք է ձգտել պրոլետար դասակարգի դիկտատուրային։ Յեվ կուսակցության ձեռք առած բոլոր միջոցները, նրա կազմակերպությունները, նրա պայքարի ձևերը, նրա ստրատեգիան և տակտիկան պետք է հարմարեցնել նույն նպատակին։ Սրան համաձայն՝ ամենայն վճռականությամբ պետք է հետ մղել ամեն կոմպրոմիսս ուրիշ կուսակցությունների հետ, ամեն տեսակ վերադարձ դեպի պատմականորեն և քաղաքականապես մաշված պարլամենտարիզմի պայքարի ձևերը, ինչպես և պետք է հետ մղել համաձայնության և համակերպման ամեն տեսակ քաղաքականություն»։ «Հեղափոխական պայքարի սպեցիֆիկ պրոլետարական մեթոդները պետք է ուժեղ կերպով ընդգծել։ Իսկ ներս քաշելու համար պրոլետարական ամենալայն շրջաններն ու շերտերը, վորոնք հեղափոխական կռվի մեջ են մտնելու կոմմունիստական կուսակցության ղեկավարության տակ, պետք է ստեղծել կազմակերպչական նոր ձևեր ամենալայն հիմքերի վրա և ամենալայն շրջանակներով։ Բոլոր հեղափոխական տարրերի այս համախմբման վայրը բանվորական միությունն է, կառուցված գործարանային կազմակերպությունների հիմքի վրա։ Նրա մեջ պետք է միանան այն բոլոր բանվորները, վորոնք հետևել են «դուրս պրոֆմիություններից» լոզունգին։ Այստեղ են ձևավորվում մարտնչող պրոլետարիատի ամենալայն ռազմական շարքերը։ Դասակարգային պայքարի, խորհրդային սիստեմի և դիկտատուրայի ճանաչումը բավական է այդ շարքերի մեջ մտնելու համար։ Պայքարող մասսաների հետագա ամբողջ քաղաքական դաստիարակությունը և պայքարի քաղաքական ուղղությունը կոմմունիստական կուսակցության գործն է արդեն, վոր դուրս է կանգնած բանվորական միությունից...»։



«... Այսպիսով, յերկու կոմմունիստական կուսակցություններ կանգնած են այժմ մեկը մյուսի դեմ.

«Մեկը—ղեկավարների կուսակցությունն է, վոր ձգտում է կազմակերպել հեղափոխական պայքարը և վարել նրան վերեվից, դիմելով կոմպրոմիսների և պարլամենտարիզմի, այնպիսի դրություններ ստեղծելու նպատակով, վորոնք նրանց հնարավորություն տան մտնելու կոալիցիոն կառավարության մեջ, վոր իր ձեռքում ունենա դիկտատուրան։

«Մյուսը—մասսայական կուսակցությունն է, վոր սպասում է հեղափոխական պայքարի բարձրացումը ներքեվից և գիտե ու գործադրում է այդ պայքարի մեջ նպատակին առույգ կերպով տանող մի մեթոդ միայն, հետ մղելով բոլոր պարլամենտական ու օպպորտյունիստական մեթոդները։ Այս միակ մեթոդը բուրժուազիայի անվերապահ տապալման մեթոդն է, վորպեսզի հետո հաստատվի պրոլետարական դասակարգային դիկտատուրան՝ սոցիալիզմի իրականացման համար...»

«... Այնտեղ ղեկավարների դիկտատուրա յե, այստեղ մասսաների դիկտատուրա. այսպես է մեր լոզունգը»։

Սրանք են գերմանական կոմմունիստական կուսակցության օպպոզիցիայի հայացքներ բնորոշող ամենաէյական դրությունները։

Ամեն մի բոլշևիկ, վոր գիտակցաբար անցել է և կամ մոտիկից դիտել է բոլշևիզմի զարգացումը 1903 թվականից սկսած՝ այս դատողությունները կարդալով անմիջապես կասե. «Ի՜նչպիսի հին, վաղուց ծանոթ թափթփուկ, ի՜նչպիսի «ձախ» յերեխայություն»[39]։

Բայց ավելի մոտից ծանոթանանք վերև բերված դատողությունների հետ։

Հարցի հենց այս կերպ առաջադրումը՝ «կուսակցության դիկտատուրա, թե՞ դասակարգի դիկտատուրա, ղեկավարների (կուսակցության) դիկտատուրա, թե՞ մասսաների (կուսակցության) դիկտատուրա», ցուցահանում է մտքի անհույս և աներևակայելի շփոթություն։ Մարդիկ ձգնում են ինչ-վոր մի առանձնահատուկ բան հնարելու և իրենց իմաստակության ջանքերի մեջ դառնում են ծիծաղելի։ Բոլորին հայտնի յե, վոր մասսաները բաժանվում են դասակարգերի, վոր մասսաները և դասակարգերը հակադրել կարելի յե միայն ընդհանրապես հակադրելով ահագին մեծամասնությունը—արտադրության հասարակական կարգի մեջ դրությամբ անբաժան մեծամասնությունը—այնպիսի կատեգորիաների, վորոնք արտադրության հասարակական կարգում գրավում են առանձին դրություն։ Բոլորին հայտնի յե նաև, վոր ընդհանրապես՝ կամ համենայն դեպս ժամանակակից քաղաքակրթված յերկրների մեջ՝ դասակարգերը ղեկավարվում են քաղաքական կուսակցությունների կողմից, վոր քաղաքական կուսակցությունները վորպես

ընդհանուր կանոն ղեկավարվում են ավելի կամ նվազ կայուն խմբակցությունների կողմից, կազմված ամենահեղինակավոր, ազդեցիկ, փորձված և ամենապատասխանատու պաշտոնների համար ընտրվելու հարմարություն ունեցող անձերից, վոր կոչվում են ղեկավարներ։ Այս բոլորը այբուբեն է։ Այս բոլորը պարզ է ու վորոշ։ Սրա փոխարեն ինչ պետք կար այդ տեսակ խառնաշփոթության, մի ինչ-վոր մութ, արհեստական լեզվի։ Մարդիկ մի կողմից, ինչպես յերևում է, շփոթվել են դժվար կայության մեջ ընկնելով, յերբ կուսակցության լեգալ և անլեգալ դրության արագ փոփոխությունը խանգարում է սովորական, նորմալ, պարզ հարաբերությունը ղեկավարների, կուսակցությունների և դասակարգերի միջև։ Գերմանիայում, ինչպես և մյուս յեվրոպական յերկրներում, չափազանց վարժվել են լեգալության, սովորել են ազատ և կանոնավոր կերպով, կուսակցության կանոնավոր համագումարների մեջ «ղեկավարներ» ընտրել, կուսակցության դասակարգային կազմը հարմար կերպով ստուգել պարլամենտական ընտրություններով, միտինգներով, մամուլով, արհեստակցական և մյուս միությունների տրամադրությամբ և այլն։ Յերբ հեղափոխության փոթորկալից ընթացքի և քաղաքացիական կռվի զարգացման հետևանքով այդ սովորական կարգից ստիպված յեղան արագ կերպով անցնել լեգալության և անլեգալության փոփոխության, միացնել ու համաձայնեցնել նրանց, «անհարմար», «վոչ դեմոկրատիկ» միջոցներով ընտրել, կազմել կամ պահել «ղեկավարների խմբակները»—ահա այդ ժամանակ մարդիկ գլուխները կորցրին և սկսեցին հնարել անբնական դատարկաբանություն։ Հավանորեն, հոլանդական «տրիբունիստները», վոր դժբախտություն են ունեցել ծնվելու փոքր յերկրում, առանձնապես կայուն և առանձնաշնորհյալ լեգալ կացության ավանդությունների մեջ, յերբեք չտեսած լեգալ ու անլեգալ դրությունների փոփոխությունը—իրենք մոլորվել ու շփոթվել են, ոժանդակել անհեթեթ անմտություններին։ Մյուս կողմից՝ նկատելի յե պարզապես անմտածված ու անկապ, մեր ժամանակի համար «մոդային» դարձած խոսքերի՝ «մասսաների» և «ղեկավարների» գործածությունը։ Մարդիկ շատ են լսել և լավ են սովորել, թե պետք է հարձակվել «ղեկավարների» վրա, հակադրել նրանց «մասսաներին», բայց չեն հասկացել, թե ինչը ինչին, իրենց համար չեն պարզել, թե բանն ինչումն է։

«Ղեկավարների» և «մասսաների» բաժանումը հատկապես ցայտուն և սուր կերպով արտահայտվեց իմպերիալիստական պատերազմի վերջում և նրանից հետո, բոլոր յերկրների մեջ։ Այս յերևույթի հիմնական պատճառը շատ անգամ են պարզաբանել Մարքսն ու Էնգելսը, 1852—1892 թվականների ընթացքում Անգլիայի օրինակի վրա։ Անգլիայի մոնոպոլ դրությունը «մասսայից» առաջ է բերել



«բանվորական արիստոկրատիա», կիսա-քաղքենիական, օպորտյունիստական։ Այդ բանվորական արիստոկրատիայի ղեկավարները հաճախ անցել են բուրժուազիայի կողմը, ուղղակի թե անուղղակի կերպով ապրել են նրա հաշվին։ Մարքսն արժանացավ այդ անամոթ մարդկանց ատելությանը միայն նրա համար, վոր բացարձակ կերպով նրանց դավաճաններ հայտարարեց։ Նորագույն (20-րդ դարի) իմպերիալիզմը միքանի առաջավոր յերկրների համար ստեղծել է մոնոպոլ-արտոնյալ դրություն, և այդ հողի վրա առաջացել է 2-րդ Ինտերնացիոնալի մեջ ղեկավար-դավաճանների, օպորտյունիստների, սոցիալ-շովինիստների տիպը, վոր պաշտպանում է իր համքյարի, իր շերտի բանվորական արիստոկրատիայի շահերը։ Այսպիսով ստեղծվել է օպորտյունիստական կուսակցությունների մեկուսացումը «մասսաներից», այսինքն աշխատավորների ամենալայն խավերից, նրանց մեծամասնությունից, ամենավատ վարձատրվող բանվորներից։ Հեղափոխական պրոլետարիատի հաղթանակն անկարելի յե առանց այդ չարիքի դեմ պայքարելու, առանց մերկացնելու, խայտառակելու և արտաքսելու այդ օպորտյունիստական, սոցիալ-դավաճան ղեկավարներին։ Այսպիսի քաղաքականություն վարեց 3-րդ Ինտերնացիոնալը։

Այս առիթով մասսաների դիկտատուրան ընդհանրապես հակադրել ղեկավարների դիկտատուրային—ծիծաղելի անհեթեթություն է և հիմարություն։ Առանձնապես զվարճալի յե այն, վոր հին ղեկավարների փոխարեն,—վորոնք հասարակ հարցերի նկատմամբ պաշտպանում եյին հանրամարդկային գաղափարներ,—իրականում, «կորչեն ղեկավարները» լոզունգի տակ առաջ են քաշում նոր ղեկավարներ, վորոնք գերբնական դատարկություններ և շփոթություններ են արտահայտում։ Այդպիսիներն են Գերմանիայում Լաուֆենբերգ, Վոլֆհայմ, Խորներ, Կարլ Շրեդեր, Ֆրիդրիխ Վենդել, Կարլ Էրլեր*։ Այս վերջինիս փորձերը՝ խնդիրը «խորացնելու» և առհասարակ քաղաքական կուսակցու-

* «Կոմմունիստական բանվորական Թերթ». (Համբուրգ, 7 փետրվար, 1920 Թ., № 52 «Կուսակցության ցրումը») հոդված Կարլ Էրլերի.—«Բանվոր դասակարգը չի կարող տապալել բուրժուական պետությունը՝ առանց բուրժուական դեմոկրատիան վոչնչացնելու, իսկ չի կարող վոչնչացնել բուրժուական դեմոկրատիան՝ առանց կուսակցությունները տապալելու»։

Ռոմանական սինդիկալիստների յեվ անարխիստների ամենաշփոթ գլուխները կարող են «գոհացում» ստանալ. լուրջ գերմանացիները, վորոնք ըստ յերևույթին իրենց մարքսիստ են համարում (Կ. Էրլեր յեվ Կ. Խորներ իրենց Թերթի մեջ իրենց հոդվածներով առանձնապես լրջորեն ապացուցանում են, թե իրենց լուրջ մարքսիստ են համարում յեվ հատկապես ծիծաղելի կերպով անմտություններ են ասում, ցույց տալով, թե չեն հասկացել մարքսիզմի այբուբենն իսկ) յեվ հասնում են ծայրահեղ անհեթեթության։ Միայն **մարքսիզմի** ճանաչումը դեռ չի ազատում սխալներից. ռուսներն այդ հատկապես լավ գիտեն, քանի վոր մեզանում մարքսիզմը առանձնապես հաճախ մոդա յե յեղել։

թյունները անպետք և բուրժուական հռչակելու՝ այնպիսի հերկուլեսյան անհեթեթություն են, որ մնում է ձեռք քաշել նրանից։ Ահա թե ինչպես մի փոքրիկ սխալից կարելի յե հասնել հրեշավոր մեծ սխալի, յեթե սխալի վրա համառեն, յեթե այն խորապես հիմնավորեն, յեթե «տանեն մինչև վերջ»։

Կուսակցականության և կուսակցական դիսցիպլինի բացասումը— ահա թե ինչ բանի յե հասնում օպպոզիցիան։ Իսկ դա նշանակում է՝ պրոլետարիատի կատարյալ զինաթափում բուրժուազիայի օգտին։ Դա համազոր է ճիշտ այն մանր-բուրժուական մեղկության, անկայունության, անդիմացկունության, միության ու կազմակերպված գործողության անընդունակության, որ անխուսափելի կերպով կկործանի ամեն մի պրոլետարական հեղափոխական շարժում, յեթե միայն խրախուսվի այն։ Բացասել կուսակցականությունը կոմմունիստական տեսակետից՝ նշանակում է կապիտալիզմի սնանկության նախօրյակից (Գերմանիայում) թռչել դեպի կոմմունիզմի վոչ թե ստորին կամ միջին, այլ բարձրագույն փազը։ Ռուսաստանում մենք ապրում ենք (բուրժուազիայի տապալումից յերեք տարի հետո) առաջին քայլերն այն ճանապարհի, որ տանում է կապիտալիզմից դեպի սոցիալիզմ, կամ դեպի կոմմունիզմի ստորին ստադիան։ Դասակարգերը մնացել են ամեն տեղ և կմնան՝ պրոլետարիատի ձեռքով իշխանության նվաճումից տարիներ հետո են։ Թերևս Անգլիայում, ուր չկա գյուղացիություն (բայց և այնպես կան մանր տնտեսատերեր) այս ժամանակամիջոցը կարճատև լինի։ Վոչնչացնել դասակարգերը—նշանակում է վոչ միայն արտաքսել կալվածատերերին և կապիտալիստներին. այդ գործը մենք համեմատաբար հեշտ կատարեցինք։ Դա նշանակում է նաև վոչնչացնել ապրանքների մանր արտադրողներին, իսկ նրանց անկարելի յե արտաքսել, նրանց անկարելի յե ճնշել, նրանց հետ պետք է ապրել, նրանց կարելի յե և պետք է փոխել, վերադաստիարակել շատ յերկարատև, դանդաղ, զգուշավոր կազմակերպչական աշխատանքով։ Նրանք պաշարում են պրոլետարիատը ամեն կողմից մանր-բուրժուական տարերքով, այդ տարերքով սնում են նրան, այլասերում են, մշտապես առաջ են բերում պրոլետարիատի ներսում մանր-բուրժուական բնութագրկության, ցրվածության, ինդիվիդուալիզմի ռեցիդիվներ՝ վոգևորությունից հուսահատության անցնող փոփոխակի տրամադրությունները։ Անհրաժեշտ է խստագույն կենտրոնացում և դիսցիպլին պրոլետարիատի քաղաքական կուսակցության ներսում, վորպեսզի կարելի լինի հակազդել նրան, վորպեսզի պրոլետարիատի կազմակերպչական դերը (իսկ այս նրա գլխավոր դերն է) հնար լինի տանել ճիշտ, հաջող, հաղթական։ Պրոլետարիատի դիկտատուրան մի համառ պայքար է, արյունահեղ և անարյուն, բռնական և խաղաղ, ռազմական և տնտե-



սական, մանկավարժական և վարչական համառ կռիվ հին հասարակության ուժերի և ավանդությունների դեմ։ Միլիոնների և տասնյակ միլիոնների սովորույթի ուժը—ամենասարսափելի ուժն է։ Առանց պայքարի մեջ կոփված և յերկաթե կուսակցության, առանց տվյալ դասակարգի լավագույն մասի վստահությունը վայելող կուսակցության, առանց մասսաների տրամադրության հետևող և նրա վրա ազդող կուսակցության—անկարելի յե այդպիսի մի պայքար հաջողությամբ վարել։ Հազար անգամ ավելի հեշտ է հաղթել խոշոր կենտրոնացած բուրժուազիային, քան թե «հաղթել» միլիոնավոր և միլիոնավոր մանր տնտեսատերերին. իսկ նրանք իրենց ամենօրյա, առօրյա, աննկատելի, անշոշափելի, քայքայող գործունեությամբ իրականացնում են իսկ յեվ իսկ այն հետևանքները, ինչ վոր հարկավոր է բուրժուազիային, ինչ վոր նրան վերականգնում է։ Ով թեկուզ վորևէ կերպ թուլացնում է պրոլետարիատի կուսակցության յերկաթե դիսցիպլինը (մանավորապես նրա դիկտատուրայի շրջանում), նա փաստապես օգնում է բուրժուազիային ընդդեմ պրոլետարիատի։

Ղեկավարների — կուսակցության — դասակարգի — մասսայի այս խնդիրների հետ միասին պետք է դնել նաև «ռեակցիոն» պրոֆմիությունների խնդիրը։ Բայց նախ և առաջ յես թույլ կտամ ինձ մի քանի յեզրակացնող դիտողություն ես՝ հիմնված մեր կուսակցության փորձի վրա։ Հարձակումներ «ղեկավարների դիկտատուրայի» վրա միշտ յեղել են մեր կուսակցության մեջ։ Առաջին անգամ յես հիշում եմ այդպիսի հարձակում 1895 թվին, յերբ ձևապես դեռ գոյություն չուներ կուսակցությունը, բայց Պիտերի կենտրոնական խմբակն արդեն սկսել էր կազմավորվել և իր վրա պիտի առներ ռայոնական խմբակների ղեկավարությունը։ Մեր կուսակցության 9-րդ համագումարին[10] (ապրիլ, 1920 թ.) մի փոքրիկ օպպոզիցիա գոյություն ուներ, որ նույնպես խոսում էր «ղեկավարների դիկտատուրայի», «օլիգարխիայի» և այլնի դեմ[11]։ Այդ պատճառով վոչ մի նոր, վոչ մի զարմանալի, վոչ մի սարսափելի բան չկա գերմանական «ձախ կոմմունիզմի» «մանկական հիվանդության» մեջ։ Այդ հիվանդությունը անցնում է անվտանգ, և օրգանիզմը նրանից հետո մինչև իսկ ավելի յե ամրանում։ Մյուս կողմից, լեգալ և անլեգալ աշխատանքի արագ փոփոխությունը, որ կապված է գլխավոր շտաբը, այսինքն ղեկավարներին հատկապես «թաքցնելու», հատկապես գաղտնի պահելու անհրաժեշտության հետ—մեր մեջ յերբեմն շատ վտանգավոր յերևույթներ է առաջ բերել։ Ամենից վատն այն էր, որ 1912 թվին բոլշևիկների Կենտրոնական Կոմիտեյի մեջ մտավ պրովոկատոր Մալինովսկին[12]։ Նա մատնեց տասնյակ ու տասնյակ լավագույն և անձնվեր ընկերներին, նրանց տաժանակիր աշխատանքների դատապարտելով և արագացնելով նրանցից շատերի

ժամը։ Յեթե նա չկարողացավ ավելի մեծ չարիք պատճառել, այն պատճառով էր, վոր մեզանում ճիշտ էր դրված լեգալ և անլեգալ աշխատանքի փոխ-հարաբերությունը։ Վորպեսզի կարողանա մեր վստահությունը գրավել, Մալինովսկին, վորպես կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի անդամ և Դումայի պատգամավոր, պիտի ոգներ մեզ պահելու լեգալ ամենօրյա թերթեր, վորոնք ցարիզմի ժամանակ նույնիսկ կարողանում եյին պայքար մղել մենշևիկների ոպպորտյունիզմի դեմ, քարոզել բոլշևիզմի հիմունքները պետք յեղած չափով ծածկված ձևի տակ։ Մի ձեռքով դեպի տաժանակիր աշխատանք և մահ ուղարկելով բոլշևիզմի տասնյակ ու տասնյակ լավագույն գործիչներին, Մալինովսկին մյուս ձեռքով պարտավորված էր ոգնել տասնյակ և տասնյակ հազարավոր նոր բոլշևիկների դաստիարակությանը՝ լեգալ մամուլի միջոցով։ Այս փաստի մասին պետք է լավ մտածեն այն գերմանացի ընկերները (ինչպես և ամերիկացի ու անգլիացի, ֆրանսիացի և իտալացի ընկերները), վորոնք կանգնած են ռեակցիոն պրոֆմիությունների մեջ հեղափոխական աշխատանք տանել սովորելու խնդրի առջև*։

Շատ յերկրներում—և նրանց թվում ամենաառաջավորներում—բուրժուազիան անկասկած կերպով պրովոկատորներ է ուղարկում և կուղարկի կոմմունիստական կուսակցությունների մեջ։ Այդ վտանգի դեմ կռվելու լավագույն միջոցներից մեկն էլ—լեգալ և անլեգալ աշխատանքի հաջող հարակցությունն է։

## VI.

## ԱՐԴՅՈՔ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ ՊԵ՞ՏՔ Ե ԱՇԽԱՏԵՆ ՌԵԱԿՑԻՈՆ ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ.

Գերմանական «ձախակողմյաններն» իրենց համար այս խնդրի պատասխանը համարում են լուծված անպայման բացասական կերպով։ Նրանց կարծիքով, դեկլարացիաները և զայրացած բացականչությունները «հետադիմական» և «հակահեղափոխական» պրոֆմիությունների դեմ բավական են (այս բանը Կ. Խորների գրության մեջ դուրս է գալիս հատկապես «լուրջ» և հատկապես անմիտ ձևով), «ապացուցելու» հեղափոխականների, կոմմունիստների աշխատանքի ավելորդությունը և նույնիսկ անթույլատրելիությունը դեղին, սոցիալ-շովինիստական, համաձայնական, լեգինյան, հակահեղափոխական պրոֆմիությունների մեջ։

Բայց, վորքան էլ գերմանական «ձախերը» համոզված լինեն, թե այսպիսի մի տակտիկա հեղափոխական է, իրապես սխալ է նա իր հիմքի մեջ և դատարկ ֆրազներից զատ՝ ուրիշ վոչ մի բան չի պարունակում։

Այս բանը պարզելու համար՝ յես կսկսեմ մեր փորձից՝ համապատասխան ներկա հոդվածի ընդհանուր պլանին, վոր նպատակ ունի կիրառել Արևմտյան Յեվրոպայի նկատմամբ այն, ինչ վոր բոլշևիզմի պատմության և ժամանակակից տակտիկայի մեջ ունի ընդհանուր արժեք, ընդհանուր գործադրական և ընդհանուր պարտադիր բնույթ։

Ղեկավարների, կուսակցության, դասակարգի, մասսաների փոխհարաբերությունը և դրա հետ միասին՝ պրոլետարիատի դիկտատուրայի ու նրա կուսակցության վերաբերումը պրոֆմիությունների հանդեպ՝ այժմ մեզանում կոնկրետ կերպով արտահայտվում է հետևյալ ձևի մեջ։ Դիկտատուրան իրագործում է խորհուրդների մեջ կազմակերպված պրոլետարիատը, վորին ղեկավարում է բոլշևիկների կոմմունիստական կուսակցությունը, վոր կուսակցական վերջին համագումարի (ապրիլ, 1920) տվյալների համաձայն ունի 611.000 անդամ։ Անդամների թիվը խիստ կերպով տատանվում էր Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ և հետո, առաջներում նա նշանակելի չափով նվազ է յեղել, մինչև իսկ 1918 և 1919 թվականներին[43]։ Մենք վախենում ենք կուսակցության չափազանց մեծացումից, վորովհետև կառավարական կուսակցությանն անխուսափելի կերպով ձգտում են մոտենալ կարիերիստներ և բախտախնդիրներ, վորոնք միայն գնդակահարության են արժանի։ Վերջին անգամ մենք լայն կերպով բաց արինք կուսակցության դռները—միայն բանվորների և գյուղացիների առջև—այն որերում (1919 թվի ձմեռը), յերբ Յուդենիչը[44] գտնվում էր Պիտերից մի քանի վերստ հեռու միայն, իսկ Դենիկինը գտնվում էր Որյոլում (Մոսկվայից մոտ 350 վերստի վրա), այսինքն այն ժամանակ, յերբ Խորհրդային Հանրապետության սպառնում էր որհասական մահվան վտանգ, և յերբ արկածախնդիրները, կարիերիստներն ու բախտախնդիրները և առհասարակ յերերուն մարդիկ չեյին կարող ձեռնտու կարիերա սպասել կոմմունիստներին միանալուց (այլ ավելի շուտ կսպասեյին կախաղան ու չարչարանք)։ Կուսակցությունը, վոր

* Մալինովսկին գերի յեր Գերմանիայում։ Յերբ նա բոլշևիկների իշխանության ժամանակ Ռուսաստան վերադարձավ՝ իսկույն դատի հանձնվեց յեվ գնդակահարվեց մեր բանվորների կողմից։ Մենշևիկները մի առանձին չարությամբ հարձակվում են մեզ վրա այն սխալի պատճառով, վոր պրովոկատորը յեղել է մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյում։ Բայց յերբ մենք Կերենսկու իշխանության օրով պահանջում եյինք ձերբակալել Դումայի Նախագահ Ռոձյանկոյին յեվ դատի տալ—բանի վոր Ռոձյանկոն դեռ պատերազմից առաջ իմացել է Մալինովսկու պրովոկատորության մասին յեվ չե հաղորդել այդ Դումայի աշխատավորականներին ու բանվորներին—սակայն վո՛չ մենշևիկները, վո՛չ էսերները, վոր մասնակցում եյին Կերենսկու կառավարությանը՝ չպաշտպանեցին մեր պահանջը, յեվ Ռոձյանկոն մնաց ազատ, ազատ հեռացավ Դենիկինի մոտ։

ամեն տարի ունենում է համագումար (վերջինս՝ հազար անդամից մի պատվիրակ), ղեկավարվում է 19 անդամից բաղկացած Կենտրոնական Կոմիտեյի կողմից, որ ընտրվում է համագումարում, ընդ որում ընթացիկ աշխատանքը Մոսկվայում կատարում է մի ավելի փոքր մարմին, այսինքն այսպես կոչված «Օրգբյուրոն» (կազմակերպչական—օրգանիզացիոն բյուրո), և «Պոլիտբյուրոն» (քաղաքական—պոլիտիկական բյուրո)[15], որոնք ընտրվում են Կենտրոնական Կոմիտեյի պլենար նիստում, յուրաքանչյուր բյուրոյի մեջ հինգական անդամ Կենտրոնական Կոմիտեյից։ Այսպիսով, դուրս է գալիս մի կատարյալ «օլիգարխիա»։ Ոչ մի քաղաքական կամ կազմակերպչական կարևոր խնդիր չի վճռվում մեր Հանրապետության մեջ ոչ մի պետական հաստատության կողմից՝ առանց կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի ղեկավարող ցուցումների։

Կուսակցությունը իր աշխատանքի մեջ անմիջապես հենվում է պրոֆեսիոնալ միությունների վրա, որ վերջին համագումարի (ապրիլ, 1920 թ.) տվյալների համաձայն ունեն չորս միլիոնից ավելի անդամ և որ ձևապես անկուսակցական են։ Փաստապես, միությունների խոշոր մեծամասնության բոլոր ղեկավար հիմնարկությունները և առաջին հերթին, իհարկե, համառուսական ընդհանուր պրոֆեսիոնալ կենտրոնի կամ բյուրոյի (В Ц С П С—Պրոֆեսիոնալ Միությունների Համառուսական Կենտրոնական Խորհուրդ) հիմնարկությունները կազմված են կոմմունիստներից և անց են կացնում կուսակցության բոլոր դիրեկտիվները։

Այսպիսով ստացվում է ընդհանրապես և ամբողջապես ճկուն և համեմատաբար լայն, շատ ուժեղ, ձևապես ոչ կոմմունիստական, պրոլետարական ապարատ, որի միջոցով կուսակցությունը սերտորեն կապված է դասակարգի և մասսայի հետ, և որի միջոցով, կուսակցության ղեկավարությամբ, իրագործվում է դասակարգի դիկտատուրան։ Երկիրը կառավարել և իրականացնել դիկտատուրան առանց պրոֆմիությունների հետ սերտ կապի, առանց նրանց ջերմ աջակցության, առանց նրանց անձնազոհ աշխատանքի՝ մենք անշուշտ չէինք կարող ոչ միայն տնտեսական, այլ և ռազմական շինարարության ասպարեզում, ոչ միայն յերկու տարի, այլ և յերկու ամիս։ Հասկանալի յե, որ այս սերտ կապը գործնականում նշանակում եր պրոպագանդայի և ագիտացիայի շատ բարդ և բազմատեսակ աշխատանք, հաճախակի և ժամանակին խորհրդակցություններ պրոֆմիությունների ոչ միայն ղեկավարող, այլ և ընդհանրապես ազդեցիկ ու գործունյա անդամների հետ, նշանակում եր վճռական պայքար մենշևիկների դեմ, որոնք մինչև այժմ էլ ունեն որոշ, թեև շատ փոքր թվով կողմնակիցներ, որոնց սովորեցնում են ամենատեսակ հակահեղափոխական մեքենայություններ, սկսած (բուրժուական) դեմոկրատիայի գաղափարական պաշտպանությունից, պրոֆմիությունների «անկախության» քարոզից (անկախություն պրոլետարական պետական իշխանությունից) մինչև պրոլետարական դիսցիպլինի սաբոտաժ և այլն և այլն։



Պրոֆմիությունների միջոցով կապը «մասսաների» հետ մենք բավարար չենք համարում։ Հեղափոխության ընթացքում գործնական կյանքը մեզ մոտ ստեղծել է այնպիսի հիմնարկություն, ինչպիսին են անկուսակցական բանվորական յեվ գյուղացիական կոնֆերենցիաները, և մենք աշխատում ենք ամեն կերպ պաշտպանել, զարգացնել, լայնացնել այն, որպեսզի կարողանանք հետևել մասսաների տրամադրության, մոտենալ նրանց, պատասխանել նրանց հարցումներին, նրանց միջից լավագույն աշխատողներին առաջ քաշենք պետական պաշտոնների համար և այլն։ Վերջին դեկրետներից մեկով, որով Պետական Վերահսկողության Ժողովրդական Կոմիսարիատը վերածվում եր «Բանվորա-Գյուղացիական Տեսչության», այդ կարգի անկուսակցական կոնֆերենցիաներին իրավունք է տրվում ընտրել Պետական Վերահսկողության անդամներ՝ զանազան տեսակ քննությունների համար և այլն։

Ապա, հասկանալի յե, կուսակցության ամբողջ աշխատանքը տարվում է Խորհուրդների միջոցով, որոնք միացնում են աշխատավորական մասսաները առանց պրոֆեսիայի խտրության։ Խորհուրդների գավառական համագումարները այնպիսի դեմոկրատական հիմնարկություն են, որի նմանը չի տեսել բուրժուական աշխարհի ամենալավ դեմոկրատական հանրապետություններից որևե մեկը։ Այդ համագումարների միջոցով (որոնց կուսակցությունը աշխատում է հետևել որքան կարելի յե ուշադիր կերպով), ինչպես և գիտակից բանվորներին զանազան պաշտոնների համար մշտապես գյուղերն ուղարկելով, իրականանում է պրոլետարիատի ղեկավարող դերը գյուղացիության նկատմամբ, իրականանում է քաղաքային պրոլետարիատի դիկտատուրան, սիստեմատիկ պայքարը հարուստ, բուրժուական, շահագործող ու սպեկուլյացիա անող գյուղացիության դեմ և այլն։

Այսպես է պրոլետարական պետական իշխանության ընդհանուր մեխանիզմը, դիտելով «վերևից», դիկտատուրան իրականացնելու պրակտիկայի տեսակետից։ Հուսով ենք, ընթերցողը կհասկանա, թե ինչու ռուս բոլշևիկը, որ ծանոթ է այդ մեխանիզմին և որ դիտել է, թե ինչպես այդ մեխանիզմը զարգացել է մանր, անլեգալ, գաղտնի խմբակներից 25 տարվա ընթացքում—չի կարող մանկական ծիծաղելի անմտություն չհամարել բոլոր այն զրույցները, «վերևից» թե «ներքևից», ղեկավարների դիկտատուրա, թե մասսաների դիկտատուրա,

ևայլն, նման այնպիսի մի վեճի, թե արդյոք մարդուն ձախ ոտքն է շատ օգտակար, թե աջ ձեռքը։

Այդպիսի ծիծաղելի մանկական անմտություն են թվում մեզ գերմանական ձախերի լուրջ, շատ գիտական և սարսափելի կերպով հեղափոխական դրույթներն այն մասին, թե կոմմունիստները չեն կարող և չպետք է աշխատեն ռեակցիոն պրոֆմիությունների մեջ, թե թույլատրելի յե հրաժարվել այդ աշխատանքից, թե պետք է դուրս գալ պրոֆմիություններից և անպայման կերպով կազմել բոլորովին թարմ, բոլորովին մաքուր, բոլորովին գողտրիկ (և մեծ մասամբ, հավանորեն, բոլորովին ջահել) կոմմունիստների կողմից հղացված «բանվորական միություն» և այլն և այլն։

Կապիտալիզմը սոցիալիզմին անխուսափելի կերպով ժառանգություն է թողնում մեկ կողմից հին, դարերով կազմված պրոֆեսսիոնալ և արհեստավորական տարբերություններ բանվորների միջև, մյուս կողմից՝ պրոֆմիություններ, վորոնք շատ դանդաղ կերպով, տարիների ընթացքում միայն կարող են զարգանալ և պիտի զարգանան, դառնան ավելի լայն, նվազ համքյարական; արտադրական միություններ (ընդգրկող ամբողջ արտադրություններ, և վոչ միայն համքյարություններ, արհեստներ կամ պրոֆեսսիաներ)։ Յեվ ապա, այդ արտադրական միությունների միջոցով կարելի կլինի անցնել աշխատանքի տարբերությունների վոչնչացման մարդկանց միջև, դաստիարակել, սովորեցնել, նախապատրաստել բազմակողմանի կերպով զարգացած և բազմակողմանի կերպով պատրաստված մարդիկ, մարդիկ, վորոնք կարողանան ամեն բան անել։ Դրան է կոմմունիզմը դիմում, պիտի դիմի և կհասնի, բայց միայն տարիների յերկար շարքից հետո։ Փորձել այսօր գործնականորեն նախերգել կատարյալ կերպով զարգացած, կատարելապես ամրապնդված ու կատարելապես կազմավորված, լիովին ծաղկած ու հասունացած կոմմունիզմի ապագա արդյունքը—այդ միևնույն է թե չորս տարեկան մանուկին բարձրագույն մաթեմատիկա սովորեցնել։

Մենք կարող ենք (և պարտավոր ենք) սկսել սոցիալիզմի կառուցումը վոչ թե ֆանտաստիկ և վոչ թե հատկապես մեր ստեղծած մարդկային նյութից, այլ նրանից, ինչ մեզ ժառանգություն է թողել կապիտալիզմը։ Սա շատ «դժվար» է, խոսք չկա, բայց վորևե ուրիշ մոտեցում խնդրին այնքան անլուրջ կլինի, վոր նրա մասին չարժե իսկ խոսել։

Պրոֆմիությունները բանվոր դասակարգի համար հսկայական պրոգրես եյին կապիտալիզմի զարգացման սկզբում, վորպես անցում բանվորների ցրիվ և անօգնական վիճակից դեպի դասակարգային միության սաղմերը։ Յերբ սկսեց աճել պրոլետարների դասակարգային միության բարձր ձևը, պրոլետարիատի հեղափոխական կուսակցու-



թյունը (վոր արժանի չի լինի իր անվանը, մինչև չսովորի կապել ղեկավարներին դասակարգի և մասսայի հետ մի անքակտելի ամբողջության մեջ)—այն ժամանակ պրոֆմիություններն սկսեցին անխուսափելի կերպով ցուցահանել վորոշ ռեակցիոն գծեր, համքյարական վորոշ նեղություն, վորոշ թեքում դեպի ապոլիտիցիզմ, վորոշ անշարժություն և այլն։ Բայց աշխարհում վոչ մի տեղ պրոլետարիատի զարգացումը չի ընթացել և չեր կարող ընթանալ այլ կերպ, քան պրոֆմիությունների միջոցով, քան նրանց և բանվոր դասակարգի կուսակցության փոխադարձ ազդեցության միջոցով։ Քաղաքական իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից մի հսկայական քայլ է դեպի առաջ պրոլետարիատի համար, վորպես դասակարգի, և կուսակցությունն էլ պետք է ավելի ևս, և վոչ միայն հին, այլ և նոր ձևով դաստիարակի պրոֆմիությունները, ղեկավարի նրանց։ Դրա հետ միասին չպիտի մոռանա, սակայն, վոր նրանք մնում են և յերկար ժամանակ կմնան կոմմունիզմի անհրաժեշտ դպրոց և նախապատրաստական դպրոց պրոլետարների դիկտատուրայի իրականացման համար, նրանք կմնան վորպես բանվորների անհրաժեշտ միություն, վորով յերկրի ամբողջ տնտեսության վարչությունը կանցնի բանվոր դասակարգի (և վոչ առանձին պրոֆեսսիաների), հետո նաև բոլոր աշխատավորների ձեռքը։

Պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ պրոֆմիությունների վորոշ ռեակցիոներություն անխուսափելի յե մատնանշված իմաստով։ Չհասկանալ այս, նշանակում է լիովին չհասկանալ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու հիմնական պայմանները։ Վախենալ այս «ռեակցիոներությունից», փորձել առաջ գնալ առանց նրանց, թռչել նրա վրայով—կլինի մեծագույն հիմարություն, քանի վոր դա կնշանակե վախենալ պրոլետարական ավանգարդի այն դերից, վոր է կրթել, լուսավորել, դաստիարակել, նոր կյանքի քաշել բանվոր դասակարգի և գյուղացիության ամենահետամնաց շերտերն ու մասսաները։ Մյուս կողմից, պրոլետարիատի դիկտատուրայի իրականացումը հետաձգել մինչև այն ժամանակ, յերբ մնացած չի լինի վոչ մի արհեստակցականորեն նեղմիտ բանվոր, համքյարական և տրեդ-յունիոնական նախապաշարումներ ունեցող վոչ մի բանվոր—կլիներ ավելի ևս խորը սխալ։ Քաղաքագետի արվեստը (և կոմմունիստի՝ իր առջև դրված խնդիրների ճիշտ ըմբռնումը) հենց այնտեղ է, վոր ճիշտ հաշվի առնի այն պայմաններն ու մոմենտը, յերբ պրոլետարիատի ավանգարդը կարող է հաջողությամբ ձեռք առնել իշխանությունը, յերբ նա կարող է այդ միջոցին և նրանից հետո ստանալ բանվորական դասակարգի և վոչ-պրոլետարական աշխատավոր մասսաների բավականաչափ լայն շերտերի բավարար պաշտպանությունը, յերբ նա դրանից հետո կարող է պահել, ամրապնդել, ընդլայնել իր տիրապետությունը, դաստիա-

քակելով, սովորեցնելով, գրավելով աշխատավորների ավելի ու ավելի լայն մասսաներ։

Հետո։ Ռուսաստանից ավելի առաջավոր յերկրներում պրոֆմիությունների վորոշ ռեակցիոներությունն յերևացել է և պետք է վոր յերևար անկասկած ավելի ուժեղ կերպով, քան մեզ մոտ։ Մեզանում մենշևիկները պրոֆմիությունների մեջ հենարան են ունեցել (այժմ էլ շատ քիչ պրոֆմիությունների մեջ մասամբ ունեն) հատկապես համքյարական նեղմտության, պրոֆեսիոնալ եգոիզմի և ոպորտյունիզմի հետևանքով։ Արևմուտքում, այնտեղի մենշևիկներն ավելի ամուր կերպով են «նստել» պրոֆմիությունների մեջ, այնտեղ առաջացել է շատ ավելի ուժեղ շերտ պրոֆեսիոնալիստական, նեղմիտ, ինքնասեր, չորսիրտ, շահախնդիր, քաղքենի, իմպերիալիստորեն տրամադրված յեվ իմպերիալիզմից կաշառված, իմպերիալիզմից այլասերված «բանվորական արիստոկրատիա», քան թե մեզանում։ Այս անվիճելի է։ Արևմտյան Յեվրոպայում պայքարը Գոմպերսների[46], պարոններ ժուոների[47], Հենդերսոնների[48], Մերհեյմների[49], Լեգինների և ընկերության դեմ ավելի դժվար է, քան մեր մենշևիկների դեմ, վորոնք ներկայացնում են կատարելապես միասեռ սոցիալական և քաղաքական տիպ։ Այս պայքարը պետք է վարել անխնա և պետք է հասցնել, ինչպես մենք հասցրինք, մինչև սոցիալ-շովինիզմի և ոպորտյունիզմի բոլոր անուղղելի ղեկավարների վերջնական վարկաբեկումն ու արտաքսումը պրոֆմիություններից։

Չի կարելի քաղաքական իշխանությունը նվաճել (և չպետք է փորձել վերցնել քաղաքական իշխանությունը), քանի դեռ այս պայքարը չի հասել վորոշ աստիճանի, ըստ վորում այս «վորոշ աստիճանը» միակերպ չէ տարբեր յերկրներում և տարբեր պայմանների մեջ։ Ճիշտ կերպով հաշվի առնել այն՝ կարող են միայն պրոլետարիատի փորձված, ուժեղ և իրազեկ ղեկավարները, յուրաքանչյուր յերկրում առանձին։ (Մեզանում այդ պայքարի չափանիշը, ի միջի այլոց, Սահմանադիր ժողովի ընտրություններն եյին 1917 թվականի նոյեմբերին, միքանի օր անց 1917 թվականի հոկտեմբեր 25-ի պրոլետարական հեղաշրջումից։ Ըստ վորում այդ ընտրություններին մենշևիկները գլխովին ջախջախվեցին, ստանալով 0,7 միլիոն ձայն, Անդրկովկասի հետ միասին ընդամենը 1,4 միլիոն ձայն—ընդդեմ բոլշևիկների ստացած 9 միլիոն ձայնի։ Տես իմ հոդվածը՝ «Սահմանադիր ժողովի ընտրությունները և պրոլետարիատի դիկտատուրան», № 7—8 «Կոմմունիստական Ինտերնացիոնալ»)։

Բայց պայքարը «բանվորական արիստոկրատիայի» դեմ մենք վարում ենք բանվորական մասսայի անունից և նրան մեր կողմը բերելու նպատակով. ոպորտյունիստական և սոցիալ-շովինիստական



ղեկավարների դեմ մենք կռվում ենք բանվոր դասակարգը մեր կողմը քաշելու համար։ Մոռանալ այս ամենատարրական և շատ բացահայտ ճշմարտությունը՝ հիմարություն կլիներ։ Իսկ և իսկ այսպիսի հիմարություն են անում գերմանական «ձախ» կոմմունիստները, վորոնք պրոֆմիությունների վերին շերտի ռեակցիոներությունից և հակա-հեղափոխականությունից յեզրակացնում են, թե... պետք է դուրս գալ պրոֆմիություններից... հրաժարվել նրանց մեջ աշխատելուց... ստեղծել բանվորական կազմակերպությունների նոր, հնարովի ձևեր։ Այս մի այնպիսի աններելի հիմարություն է, վոր հավասար է կոմմունիստների կողմից բուրժուազիային արած ամենամեծ ծառայության։ Վորովհետև մեր մենշևիկները, ինչպես և պրոֆմիությունների բոլոր ոպորտյունիստական, սոցիալ-շովինիստական, կաուցկիական ղեկավարները վոչ այլ ինչ են, յեթե վոչ «բուրժուազիայի ագենտներ բանվորական շարժման մեջ» (ինչպես մենք ասել ենք միշտ մենշևիկների դեմ) և կամ թե «կապիտալիստ դասակարգի բանվոր գործակատարները» (labor lieutenants of the capitalist class), ինչպես գեղեցիկ և խոր ճշտությամբ բնորոշել են Դանիել-դը-Լեոնեյի հետևողները Ամերիկայում։ Չաշխատել ռեակցիոն պրոֆմիությունների ներսում—այդ նշանակում է վոչ-բավականաչափ զարգացած և հետամնաց բանվորական մասսաները թողնել ռեակցիոն ղեկավարների, բուրժուազիայի ագենտների, բանվոր արիստոկրատների և կամ «բուրժուականացած բանվորների» ազդեցության տակ։ (Տես՝ Ենգելսի 1852 թվի նամակը Մարքսին անգլիական բանվորների մասին)։

Ռեակցիոն պրոֆմիությունների մեջ կոմմունիստների վոչ-մասնակցության հենց այս անհեթեթ «թեորիան» շոշափելի կերպով ցույց է տալիս, թե «ձախ» կոմմունիստներն ինչպիսի թեթևամտությամբ են վերաբերվում «մասսաների» վրա ազդելու խնդրին, թե վորքան ի չարն են գործ դնում իրենց աղմուկը «մասսաների» նկատմամբ։ «Մասսային» օգնել կարողանալու և նրա համակրանքն ու պաշտպանությունը ձեռք բերելու համար՝ հարկավոր է դժվարություններից չվախենալ, յերկյուղ չկրել «ղեկավարների» հետամտությունից, վոտնձգություններից, վիրավորանքներից ու հալածանքներից (ղեկավարների, վոր ոպորտյունիստ ու սոցիալ-շովինիստ լինելով՝ մեծ մասամբ ուղղակի թե անուղղակի կերպով կապված են բուրժուազիայի և վոստիկանության հետ), և անպայման կերպով աշխատել այնտեղ, վորտեղ մասսա կա։ Պետք է կարողանալ զոհաբերել ամեն ինչ, հաղթահարել խոշորագույն դժվարություններ՝ սիստեմատիկ կերպով, համառությամբ, համբերատարությամբ պրոպագանդա և ագիտացիա անելու հենց այն հիմնարկությունների, ընկերությունների, միությունների մեջ—թեկուզ և աշխարհիս ամենահետադիմական միություն-

ների—որտեղ պրոլետարական և կիսա-պրոլետարական մասսա կա։ Իսկ պրոֆմիությունները և բանվորական կոոպերատիվները (այս վերջինները գոնե յերբեմն) ճիշտ այնպիսի կազմակերպություններ են, վորտեղ մասսա կա։ Անգլիայում, շվեդական «Folkets Dagen Politiken» լրագրի տվյալների համաձայն (1919 թ. մարտ 10), տրեդ-յունիոնների անդամների թիվը 1917 թվի վերջից մինչև 1918 թվի վերջը 5,5 միլիոնից բարձրացել է 6,6 միլիոնի, այսինքն ավելացել է 19 տոկոսով։ 1919 թվի վերջում նրանց թիվը հաշվում են մինչև $7^1/_2$ միլիոն։ Յես ձեռքի տակ համապատասխան տվյալներ չունեմ Ֆրանսիայի և Գերմանիայի վերաբերմամբ, բայց բոլորովին անվիճելի և հանրածանոթ են այն փաստերը, վորոնք վկայում են, թե այդ յերկրներում ևս պրոֆմիությունների անդամների թիվը մեծապես աճել է։

Այս փաստերը շատ պարզ և պարզ կերպով ասում են այն, ինչ վոր հաստատվում է ուրիշ հազարավոր ցուցմունքներով, այն, վոր հատկապես պրոլետարական մասսաների մեջ, «ներքին խավերում», հետամնացների շարքերում աճել է գիտակցությունը և կազմակերպության ձգտումը։ Միլիոնավոր բանվորներ Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում առաջին անգամ են անցնում կատարյալ անկազմակերպ վիճակից դեպի կազմակերպության տարրական, ստորին, պարզագույն, ամենից ավելի մատչելի ձևին (նրանց համար, վորոնք դեռևս ամբողջությամբ ծծված են բուրժուա-դեմոկրատական նախապաշարումներով), այսինքն՝ պրոֆմիություններին։ Իսկ հեղափոխական, բայց վոչ խելահաս, ձախ կոմմունիստները կանգնել են մի կողմ, աղաղակում են «մասսա», «մասսա» և հրաժարվում են պրոֆմիությունների ներսում աշխատելուց, հրաժարվում են՝ նրանց «հետադիմականությունը» պատրվակ բռնելով, հնարում են նոր, մաքուր, բուրժուական-դեմոկրատական նախապաշարումներից անմեղ, համքյարական ու նեղ-արհեստակցական մեղքերից ազատ «բանվորական միություն», վոր իբր թե պիտի լինի (կլինի!) լայն, և վորի մեջ մասնակցելու համար պահանջվում է միայն (միայն!) «խորհրդային սիստեմի և դիկտատուրայի ճանաչումը» (տես վերևի ցիտատը)։

Ավելի մեծ անմտություն, ավելի մեծ վնաս հեղափոխությանը, վոր բերում են «ձախ» հեղափոխականները—դժվար է մինչև իսկ յերևակայել. յեթե մինչև անգամ մենք Ռուսաստանում, Ռուսաստանի և Անտանտայի բուրժուազիայի դեմ չտեսնված հաղթություն տանելուց $2^1/_2$ տարի հետո, պրոֆմիությունների մեջ մտնելու պայման դնեյինք «դիկտատուրայի ճանաչումը»—մենք հիմարություն արած կլինեյինք, կկորցնեյինք մեր ազդեցությունը մասսաների վրա, կոգնեյինք մենշևիկներին։ Վորովհետև կոմմունիստների ամբողջ նպատակն է՝ կարողանալ համոզել հետամնացներին, նրանց մեջ աշխատել իմանալ, և վոչ



թե մեկուսանալ նրանցից հնարովի մանկական «ձախ» լոզունգներով։

Կասկած չկա, պարոններ Գոմպերսները, Հենդերսոնները, Ժուոները, Լեգինները շատ շնորհապարտ կլինեն այդպիսի «ձախ» հեղափոխականներին, վորոնք գերմանական «սկզբունքային» օպպոզիցիայի (աստված ազատի մեզ այսպիսի «սկզբունքայնությունից») և կամ Ամերիկայի «աշխարհիս արդյունաբերական բանվորների»[50] միքա՛ի հեղափոխականների նման քարոզում են դուրս գալ ռեակցիոն պրոֆմիություններից և հրաժարվել նրանց մեջ աշխատելուց։ Կասկած չկա, օպպորտյունիզմի պարոն «ղեկավարները» կդիմեն բուրժուական դիպլոմատիայի ամեն տեսակ մեքենայություններին, բուրժուական կառավարությունների, տերտերների, վոստիկանության, դատարանների օգնության—վորպեսզի կոմմունիստներին թույլ չտան մտնել պրոֆմիությունների մեջ, ամեն կերպ նրանց դուրս քշեն այնտեղից, նրանց աշխատանքը պրոֆմիությունների ներսում վորքան կարելի յե անհաճո դարձնեն, վիրավորեն, թունավորեն, հալածեն։ Պետք է կարողանալ այս բոլորին դիմադրել, տանել ամեն տեսակ զոհողություն, մինչև իսկ՝ յեթե հարկը պահանջի՝ դիմել ամեն տեսակ հնարքների, խորամանկության, անլեգալ ձևերի, լռության, ճշմարտությունը ծածկելուն, միայն թե մտնել պրոֆմիությունների մեջ, մնալ այնտեղ, ինչ գնով էլ լինի, տանել այնտեղ կոմմունիստական աշխատանք։ Ցարիզմի ժամանակ մինչև 1905 թվականը մեզանում չեն յեղել վոչ մի «լեգալ հնարավորություններ», բայց յերբ Զուբատովը[51], պահնորդական բաժանմունքի մարդը, կազմակերպում եր սև-հարյուրակային բանվորական ժողովներ և բանվորական ընկերություններ հեղափոխականներին վորսալու և նրանց դեմ կռվելու համար, մենք այդ ժողովներն ու ընկերություններն եյինք ուղարկում մեր կուսակցության անդամներին (յես անձամբ հիշում եմ դրանց թվում նաև ընկեր Բաբուշկինին, Պիտերի աչքի ընկնող բանվորներից մեկին, վոր 1906 թվին գնդակահարվեց ցարի գեներալներից), վորոնք մասսայի հետ կապ եյին հաստատում, վարժվել եյին ճարպիկ կերպով իրենց ագիտացիան առաջ տանելու և դուրս եյին քաշում բանվորներին զուբատովյանների ազդեցությունից*։ Անշուշտ, դժվար է այդպիսի գործ անել հատկապես արմատացած լեգալիստական, սահմանադրական, բուրժուական-դեմոկրատական նախապաշարումներով առանձնապես ծծված Արևմտյան Յեվրոպայում։ Բայց այդ գործը կարելի յե և պետք է անել, և պետք է անել այն սիստեմատիկ կերպով։

* Գոմպերսները, Հենդերսոնները, Ժուոները, Լեգինները վոչ այլ ինչ են, յեթե վոչ Զուբատովներ, վոր մեր Զուբատովից տարբերվում են յեվրոպական զգեստով, փայլով, վոր իրենց ստոր քաղաքականությունը վարում են քաղաքակիրթ, նուրբ, դեմոկրատորեն լիզված ձևերով։

Յերրորդ Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեն, իմ անձնական հայացքով, պետք է դատապարտի և առաջարկի Կոմմունիստական Ինտերնացիոնալի հետագա համագումարին դատապարտելու առհասարակ ռեակցիոն պրոֆմիությունների մեջ չմասնակցելու քաղաքականությունը (մանրամասն պատճառաբանելով այդպիսի քաղաքականության անմտությունը և նրա ծայրահեղ վնասակարությունը պրոլետարական հեղափոխության գործի համար), ինչպես և մասնավորապես հոլլանդական տրիբունիստների վարքագիծը, վորոնք ուղղակի թե անուղղակի, բաց թե քողարկված, ամբողջությամբ թե մասամբ պաշտպանում եյին այդ սխալ քաղաքականությունը։ Յերրորդ Ինտերնացիոնալը պետք է հրաժարվի յերկրորդի տակտիկայից և հիվանդոտ հարցերի մոտից չպիտի անցնի, մեղմացնի նրանց, այլ պետք է դնի կտրուկ կերպով։ «Անկախականների» յերեսին (Գերմանիայի անկախ սոցիալ-դեմոկրատների կուսակցության) ասվեց ամբողջ ճշմարտությունը։ Ամբողջ ճշմարտությունը պիտի ասել նաև «ձախ» կոմմունիստների յերեսին։

## VII.

## ՄԱՍՆԱԿՑԵ՞Լ ԱՐԴՅՈՔ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՆԵՐԻՆ.

Գերմանական «ձախ» կոմմունիստներն ամենամեծ արհամարհանքով—և ամենամեծ թեթևամտությամբ—այս հարցին բացասական պատասխան են տալիս։ Նրանց պատճառաբանությունները։ Վերև բերված ցիտատի մեջ մենք տեսանք.—

«...Ամենայն վճռականությամբ մերժել վորևե վերադարձ դեպի պարլամենտարիզմի պատմականորեն և քաղաքականորեն հնացած կռվի ձևերը...»:

Այս ասված է ծիծաղելի լինելու չափ հավակնոտ կերպով և սխալ է բացարձակապես։ «Վերադարձ» դեպի պարլամենտարիզմ... Գուցե Գերմանիայում գոյություն ունի՞ արդեն Խորհրդային Հանրապետություն։ Կարծես թե վոչ։ Բայց այն ժամանակ ինչպես կարելի յե խոսել «վերադարձի» մասին։ Այդյոք դրանք դատարկ փրազ չեն։

«Պատմականորեն հնացած է» պարլամենտարիզմը։ Այդ ճշմարիտ է պրոպագանդայի իմաստով։ Բայց ամեն մարդ գիտե, վոր դրանից մինչև գործնական հաղթահարումը դեռ շատ հեռու յե։ Մեզանից դեռ շատ տասնամյակներ առաջ կարելի յեր հայտարարել—և կատարյալ իրավունքով,—թե կապիտալիզմը «պատմականորեն հնացել է»։ Բայց այդ պարագան ամենևին մեջտեղից չի վերացնում շատ յերկար և շատ համառ կռվի անհրաժեշտությունը կապիտալիզմի հողի վրա։



«Պատմականորեն հնացած է» պարլամենտարիզմը համաշխարհային-պատմական իմաստով, այսինքն բուրժուական պարլամենտարիզմի եպոխան վերջացած է, պրոլետարիատի դիկտատուրայի եպոխան սկսված է։ Այս անվիճելի յե։ Բայց համաշխարհային-պատմական մասշտաբը հաշվում է տասնյակ տարիներով։ Տասը-քսան տարի վաղ թե ուշ, համաշխարհային պատմական մասշտաբի տեսակետից նշանակություն չունի։ Համաշխարհային պատմության տեսակետից դա այնքան մանրունք է, վոր չի կարելի հաշվի առնել մինչև անգամ մոտավորապես։ Յեվ հենց այս պատճառով գործնական քաղաքականության խընդրում հենվել համաշխարհային-պատմական մասշտաբի վրա—շատ աղաղակող թեորիական անճշտություն է։

«Քաղաքականապես հնացած է» պարլամենտարիզմը։ Այս արդեն ուրիշ հարց է։ Յեթե այդ ճշմարիտ լիներ, «ձախերի» դիրքը կայուն կլիներ։ Բայց այդ բանը պետք է ապացուցել շատ լուրջ վերլուծումով, իսկ «ձախերը» չեն կարող մինչև իսկ մոտենալ նրան։ «Թեզիսներ պարլամենտարիզմի մասին» հոդվածում—վոր տպված է «Կոմմունիստական Ինտերնացիոնալի Ամստերդամի Բյուրոյի Ժամանակավոր Բյուլլետենի» № 1-ում—(Bulletin of the Provisional Bureau in Amsterdam of the Communist International, February, 1920) և վոր պարզ կերպով արտահայտում է հոլլանդական-ձախ կամ ձախ-հոլլանդական ձգտումները՝ վերլուծումը նույնպես, ինչպես կտեսնենք, շատ թույլ է կատարված։

Նախ և առաջ։ Գերմանական «ձախերը», ինչպես հայտնի յե, դեռ 1919 թվականի հունվարին պարլամենտարիզմը «քաղաքականորեն հնացած» եյին համարում, հակառակ այնպիսի աչքի ընկնող քաղաքական ղեկավարների կարծիքին, ինչպես եյին Ռոզա Լյուքսեմբուրգ և Կարլ Լիբկնեխտ։ Հայտնի յե, վոր «ձախերը» սխալվեցին։ Հենց միայն այս միանգամայն և հիմնապես խորտակում է այն տեսությունը, վորպես թե պարլամենտարիզմը «քաղաքականապես հնացած է»։ «Ձախերի» վրա պարտականություն է ընկնում ապացուցել, թե ինչու իրենց այն ժամանակվա անվիճելի սխալն այժմ դադարել է սխալ լինելուց։ Ապացույցի վոչ մի հետք անգամ նրանք չեն բերում և չեն կարող բերել։ Քաղաքական կուսակցության վերաբերումը դեպի իր սխալները կուսակցության լրջության ամենաճիշտ և ամենակարևոր չափանիշներից մեկն է, ինչպես և չափանիշ է այն բանի, թե կուսակցությունը գործնականապես կատարում է արդյոք իր պարտականությունը դեպի իր դասակարգը և դեպի աշխատավոր մասսաները։ Սխալը հրապարակով խոստովանել, մերկացնել նրա պատճառները, վերլուծել նրան ծնող պարագաները, ուշադիր կերպով մտածել սխալն ուղղելու մասին—ահա այս է լուրջ կուսակցության հատկանիշը, ահա այս է իր պարտականությունների կատարումը, ահա այս է դասակարգի,

ապա և մասսայի կրթությունն ու դաստիարակությունը։ Իրենց այս պարտականությունը չկատարելով, իրենց ակներև սխալի ուսումնասիրության չվերաբերվելով կատարյալ ուշադրությամբ, մանրակրկտությամբ, զգուշավորությամբ՝ «ձախերը» Գերմանիայում (և Հոլլանդիայում) դրանով իսկ ապացուցանում են, վոր իրենք դասակարգի կուսակցություն չեն, այլ խմբակ են, մասսաների կուսակցություն չեն, այլ ինտելլիգենտների և ինտելլիգենտության վատ կողմերը կրկնող սակավաթիվ բանվորների խմբակցություն են։

Յերկրորդ․ Ձախերի ֆրանկֆուրտյան խմբակցության միևնույն բրոշյուրում, վորից մենք վերևում մանրամասն ցիտատներ բերեցինք՝ կարդում ենք․

«...Միլիոնավոր բանվորներ, վորոնք հետևում են կենտրոնի քաղաքականության («Կենտրոնի» կաթոլիկ կուսակցության)՝ հակահեղափոխական են։ Գյուղական պրոլետարները տալիս են հակահեղափոխական զորքերի լեգիոններ» (վերը հիշված բրոշյուրի եջ 3)։

Ամեն բանից յերևում է, վոր այս խոսքերն ավել են շատ չափազանցված և ուռցրած ձևով։ Բայց այստեղ առաջ բերված հիմնական փաստն անվիճելի յե, և նրա ճանաչումը «ձախերի» կողմից շոշափելի կերպով հաստատում է նրանց սխալը։ Ի՞նչպես կարելի յե խոսել այն մասին, թե «պարլամենտարիզմը հնացած է քաղաքականապես», յեթե պրոլետարների «միլիոններ» և «լեգիոններ» վոչ միայն առհասարակ պարլամենտարիզմի կողմնակից են, այլ և ուղղակի «հակահեղափոխական են»։ Պարզ է ուրեմն, վոր պարլամենտարիզմը Գերմանիայում դեռյեվս հնացած չէ քաղաքականորեն։ Պարզ է, վոր «ձախերը» Գերմանիայում իրենց ցանկությունը, իրենց գաղափարական-քաղաքական վերաբերումն ընդունել են օբյեկտիվ իրականության տեղ։ Սա ամենավտանգավոր սխալն է հեղափոխականների համար։ Ռուսաստանում, ուր ցարիզմի չափազանց վայրենի ու դաժան լուծը ստեղծում էր տարիների ընթացքում զանազան ձևերով և զանազան տիպի հեղափոխականներ, զարմանալի անձնվեր, խանդավառ, հերոսական, կամքի ուժով հեղափոխականներ — Ռուսաստանում հեղափոխականների այդ սխալը մենք հատկապես տեսել ենք մոտիկից, քննել ենք հատուկ ուշադրությամբ, առանձնապես լավ գիտենք այն և այդ պատճառով էլ առանձնապես լավ ենք տեսնում նրան ուրիշների մեջ։ Կոմմունիստների համար պարլամենտարիզմը Գերմանիայում, իհարկե, «հնացած է քաղաքականապես», բայց խնդիրը հենց այն է, վոր մենք մեզ համար հնացածը չհամարենք հնացած դասակարգի համար, հնացած մասսայի համար։ Հենց այստեղ մենք կրկին տեսնում ենք, վոր «ձախերը» չգիտեն դատել, չեն կարողանում իրենց պահել վորպես դասակարգի կուսակցություն, վորպես մասսաների կուսակցու-



թյուն։ Դուք պարտավոր եք չիջնել մինչև մասսայի մակարդակը, մինչև դասակարգի հետամնաց շերտերը։ Այս անվիճելի յե։ Դուք պարտավոր եք նրանց ասել դառն ճշմարտությունը։ Դուք պարտավոր եք նրանց բուրժուական-դեմոկրատական և պարլամենտական նախապաշարումները նախապաշարումներ անվանել։ Բայց դրա հետ միասին դուք պարտավոր եք զգաստ կերպով հետևել ամբողջ դասակարգի (և վոչ միայն նրա կոմմունիստական ավանգարդի) նախապատրաստության և գիտակցության իրական վիճակին, հատկապես ամբողջ աշխատավորական մասսայի (և վոչ միայն նրա առաջավոր մարդկանց)։

Յեթե վոչ միայն «միլիոններ» ու «լեգիոններ», այլ թեկուզ արդյունաբերական բանվորների մի բավական խոշոր փոքրամասնություն գնում է կաթոլիկ տերտերների հետևից — գյուղական բանվորները կալվածատերերի և կուլակների հետևից — ապա այստեղից անկասկածելի կերպով բխում է, վոր պարլամենտարիզմը Գերմանիայում դեռյեվս հնացած չէ քաղաքականորեն, վոր մասնակցությունը պարլամենտական ընտրություններին և պարլամենտական ամբիոնի պայքարին պարտադիր է հեղափոխական պրոլետարիատի համար, հատկապես իր դասակարգի հետամնաց շերտերը դաստիարակելու համար, հատկապես լուսավորելու և սթափեցնելու անզարգացած, մութ, մոռացված գյուղական մասսաները։ Քանի դեռ դուք ուժ չունեք ցրելու բուրժուական պարլամենտը կամ այլ տիպի վորևէ ռեակցիոն հիմնարկություն — դուք պարտավոր եք աշխատել նրանց ներսում հատկապես այն պատճառով, վոր այնտեղ կան տերտերների և գյուղական հետ ընկած աշխարհի հիմարացրած բանվորները, հակառակ պարագային դուք պարզապես դատարկախոսներ կլինեք։

Յերրորդ․ «Ձախ» կոմմունիստները մեզ բոլշևիկներիս մասին շատ լավ բաներ են ասում։ Յերբեմն ուզում ես ասել՝ լավ կլինի, վոր քիչ գովեք մեզ և ավելի լավ թափանցեք բոլշևիկների տակտիկայի խորքը, ավելի լավ ծանոթանաք նրա հետ։ Մենք մասնակցել ենք Ռուսաստանի բուրժուական պարլամենտի ընտրություններին, Սահմանադիր ժողովի ընտրություններին 1917 թվականի սեպտեմբեր—նոյեմբերին։ Ճի՞շտ է յեղել մեր տակտիկան, թե՞ վոչ։ Յեթե վոչ, այն ժամանակ պետք է պարզ ասենք և ապացուցենք այդ։ Այդ անհրաժեշտ է, վորպեսզի միջազգային կոմմունիզմը կարողանա ճիշտ տակտիկա մշակել։ Յեթե ճիշտ է յեղել, ապա պետք է այստեղից հանել վորոշ յեզրակացություններ։ Անշուշտ, խոսք չի կարող լինել Ռուսաստանի և Արևմտյան Յեվրոպայի պայմանների նույնության մասին։ Բայց այն մասնավոր խնդրում, թե ինչ է նշանակում «պարլամենտարիզմը քաղաքականապես հնացած է» հասկացողությունը — պարտադիր է ճիշտ հաշվի առնել մեր փորձը, վորովհետև առանց կոնկրետ փորձի հաշվի

անելուն այդպիսի հասկացողությունները շատ հեշտությամբ կարող են դառնալ դատարկ ֆրազներ։ Արդյոք մենք, ռուս բոլշևիկներս չէինք ունեցել 1917 թվի սեպտեմբեր-նոյեմբերին շատ ավելի իրավունք, քան արևմտյան վորևէ յերկրի կոմունիստները՝ ասելու, թե պառլամենտարիզմը Ռուսաստանում հնացած է քաղաքականապես։ Անշուշտ ունեյինք։ Քանի վոր խնդիրը հո այն չէ, թե բուրժուական պառլամենտները վաղուց, թե նոր գոյություն ունեն, այլ այն է, թե աշխատավորական լայն մասսաները վորչափ են պատրաստ (գաղափարապես, քաղաքականապես, գործնականապես) ընդունել խորհրդային կարգը և ցրել կամ թույլ տալ ցրելու բուրժուական-դեմոկրատական պառլամենտը։ Վոր Ռուսաստանում 1917 թվականի սեպտեմբեր-նոյեմբերին քաղաքների բանվոր դասակարգը, զինվորներն ու գյուղացիները—մի շարք մասնահատուկ պայմանների ուժով—միանգամայն պատրաստ եյին ընդունելու խորհրդային կարգը և ցրելու ամենադեմոկրատական բուրժուական պառլամենտը՝ այս կատարելապես անվիճելի և բոլորովին հաստատված պատմական փաստ է։ Յեվ չնայած դրան՝ բոլշևիկները բոյկոտ չարին Սահմանադիր Ժողովը, այլ մասնակցեցին նրա ընտրություններին՝ պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության նվաճումից թե առաջ և թե հետո։ Վոր այդ ընտրությունները շատ արժեքավոր (և պրոլետարիատի համար վերին աստիճանի օգտակար) քաղաքական հետևանքներ տվին—այդ բանը յես, համարձակվում եմ հուսալ, կարողացել եմ ապացուցել վերևում հիշված հոդվածիս մեջ, ուր մանրամասնորեն վերլուծված են Ռուսաստանի Սահմանադիր Ժողովի ընտրությունների տվյալները։

Այստեղից յեզրակացությունը բոլորովին անվիճելի յե.—ապացուցվում է, վոր Խորհրդային Հանրապետության հաղթանակից նույնիսկ միքանի շաբաթ առաջ, մինչև իսկ այդ հաղթանակից հետո, մասնակցությունը բուրժուական-դեմոկրատական պառլամենտին վոչ միայն չի վնասում հեղափոխական պրոլետարիատին, այլ և հնարավորություն է տալիս ապացուցելու հետամնաց մասսաներին, թե ինչու այդպիսի պառլամենտներն արժանի յեն ցրման, հեշտացնում է նրանց ցրելու հաջողությունը, հեշտացնում է բուրժուական պառլամենտարիզմի «քաղաքական մահացումը»։ Հաշվի չառնել այս փորձը և միաժամանակ հավակնել պատկանելու Կոմունիստական Ինտերնացիոնալին—վոր պիտի միջազգայնորեն մշակի իր տակտիկան (վոչ թե նեղ կամ միակողմանի ազգային, այլ իրոք միջազգային տակտիկա)—նշանակում է ամենախոր սխալ գործել և ինտերնացիոնալիզմից հեռանալ իրապես՝ խոսքով ճանաչելով այն։

Քննենք այժմ «հոլլանդական-ձախերի» դատողությունները պառլամենտներին չմասնակցելու մասին։ Ահա վերև հիշված «հոլ-



լանդական» թեզիսների կարևորագույնի՝ չորրորդ թեզիսի թարգմանությունը (անգլիերենից).—

«Յերբ արտադրության կապիտալիստական սիստեմը ջախջախված է և հասարակությունը գտնվում է հեղափոխության վիճակում, պառլամենտական գործունեությունը հետզհետե կորցնում է իր նշանակությունը՝ մասսաների գործողության համեմատությամբ։ Յերբ, այսպիսի պայմաններում, պառլամենտը դառնում է հակահեղափոխության կենտրոն և օրգան, իսկ մյուս կողմից՝ բանվոր դասակարգը կառուցում է իր իշխանության գործիքները խորհուրդների ձևի տակ—թերևս մինչև իսկ անհրաժեշտ դառնա հրաժարվել պառլամենտական գործունեության ամեն տեսակ մասնակցությունից»։

Առաջին նախադասությունը ակնհայտնի սխալ է, քանի վոր մասսաների գործողությունը—օրինակ՝ մեծ գործադուլը—պառլամենտական գործունեությունից միշտ ավելի կարևոր է և վոչ թե միայն այդպես է հեղափոխության ժամանակ կամ հեղափոխական վիճակում։ Այս ակներև կերպով սնանկ, պատմականորեն ու քաղաքականորեն անճիշտ պատճառաբանությունը առանձնապես շոշափելի կերպով ցույց է տալիս, վոր հեղինակները բացարձակապես հաշվի չեն առնում վոչ համա-յեվրոպական փորձը (ֆրանսիականը՝ 1848 և 1870 թվականների հեղափոխություններից առաջ և գերմանականը՝ 1878-1890 թվականներին և այլն), վոչ ռուսական փորձը (տես վերը)՝ լեգալ և անլեգալ պայքարի միացման վերաբերմամբ։ Այս խնդիրն ահագին կարևորություն ունի թե ընդհանրապես և թե մասնավորապես այն պատճառով, վոր բոլոր քաղաքակիրթ և առաջավոր յերկրներում արագ կերպով մոտենում է այն ժամանակը, յերբ այդպիսի միացումն ավելի ու ավելի պարտադիր է դառնում—և մասամբ արդեն դարձել է—հեղափոխական պրոլետարիատի կուսակցության համար, քանի վոր հասունանում և մոտենում է պրոլետարիատի քաղաքացիական պատերազմը բուրժուազիայի դեմ, քանի վոր կոմունիստներին կատաղի կերպով հալածում են հանրապետական և առհասարակ բուրժուական կառավարությունները՝ վոտքի տակ տալով ամեն տեսակ օրինականություն (ինչ արժե թեկուզ միայն Ամերիկայի օրինակը) և այլն։ Այս կարևորագույն խնդիրը հոլլանդացիների ձախերի կողմից ընդհանրապես ամենևին չի հասկացված։

Յերկրորդ նախադասությունը, ամենից առաջ, ճիշտ չէ պատմականորեն։ Մենք, բոլշևիկներս, մասնակցություն ենք ունեցել ամենահակահեղափոխական պառլամենտներում, և փորձը ցույց է տվել, վոր այդպիսի մասնակցությունը վոչ միայն օգտակար, այլ և անհրաժեշտ է հեղափոխական պրոլետարիատի կուսակցության համար հատ-

կապես Ռուսաստանի առաջին բուրժուական հեղափոխությունից (1905) հետո՝ նախապատրաստելու յերկրորդ բուրժուական (փետրվար, 1917) և ապա սոցիալիստական (հոկտեմբեր, 1917) հեղափոխությունները։ Յերկրորդ, այդ նախադասությունը զարմանալի կերպով անտրամաբանական է։ Այն բանից, վոր պարլամենտը դառնում է հակահեղափոխության օրգան և «կենտրոն» (իրապես նա յերբեք չի յեղել «կենտրոն» և չի կարող լինել, բայց այս հարևանցի), իսկ բանվորներն ստեղծում են իրենց իշխանության գործիքները խորհուրդների ձևի տակ—այս բանից բղխում է այն, վոր բանվորները պետք է նախապատրաստվեն, նախապատրաստվեն գաղափարապես, քաղաքականապես, տեխնիկապես, վարելու համար խորհուրդների պայքարը պարլամենտի դեմ, ցրելու համար պարլամենտը խորհուրդների միջոցով։ Բայց այդ բանից բնավ չի բղխում, թե այդպիսի ցրումը դժվարանում է կամ չի դյուրանում խորհրդային օպոզիցիայի ներկայությամբ հակահեղափոխական պարլամենտի ներսում։ Մենք վոչ մի անգամ չենք նկատել Դենիկինի և Կոլչակի դեմ վարած մեր հաղթական կռվի ժամանակ, թե նրանց մոտ խորհրդային, պրոլետարական օպոզիցիայի գոյությունը մեր հաղթանակի համար անկարևոր է յեղել։ Մենք շատ լավ գիտենք, վոր Սահմանադիր Ժողովի ցրումը մեր կողմից, 1918 թվի հունվարի 5-ին, վո՛չ թե դժվարացավ, այլ հեշտացավ նրանով, վոր ցրված հակահեղափոխական Ժողովի ներսում կար հետևողական բոլշևիկյան, այլ և վոչ-հետևողական ձախ-եսէրական, խորհրդային օպոզիցիա։ Թեզիսի հեղինակները բոլորովին մոլորվել են և մոռացել են մի ամբողջ շարք—յեթե վոչ բոլոր—հեղափոխությունների փորձը, վոր վկայում է, թե հեղափոխությունների ժամանակ վո՛ր աստիճան օգտակար է հետադեմ պարլամենտից դուրս գտնվող մասսայական գործողության միացումը պարլամենտի ներսի հեղափոխության համակիր (ավելի լավ՝ յեթե ուղղակի կերպով պաշտպանող) օպոզիցիայի հետ։ Հոլանդացիները և «ձախերն» ընդհանրապես դատում են այստեղ, վորպես հեղափոխության դոկտրինյորներ, վոր յերբեք չեն մասնակցել իրական հեղափոխության, վոր չեն թափանցում հեղափոխությունների պատմության խորքը և վոր հայտնի ռեակցիոն հաստատության սուբյեկտիվ «բացասումը» միամտաբար ընդունում են վորպես նրա իսկական կործանում՝ մի ամբողջ շարք օբյեկտիվ ֆակտորների միացյալ ուժերով։ Մի նոր քաղաքական գաղափար (և վոչ միայն քաղաքական) կարելի յե ամենահեշտ կերպով վարկաբեկել և վնասել, յեթե հանուն նրա պաշտպանության մինչև աբսուրդ տանենք նրան։ Վորովհետև ամեն մի ճշմարտություն, յեթե նրան դարձնենք «չափազանց», (ինչպես ասում եր Դիցգեն-հայրը), յեթե նրան մեծացնենք, յեթե տարածենք իր իրական գործադրության սահմաններից դուրս՝ կարելի յե աբսուրդի հաս-



ցընել, և վոչ միայն կարելի յե, այլ և անխուսափելի կերպով վերոհիշյալ պայմանների մեջ կդառնա աբսուրդ։ Իսկ և իսկ այսպիսի արջի ծառայություն են անում հոլանդական և գերմանական ձախերը այն ճշմարտության, վորի համաձայն Խորհրդային իշխանությունը բուրժուական-դեմոկրատական պարլամենտներից գերազանց է։ Անշուշտ, ով ընդհանրապես և ըստ հին սովորության կասի, թե վո՛չ մի պայմանում բուրժուական պարլամենտներին մասնակցելուց հրաժարումը անթույլատրելի յե, նա իրավացի չի լինի։ Յես չեմ կարող այստեղ փորձել տալ այն պայմանների ձևավորումը, վորոնց մեջ բոյկոտն օգտակար կլինի, քանի վոր այս հոդվածի նպատակը շատ ավելի համեստ է, այն է՝ հաշվի առնել ռուսական փորձը՝ կապված միջազգային կոմմունիստական տակտիկայի մի քանի առօրյա խնդիրների հետ։ Ռուսական փորձը տվել է մեզ բոլշևիկյան բոյկոտի մի հաջող և ճիշտ[52] (1905) և մի սխալ օրինակ (1906)[53]։ Վերլուծելով առաջին դեպքը՝ մենք տեսնում ենք. հաջողվեց արգելել ռեակցիոն պարլամենտի գումարումը ռեակցիոն իշխանության միջոցով այնպիսի պայմաններում, յերբ բացառիկ արագությամբ զարգանում եր մասսաների արտապարլամենտական (մասնավորապես գործադուլային) հեղափոխական գործողությունը, յերբ պրոլետարիատի և գյուղացիության վոչ մի շերտ չեր կարող վորևե աջակցություն ցույց տալ ռեակցիոն իշխանության, յերբ հեղափոխական պրոլետարիատը գործադուլային պայքարով և ագրարային շարժումով իր ազդեցությունն եր ապահովել հետամնաց մասսաների վրա։ Միանգամայն ակներև է, վոր այս փորձը անկարելի յե կիրառել յեվրոպական ներկա պայմաններում։ Միանգամայն ակներև է նույնպես—վերև ցուցադրված պատճառաբանությունների հիման վրա,—վոր հոլանդացիների և «ձախերի» թեկուզ և պարլամենտական հրաժարականը մասնակցելու պարլամենտներում՝ իր հիմքում սխալ է և վնասակար հեղափոխական պրոլետարիատի գործի համար։

Արևմտյան Յեվրոպայում և Ամերիկայում պարլամենտը հատկապես ատելի յե դարձել բանվոր դասակարգի առաջավոր-հեղափոխականների համար։ Այս անվիճելի յե։ Այս միանգամայն հասկանալի յե, քանի վոր դժվար է իրոք պատկերացնել ավելի ստոր, ավելի նողկալի ու դավաճան գործ, քան սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատ պատգամավորների խոշոր մեծամասնության արարմունքն եր պարլամենտում՝ պատերազմի ժամանակ և պատերազմից հետո։ Բայց վոչ միայն անխելահաս, այլ ուղղակի հանցավոր բան կլիներ յենթարկվել այդ տրամադրության այնպիսի մի հարցի լուծման ժամանակ, թե ի՛նչպես պետք է կռվել ամենքիս կողմից ճանաչված չարիքի դեմ։ Արևմտյան Յեվրոպայի շատ յերկրներում հեղափոխական տրամադրությունը այժմ, կարելի յե ասել, «նորություն» կամ «հազվադեպ» յերևույթ է, վորին

շատ յերկար ժամանակ զուր, անհամբերությամբ սպասում եյին, և թերևս այդ պատճառով էլ այժմ այնքան դյուրությամբ են յենթարկվում այդ տրամադրությանը։ Իհարկե, առանց մասսաների հեղափոխական տրամադրության, առանց այդպիսի տրամադրությունը զարգացնող պայմանների՝ հեղափոխական տակտիկան չի կարող գործողություն դառնալ, բայց մենք Ռուսաստանում չափազանց յերկար, ծանր, արյունոտ փորձով ենք համոզվել այն ճշմարտության, թե միայն հեղափոխական տրամադրության վրա անկարելի յե հիմնել հեղափոխական տակտիկա։ Տակտիկան պիտի կառուցվի տվյալ պետության (և նրան շրջապատող պետությունների, և համաշխարհային մասշտաբով՝ բոլոր պետությունների) բոլոր դասակարգային ուժերի զգաստ, խիստ-օբյեկտիվ հաշվառության վրա, ինչպես և հեղափոխական շարժումների փորձի հաշվառության վրա։ «Հեղափոխականություն» ցույց տալ միայն հայհոյելով պարլամենտական օպպորտյունիզմի հասցեյին, միայն բացասելով մասնակցել պարլամենտներին—շատ դյուրին է։ Յեվ վորովհետև այդ չափազանց դյուրին է, այդ պատճառով էլ լուծումն չէ դժվար և դժվարագույն խնդրի։ Ստեղծել մի իսկական հեղափոխական պարլամենտական ֆրակցիա յեվրոպական պարլամենտներում—շատ ավելի դժվար է, քան Ռուսաստանում։ Անկասկած է։ Բայց այդ միայն մասնավոր արտահայտությունն է այն ընդհանուր ճշմարտության, վորի համաձայն Ռուսաստանը հեշտությամբ կարող եր սկսել սոցիալիստական հեղափոխություն 1917 թվի կոնկրետ, պատմականորեն չափազանց օրիգինալ դրության մեջ, մինչ շարունակել այն և տանել մինչև վերջ Ռուսաստանն ավելի դժվարությամբ կարող է, քան յեվրոպական յերկրները։ Յես դեռ 1918 թվի սկզբին մատնանշել եմ այս պարագայի վրա, և այնուհետև յերկու տարվա փորձը լիովին հաստատում է այդ մտքի ճշտությունը։ Այնպիսի սպեցիֆիկ պայմաններ, վորպիսին են—1) հնարավորություն միացնել խորհրդային հեղաշրջումը նրա շնորհիվ դադարելիք իմպերիալիստական պատերազմի վերջավորության հետ, պատերազմ, վոր անկարելի տանջանքներ պատճառեց բանվորներին ու գյուղացիներին. 2) հնարավորություն օգտագործելու վորոշ ժամանակ յերկու հզոր իմպերիալիստական գիշատիչների խմբակցությունների միջև յեղած որհասական կռիվը, խմբակցություններ, վոր չեյին կարող միանալ խորհրդային թշնամու դեմ. 3) հնարավորություն դիմանալու համեմատաբար յերկար ժամանակ քաղաքացիական պատերազմին, և այս մասամբ յերկրի չափազանց մեծության և հաղորդակցության վատ միջոցների հետևանքով. 4) նման բուրժուական-դեմոկրատական հեղափոխական խորունկ շարժման գոյությունը գյուղացիության մեջ, այնպես, վոր պրոլետարիատի կուսակցությունը վերցնում է այդ հեղափոխական պահանջները գյուղացիական կուսակցությունից (սոցիալ-հեղափոխական կուսակցությու-



նից, վոր իր մեծամասնությամբ խիստ հակառակորդ եր բոլշևիզմին) և կարողանում է անմիջապես իրականացնել այդ պահանջները՝ պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության նվաճման հետևանքով—այսպիսի սպեցիֆիկ պայմաններ Արևմտյան Յեվրոպայում այժմ չկան, և կրկնությունը այդպիսի կամ նման պայմանների՝ այնքան էլ հեշտ չէ։ Ահա թե ինչու իմիջի այլոց—հաշվի չառնելով դեռ ուրիշ պատճառներ—սկսել սոցիալիստական հեղափոխություն Արևմտյան Յեվրոպայի համար ավելի դժվար է, քան մեզ համար։ Փորձել այդ դժվարության «կողքով անցնել», «թռչել» հեղափոխության նպատակների համար ռեակցիոն պարլամենտներն օգտագործելու դժվար գործի վրայով—ուղղակի յերեխայություն է։ Դուք ուզում եք ստեղծել նոր հասարակակարգ. և դուք վախենում եք այն դժվարություններից, վոր կծագեն ռեակցիոն պարլամենտում, համոզված, անձնվեր, հերոսական կոմմունիստներից պարլամենտական լավագույն ֆրակցիա կազմելու ժամանակ։ Միթե դա յերեխայություն չէ։ Յեթե Կարլ Լիբկնեխտը Գերմանիայում և Զ. Խեգլունդը[54] Շվեդիայում կարողացան նույնիսկ առանց ներքևի մասսայական աջակցության, ռեակցիոն պարլամենտները հեղափոխության համար օգտագործելու իսկական օրինակներ տալ—ապա ինչպես է, վոր արագ կերպով զարգացող կոմմունիստական կուսակցությունը, մասսաների հետպատերազմյան հիասթափության ու դառնության մթնոլորտում՝ ուժ չպիտի ունենա կոմմունիստական ֆրակցիա կռել ամենավատ պարլամենտներում։ Հատկապես այն պատճառով, վոր բանվորների և—առավել ևս—մանր գյուղացիների հետամնաց մասսաները Արևմտյան Յեվրոպայում ավելի, քան Ռուսաստանում, տոգորված են բուրժուական-դեմոկրատական և պարլամենտական նախապաշարմունքներով—հատկապես այդ պատճառով բուրժուական պարլամենտների նման հաստատությունների ներսում միայն կոմմունիստները կարող են (և պարտավոր են) յերկարատև, համառ կռիվ մղել, վոչ մի դժվարության առջև կանգ չառնող կռիվ, վոր մերկացնի, ցրի, հաղթահարի այդ նախապաշարմունքները։

Գերմանական «ձախերը» գանգատվում են իրենց կուսակցության վատ «ղեկավարներից» և ընկնում են հուսահատության մեջ, ծիծաղելի կերպով «բացասելով» «ղեկավարներին»։ Բայց այնպիսի պայմաններում, ուր հաճախ «ղեկավարները» պահվում են թաքստոցում՝ լավ, հուսատու, փորձված, հեղինակավոր «ղեկավարների» մշակումը շատ դժվար գործ է, և հաջողությամբ հաղթահարել այդ դժվարությունները անկարելի յե առանց միացնելու լեգալ և անլեգալ աշխատանքը, առանց փորձելու «ղեկավարներին» իմիջի այլոց նայեվ պարլամենտական ասպարեզում։ Կրիտիկան և ամենասուր, անխնա, անհաշտ կրիտիկան պետք է ուղղել վոչ թե պարլամենտարիզմի կամ պարլամենտա-

կան գործունեյության դեմ, այլ այն ղեկավարների դեմ, վորոնք չեն կարողանում, և առավել ևս նրանց դեմ, վորոնք չեն ցանկանում օգտագործել պարլամենտական ընտրությունները ու պարլամենտական ամբիոնը հեղափոխական, կոմմունիստական ձևով։ Միայն այսպիսի կրիտիկան—միացած, իհարկե, վատ ղեկավարներին արտաքսելու և լավերով փոխարինելու հետ—օգտակար և բեղմնավոր հեղափոխական աշխատանք կլինի։ Մի աշխատանք, վոր մի կողմից կդաստիարակի «ղեկավարներին», վորպեսզի նրանք արժանի լինեն բանվոր դասակարգին և աշխատավոր մասսաներին, մյուս կողմից՝ կդաստիարակի մասսաներին, վորպեսզի նրանք սովորեն ճիշտ ըմբռնել քաղաքական կացությունը և հասկանան այդ կացությունից բղխող հաճախ բարդ և խճճված հարցերը*։

---

## VIII.

## ՎՈՉ ՄԻ ԿՈՄՊՐՈՄԻ՞ՍՍ.

Ֆրանկֆուրտյան բրոշյուրի ցիտատից մենք տեսանք, թե «ձախերը» ինչպիսի վճռականությամբ առաջ են մղում այս լոզունգը։ Ցավալի յե տեսնել, թե ինչպես մարդիկ—վոր իրենց անկասկած կերպով

*) Ցես շատ քիչ հնարավորություն եմ ունեցել ծանոթանալու իտալական «ձախ» կոմմունիզմի հետ։ Անկասկած ընկ. Բորդիգան յեվ նրա «կոմմունիստ-բոյկոտիստների» (Communista-astensionista) ֆրակցիան իրավացի չե, յերբ պաշտպանում ե պարլամենտին չմասնակցելու տեսակետը։ Բայց մի կետում նա ինձ իրավացի յե թվում, վորքան կարելի յե դատել նրա «Խորհուրդ» թերթի յերկու թվերից («Il soviet», №№ 3 յեվ 4. հունվար 18 յեվ փետրվ 1. 1920 թ.), ընկ. Սերրատիի «Կոմմունիզմ» գեղեցիկ ժուռնալի չորս գրքույկներից («Communismo», №№ 1—4, հոկտ. 1-ից.—նոյեմբեր 30, 1919 թ.) յեվ իտալական բուրժուական թերթերի հատուկտոր թվերից, վորոնց հետ ինձ հաջողվից ծանոթանալ։ Այսինքն, ընկ. Բորդիգան յեվ նրա ֆրակցիան իրավացի յեն, յերբ հարձակվում են Տուրատիի յեվ նրա համախոհների վրա, վորոնք մնում են խորհրդային իշխանությանն ու պրոլետարիատի դիկտատուրան ընդունած կուսակցության մեջ, մնում են պարլամենտի անդամ յեվ շարունակում են իրենց վնասակար, հին օպպորտյունիստական քաղաքականությունը։ Անշուշտ, այս բանը հանդուրժելով ընկ. Սերրատին յեվ իտալական ամբողջ սոցիալիստական կուսակցությունը սխալ են անում, վոր այնպիսի մեծ վնաս յեվ վտանգ ե սպառնում, ինչպես Հունգարիայում, ուր հունգարական պարոն Տուրատիները ներսից սաբոտաժի յենթարկեցին թե կուսակցությունը յեվ թե խորհրդային իշխանությունը։ Այդպիսի անճիշտ, անհետեվողական կամ բնութագրել վերաբերումը դեպի օպպորտյունիստ-պարլամենտականները՝ մի կողմից ծնում ե «ձախ» կոմմունիզմ, մյուս կողմից՝ մինչեվ վորոշ աստիճան արդարացնում ե նրա գոյությունը։ Ընկ. Սերրատին պարզապես սխալվում ե մեղադրելով պատգամավոր Տուրատիին «անհետեվողականության» մեջ («Communismo», № 3), յերբ անհետեվողական ե ինքը իտալական սոցիալիստական կուսակցությունը, հանդուրժելով այնպիսի օպպորտյունիստ-պարլամենտականներ, ինչպես են Տուրատի յեվ ընկ.։



մարքսիստ են անվանում և վոր ուզում են լինել մարքսիստ—մոռացել են մարքսիզմի հիմնական ճշմարտությունները։ Ահա թե ինչ եր գրում 1874 թվին 33 կոմմունար-բլանկիստների[55] մանիֆեստի դեմ Ենգելսը, վոր Մարքսի նման պատկանում եր այն հազվագյուտ, շատ հազվագյուտ գրողների թվին, վորոնց յուրաքանչյուր կարևոր գործի յուրաքանչյուր նախադասությունը պարունակում ե բովանդակության զարմանալի խորություն։

«... Մենք կոմմունիստներ ենք (գրում եյին իրենց մանիֆեստի մեջ կոմմունիստ-բլանկիստները) այն պատճառով, վոր ուզում ենք հասնել մեր նպատակին՝ կանգ չառնելով միջանկյալ կայարաններում, կոմպրոմիսներ չանելով, վորոնք միայն հեռացնում են հաղթության օրը և յերկարացնում են ստրկության շրջանը»։

«Գերմանական կոմմունիստները կոմմունիստներ են այն պատճառով, վոր բոլոր միջանկյալ կայարանների և կոմպրոմիսների միջից—ստեղծված վոչ իրենց կամքով, այլ պատմության զարգացման ընթացքում—պարզ տեսնում են և անընդհատ քայլում են դեպի վերջնական նպատակը՝ դասակարգերի վոչնչացումը և այնպիսի հասարակակարգի կառուցումը, վորի մեջ այլևս տեղ չի լինի հողի և արտադրական բոլոր միջոցների մասնավոր սեփականության։ 33 բլանկիստները կոմմունիստ են այն պատճառով, վոր յերևակայում են թե՝ քանի վոր իրենք ուզում են թռչել միջանկյալ կայարանների և կոմպրոմիսների վրայից՝ ուրեմն հարցը վերջացած ե, և յեթե այս օրերում սկսվի—վորին նրանք հաստատ հավատում են—և իշխանությունը իրենց ձեռքն ընկնի, ապա վաղը «կոմմունիզմը իրականացած կլինի»։ Հետևաբար, յեթե այդ կարելի չլինի անել այժմ, ուրեմն և նրանք կոմմունիստներ չեն»։

«Այս ինչ մանկական միամտություն ե—մեջ բերել սեփական անհամբերությունը վորպես թեորիական պատճառաբանություն»։ (Ֆր. Ենգելս. «Կոմմունար-բլանկիստների ծրագիրը. գերմանական սոցիալ դեմոկրատ «Volksstaat» լրագրից. 1874 թ. № 73. «1871—1875 թվականների հոդվածներ» ժողովածուի մեջ. ռուսական թարգմ. Պետերբ. 1919 թ., եջ 52—53)։

Ենգելսը միևնույն հոդվածում իր խորին հարգանքն ե արտահայտում Վայանին[56] և խոսում ե նրա «անվիճելի ծառայության» մասին։ (Վայանը, ինչպես և Գեդը[57], միջազգային սոցիալիզմի խոշորագույն ղեկավարներից եր, մինչև նրանց դավաճանությունը սոցիալիզմին 1914 թվականի օգոստոսին)։ Բայց ակներև սխալը Ենգելսը չի թողնում առանց մանրամասն վերլուծության։ Իհարկե, շատ յերիտա-

սարգ և անփորձ հեղափոխականներին, ինչպես և նույնիսկ շատ հարգելի տարիքի տեր և շատ փորձված մանր-բուրժուական հեղափոխականներին «կոմպրոմիսներ թույլատրելը» չափազանց «վտանգավոր» կթվա, անհասկանալի ու անճիշտ։ Յեվ շատ սոփեստներ դատում են ճիշտ այնպես (լինելով գերազանց և արտակարգ կերպով «փորձված» պոլիտիկաններ), ինչպես ընկեր Լենսբերիի հիշատակած անգլիական ոպորտյունիզմի ղեկավարները.—«Յեթե բոլշևիկներին թույլատրվում ե այս-ինչ կոմպրոմիսը, ինչու մեզ էլ չպիտի թույլ տրվի մեր ուզած կոմպրոմիսը»։ Բայց բազմաթիվ գործադուլների մեջ դաստիարակված պրոլետարները (յեթե վերցնենք դասակարգային կռվի միայն այդ արտահայտությունը) շատ գեղեցիկ կերպով են յուրացնում Ենգելսի հայտնած (փիլիսոփայական, պատմական, քաղաքական, հոգեբանական) խորին ճշմարտությունը։ Ամեն մի պրոլետար ապրել ե գործադուլ, ամեն մի բանվոր «կոմպրոմիսներ» ե արել իր ատելի ճնշողների և շահագործողների հետ, յերբ գործադուլից հետո ստիպված են յեղել աշխատանքի անցնել՝ կամ վոչինչ ստանալով և կամ իրենց պահանջների մեջ մասնավոր զոհացում միայն ստանալով։ Ամեն մի պրոլետար—մասսայական պայքարի և դասակարգային հակամարտությունների սուր մթնոլորտում ապրելով—շատ լավ դիտում ե տարբերությունը այն կոմպրոմիսի, վոր հարկադրվում ե ոբյեկտիվ պայմաններով (գործադուլավորների դրամարկղը դատարկ ե, ուրիշ տեղից աջակցություն չկա, քաղցած են ու տանջված մինչև անկարելիություն), կոմպրոմիս, վոր ամենևին չի նվազեցնում բանվորների հեղափոխական անձնվիրությունը և հետագա պայքարներ մղելու պատրաստակամությունը, և մյուս կոմպրոմիսի, դավաճանների կոմպրոմիսի, վորոնք ոբյեկտիվ պատճառների վրա յեն քցում (շտրայկբրեխերները, գործադուլ քանդողներն էլ «կոմպրոմիս» են անում!) իրենց մորթապաշտությունը, իրենց վախկոտությունը, կապիտալիստներին ծառայելու իրենց ցանկությունը, նրանց սպառնալիքներին, յերբեմն հորդորներին, յերբեմն նվերներին ու շնորհներին յենթարկվելու իրենց պատրաստակամությունը։ (Անգլիական բանվորական շարժման պատմությունը հատկապես այսպիսի դավաճանական կոմպրոմիսների որինակներ շատ ե տալիս տրեդ-յունիոնների ղեկավարների կողմից, բայց գրեթե բոլոր բանվորները բոլոր յերկրներում այս կամ այն ձևի տակ շատ են դիտել նման յերևույթներ)։

Իհարկե, լինում են բացառապես դժվար ու բարդ յեզակի դեպքեր, յերբ մեծամեծ ջանքերով ե միայն հաջողվում այս կամ այն «կոմպրոմիսի» իսկական բնույթը ճիշտ վորոշել, ինչպես լինում են սպանության դեպքեր, յերբ շատ դժվար ե վճռել, թե սպանությունը արդյոք միանգամայն արդարացի և կամ նույնիսկ պարտադիր ե յեղել (որի-



նակ անհրաժեշտ ինքնապաշտպանությունը), թե՞ աններելի անհոգություն ե յեղել և կամ նույնիսկ հմտորեն իրագործված հիմնավոր ծրագիր։ Անշուշտ քաղաքականության մեջ, յերբ խնդիր ե լինում դասակարգերի և կուսակցությունների չափազանց բարդ—ազգային և միջազգային—փոխադարձ հարաբերությունների մասին, շատ ավելի դեպքեր կլինեն անհամեմատ ավելի դժվար, քան իրոք գործադուլի ժամանակ որինական «կոմպրոմիսի» խնդիրը և կամ թե շտրայկբրեխերի դավաճան, ղեկավարի դավադրական կոմպրոմիսը և այլն։ Ընդհանուր դեղատոմս և կամ ընդհանուր կանոն հնարել («վոչ մի կոմպրոմիս»), վոր պետք գար բոլոր դեպքերում—անհեթեթություն ե։ Պետք ե ուսերի վրա սեփական գլուխ ունենալ, ամեն մի առանձին դեպք հասկանալ կարողանալու համար։ Կուսակցական կազմակերպության և կուսակցական արժանավոր ղեկավարների նշանակությունն էլ ի միջի այլոց այնտեղ ե, վոր տվյալ դասակարգի* բոլոր մտածող ներկայացուցիչների յերկարատև, համառ, բազմազան, բազմակողմանի աշխատանքով մշակվի անհրաժեշտ գիտություն, անհրաժեշտ փորձ և գիտությունից ու փորձից զատ նաև անհրաժեշտ քաղաքական հոտառություն՝ արագ և ճիշտ լուծելու համար քաղաքական բարդ խնդիրները։

Միամիտ և բոլորովին անփորձ մարդիկ յերևակայում են, թե բավական ե միայն ընդունել կոմպրոմիսի թույլատրելիությունը ընդհանրապես, վոր այլևս վոչ մի սահման չմնա ոպորտյունիզմի—վորի դեմ մենք մղում ենք և միշտ էլ կմղենք անհաշտ պայքար—և հեղափոխական մարքսիզմի կամ կոմմունիզմի միջև։ Բայց յեթե այդ մարդիկ մինչև հիմա չգիտեն, թե բնության և հասարակության մեջ բոլոր սահմանները շարժական և մինչև վորոշ աստիճան պայմանական են, ապա նրանց վոչինչ չի կարող ոգնել, բացի յերկարատև ուսումը, դաստիարակությունը, լուսավորությունը, քաղաքական և կենսական փորձը։ Ամեն մի առանձին կամ սպեցիֆիկ պատմական մոմենտի քաղաքականության գործնական խնդիրներում պետք ե կարողանալ տարբերել այն խնդիրները, վորոնց մեջ յերևան են գալիս անթույլատրելի, դավաճանական, իրենց մեջ հեղափոխական դասակարգի համար կործանարար ոպորտյունիզմ պարունակող կոմպրոմիսները, վերլուծել

* Ամեն մի դասակարգի մեջ—նույնիսկ ամենալուսավոր յեվ ամենաառաջավոր յերկրի պայմաններում, նույնիսկ այն պարագայում, յերբ մոմենտի պայմանները նրա բոլոր հոգեվոր ուժերը բացառիկ կերպով բարձր վերելքի մեջ են դնում—միշտ կան յեվ անխուսափելի կերպով կլինեն, քանի դեռ դասակարգերը գոյություն ունեն, քանի դեռ լիովին չի ամրացել, չի կայունացել, չի զարգացել սեփական հիմքի վրա անդասակարգային հասարակությունը՝ դասակարգի չմտածող յեվ մտածելու անընդունակ ներկայացուցիչներ։ Կապիտալիզմը մասսաներ ճնշող կապիտալիզմը չեր լինի, յեթե դա այդպես չլիներ։

նրանց և նրանց դեմ բոլոր ուժերով պայքար մղել։ 1914—1918 թվականների իմպերիալիստական պատերազմի ժամանակ՝ հավասարապես ավազակ ու հավասարապես գիշատիչ յերկու խմբակցությունների միջև այդպիսի մի գլխավոր ու հիմնական օպորտյունիզմի տեսակ եր սոցիալ-շովինիզմը, այսինքն «հայրենիքի պաշտպանության աջակցությունը», վոր այդպիսի մի պատերազմի ժամանակ իրապես նշանակում եր պաշտպանել «սեփական» բուրժուազիայի կողոպտիչ շահերը, Պատերազմից հետո—կողոպտիչ «Ազգերի Լիգայի» պաշտպանությունը. սեփական յերկրի բուրժուազիայի հետ ուղղակի թե անուղղակի համաձայնության պաշտպանությունը՝ ընդդեմ հեղափոխական պրոլետարիատի և «խորհրդային» շարժման. բուրժուական դեմոկրատիայի և բուրժուական պարլամենտարիզմի պաշտպանությունը ընդդեմ «խորհրդային իշխանության»։ Սրանք եյին այն անթույլատրելի և դավաճանական կոմպրոմիսների գլխավոր արտահայտությունները, վորոնք բոլորը միասին տալիս եյին հեղափոխական պրոլետարիատի և նրա գործի տեսակետից կործանարար օպորտյունիզմ։

«...Ամենայն վճռականությամբ հետ մղել ամեն տեսակ կոմպրոմիս մյուս կուսակցությունների հետ...համաձայնության և համակերպման ամեն քաղաքականություն»—այսպես են գրում գերմանական ձախերը Ֆրանկֆուրտյան բրոշյուրում։

Զարմանալի չէ, վոր այսպիսի հայացք ունենալով՝ ձախերը վճռականապես չեն դատապարտում բոլշևիզմը։ Կարելի չէ, վոր գերմանական ձախերը չիմանային, թե բոլշևիզմի ամբողջ պատմությունը, Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ և հետո, լիքն է համակերպման, համաձայնության, կոմպրոմիսների դեպքերով մյուս կուսակցությունների նրանց թվում նաև բուրժուական կուսակցությունների հետ։

Պատերազմ մղել միջազգային բուրժուազիան տապալելու համար—պատերազմ, վոր հարյուր անգամ ավելի դժվար, յերկարատև, բարդ է, քան պետությունների միջև գոյություն ունեցող սովորական ամենահամառ պատերազմը—և առաջուց հրաժարվել համակերպումից, հրաժարվել օգտագործելու թշնամիների միջև յեղող շահերի (թեկուզ և ժամանակավոր) հակամարտությունը, հրաժարվել համաձայնություն կնքել և կոմպրոմիս անել հնարավոր դաշնակիցների հետ (թեկուզ և ժամանակավոր, կարճատև, տատանվող, պայմանական)—միթե սա անսահման կերպով ծիծաղելի բան չէ։ Միթե սա նման չէ այն բանին, ինչպես յեթե պատրաստվեյինք բարձրանալ մի դեռ չհետազոտված և մինչ այդ անմատչելի սար և նախապես հրաժարվեյինք ոլորապտույտներից, յերբեմն հետ վերադարձից, միանգամ ընդունած ուղղությունը յերբեմն փոխելուց և տարբեր ուղղություն փորձելուց։ Յեվ այս աստիճան անփորձ ու անգիտակից մարդկանց (դեռ լավ է, վոր յերիտա-



սարդությամբ բացատրվի այս, յերիտասարդներին ասված ինքն է հրամայել վորոշ ժամանակ նման հիմարություններ ասել) կարող եյին պաշտպանել հոլլանդական տրիբունիստները՝ ուղղակի թե անուղղակի, հրապարակով թե ծածուկ, ամբողջապես թե մասամբ։

Պրոլետարիատի առաջին սոցիալիստական հեղափոխությունից հետո, բուրժուազիան մի յերկրում տապալելուց հետո—այդ յերկրի պրոլետարիատը յերկար ժամանակ մնում է ավելի թույլ, քան բուրժուազիան՝ առաջ պարզապես իր՝ բուրժուազիայի խոշոր միջազգային կապերի ուժով, իսկ հետո նրանով, վոր բուրժուազիան տապալած յերկրի մանր ապրանք-արտադրողների միջոցով մշտապես և տարերայնորեն վերածնվում են ու վերականգնում բուրժուազիան ու կապիտալիզմը։

Հաղթել ավելի հզոր հակառակորդին կարելի յե միայն ուժերի մեծագույն լարումով, զգույշ, մտածված, հմտորեն, պարտադիր կերպով օգտագործելով թշնամիների միջև գոյություն ունեցող ամեն տեսակ, թեկուզ և շատ աննշան «ճեղքվածքներ», օգտագործելով տարբեր յերկրների բուրժուազիաների և միևնույն յերկրի բուրժուական տարբեր խմբակցությունների շահերի հակամարտությունը, օգտագործելով նույնպես ամեն տեսակ, թեկուզ և չնչին հնարավորություն, ձեռք բերելու մասսայական դաշնակից, յեթե մինչև անգամ նա լինի ժամանակավոր, տատանվող, անհաստատ, անհուսալի, պայմանական։ Ով այս բանը չի հասկացել, նա վոչինչ չի հասկացել վոչ մարքսիզմից և վոչ էլ ժամանակակից գիտական սոցիալիզմից առհասարակ։ Ով գործնականապես չի ապացուցել, թե կարող է այդ ճշմարտությունը կիրառել իրական կյանքում բավական յերկար ժամանակ և բավական տարբեր քաղաքական դրությունների մեջ—նա դեռ չի սովորել օգնելու հեղափոխական դասակարգին՝ շահագործողների լծից մարդկության բոլոր աշխատավորներին ազատելու կռվի մեջ։ Յեվ այս ասածները հավասարապես վերաբերում են պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանությունը նվաճելու նախորդ թե հետագա շրջանին։

Մեր թեորիան դոգմա չէ, այլ գործելու ուղեցույց,—ասում եյին Մարքսն ու Ենգելսը։ Յեվ այնպիսի «պատենտավոր» մարքսիստների,—ինչպես են Կարլ Կաուցկին, Օտտո Բաուերը և նմանները,—մեծագույն սխալը, մեծագույն հանցանքն այն է, վոր նրանք չհասկացան այս, չկարողացան կիրառել այն պրոլետարիատի հեղափոխության ամենակարևոր մոմենտներին։ «Քաղաքական գործունեյությունը—Նևսկի պրոսպեկտի մայթը չէ» (Պետերբուրգի ամենաուղիղ գլխավոր փողոցի մաքուր, լայն, հարթ մայթը,)—ասում եր դեռ նախա-մարքսյան շրջանի ռուս մեծ սոցիալիստ Ն. Գ. Չերնիշևսկին։ Ռուս հեղափոխականները Չերնիշևսկու ժամանակից սկսած անհամար զոհեր են տվել այս ճըշ-

մարտությունն անգիտանալու և կամ մոռանալու պատճառով: Պետք է ամեն միջոց գործ դնել, վոր Արևմտյան Եվրոպայի և Ամերիկայի ձախ կոմմունիստները և բանվոր դասակարգին նվիրված հեղափոխականները այնքան թանկ չվճարեն այս ճշմարտության յուրացման համար, վորչափ հետամնաց ռուսաստանցիները:

Ռուս հեղափոխական սոցիալ-դեմոկրատները մինչև ցարիզմի անկումը հաճախ ոգտվել են բուրժուական լիբերալների ծառայություններից, այսինքն նրանց հետ մի շարք գործնական կոմպրոմիսներ են կնքել, իսկ 1901—1902 թվականներին, դեռ բոլշևիզմի ծագումից առաջ, «Իսկրայի[58]» հին խմբագրությունը (այդ խմբագրության մեջ մտնում եյին Պլեխանով, Ակսելրոդ[59], Զասուլիչ[60], Մարտով[61], Պոտրեսով և յես) քաղաքական ֆորմալ դաշինք կնքեց (ճիշտ է, կարճ ժամանակով) բուրժուական լիբերալիզմի քաղաքական ղեկավար Ստրուվեյի[62] հետ, միաժամանակ շարունակելով ամենաանխնա գաղափարական և քաղաքական պայքար մղել բուրժուական լիբերալիզմի դեմ, ինչպես և նրա ազդեցության ամենաաննշան արտահայտության դեմ բանվորական շարժման ներսում:

Բոլշևիկները միշտ նույն քաղաքականությունն են շարունակել: 1905 թվականից սկսած նրանք սիստեմատիկ կերպով պաշտպանել են բանվոր դասակարգի միությունը գյուղացիության հետ ընդդեմ լիբերալ բուրժուազիայի և ցարիզմի, միաժամանակ չհրաժարվելով յերբեք պաշտպանել բուրժուազիան ցարիզմի դեմ (որինակ, ընտրությունների յերկրորդ աստիճանում կամ կրկնաքվեարկության ժամանակ), չդադարեցնելով նույնպես ամենաանհաշտ գաղափարական և քաղաքական պայքարը բուրժուական-հեղափոխական գյուղացիական կուսակցության՝ «սոցիալիստ-հեղափոխականների» դեմ, մերկացնելով նրանց վորպես մանր-բուրժուական դեմոկրատներ, վոր կեղծությամբ իրենց սոցիալիստ եյին անվանում: 1907 թվականին բոլշևիկները «սոցիալիստ-հեղափոխականների»[63] հետ կարճ ժամանակով ֆորմալ քաղաքական բլոկ կազմեցին Դումայի ընտրությունների համար: Մենշևիկների հետ մենք 1903—1912 թվերին, միքանի տարի շարունակ, յեղել ենք ձևապես միևնույն սոցիալ դեմոկրատ կուսակցության մեջ, յերբեք չդադարեցնելով գաղափարական և քաղաքական պայքարը նրանց դեմ, վորպես բուրժուազիայի ազդեցությունը պրոլետարիատի մեջ տարածողների և ոպպորտյունիստների դեմ: Պատերազմի ժամանակ մենք վորոշ կոմպրոմիսս ենք կնքել «կաուցկիականների», ձախ մենշևիկների (Մարտով) և «սոցիալիստ-հեղափոխականների» մի մասի հետ (Չերնով[64], Նատանսոն), նստելով նրանց հետ միասին Ցիմմերվալդում և Կինտալում[65] և հրատարակելով ընդհանուր մանիֆեստներ, բայց մենք վոչ մի ժամանակ չենք դադարեցրել և չենք թուլացրել գաղա-



փարական-քաղաքական պայքարը «կաուցկիականների», Մարտովի և Չերնովի դեմ. (Նատանսոնը մեռավ 1919 թվին, լինելով մեզ շատ մոտ, գրեթե մեզ համախոհ «հեղափոխական կոմմունիստ» նարոդնիկ[66]): Հոկտեմբերյան հեղաշրջման մոմենտին իսկ մենք կնքեցինք վոչ թե ֆորմալ, այլ շատ կարևոր (և շատ հաջող) քաղաքական բլոկ մանր-բուրժուական գյուղացիության հետ, ընդունելով ամբողջապես, առանց վորևե փոփոխության, էսէրական ագրարային ծրագիրը[67], այսինքն անկասկածելի կոմպրոմիսս կնքեցինք, ցույց տալու համար գյուղացիներին, թե մենք չենք ցանկանում մեծություն. անդրանկություն անել նրանց վրա, այլ ցանկանում ենք համաձայնություն նրանց հետ: Միաժամանակ մենք առաջարկեցինք (և շուտով իրականացրինք) «ձախ էսէրների» հետ քաղաքական ֆորմալ բլոկ, կառավարության մեջ մասնակից անելով նրանց, վորոնք Բրեստի դաշնագրի կնքումից հետո խախտեցին այդ բլոկը, ապա 1918 թվի հուլիսին զինված ապստամբություն արին և հետո մինչև իսկ զինված կռիվ մղեցին մեր դեմ[68]:

Հասկանալի յե, ուրեմն, թե ինչու մեզ բոլորովին անլուրջ են թվում գերմանական ձախերի հարձակումները Գերմանիայի կոմմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեյի դեմ՝ «անկախականների» հետ (Գերմանիայի անկախ սոցիալ-դեմոկրատ կուսակցության», կաուցկիականների հետ) բլոկ կազմելու գաղափարն առաջադրելու համար, և թե ինչու շոշափելի կերպով ապացուցված է յերեվում «ձախերի» անիրավացիությունը: Մեզանում, Ռուսաստանում նույնպես յեղել են աջ մենշևիկներ (Կերենսկու կառավարության մեջ մտած), համապատասխան գերմանական Շայդեմաններին, ինչպես և ձախ մենշևիկներ (Մարտով), վոր աջ մենշևիկներին ընդդիմադիր եյին և վոր համապատասխանում եյին գերմանական կաուցկիականներին: Բանվորական մասսաների հաջորդական անցումը մենշևիկներից բոլշևիկներին՝ մենք պարզ կերպով նկատում եյինք 1917 թվականին. Խորհուրդների Համառուսական Առաջին Համագումարին, 1917 թ. հունիսին մենք ունեյինք ընդամենը 13%: Մեծամասնությունը էսէրների և մենշևիկների մոտ եր: Խորհուրդների Յերկրորդ Համագումարին (25/X 1917, հին տոմար) մենք ունեյինք ձայների 51%-ը[69]: Ինչու համար Գերմանիայում բանվորների նույնպիսի և նույնանման թեքումը աջից ձախ ուժեղացրեց վոչ անմիջապես կոմմունիստներին, այլ նախ և առաջ «անկախականների» միջանկյալ կուսակցությունը, թեև վոչ մի ինքնուրույն քաղաքական գաղափար, վոչ մի ինքնուրույն քաղաքականություն յերբեք չի ունեցել այդ կուսակցությունը, այլ միայն տատանվել է Շայդեմանների և կոմմունիստների միջև:

Պարզ է, վոր պատճառներից մեկն էլ յեղել է գերմանական կոմմունիստների սխալ տակտիկան, վորոնք պարտավոր են անվախ և

ազնիվ կերպով ճանաչել այդ սխալը և սովորեն սրբագրել այն։ Սխալը յեղել է այն, վոր մերժել են մասնակցել ռեակցիոն բուրժուական պարլամենտում և ռեակցիոն պրոֆմիությունների մեջ, սխալը յեղել է այն «ձախ» մանկական հիվանդության բազմազան արտահայտությունների մեջ, վոր այժմ դրսևորվել է և վոր, ուրեմն, ավելի լավ, ավելի արագ, ավելի օգտակար ձևով կբուժվի օրգանիզմի համար։

Գերմանական «անկախ սոցիալ-դեմոկրատական» կուսակցությունը ներսում ակնհայտնի կերպով միասեռ չէ։ Հին, օպպորտյունիստական ղեկավարների հետ միասին (Կաուցկի, Հիլֆերդինգ, ինչպես յերևում է՝ մեծ չափով նաև Կրիսպին, Լեդեբուր և ուրիշները), վորոնք ցույց են տվել պրոլետարիատի դիկտատուրայի և խորհրդային իշխանության նշանակությունը հասկանալու, ինչպես և պրոլետարիատի հեղափոխական կռիվը վարելու իրենց անընդունակությունը—այդ կուսակցության մեջ կազմավորվել է և զարմանալի արագությամբ աճում է ձախ, պրոլետարական թևը։ Այդ կուսակցության հարյուր-հազարավոր անդամները (կուսակցություն, վոր կարծեմ մոտ $^{3}/_{4}$ միլիոն անդամ ունի) Շայդեմանի կուսակցությունից հեռացած և արագ կերպով դեպի կոմմունիզմը դիմող պրոլետարներ են։ Այս պրոլետարական թևը անկախականների Լայպցիգի համագումարում (1919) առաջարկել է արդեն անմիջական և անպայման միացում III Ինտերնացիոնալին։ Կուսակցության այդ թևի հետ «կոմպրոմիսներ» անելուց վախենալ—ուղղակի ծիծաղելի յէ։ Ընդհակառակը, կոմմունիստների համար պարտավորիչ է վորոնել և գտնել կոմպրոմիսի հարմար ձև նրանց հետ, այնպիսի կոմպրոմիսի, վոր մի կողմից հեշտացներ և արագացներ անհրաժեշտ ձուլումը այդ թևի հետ, իսկ մյուս կողմից՝ վոչ մի կերպ չսահմանափակեր կոմմունիստների գաղափարական-քաղաքական պայքարը «անկախականների» աջ, օպպորտյունիստական թևի դեմ։ Հավանորեն, կոմպրոմիսի հարմար ձևի մշակությունը դյուրին չի լինի, բայց միայն շառլատանը գերման բանվորներին և գերման կոմմունիստներին կարող է խոստանալ հաղթության «դյուրին» ճանապարհ։

Կապիտալիզմը կապիտալիզմ չեր լինի, յեթե «մաքուր» պրոլետարիատը շրջապատված չլիներ չափազանց խայտաբղետ անցողակի տիպերի զանգվածով, անցողակի՝ պրոլետարից դեպի կիսապրոլետարը (նա, ով կիսով չափ իր գոյության միջոցները հայթայթում է բանվորական ուժի վաճառքով), կիսապրոլետարից դեպի մանր գյուղացին (և դեպի մանր արհեստավորը, տնայնագործը, տնտեսատերն ընդհանրապես), մանր գյուղացուց դեպի միջինը և այլն։ Կապիտալիզմը կապիտալիզմ չեր լինի, յեթե պրոլետարիատի ներսում իսկ չլինեյին ավելի կամ պակաս զարգացած շերտերի բաժանումներ, հայրենակցական, պրոֆեսիոնալ, յերբեմն նաև կրոնական և այլ բաժանումներ։ Իսկ այս



բոլորից բացարձակ կերպով բղխում է պրոլետարիատի ավանգարդի, նրա գիտակից մասի, կոմմունիստական կուսակցության համար անհրաժեշտություն, անպայման անհրաժեշտություն՝ դիմել դեպի համակերպում, համաձայնություն, կոմպրոմիսներ պրոլետարների զանազան խմբակցությունների, բանվորների և մանր տնտեսատերերի զանազան կուսակցությունների հետ։ Ամբողջ խնդիրն այն է, վոր կարողանան այդ տակտիկան կիրառել պրոլետարական գիտակցության, հեղափոխականության, պայքարի ու հաղթանակի ընդունակության ընդհանուր մակարդակը բարձրացնելու նպատակներով և վոչ թե ցածրացնելու։ Պետք է իմիջի այլոց նկատել, վոր բոլշևիկների հաղթանակը մենշևիկների վրա պահանջում եր վոչ միայն Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ, այլ յեվ նրանից հետո, համակերպման, համաձայնության, կոմպրոմիսների տակտիկի գործադրությունը, անշուշտ այն բնույթի և այնպես, վոր դյուրացներ, արագացներ, ամրապնդեր, ուժեղացներ բոլշևիկներին ի հաշիվ մենշևիկների։ Մանր-բուրժուական դեմոկրատները (իսկ նրանց թվում նաև մենշևիկները) անխուսափելի կերպով տատանվում են բուրժուազիայի և պրոլետարիատի միջև, բուրժուական դեմոկրատիայի և խորհրդային կարգի միջև, ռեֆորմիզմի և հեղափոխականության միջև, բանվորասիրության և պրոլետարական դիկտատուրայի վախի միջև և այլն։ Կոմմունիստների ճիշտ տակտիկան պետք է այդ տատանումների օգտագործման և վոչ թե նրանց անգիտացման մեջ կայանա. օգտագործումը պահանջում է զիջումներ այն տարրերին, այն ժամանակ և այն չափով, վոր տարրերը, վոր ժամանակ և վոր չափով թեքվում են դեպի պրոլետարիատը, միաժամանակ պայքար մղելով նրանց դեմ, վորոնք թեքվում են դեպի բուրժուազիան։ Այդ ճիշտ տակտիկան գործադրելու հետևանքով մենշևիզմը մեզանում քայքայվել է և քայքայվում է ավելի ու ավելի, համառ կերպով մեկուսացնելով օպպորտյունիստական ղեկավարներին և բերելով մեր բանակը լավագույն բանվորներին, լավագույն տարրերը մանր-բուրժուական դեմոկրատիայից։ Սա մի յերկարատև պրոցես է։ Մինչդեռ «վոչ մի կոմպրոմիսի և վոչ մի համակերպման» արագընթաց «վճռով» կարելի յե միայն վնասել հեղափոխական պրոլետարիատի ազդեցության բարձրացման և նրա ուժերի ավելացման գործին։

Վերջապես, գերմանական «ձախերի» անպայման սխալներից մեկն էլ այն է, վոր նրանք համառ կերպով պնդում են Վերսալի դաշնագիրը չճանաչելու վրա։ Վորքան «լուրջ» և «կարևոր,» վորքան «վճռական» և վերջնական ձևով է ձևակերպում այս հայացքն, օրինակ Կ. Խորները, այնքան նվազ խելացի յե դուրս գալիս այն։ Բավական չե միայն հրաժարվել «ազգային բոլշևիզմի» (Լաուֆենբերգի և մյուսների) աղաղակող անհեթեթություններից, վոր միջազգային պրո-

լետարական հեղափոխության ներկա պայմաններում մինչև անգամ բլոկ եր ցանկանում գերմանական բուրժուազիայի հետ՝ Անտանտայի դեմ պատերազմելու համար։ Պետք է ըմբռնել, թե հիմնապես սխալ է այն տակտիկան, վոր խորհրդային Գերմանիային չի թույլատրում (յեթե շուտով հաստատվեր գերմանական խորհրդային հանրապետություն) ճանաչել վորոշ ժամանակ Վերսալյի դաշնագիրը և յենթարկվել նրան։ Այստեղից չի հետևում, թե «անկախականները» ճիշտ եյին առաջադրելով այն ժամանակվա պայմաններում Վերսալյի դաշնագիրն ստորագրելու պահանջը, այն ժամանակ, յերբ կառավարության մեջ նստած եյին շայդեմանականները, յերբ դեռ խորհրդային իշխանությունը տապալված չեր Հունգարիայում,[70], յերբ դեռևս անհնարին չեր Վիեննայում սպասվելիք խորհրդային հեղափոխության աջակցությունը Խորհրդային Հունգարիային։ Այն ժամանակ «անկախականները» համակերպման և մանյովրների շատ վատ քաղաքականություն եյին վարում, վորովհետև իրենց վրա եյին առնում դավաճան Շայդեմանների համար ավելի կամ նվազ պատասխանատվություն, Շայդեմանների դեմ անխնա (և ամենասառնասիրտ) դասակարգային պատերազմելու փոխարեն, ավելի կամ նվազ գլորվում եյին դեպի «անդասակարգային» կամ «վերդասակարգային» տեսակետը։

Բայց այժմ դրությունը ակնհայտնի կերպով այնպես է, վոր Գերմանիայի կոմմունիստները ձեռքերը չպիտի կապեն և չպիտի խոստանան Վերսալյի դաշնագրի պարտադիր և անպայման մերժումը՝ կոմմունիզմի հաղթության պարագային։ Հիմարություն կլինի այդ։ Պետք է ասել՝ Շայդեմանները և կաուցկիականները մի շարք այնպիսի դավաճանություններ են կատարել, վոր դժվարացրել են (մասամբ ուղղակի փչացրել են) Խորհրդային Ռուսաստանի, Խորհրդային Հունգարիայի հետ դաշնակցելու գործը։ Մենք, կոմմունիստներս ամեն միջոցներով կդյուրացնենք և կնախապատրաստենք այդպիսի մի դաշնակցություն, մինչդեռ մենք բոլորովին պարտական չենք անպայման և այն էլ անմիջապես հետ մղել Վերսալյի դաշնագիրը։ Նրա հաջող մերժման հնարավորությունը կախված է վոչ միայն գերմանական, այլ և խորհրդային շարժման միջազգային հաջողությունից։ Շայդեմանները և կաուցկիականները խանգարեցին այդ շարժումը, մենք նրան օգնում ենք։ Ահա թե ինչ է խնդիրը, ահա թե ուր է հիմնական տարբերությունը։ Յեվ յեթե մեր դասակարգային թշնամիները, շահագործողները, նրանց սպասավորները՝ Շայդեմանները և կաուցկիականները ձեռքից տվին մի շարք հնարավորություններ ուժեղացնելու գերմանական և միջազգային խորհրդային շարժումը, ուժեղացնելու և գերմանական, և միջազգային խորհրդային հեղափոխությունը—ապա հանցանքը ընկնում է նրանց վրա։ Խորհրդային հեղափոխությունը



Գերմանիայում կուժեղացնի միջազգային խորհրդային շարժումը, վոր ամենաուժեղ հենուկն է (և միակ հուսալի, անհաղթելի, համաշխարհայնորեն-հզոր հենուկը) Վերսալյի դաշնագրի դեմ, միջազգային իմպերիալիզմի դեմ ընդհանրապես։ Վերսալյի դաշնագրից ազատագրվելու խնդիրը դնել անպայման և անմիջական և պարտադիր կերպով առաջին տեղը իմպերիալիզմի կողմից ճնշված մյուս յերկրների ազատագրության խնդրից առաջ—դա քաղքենիական նացիոնալիզմ է (արժանի Կաուցկիներին, Հիլֆերդինգներին, Ոտտո Բաուերներին և ընկ.) և վոչ թե հեղափոխական ինտերնացիոնալիզմ։ Բուրժուազիայի տապալումը յեվրոպական վորևէ խոշոր յերկրում, այս թվում նաև Գերմանիայում, միջազգային հեղափոխության համար այնպիսի պլյուս է, վոր նրա համար կարելի և պետք է—յեթե այդ հարկավոր լինի—համաձայնվել Վերսալյի դաշնագրի ավելի յերկարատև գոյության հետ։ Յեթե Ռուսաստանը միայնակ կարողացավ, հեղափոխության համար օգտակար կերպով, տանել Բրեստի դաշնագրի միքանի ամիսները, ապա վոչ մի անհնարին բան չկա, վոր Խորհրդային Գերմանիան՝ Խորհրդային Ռուսաստանի հետ դաշնակցած, կարողանա հեղափոխության համար օգտակար կերպով տանել Վերսալյի դաշնագրի ավելի յերկարատև գոյությունը։

Ֆրանսիայի, Անգլիայի և մյուս իմպերիալիստները դրդում են գերմանական կոմմունիստներին, նրանց առաջ թակարդ են դնում՝ «ասացեք, վոր չեք ստորագրի Վերսալյի դաշնագիրը»։ Իսկ ձախ կոմմունիստները մանուկների պես ընկնում են նրանց համար դրված թակարդը՝ փոխանակ հմտորեն շործվելու նենգավոր—յեվ ներկա մոմենտում—ավելի ուժեղ թշնամու դեմ, փոխանակ նրանց պատասխանելու թե՝ «այժմ մենք կստորագրենք Վերսալյի դաշնագիրը»։ Ձեռքերը սկզբից և եթ կապել, այժմ մեզանից ավելի լավ զինված թշնամուն ասել, թե մենք նրա հետ պատերազմելու յենք և այն էլ այս-ինչ ժամանակ—անմտություն է և վոչ թե հեղափոխականություն։ Ընդունել ճակատամարտն այն ժամանակ, յերբ այդ բացարձակապես ձեռնտու յե թշնամուն և վոչ մեզ—վոճրագործություն է։ Յեվ բոլորովին անպետք են հեղափոխական դասակարգի այդպիսի քաղաքագետները, վորոնք չեն կարողանում «համակերպություն, համաձայնություն, կոմպրոմիսներ» կնքել՝ խուսափելու համար ակներև կերպով անձեռնտու ճակատամարտից։

## IX.

## «ՁԱԽ» ԿՈՄՄՈՒՆԻԶՄԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ.

Անգլիայում դեռևս կոմմունիստական կուսակցություն չկա, բայց կա թարմ, լայն, հզոր, արագորեն աճող, ամենալավ հույսեր տածելու հիմքեր տվող կոմմունիստական շարժում բանվորների մեջ։ Կան մի-

քանի քաղաքական կուսակցություններ և կազմակերպություններ («Բրիտանական սոցիալիստական կուսակցություն», «Սոցիալիստական բանվորական կուսակցություն», «Հարավ-Ուելսյան սոցիալիստական ընկերություն», «Բանվորական սոցիալիստական ֆեդերացիա»), վորոնք ցանկանում են հիմնել կոմմունիստական կուսակցություն և վորոնք արդեն իրար հետ բանակցություններ են վարում այդ մասին։ Վերև հիշված կազմակերպություններից վերջինի որգան, ընկ. Սիլվիա Պանկխերստի[71] խմբագրությամբ հրատարակվող «Բանվորների դրեդնոուտ» շաբաթաթերթում (հատ. VI. № 48. փետրվար 21, 1920 թ.) զետեղված է նրա «Դեպի կոմմունիստական կուսակցությունը» հոդվածը։ Հոդվածը նկարագրում է վերև հիշված չորս կազմակերպությունների միջև կայացած բանակցությունների ընթացքը մեկ կոմմունիստական կուսակցություն կազմելու մասին՝ հիմնված III Ինտերնացիոնալին միանալու, պարլամենտարիզմի փոխարեն խորհրդային սիստեմի ճանաչման և պրոլետարիատի դիկտատուրայի վրա։ Պարզվում է, վոր մեկ կոմմունիստական կուսակցություն անմիջական կերպով հիմնելու գլխավոր արգելքներից մեկը պարլամենտին մասնակցելու խնդրի նկատմամբ յեղած տարակարծությունն է, և այն, թե արդյոք նոր կոմմունիստական կուսակցությունը պիտի միանա հին, պրոֆեսիոնալիստական, գլխավորապես տրեդ-յունիոններից կազմված, ոպպորտյունիստական և սոցիալ-շովինիստական «Բանվորական կուսակցությանը»[72]։ «Բանվորական սոցիալիստական ֆեդերացիան», ինչպես և «Սոցիալիստական բանվորական կուսակցությունը» *, արտահայտվում են պարլամենտական ընտրություններին և պարլամենտին մասնակցելու դեմ, «Բանվորական կուսակցության» միանալու դեմ՝ այս կետում տարբերվելով Բրիտանական սոցիալիստական կուսակցության բոլոր անդամներից կամ նրա մեծամասնությունից, վոր նրանց հայացքով ներկայանում է «կոմմունիստական կուսակցության աջ թևը» Անգլիայում (եջ 5. Սիլվիա Պանկխերստի վերոհիշյալ հոդվածը)։

Այսպիսով, հիմնական բաժանումը նույնն է, ինչ վոր Գերմանիայում, չնայելով տարակարծությունների արտահայտության ձևի խոշոր տարբերության (Գերմանիայում այս ձևն ավելի մոտ է «ռուսականին», քան Անգլիայում) և մի շարք ուրիշ պարագաների։ Տեսնենք, ուրեմն, թե ինչ են «ձախերի» պատճառաբանությունները։

Պարլամենտին մասնակցելու խնդրի առթիվ ընկ. Սիլվիա Պանկխերստը հենվում է նույն համարի մեջ զետեղված ընկ. Վ. Գալլակերի (W Gallacher) հոդվածի վրա, վոր Գլազգոյի «Շոտլանդական բանվորական խորհրդի» անունից գրում է.

* Թվում է, թե այս կուսակցությունը «Բանվորական կուսակցության» հետ միանալու դեմ է, բայց ամբողջովին դեմ չէ պարլամենտին մասնակցելուն։



«Այս Խորհուրդը—գրում է նա—վորոշակի կերպով հակապարլամենտական է և նրա հետևում կանգնած է զանազան քաղաքական կազմակերպությունների ձախ թևը։ Մենք ներկայացնում ենք հեղափոխական շարժումը Շոտլանդիայում, վոր ձգտում է ստեղծել հեղափոխական կազմակերպություն արտադրությունների մեջ (արտադրության զանազան ճյուղերում) և կոմմունիստական կուսակցություն, հիմնված սոցիալիստական կոմիտեների վրա ամբողջ յերկրում։ Յերկար ժամանակ մենք վիճում եյինք պաշտոնական պարլամենտականների հետ։ Մենք անհրաժեշտ չեյինք համարում բացարձակ պատերազմ հայտարարել նրանց, իսկ նրանք վախենում են մեր դեմ հարձակում սկսել։

«Բայց իրերի այս դրությունը չի կարող յերկար շարունակվել։ Մենք հաղթում ենք բոլոր կետերում։

«Անկախ բանվորական կուսակցության մասսայական անդամները Շոտլանդիայում ավելի ու ավելի յեն նողկանք զգում պարլամենտը հիշելիս, և գրեթե բոլոր տեղական խմբակցությունները Սովետների կողմն են (գործ է ածված ռուսական խոսքը անգլիական տառադարձությամբ) և կամ բանվորական խորհուրդների կողմը։ Կասկած չկա, վոր այս փաստը շատ կարևոր նշանակություն ունի այն պարոնների համար, վորոնք քաղաքականության վրա նայում են վորպես վաստակի միջոցի վրա (վորպես արհեստի վրա) և վորոնք ամեն միջոց գործ են դնում համոզելու համար իրենց անդամներին՝ հետ դառնալ կրկին պարլամենտարիզմի գիրկը։ Հեղափոխական ընկերները չպետք է (ընդգծումն ամեն տեղ հեղինակինն է) պաշտպանեն այդ բանդային։ Մեր պայքարը այստեղ շատ դժվար է լինելու։ Այդ պայքարի ամենավատ գծերից մեկն էլ այն մարդկանց դավաճանությունն է լինելու, վորոնց համար անձնական շահերն ավելի ուժեղ դրդիչներ են, քան նրանց հետաքրքրությունը հեղափոխության նկատմամբ։ Պարլամենտարիզմին ցույց տրված ամեն պաշտպանություն կնշանակե ոգնել պարզապես, վոր իշխանությունն անցնի մեր բրիտանական Շայդեմանների և Նոսկեների ձեռքը։ Հենդերսոնը, Կլայնսը և ընկ. անհուսալի կերպով հետադիմական են։ Պաշտոնական «Անկախ բանվորական կուսակցությունը» ավելի ու ավելի յե ընկնում բուրժուական լիբերալների իշխանության տակ, վորոնք հոգևոր ապաստան են գտել պարոններ Մակդոնալդի,[73] Սնոուդենի[74] և ընկ. բանակում։ Պաշտոնական «Անկախ բանվորական կուսակցությունը» կատաղի թշնամի յե III Ինտերնացիոնալին, իսկ մասսան կողմնակից է այս վերջինին։ Վորևէ միջոցով պաշտպանել պարլամենտական-ոպպորտյունիստներին,

նշանակում է ուղղակի ջուր ածել վերոհիշյալ պարոնների ջրաղացին։ Բրիտանական սոցիալիստական կուսակցությունը այստեղ վոչ մի նշանակություն չունի... Այստեղ հարկավոր է առողջ հեղափոխական տրատադրական (արդյունագործական) կազմակերպություն և պարզ, վորոշ, գիտական հիմքերով գործող կոմմունիստական կուսակցություն։ Յեթե մեր ընկերները կարողանան ոգնել մեզ այդ կազմակերպությունները հիմնելու գործում, մենք սիրով կընդունենք նրանց ոգնությունը։ Յեթե չեն կարող, թող, ի սեր աստծու, ամենևին չխառնվեն, յեթե միայն չեն ուզում դավաճանել հեղափոխության՝ աջակցություն ցույց տալով այն ռեակցիոներներին, վորոնք այդպիսի յեռանդով ձգտում են պարլամենտականի «պատվավոր» (? հարցական նշան հեղինակի կողմից) կոչումին և վորոնք ամեն կերպ ցանկանում են ապացուցել, թե կարող են կառավարել նույնպիսի հաջողությամբ, վորպես իրենք «տերերը»—դասակարգային քաղաքագետները»։

Խմբագրության ուղղած այս նամակը, իմ հայացքով, գեղեցիկ կերպով արտահայտում է տրամադրություններն ու տեսակետը այն յերիտասարդ կոմմունիստների կամ մասսայական բանվորների, վորոնք նոր-նոր սկսել են գալ դեպի կոմմունիզմը։ Այդ տրամադրությունը վերին աստիճանի ուրախալի և գնահատելի յե, պետք է այն կարողանալ գնահատել և պաշտպանել, վորովհետև առանց նրան պրոլետարիատի հեղափոխության հաղթանակը Անգլիայում—և առհասարակ վորևէ այլ յերկրում—անհուսալի կլիներ։ Պետք է պահպանել և հոգատար կերպով ամեն աջակցություն ցույց տալ այն մարդկանց, վորոնք կարողանում են արտահայտել մասսաների այդպիսի տրամադրությունը, կարողանում են զարթեցնել մասսաների մեջ նման տրամադրություն (վոր հաճախ լինում է քնած, չգիտակցված, չարթնացած)։ Բայց միևնույն ժամանակ պետք է ուղղակի, հրապարակով ասել նրանց, թե միայն տրամադրությունը բավական չէ հեղափոխական մեծ պայքարի մեջ մասսաներին ղեկավարելու համար, և թե այս ու այն սխալները, վոր գործում են և կամ պատրաստ են գործելու հեղափոխության նվիրված մարդիկ, այնպիսի սխալներ են, վոր կարող են վնասել հեղափոխության գործին։ Ընկեր Գալլակերի խմբագրության ուղղած նամակը անկասկած կերպով ցույց է տալիս բոլոր այն սխալների սաղմերը, վոր անում են գերմանական «ձախ» կոմմունիստները, և վոր արել են ռուս «ձախ» բոլշևիկները 1908 և 1918 թվականներին։

Նամակի հեղինակը տոգորված է պրոլետարական ամենաազնիվ ատելությամբ դեպի բուրժուական «դասակարգային քաղաքագետները» (ատելություն, վոր հասկանալի յե վոչ միայն պրոլետարներին, այլ և բոլոր աշխատավորներին, բոլոր «փոքր մարդկանց», յեթե գործ



ածենք գերմանական արտահայտությունը)։ Ճնշված և շահագործված մասսաների ներկայացուցչի այս ատելությունն իրապես «սկիզբն է ամենայն իմաստության», հիմքն է ամեն սոցիալիստական և կոմմունիստական շարժման և նրա հաջողության։ Բայց հեղինակը, ըստ յերևույթին, հաշվի չի առնում այն, վոր քաղաքականությունը գիտություն և արվեստ է, վոր յերկնքից չի ընկնում, ձրի չի տրվում, և վոր պրոլետարիատը—յեթե նա ցանկանում է հաղթել բուրժուազիային—պետք է մշակի իր, պրոլետարական «դասակարգային քաղաքագետներին» և այնպիսիներին, վոր վատ չլինեն բուրժուական քաղաքագետներից։

Նամակի հեղինակը գեղեցիկ կերպով հասկացել է, վոր վոչ թե պարլամենտը, այլ միայն բանվորական խորհուրդները կարող են պրոլետարական նպատակների իրագործման գործիք լինել, և, իհարկե, նրանք, վորոնք մինչև հիմա չեն հասկացել այդ՝ վատագույն ռեակցիոներներն են, յեթե մինչև իսկ լինեն շատ գիտուն մարդ, շատ փորձված քաղաքագետ, շատ անկեղծ սոցիալիստ, շատ կարդացած մարքսիստ, շատ ազնիվ քաղաքացի ու ընտանիքի հայր։ Բայց նամակի հեղինակը մինչև իսկ հարց չի դնում, չի մտածում հարց դնելու անհրաժեշտության մասին, թե կարելի՞ յե արդյոք իրագործել խորհուրդների հաղթանակը պարլամենտի վրա, չմտցնելով «խորհրդային» քաղաքագետներ պարլամենտից ներս, չքայքայելով պարլամենտարիզմը ներսից, չնախապատրաստելով խորհուրդների հաջողությունը պարլամենտի ներսում՝ առաջիկայում պարլամենտը ցրելու նպատակով։ Մինչդեռ նամակի հեղինակը միանգամայն ճիշտ միտք է արտահայտում, վոր կոմմունիստական կուսակցությունը Անգլիայում պիտի գործի գիտական հիմունքներով։ Գիտությունը պահանջում է նախ և առաջ հաշվի առնել մյուս յերկրների փորձը, առանձնապես այն ժամանակ, յերբ մյուս նույնպես կապիտալիստական յերկրները ապրում են կամ նոր ապրել են բոլորովին նման փորձ։ Յերկրորդ՝ գիտությունը պահանջում է հաշվի առնել տվյալ յերկրի ներսում գործող բոլոր ուժերը, խմբակցությունները, կուսակցությունները, դասակարգերը, մասսաները և վոչ թե քաղաքականությունը գծել հենվելով միայն մի խմբակցության կամ կուսակցության ցանկությունների և հայացքների, գիտակցության աստիճանի և պայքարի պատրաստականության վրա։

Վոր Հենդերսոնները, Կլայնսները, Մակդոնալդները, Սնոուդենները անհուսալի ռեակցիոներ են—այդ ճշմարիտ է։ Ճշմարիտ է նույնպես, վոր նրանք ուզում են իշխանությունն իրենց ձեռքն առնել (գերադասելով, սակայն, կոալիցիա բուրժուազիայի հետ), վոր նրանք կամենում են «կառավարել» միևնույն հինավուրց բուրժուական կանոններով, վոր նրանք իշխանության գլուխ անցնելով անխուսափելի կեր-

*պով իրենց այնպես կպահեն, ինչպես Շայդեմանները և Նոսկեները։ Այս բոլորն այսպես է։ Բայց այստեղից ամենևին չի բխում այն, թե նրանց պաշտպանել նշանակում է դավաճանել հեղափոխության, այլ այն, վոր հեղափոխության շահի համար բանվոր դասակարգի հեղափոխականները պետք է այդ պարոններին վորոշ պարլամենտական աջակցություն ցույց տան։ Այս միտքը պարզելու համար վերցնենք յերկու ժամանակակից անգլիական քաղաքական դոկումենտ. 1) պրեմյեր Լլոյդ-Ջորջի ճառը 18 մարտ, 1920 թ. (ինչպես տպված է* «The Manchester Guardian» *թերթում, 19 մարտ, 1920 թ.) և 2) «ձախ» կոմմունիստուհի ընկ. Սիլվիա Պանկխերստի դատողությունները, նրա վերև հիշված հոդվածում։*

*Լլոյդ-Ջորջը*[75] *իր ճառում բանակռիվ եր մղում Ասկվիտի*[76] *(վոր հատկապես հրավիրված եր այդ ժողովին և վոր հրաժարվեց գնալ) և այն լիբերալների հետ, վորոնք ուզում են վոչ թե կոալիցիա պահպանողականների հետ, այլ մոտեցում բանվորական կուսակցության հետ։ (Ընկ. Գալլակերի խմբագրության ուղղած նամակից մենք նույնպես ցուցմունք տեսանք լիբերալների անցման մասին դեպի անկախ բանվորական կուսակցությունը)։ Լլոյդ-Ջորջը ապացուցում եր, թե անհրաժեշտ է լիբերալների կոալիցիան պահպանողականների հետ և այն էլ շատ* սերտ, *քանի վոր այլ կերպ կարող է հաղթել բանվորական կուսակցությունը, վորին Լլոյդ-Ջորջը գերադասում է անվանել «սոցիալիստական» և վոր ձգտում է արտադրական միջոցների «կոլլեկտիվ սեփականության»։ «Ֆրանսիայում դա կոչվում եր կոմմունիզմ» — ժողովրդական վոճով բացատրում եր անգլիական բուրժուազիայի ղեկավարը իր ունկնդիրներին, պարլամենտական լիբերալ կուսակցության անդամներին, վոր հավանորեն մինչև այն չգիտեյին այդ — «Գերմանիայում դա կոչվում եր սոցիալիզմ, Ռուսաստանում դա կոչվում է բոլշևիզմ»։ Լիբերալների համար սկզբունքով անընդունելի յե այդ, բացատրում եր Լլոյդ-Ջորջը, քանի վոր լիբերալները սկզբունքորեն կողմնակից են մասնավոր սեփականության։ «Քաղաքակրթությունը վտանգի մեջ է» — հայտարարում եր հռետորը, — և այդ պատճառով լիբերալները և պահպանողականները պետք է միանան...*

*... «Յեթե դուք գնաք հողագործական շրջանները, — ասում եր Լլոյդ-Ջորջը, — յես համաձայն եմ, վոր այնտեղ կտեսնեք հին կուսակցական բաժանումները, պահպանված առաջվա պես։ Այնտեղ վտանգը հեռու յե, այնտեղ վտանգ չկա։ Բայց յերբ բանը հասնի գյուղական շրջաններին, վտանգը այնտեղ նույնքան մեծ կլինի, վորքան մեծ է այժմ միքանի արդյունաբերական շրջաններում։ Մեր յերկրի չորս-հինգերորդ մասը պարապում է արդյունաբերությամբ և առևտրով, և հազիվ մի հինգերորդը հողա-*



*գործությամբ։ Սա այն պարագաներից մեկն է, վոր յես միշտ նկատի ունեմ, յերբ մտածում եմ գալիք վտանգների մասին։ Ֆրանսիայում ազգաբնակությունը հողագործական է, այնտեղ կա վորոշ հայացքների հաստատուն բազա, վոր այնքան էլ արագ չի շարժվում և վոր այնքան էլ հեշտ չի տարվի հեղափոխական շարժումով։ Մեր յերկրում խնդիրն այլ կերպ է դրված։ Մեր յերկիրը շուռ տալն ավելի հեշտ է, քան վորևե ուրիշ յերկիր աշխարհիս վրա, և յեթե նա սկսի յերերալ, ապա՝ վերև հիշված պատճառներով՝ խորտակումն այստեղ ավելի ուժեղ կլինի, քան մյուս յերկրներում»։*

*Ընթերցողը տեսնում է այստեղից, վոր պարոն Լլոյդ-Ջորջը վոչ միայն շատ խելոք մարդ է, այլ և շատ բան է սովորել մարքսիստներից։ Մեղք չէ, ուրեմն, վոր մենք էլ Լլոյդ-Ջորջից սովորենք։*

*Հետաքրքրական է նույնպես մատնանշել Լլոյդ-Ջորջի ճառից հետո տեղի ունեցած վիճաբանություններից հետևյալ միջադեպի վրա.*

«Պ. Վոլլես (Wallace). — *Յես կկամենայի հարցնել, թե ինչպես է նայում պրեմյեր-մինիստրը իր քաղաքականության հետևանքների վրա արդյունաբերական շրջաններում արդյունաբերական բանվորների նկատմամբ, վորոնցից շատերն այժմ լիբերալ են, և վորոնցից մենք այնքան շատ աջակցություն ենք ստանում։ Արդյոք այդ քաղաքականության հնարավոր հետևանքը չի՞ լինի բանվորական կուսակցության ուժերի ավելացումը այնպիսի բանվորների կողմից, վորոնք ներկայումս մեր անկեղծ ոգնականներն են։*

Պրեմյեր-մինիստր. — *Յես բոլորովին տարբեր կարծիքի յեմ։ Այն փաստը, վոր լիբերալները միմյանց մեջ պայքարում են, անպայման կերպով շատ լիբերալների հուսահատությունից մղում է դեպի բանվորական կուսակցությունը, վորտեղ արդեն բավական թվով լիբերալներ կան, շատ ընդունակ մարդիկ և վոր այժմ զբաղված են կառավարությունը վարկաբեկելով։ Հետևանքն անկասկած կերպով այն է, վոր այժմ նշանակելի չափով հասարակական տրամադրություն է ստացվում հոգուտ բանվորական կուսակցության։ Հասարակական կարծիքը դառնում է վոչ թե դեպի բանվորական կուսակցությունից դուրս կանգնած լիբերալները, այլ դեպի բանվորական կուսակցությունը։ Այս ցույց են տալիս մասնակի վերընտրությունները»։*

*Անցողակի ասենք, վոր այս դատողությունը ցույց է տալիս հատկապես, թե ինչպես բուրժուազիայի ամենախելոք մարդիկ շփոթվել են և չեն կարող անուղղելի հիմարություններ չանել։ Դրանից էլ բուրժուազիան կկործանվի։ Իսկ մեր մարդիկ կարող են մինչև անգամ հի-*

մարություններ անել (պայմանով, վոր այդ հիմարությունները շատ մեծ չլինեն և ժամանակին ուղղվեն) և, այնուամենայնիվ, վերջիվերջո հաղթող դուրս գան։

Մյուս քաղաքական դոկումենտը—«ձախ» կոմունիստուհի ընկ. Սիլվիա Պանկխերստի հետևյալ դատողություններն են.—

«... Ընկեր Ինկպինը (Բրիտանական սոցիալիստական կուսակցության քարտուղարը) բանվորական կուսակցությունն անվանում է «բանվոր դասակարգի շարժման գլխավոր կազմակերպություն»։ Բրիտանական սոցիալիստական կուսակցությունից մի ուրիշ ընկեր III Ինտերնացիոնալի կոնֆերենցիայում Բրիտանական սոցիալիստական կուսակցության հայացքն ավելի վորոշ արտահայտեց։ Նա ասաց. «Մենք նայում ենք բանվորական կուսակցության վրա, վորպես կազմակերպված բանվոր դասակարգի վրա»։

«Մենք չենք ընդունում այս տեսակետը բանվորական կուսակցության մասին։ Բանվորական կուսակցությունը թվով շատ մեծ է, թեև նրա անդամները մեծ մասամբ անգործունյա և ապատիկ մարդիկ են։ Նրանք այն բանվորներն ու բանվորուհիներն են, վոր մտել են տրեդ-յունիոն, վորովհետև իրենց գործարանի ընկերները տրեդ-յունիոնիստներ են և վորովհետև ուզում են նպաստ ստանալ։

«Բայց մենք ընդունում ենք, վոր բանվորական կուսակցության թվական մեծությունն առաջացել է նաև այն փաստի հետևանքով, վոր նա ծնունդն է մի այն դպրոցի, վորի սահմաններից չի անցել դեռ բրիտանական բանվոր դասակարգի մեծամասնությունը, թեև մեծ փոփոխություններ են նախապատրաստվում ժողովրդի մտքի մեջ, ժողովրդի, վոր շուտով կփոխի այդ դրությունը։

«... Բրիտանական Բանվորական Կուսակցությունը, մյուս յերկրների սոցիալ-հայրենասիրական կազմակերպությունների պես, անխուսափելի կերպով, հասարակության բնական զարգացման ընթացքում, իշխանության կանցնի։ Կոմունիստների գործն է—կազմակերպել այն ուժերը, վորոնք կտապալեն սոցիալ-պատրիոտներին, և մենք մեր յերկրում վոչ պետք է դանդաղեցնենք այդ գործունեությունը, վոչ էլ տատանվենք։

«Մենք չպետք է ցրենք մեր յեռանդը, ավելացնելով Բանվորական Կուսակցության ուժը։ Նրա վերելքը դեպի իշխանություն՝ անխուսափելի յե։ Մենք պետք է կենտրոնացնենք մեր ուժերը՝ ստեղծելու համար կոմունիստական շարժում, վոր պիտի հաղթի Բանվորական Կուսակցությանը։ Բանվորական Կուսակ-



ցությունը շուտով կկազմի կառավարություն. հեղափոխական ոպպոզիցիան պետք է պատրաստ լինի նրա վրա հարձակվելու համար...»։

Այսպես, լիբերալ բուրժուազիան հրաժարվում է դարավոր փորձով պատմականորեն սրբագործված—և շահագործողների համար չափազանց ձեռնտու—«յերկու կուսակցությունների» (շահագործողների) սիստեմից, անհրաժեշտ համարելով նրանց ուժերի միացումը՝ Բանվորական Կուսակցության դեմ պայքարելու համար։ Լիբերալների մի մասը, խորտակվող նավի մկների պես, փախչում են դեպի Բանվորական Կուսակցությունը։ Ձախ կոմունիստներն անխուսափելի յեն համարում իշխանության անցումը Բանվորական Կուսակցության և ընդունում են, վոր այժմ բանվորների մեծամասնությունը նրա հետ է։ Այստեղից նրանք այն տարորինակ յեզրակացությունն են հանում, վոր ընկ. Սիլվիա Պանկխերստը ձևակերպում է այսպես. «Կոմունիստական կուսակցությունը կոմպրոմիսներ չպետք է կնքի... Նա պիտի մաքուր պահի իր ուսմունքը, իր անկախությունը ռեֆորմիզմից՝ անբիծ։ Նրա առաքելությունն է—առաջ գնալ առանց կանգնելու և առանց ճանապարհը շեղելու, գնալ ուղիղ ճամփով դեպի կոմունիստական հեղափոխություն»։

Ընդհակառակն. այն փաստից, վոր Անգլիայի բանվորության մեծամասնությունը գնում է անգլիական Կերենսկիների և Շայդեմանների հետևից, վոր նա դեռ չի փորձել այդ մարդկանցից կազմված կառավարությունը—վորպիսի փորձ անհրաժեշտ յեղավ Ռուսաստանում և Գերմանիայում բանվորների մասսայական անցման համար դեպի կոմունիզմը—այս փաստից բղխում է անկասկածելի կերպով, վոր անգլիական կոմունիստները պետք է մասնակցեն պարլամենտարիզմին, պետք է պարլամենտի ներսից օգնեն բանվորական մասսային փորձով տեսնելու Հենդերսոնյան և Սնոուդենյան կառավարության արդյունքները, պետք է աջակցեն Հենդերսոններին և Սնոուդեններին՝ հաղթելու միացած Լլոյդ-Ջորջին ու Չերչիլին[77]։ Ուրիշ կերպ վարվել՝ նշանակում է հեղափոխության գործը դժվարացնել, վորովհետև առանց բանվոր դասակարգի մեծամասնության հայացքի փոփոխության՝ հեղափոխությունը անկարելի յե, իսկ այս փոփոխությունը ստեղծվում է մասսաների քաղաքական փորձով և վոչ թե միմիայն պրոպագանդով։ «Առաջ առանց կոմպրոմիսների, առանց ճանապարհը շեղելու»—յեթե այդ ասում է բանվորների ակնհայտնի անզոր փոքրամասնությունը, վոր գիտե (կամ, համենայն դեպս, պիտի գիտենա), թե մեծամասնությունը կարճ ժամանակի ընթացքում, յերբ Հենդերսոնն ու Սնոուդենը հաղթեն Լլոյդ-Ջորջին ու Չերչիլին՝ պիտի հիասթափվի իր ղեկավարներից և պիտի անցնի կոմունիզմը պաշտպանելու (կամ, համենայն

դեպս, չեզոքություն պիտի պահպանի կամ մեծ մասամբ բարյացակամ չեզոքություն կոմունիստների նկատմամբ) — ապա այդպիսի մի լոզունգ ակներև կերպով սխալ է։ Դա միևնույն է, յեթե 10,000 զինվոր կռվի դուրս գան 50,000 թշնամու դեմ, յերբ անհրաժեշտ է «կանգ առնել», «թեքել ճանապարհը», մինչև իսկ «կոմպրոմիսներ կնքել» միայն թե դիմանան, մինչև վոր հասնի 100,000 ուժանդակ զորքը, վոր ի վիճակի չե անմիջապես գալու։ Սա ինտելլիգենտական յերեխայություն է և վոչ թե հեղափոխական դասակարգի լուրջ տակտիկա։

Հեղափոխության հիմնական օրենքը՝ հաստատված բոլոր հեղափոխություններով, մասնավորապես 20-րդ դարի ռուսական յերեք հեղափոխությամբ՝ ահա թե ինչն է — հեղափոխության համար բավական չե, վոր շահագործվող և ճնշված մասսաները գիտակցեյին հին ձևով ապրելու անհնարավորությունը և փոփոխություններ պահանջեյին. հեղափոխության համար անհրաժեշտ է, վոր շահագործողները չկարողանան ապրել և կառավարել հին ձևով։ Միայն այն ժամանակ, յերբ «վարի ներքևը չուզենան» հինը և յերբ «վերի շերտերը» չկարողանան հնով, միայն այն ժամանակ հեղափոխությունը կարող է հաղթել։ Ուրիշ կերպ այս ճշմարտությունը արտահայտվում է հետևյալ խոսքերով — հեղափոխությունը անհնարին է առանց համազգային (և՛ շահագործվողներին և՛ շահագործողներին շոշափող) կրիզիսի։ Նշանակում է, հեղափոխության համար նախ և առաջ կարևոր է, վոր բանվորների մեծամասնությունը (կամ, համենայն դեպս, գիտակից, մտածող, քաղաքականապես ակտիվ բանվորների մեծամասնությունը) կատարելապես հասկանա հեղաշրջման անհրաժեշտությունը և պատրաստ լինի կյանքը զոհել նրա համար. յերկրորդ՝ վոր կառավարող դասակարգերը կառավարական կրիզիս ապրեն, վորի հետևանքով քաղաքականության մեջ են մտնում մինչև իսկ ամենահետամնաց մասսաները (ամեն մի իսկական հեղափոխության նշանն է՝ աշխատավոր և ճնշված մասսայի քաղաքական պայքարի ընդունակ և մինչև այն անտարբեր մնացած ներկայացուցիչների արագ տասնապատկումը կամ նույնիսկ հարյուրապատկումը), թուլանում է կառավարությունը և հեղափոխականների համար հնարավոր է դառնում նրա արագ տապալումը։

Անգլիայում, ինչպես ի միջի այլոց յերևում է Լլոյդ-Ջորջի ճառից, ակնհայտ կերպով աճում են հաջող պրոլետարական հեղափոխության այդ յերկու պայմանները։ Յեվ ձախ կոմունիստների սխալները այժմ հատկապես վտանգավոր են այն պատճառով, վոր միքանի հեղափոխականների մեջ նկատվում է դեպի այդ պայմաններից յուրաքանչյուրը վոչ բավարար խոհական, վոչ բավարար ուշադիր, վոչ բավարար գիտակից, վոչ բավարար հաշվառու վերաբերմունք։ Յեթե մենք վոչ թե հեղափոխական խմբակցություն, այլ հեղափոխական դասա-



կարգի կուսակցություն ենք, յեթե մենք կամենում ենք մեր հետևից քաշել մասսաներին (իսկ առանց դրան ռիսկ կա, վոր մենք կմնանք դատարկախոսներ) — մենք պարտավոր ենք առաջին՝ օգնել Հենդերսոնին և Սնոուդենին՝ տապալելու Լլոյդ-Ջորջին և Չերչիլին (ավելի ճիշտ կլինի ասել՝ պիտի ստիպենք առաջիններին տապալելու վերջիններին, քանի վոր առաջինները վախենում են իրենց հաղթությունից). յերկրորդ՝ օգնել բանվոր դասակարգի մեծամասնությանը՝ իր փորձով համոզվելու մեր իրավացիության, այսինքն համոզվելու, թե Հենդերսոններն ու Սնոուդենները միանգամայն անպետք են, թե նրանք մանր բուրժուական և դավաճանական բնույթ ունեն, թե նրանց սնանկությունը անխուսափելի յե. յերրորդ՝ մոտեցնել այն մոմենտը, յերբ Հենդերսոններից հիասթափվելու հողի վրա բանվորների մեծամասնությունը կկարողանա հաջողության լուրջ շանսերով միանգամից տապալել Հենդերսոնների կառավարությունը, վոր ավելի ևս գլուխը կորցրած կգալարվի, յեթե մինչև անգամ այնքան խելոք և այնքան լուրջ, վոչ թե մանր բուրժուական, այլ խոշոր բուրժուական Լլոյդ-Ջորջը կատարյալ ցրվածություն է ցուցահանում և թուլացնում է իրեն (ու ամբողջ բուրժուազիային) ավելի ու ավելի, յերեկ իր «բաղխումներով» Չերչիլի հետ, այսօր իր «բաղխումներով» Ասկվիտի հետ։

Ավելի կոնկրետ ձևով խոսենք։ Անգլիական կոմունիստները պետք է, իմ հայացքով, իրենց բոլոր չորս (բոլորը շատ թույլ, միքանիսները չափազանց թույլ) կուսակցություններն ու խմբակցությունները միացնեն մի կոմունիստական կուսակցության մեջ՝ III Ինտերնացիոնալի սկզբունքների և պարլամենտին պարտադիր կերպով մասնակցելու հողի վրա։ Կոմունիստական կուսակցությունը Հենդերսոններին և Սնոուդեններին առաջարկում է «կոմպրոմիս», ընտրական համաձայնություն՝ — միասին գնանք Լլոյդ-Ջորջի և պահպանողականների միության դեմ, բաժանենք պարլամենտական դերերը համաձայն այն ձայների, վոր բանվորները տվել են բանվորական կուսակցությանը կամ կոմունիստներին (վոչ թե ընտրությունների ժամանակ, այլ հատուկ քվեարկությամբ), պահպանենք ագիտացիայի, պրոպագանդի, քաղաքական գործունեության լիակատար ազատություն։ Առանց այս վերջին պայմանի, ինարկե, չի կարելի համաձայնություն կնքել, քանի վոր դա կլիներ դավաճանություն. Հենդերսոններին և Սնոուդեններին մերկացնելու լիակատար ազատություն պիտի պահանջեն և պաշտպանեն անգլիական կոմունիստները նույնքան բացարձակ կերպով, ինչպես պահանջում և պաշտպանում եյին (տասնյեվհինգ տարի, 1903—1917) ռուս բոլշեվիկները ռուսական Հենդերսոնների և Սնոուդենների, այսինքն մենշևիկների վերաբերմամբ։

Յեթե Հենդերսոններն ու Սնոուդեններն այս պայմաններով բլոկն

ընդունեն, մենք շահած ենք, որովհետև մեզ համար ամենևին կարևոր չէ պարլամենտի տեղերի թիվը, մենք չենք վազում դրա հետևից, մենք այդ կետում զիջող կլինենք. (իսկ Հենդերսոնները և մանավանդ նրանց նոր բարեկամները—կամ նրանց նոր տերերը—Անկախ բանվորական կուսակցության մեջ անցած լիբերալները ամենից շատ են ընկած դրա հետևից)։ Մենք կշահենք, որովհետև մեր ագիտացիան կտանենք մասսաների մեջ այն մոմենտին, երբ նրանց «գրգռել է» ինքը Լլոյդ Ջորջը, և կօգնենք ոչ միայն բանվորական կուսակցությանը շուտով կազմելու իր կառավարությունը, այլև մասսաներին՝ շուտով հասկանալու մեր ամբողջ կոմմունիստական պրոպագանդան, որ պիտի մղենք մենք Հենդերսոնների դեմ առանց որևէ բան կարճելու, առանց լռության։

Յեթե Հենդերսոններն ու Սնոուդենները չընդունեն բլոկն այս պայմաններով, մենք ավելի ևս կշահենք, որովհետև մենք անմիջապես ցույց կտանք մասսաներին (նկատեցեք, որ նույնիսկ զուտ մենշևիկյան, կատարելապես օպպորտյունիստական Անկախ բանվորական կուսակցության ներսում մասսան խորհուրդների կողմն է), թե Հենդերսոնները գերադասում են իրենց մերձեցումը կապիտալիստներին, քան բոլոր բանվորների միությունը։ Մենք միանգամից կշահենք մասսայի առաջ, որ մանավանդ Լլոյդ Ջորջի փայլուն, շատ իրավացի և շատ օգտակար (կոմմունիզմի համար) բացատրություններից հետո համակրանքով կվերաբերվի բոլոր բանվորների միացմանը՝ ընդդեմ Լլոյդ-Ջորջի և պահպանողականների դաշնակցության։ Մենք միանգամից կշահենք, որովհետև ցույց կտանք մասսաների առաջ, թե Հենդերսոններն ու Սնոուդենները վախենում են հաղթել Լլոյդ-Ջորջին, վախենում են իշխանությունը մենակ ձեռք առնել, ձգտում են գաղտնի կերպով ստանալ Լլոյդ-Ջորջի պաշտպանությունը, որ բացարձակ ձեռք է մեկնում պահպանողականներին՝ ընդդեմ բանվորական կուսակցության։ Պետք է նկատել, որ մեզանում Ռուսաստանում 1917 թվի փետրվար 27-ի (հին տոմարով) հեղափոխությունից հետո բոլշևիկների պրոպագանդան մենշևիկների և էսէռների դեմ (այսինքն՝ ռուսական Հենդերսոնների և Սնոուդենների) շահել է հատկապես նման պարագաների հետևանքով։ Մենք ասում էինք մենշևիկներին և էսէռներին. վերցրեք ամբողջ իշխանությունը առանց բուրժուազիայի, քանի որ դուք Խորհուրդների մեջ մեծամասնություն ունեք (Խորհուրդների առաջին համառուսական համագումարում, 1917 թվի հունիսին, բոլշևիկներն ունեյին ձայների ընդամենը 13%-ը)։ Բայց ռուսական Հենդերսոններն ու Սնոուդենները վախենում էին իշխանությունը ձեռք առնել առանց բուրժուազիայի, և երբ բուրժուազիան ձգձգում էր Սահմանադիր ժողովի ընտրությունները՝ լավ իմանալով, որ նա մեծամասնությունը



կտա էսէռներին ու մենշևիկներին* (այս երկու կուսակցությունները քաղաքական սերտ բլոկի մեջ էին և իրապես ներկայացնում էին մի մանր բուրժուական դեմոկրատիա)՝ ապա էսէռներն ու մենշևիկները անզոր էին այդ ձգձգումների դեմ յեռանդուն կերպով և մինչև վերջը կռվելու։

Այն դեպքում, երբ Հենդերսոններն ու Սնոուդենները հրաժարվեն կոմմունիստների հետ բլոկ կնքելուց, կոմմունիստները միանգամից կշահեն մասսաների համակրանքը գրավելու և Հենդերսոններին ու Սնոուդեններին վարկաբեկելու գործում, իսկ յեթե մենք դրա փոխարեն կորցնենք միքանի տեղ պարլամենտում՝ դա մեզ համար ամենևին կարևոր չէ։ Մենք կդնենք շատ աննշան թվով թեկնածուներ միայն, բացարձակ կերպով հուսալի շրջաններում, այսինքն այնտեղ, որտեղ մեր թեկնածուն չնպաստի լիբերալի ընտրությանը ընդդեմ լաբուրիստի (Բանվորական կուսակցության անդամի)։ Մենք ընտրական ագիտացիա կմղեյինք՝ թերթիկներ տարածելով հօգուտ կոմմունիզմի և առաջարկելով այն բոլոր շրջաններում, ուր չկա մեր թեկնածուն՝ ձայն տալ լաբուրիստին ընդդեմ բուրժուայի։ Սխալվում են ընկերներ Սիլվիա Պանկխերստը և Գալլակերը, յեթե սրա մեջ տեսնում են դավաճանություն կոմմունիզմին և կամ թե հրաժարում՝ սոցիալ-դավաճանների դեմ պայքար մղելու։ Ընդհակառակը, այսպիսով կոմմունիստական հեղափոխության գործն անկասկած կշահվի։

Անգլիական կոմմունիստների համար շատ դժվար է լինում հաճախ, մինչև իսկ այժմ, մոտենալ մասսային, նույնիսկ լսեցնել տալ իրենց։ Յեթե յես դուրս գամ ինչպես կոմմունիստ և հայտարարեմ, թե հրավիրում եմ ձայն տալ Հենդերսոնին ընդդեմ Լլոյդ-Ջորջի՝ ինձ կլսեն հավանորեն։ Յեվ յես կարող եմ ժողովրդական ձևով բացատրել ոչ միայն այն, թե ինչու Խորհուրդները լավ են պարլամենտից և պրոլետարիատի դիկտատուրան լավ է Չերչիլի դիկտատուրայից (բուրժուական դիկտատուրայի ցուցանակով ծածկված), այլ և այն՝ թե յես կուզեյի իմ քվեարկությամբ պաշտպանել Հենդերսոնին ճիշտ այնպես, ինչպես թոկը պաշտպանում է կախվածին, այն, որ Հենդերսոններն իրենց սեփական կառավարության մոտենալով նույնպես կապացուցեն իմ իրավացիությունը, նույնպես մասսաները կթեքեն դեպի

* Ռուսաստանի Սահմանադիր ժողովի ընտրությունները, 1917 թվի նոյեմբերին, որ, տեղեկությունների համաձայն, ընդգրկեցին ավելի քան 36 միլիոն ընտրողներ, բոլշևիկներին տվին 25% ձայն, կալվածատերերի յեվ բուրժուազիայի զանազան կուսակցություններին 13%, մանր բուրժուական դեմոկրատիային, այսինքն էսէռներին ու մենշևիկներին՝ իրենց համասեռ փոքրաթիվ խմբակցությունների հետ միասին՝ 62%։

ինձ, նույնպես կարագացնեն Հենդերսոնների և Սնոուդենների քաղաքական մահը, ինչպես այդ տեղի ունեցավ նրանց համախոհների վերաբերմամբ Ռուսաստանում և Գերմանիայում։

Իսկ յեթե ինձ առարկեն, թե սա չափազանց «խորամանկ» կամ բարդ տակտիկա յե, թե մասսաները չեն հասկանա այն, թե նա կցրի, կջլատի մեր ուժերը, կխանգարի կենտրոնացնել խորհրդային հեղափոխության վրա և այլն—ապա յես կպատասխանեմ «ձախ» առարկողներին՝ ձեր դոկտրինյորությունը մասսաների վրա մի քցեք։ Կասկած չկա, վոր Ռուսաստանում մասսաներն ավելի քիչ կուլտուրական են, քան Անգլիայում։ Յեվ սակայն մասսաները հասկացան բոլշեվիկներին, իսկ բոլշեվիկներին չխանգարեց, այլ օժանդակեց այն պարագան, վոր նրանք խորհրդային հեղափոխության նախօրյակին, 1917 թվի սեպտեմբերին, իրենց թեկնածուների ցուցակն եյին կազմում բուրժուական պարլամենտի (Սահմանադիր ժողովի) համար, իսկ խորհրդային հեղափոխության հետեվյալ օրը, 1917 թվի նոյեմբերին, Սահմանադիր ժողովի ընտրություններն եյին կատարում, վոր պիտի ցրեյին 1918 թվի հունվարի 5-ին[78]։

Յես չեմ կարող այստեղ կանգ առնել անգլիական կոմմունիստների միջև յեղած յերկրորդ տարաձայնության վրա այն մասին, թե պետք ե մտնել արդյոք բանվորական կուսակցության, թե վոչ։ Յես շատ քիչ նյութ ունեմ ձեռքիս տակ այդ խնդրի վերաբերյալ, վոր մանավորապես բարդ խնդիրներից ե, նկատի ունենալով բրիտանական «Բանվորական կուսակցության» չափազանց ինքնատիպությունը, մի կուսակցություն, վոր իր կազմությամբ նման չե յեվրոպական ցամաքի սովորական քաղաքական կուսակցություններին։ Անկասկած ե միայն, առաջին՝ վոր այդ խնդրի նկատմամբ ես անխուսափելի կերպով սխալվում ե նա, ով մտածում ե հեղափոխական պրոլետարիատի տակտիկան հանել այսպիսի մի սկզբունքից՝ «կոմմունիստական կուսակցությունը պետք ե մաքուր պահե իր ուսմունքը և իր անկախությունը ռեֆորմիզմից՝ անբիծ. նրա կոչումն ե՝ գնալ առջևից առանց կանգ առնելու և առանց շեղվելու ճանապարհը, գնալ ուղիղ ճամպով դեպի կոմմունիստական հեղափոխությունը»։ Վորովհետև նման սկզբունքները կրկնում են միայն ֆրանսիական կոմմունար-բլանկիստների սխալը, վոր 1874 թվին «մերժված» հայտարարեցին բոլոր կոմպրոմիսները և բոլոր միջանկյալ կայարանները։ Յերկրորդ՝ անկասկած ե, վոր, ինչպես միշտ, այստեղ ես խնդիրն այն ե, թե ինչպես կարողանանք կիրառել կոմմունիզմի ընդհանուր և հիմնական սկզբունքները դասակարգերի և կուսակցությունների միջև յեղած այն առանձնահատկության, կոմմունիզմի օբյեկտիվ զարգացման այն առանձնահատկության, վոր ունի ամեն մի առանձին յերկիր և վոր պետք ե կարողանալ ուսումնասիրել, գտնել, գուշակել։



Բայց այս մասին հարկ կլինի խոսել վոչ միայն անգլիական կոմմունիզմի առիթով, այլ ընդհանուր յեզրակացությունների մեջ, վոր պետք ե վերաբերեն կոմմունիզմի զարգացման բոլոր կապիտալիստական յերկրներում։

Այդ նյութին ել անցնում ենք այժմ։

X.

## ՄԻՔԱՆԻ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ·

1905 թվի Ռուսաստանի բուրժուական հեղափոխությունը դրսեվորեց մի չափազանց ինքնատիպ դարձակետ համաշխարհային պատմության մեջ.—ամենահետամնաց կապիտալիստական յերկրներից մեկում աշխարհում առաջին անգամ գործադուլային շարժումն ընդունեց մի չտեսնված ծավալ և ուժ։ 1905 թվի միայն առաջին ամսվա ընթացքում գործադուլավորների թիվը տասն անգամ գերազանցեց նախորդ տասնամյակի (1895—1904) գործադուլավորների միջին տարեկան թիվը, իսկ 1905 թվի հունվարից մինչև հոկտեմբեր գործադուլներն աճում եյին անընդհատ և ահագին չափերով։ Մի շարք առանձնահատուկ պատմական պայմանների ազդեցությամբ՝ հետամնաց Ռուսաստանն առաջին անգամ ցույց տվեց աշխարհին վոչ միայն այն, վոր հեղափոխության ժամանակ ճնշված մասսաների ինքնագործունեությունն աճում ե թռիչքներով (այդ տեղի յե ունեցել բոլոր մեծ հեղափոխությունների ժամանակ), այլ և ցույց տվեց պրոլետարիատի նշանակությունը, վոր անհամեմատ ավելի մեծ ե, քան նրա բաժինը բնակչության մեջ, տնտեսական և քաղաքական գործադուլների զուգորդությունը, վերջինիս վերածումը զինված ապստամբության, կապիտալիզմի լծի տակ ճնշված դասակարգերի և մասսայական պայքարի և մասսայական կազմակերպության նոր ձևի՝ խորհուրդների ծնունդը։

1917 թվի փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունները խորհուրդները հասցրին բազմակողմանի զարգացման ազգային մասշտաբով, ապա նրանց հաղթանակին՝ պրոլետարական, սոցիալիստական հեղաշրջման մեջ։ Յեվ յերկու տարի չանցած յերևան յեկավ խորհուրդների միջազգային բնույթը, պայքարի և կազմակերպության այդ ձևի տարածումը համաշխարհային բանվորական շարժման վրա, խորհուրդների պատմական կոչումը՝ լինել բուրժուական պարլամենտարիզմի, ընդհանրապես բուրժուական դեմոկրատիայի գերեզմանափորը, ժառանգը, հաջորդը։

Քիչ ե այդ։ Բանվորական շարժման պատմությունը ցույց ե տալիս այժմ, վոր յուրաքանչյուր յերկրում նրան վիճակված ե ապրել (և այդ շարժումն արդեն սկիզբն ե) ծնվող, զարգացող, դեպի հաղթանակ դիմող կոմմունիզմի պայքարը նախ և առաջ և գլխավորապես իր (յու-

րաքանչյուր յերկրի) «մենշևիզմի», այսինքն՝ օպորտյունիզմի և սոցիալ շովինիզմի դեմ, ապա, այսպես ասած, վորպես լրացում՝ «ձախ» կոմմունիզմի դեմ։ Առաջին պայքարը տարածվեց բոլոր յերկրներում, ըստ յերևույթին, առանց վորևե բացառության, վորպես յերկրորդ (այժմ արդեն փաստորեն ջախջախված) և յերրորդ Ինտերնացիոնալի պայքար։ Յերկրորդ պայքարը նկատվում է և՛ Գերմանիայում, և՛ Անգլիայում, և՛ Իտալիայում, և՛ Ամերիկայում (համենայն դեպս, «աշխարհի արդյունաբերական բանվորների» և անարխո-սինդիկալիստական հոսանքների վորոշ մասը պնդում է ձախ կոմմունիզմի սխալների վրա, խորհրդային սիստեմի գրեթե ընդհանուր և ամբողջական ճանաչման հետ միասին), և՛ Ֆրանսիայում (նախկին սինդիկալիստների մի մասի վերաբերումը քաղաքական կուսակցությունների և պարլամենտարիզմի հանդեպ, նույնպես խորհրդային սիստեմի ճանաչման հետ միասին), այսինքն՝ անկասկած կերպով վոչ միայն միջազգային, այլ և համաշխարհային մասշտաբով։

Բայց բանվորական շարժումն ամեն տեղ ըստ եյության բուրժուազիայի վրա հաղթանակ տանելու միևնույն նախապատրաստական դպրոցն անցնելով՝ յուրաքանչյուր յերկրում նա իր ձևով է կատարում այդ զարգացումը։ Կապիտալիստական խոշոր և առաջավոր յերկրներն այդ ճանապարհով գնում են շատ ավելի արագ, քան բոլշևիզմը, վոր պատմությունից տասնհինգամյա ժամանակամիջոց ստացավ պատրաստելու այդ շարժումը՝ վորպես կազմակերպված քաղաքական հոսանք՝ հաղթանակի համար։ Յերրորդ Ինտերնացիոնալն այս մի տարվա կարճ ժամանակամիջոցում արդեն վճռական հաղթանակ տարավ, ջախջախեց յերկրորդ, դեղին, սոցիալ-շովինիստական Ինտերնացիոնալին, վոր դեռ միքանի ամիս սրանից առաջ անհամեմատ կերպով ուժեղ եր յերրորդից, թվում եր կայուն ու հզոր, վոր բազմակողմանի կերպով վայելում եր համաշխարհային բուրժուազիայի ուղղակի և անուղղակի, նյութական (մինիստրական տեղեր, անցագրեր, մամուլ) և գաղափարական աջակցությունը։

Ամբողջ խնդիրն այժմ այն է, վոր յուրաքանչյուր յերկրի կոմմունիստները կատարյալ գիտակցությամբ հաշվի առնեն թե՛ օպորտյունիզմի ու «ձախ» դոկտրինյորության դեմ վարած պայքարի հիմնական սկզբունքային պրոբլեմները և թե՛ այն կոնկրետ առանձնահատկությունները, վոր այդ պայքարն ընդունում է և անխուսափելի կերպով պիտի ընդունի ամեն մի առանձին յերկրում, համապատասխան նրա տնտեսության, քաղաքականության, կուլտուրայի, նրա ազգային կազմի (Իրլանդիա և այլն), նրա գաղութների, նրա կրոնական բաժանումների, և այլն և այլն ինքնուրույն գծերին։ Ամենուրեք զգացվում է, լայնանում և աճում է դժգոհություն յերկրորդ Ինտերնացիոնալի



դեմ թե՛ նրա օպորտյունիզմի պատճառով և թե՛ այն պատճառով, վոր նա կարող և ընդունակ չե ստեղծելու իրապես կենտրոնացած, իրապես ղեկավարող կենտրոն, վոր ընդունակ լիներ վարելու հեղափոխական պրոլետարիատի միջազգային տակտիկան՝ համաշխարհային խորհրդային հանրապետության համար մղած պայքարի մեջ։ Անհրաժեշտ է պարզ կերպով հաշիվ տալ այն մասին, վոր այդպիսի ղեկավարող կենտրոն վոչ մի պարագայում չի կարելի հիմնել պայքարի տակտիկական կանոնների շաբլոնացման, մեքենական հավասարեցման, նույնացման վրա։ Քանի ժողովուրդների և յերկրների միջև գոյություն ունեն ազգային և պետական տարբերություններ—իսկ այդ տարբերությունները դեռ շատ յերկար ու յերկար ժամանակ կմնան, մինչև իսկ համաշխարհային մասշտաբով պրոլետարիատի դիկտատուրայի իրականացումից հետո—բոլոր յերկրների կոմմունիստական բանվորական շարժման միջազգային տակտիկայի միությունը պահանջում է վոչ թե զանազանությունները վերացնել, վոչ թե ազգային տարբերությունները վոչնչացնել (այդ անմիտ ցնորք է ներկա մոմենտի համար); այլ պահանջում է կոմմունիզմի հիմնական սկզբունքների (խորհրդային իշխանություն և պրոլետարիատի դիկտատուրա) այնպիսի գործադրություն, վոր այդ սկզբունքները ճիշտ կերպով ձևափոխեր մասնավոր դեպքերում, ճիշտ կերպով հարմարեցներ, կիրառեր ազգային և ազգային-պետական տարբերություններին։

Հետազոտել, ուսումնասիրել, գտնել, կռահել, ըմբռնել ազգային-առանձնահատուկը, ազգային-սպեցիֆիկը յուրաքանչյուր յերկրի կոնկրետ մերձեցման ձևերի մեջ՝ լուծելու համար մի միջազգային խնդիր, հաղթելու համար օպորտյունիզմն ու ձախ դոկտրինյորությունը բանվորական շարժման ներսում, տապալելու բուրժուազիան, հաստատելու խորհրդային հանրապետություն և պրոլետարական դիկտատուրա—ահա թե ուր է բոլոր առաջավոր (և վոչ միայն առաջավոր) յերկրների ապրած պատմական մոմենտի գլխավոր խնդիրը։ Գլխավորը—ի հարկե, վոչ յերբեք բոլորը—բայց գլխավորը կատարված է արդեն բանվոր դասակարգի ավանգարդի գրավումով, նրանով, վոր այդ ավանգարդն անցել է խորհրդային իշխանության կողմը ընդդեմ պարլամենտարիզմի, պրոլետարիատի դիկտատուրայի կողմը, ընդդեմ բուրժուական դեմոկրատիայի։ Այժմ անհրաժեշտ է բոլոր ուժերը, բոլոր ուշադրությունը կենտրոնացնել հետևյալ քայլի վրա, վոր թվում է—և վորոշ տեսակետից իսկապես ներկայանում է—նվազ հիմնական, բայց վոր դրա փոխարեն ավելի գործնականապես է կապված խնդրի գործնական լուծմանը, այսինքն՝ գտնել պրոլետարական հեղափոխության անցնելու կամ մոտենալու ձևը։

Պրոլետարական ավանգարդը գաղափարապես նվաճված է։ Այս

գլխավորն ե։ Առանց սրան անկարելի յե նույնիսկ առաջին քայլն անել դեպի հաղթանակ։ Բայց դրանից մինչև հաղթանակ՝ դեռ շատ հեռու յե։ Միայն ավանգարդով հաղթել անկարելի յե։ Նետել միայն ավանգարդը վճռական ճակատամարտի մեջ, քանի դեռ ամբողջ դասակարգը, քանի լայն մասսաներն ավանգարդին ուղղակի կերպով պաշտպանելու դիրք չեն բռնել և կամ գոնե բարյացակամ չեզոքություն չունեն նրա վերաբերմամբ և կատարելապես անընդունակ չեն պաշտպանելու նրա հակառակորդին—կլիներ վոչ միայն հիմարություն, այլ և վոճրագործություն։ Իսկ վորպեսզի իրոք ամբողջ դասակարգը, վորպեսզի իրոք աշխատավորների և կապիտալի լծի տակ ճնշվածների լայն մասսաները հասնեն այդպիսի կացության—դրա համար քիչ ե միայն պրոպագանդը, միայն ագիտացիան։ Դրա համար հարկավոր ե այդ մասսաների սեփական քաղաքական փորձը։ Այսպես ե բոլոր մեծ հեղափոխությունների հիմնական օրենքը, վոր հաստատված ե այժմ զարմանալի ուժով և ցայտուն կերպով վոչ միայն Ռուսաստանի, այլ և Գերմանիայի կողմից։ Վոչ միայն Ռուսաստանի անկուլտուրական, հաճախ անգրագետ մասսաներին, այլև Գերմանիայի բարձր կուլտուրական, գլխովին գրագետ մասսաներին հարկավոր յեղավ սեփական մորթու վրա զգալ յերկրորդ Ինտերնացիոնալի ասպետների կառավարության ամբողջ անզորությունը, ամբողջ բնութագրկությունը, ամբողջ անճարակությունը, ամբողջ ծառայականությունը բուրժուազիայի առջև, ամբողջ ստորությունը, ամբողջ անխուսափելիությունը ծայրահեղ ռեակցիոներների (Ռուսաստանում Կորնիլովի [79], Գերմանիայում Կապպի [80] և ընկ.) դիկտատուրայի՝ վորպես միակ ալտերնատիվ պրոլետարիատի դիկտատուրայի վերաբերմամբ—վորպեսզի վճռական կերպով դառնային դեպի կոմմունիզմ։

Միջազգային բանվորական շարժման գիտակից ավանգարդի՝ այսինքն՝ կոմմունիստական կուսակցությունների, խմբակցությունների, հոսանքների հերթական խնդիրն ե՝ կարողանալ մոտեցնել լայն մասսաները (վոր այժմ մեծ մասամբ դեռ քնած են, ապատիկ, սահմանափակ, բութ, չարթնացած) դեպի նրանց նոր կացությունը կամ, ավելի ճիշտ՝ կարողանալ ղեկավարել վոչ միայն իր կուսակցությունը, այլ և այդ մասսաները՝ նոր դիրքին մոտենալու, անցնելու ընթացքում։ Յեթե առաջին պատմական խնդիրը (պրոլետարիատի գիտակից ավանգարդը գրավել խորհրդային իշխանության և բանվոր դասակարգի դիկտատուրայի կողմը) անկարելի յեղավ լուծել առանց լիակատար, գաղափարական և քաղաքական հաղթանակ տանելու օպպորտյունիզմի և սոցիալ-շովինիզմի վրա, ապա յերկրորդ խնդիրը—վոր այժմ հերթական ե դառնում և վոր առաջադրում ե կարողանալ մոտեցնել մասսաները հեղափոխության մեջ ավանգարդի հաղթանակը ապահովելու ընդունակ նոր դիրքին—այդ հերթական խնդիրը չի կարելի լուծել առանց ձախ դոկտրինյորության վերացման, առանց կատարյալ կերպով հաղթահարելու նրա սխալները, առանց նրանցից ազատվելու։



Քանի խնդիրը վերաբերում եր (և քանի դեռ վերաբերում ե) պրոլետարիատի ավանգարդը կոմմունիզմի կողմը գրավելուն՝ այդ չափով և այդքան ժամանակ առաջին տեղն եր բռնում պրոպագանդան։ Մինչև իսկ խմբակները, վոր խմբակցականության բոլոր թուլությունները ունեն, այստեղ օգտակար են և տալիս են արդյունավոր հետևանքներ։ Յերբ խնդիրը վերաբերում ե մասսաների պրակտիկ գործողության, տեղավորելու—յեթե կարելի յե այսպես արտահայտվել—միլիոնավոր բանակները, դասավորելու տվյալ հասարակության բոլոր դասակարգային ուժերը վերջին յեվ վճռական ճակատամարտի համար—այստեղ արդեն միայն պրոպագանդիստական սովորույթներով, «զուտ» կոմմունիզմի ճշմարտությունների լոկ կրկնությամբ վոչինչ չես կարող անել։ Այստեղ պետք ե հաշվել վոչ թե մինչև հազարներ—ինչպես իրոք հաշվում ե դեռ մասսաներ չղեկավարած պրոպագանդիստը, փոքրիկ խմբակի անդամը,—այստեղ պետք ե հաշվել միլիոններով և տասնյակ միլիոններով։ Այստեղ պետք ե հարց տալ վոչ միայն այն մասին, թե համոզե՞լ ենք արդյոք հեղափոխական դասակարգի ավանգարդին, այլ և այն մասին, թե տեղավորվա՞ծ են արդյոք բոլոր դասակարգերի պատմականորեն գործող ուժերը, տվյալ հասարակության անպայման կերպով և առանց բացառության բոլոր դասակարգերի, այն ձևով, վոր վճռական ճակատամարտն արդեն բոլորովին հասունացած լինի, այն ձևով, վոր 1) մեզ թշնամական բոլոր դասակարգային ուժերը բավականաչափ շփոթված լինեն, բավական իրար հետ կռված, բավական թուլացած իրենց ուժերից վեր պայքարի մեջ. 2) վոր բոլոր տատանվող, յերերուն, անկայուն, միջանկյալ տարրերը, այսինքն՝ մանր բուրժուազիան, մանր-բուրժուական դեմոկրատիան՝ բուրժուազիայից զատ բավականաչափ մերկացված լինի ժողովրդի առջև, բավականաչափ արատավորված՝ իր գործնական սնանկությամբ. 3) վոր պրոլետարիատի մեջ սկսված լինի մասսայական տրամադրությունը և արդեն հզոր կերպով բարձրանալիս՝ հօգուտ ամենավճռական, անձնվիրաբար-համարձակ, հեղափոխական գործողությունների ընդդեմ բուրժուազիայի։ Ահա այդ ժամանակ հեղափոխությունը հասունացած ե, ահա այդ ժամանակ մեր հաղթանակը—յեթե մենք ճիշտ ենք հաշվի առել վերև նշված, վերև համառոտակի գծված բոլոր պայմանները և ճիշտ ենք ընտրել մոմենտը—մեր հաղթանակը ապահովված ե։

Տարաձայնությունները մի կողմից Չերչիլների և Լլոյդ-Ջորջերի միջև—այդ քաղաքական տիպերը կան բոլոր յերկրներում ազգային աննշան տարբերությամբ—մյուս կողմից Հենդերսոնների և Լլոյդ-Ջորջերի

միջև՝ ամենևին կարևոր չեն և շատ մանր են մաքուր, այսինքն վերացական, այսինքն գործնական, քաղաքական, մասսայական գործողության համար դեռևս չհասունացած կոմմունիզմի տեսակետից: Բայց մասսաների այդ պրակտիկ գործողության տեսակետից այդ տարբերությունները չափազանց, չափազանց կարևոր են: Նրանց հաշվի առնել, վորոշել այն մոմենտը, թե յերբ կատարելապես կհասունանան այդ «բարեկամների» միջև յեղած անխուսափելի ընդհարումները՝ վոր թուլացնում և ուժասպառ են անում բոլոր «բարեկամներին» միասին վերցրած—այստեղ է կոմմունիստի ամբողջ գործը, ամբողջ խնդիրը, վոր ուզում է լինել վոչ միայն գիտակից, համոզված, գաղափարական պրոպագանդիստ, այլ և մասսաների գործնական ղեկավարը հեղափոխության մեջ: Պետք է միացնել կոմմունիզմի գաղափարների հանդեպ ունեցած ամենախիստ անձնվիրությունը անհրաժեշտ գործնական կոմպրոմիսներ անելու, համակերպման, համաձայնության, վոլորապտույտ ճամպաների, նահանջների և այլն կարողության հետ, արագացնելու համար Հենդերսոնների քաղաքական իշխանության իրականացումն ու սնանկությունը. (յերկրորդ Ինտերնացիոնալի հերոսների՝ յեթե չկամենանք անուններ տալ, մանր բուրժուական դեմոկրատիայի ներկայացուցիչների, վոր իրենց անվանում են սոցիալիստ). արագացնել նրանց անխուսափելի սնանկությունը գործնական կյանքում, վոր լուսավորում է մասսաները ճիշտ մեր վոգով, վոր ուղղում է նրանց իսկ և իսկ դեպի կոմմունիզմը. արագացնել անխուսափելի բաղխումները, վեճերը, ընդհարումները, կատարյալ պառակտումը Հենդերսոնների—Լլոյդ-Ջորջների—Չերչիլների միջև (մենշևիկների և եսերների—կադետների և մոնարխիստների. Շայդեմանների—բուրժուազիայի—կապպյանների և այլն) և ճիշտ ընտրել մաքսիմալ քայքայման մոմենտը «սրբազան մասնավոր սեփականության» բոլոր այդ «նեցուկների» միջև, վորպեսզի պրոլետարիատի վճռական հարձակումով հնարավոր լինի ջախջախել նրանց բոլորին և գրավել քաղաքական իշխանությունը:

Պատմությունն ընդհանրապես, հեղափոխությունների պատմությունը մասնավորապես, միշտ ավելի հարուստ է բովանդակությամբ, ավելի բազմազան է, բազմակողմանի, աշխույժ, ավելի «խորամանկ», քան յերևակայում են ամենալավ կուսակցությունները, ամենաառաջավոր դասակարգերի ամենագիտակից ավանգարդները: Եվ հասկանալի յե այս, քանի վոր ամենալավ ավանգարդներն արտահայտում են տասնյակ-հազարների գիտակցությունը, կամքը, կիրքը, յերևակայությունը, իսկ հեղափոխությունը կենսագործում են՝ մարդկային բոլոր ընդունակությունների բացառիկ վերելքի և լարման մոմենտներին տասնյակ միլիոնների գիտակցությունը, կամքը, կիրքը, յերևակայությունը, տասնյակ միլիոնների, վոր առաջ են մղվում մտրակված՝ դա-



սակարգերի ամենասուր կռվի միջոցով: Այստեղից բղխում է յերկու շատ կարևոր գործնական յեզրակացություն. առաջինը՝ վոր հեղափոխական դասակարգն իր նպատակն իրականացնելու համար պիտի կարողանա, առանց ամենափոքր բացառության, տիրել հասարակական գործունեյության բոլոր ձևերին ու կողմերին (քաղաքական իշխանության գրավումից հետո լրացնելով յերբեմն մեծ ռիսկով և ահագին վտանգներով այն, ինչ վոր չի կարողացել մինչև գրավումը). յերկրորդ՝ վոր հեղափոխական դասակարգը պետք է պատրաստ լինի ամենամեծ արագությամբ և անսպասելի կերպով մեկ ձևը փոխելու մյուսի հետ:

Ամենքը կհամաձայնվեն, թե անմտություն է և նույնիսկ վոճրագործություն է այն բանակի վարմունքը, վոր չի պատրաստվում ձեռք բերելու զենքի բոլոր տեսակները, պայքարի բոլոր ձևերն ու միջոցները, վորոնք կան կամ կարող են լինել թշնամու մոտ: Բայց այդ ավելի ճիշտ է քաղաքականության, քան ռազմական գործի նկատմամբ: Քաղաքականության մեջ ավելի քիչ կարելի յե նախապես իմանալ, թե պայքարի ինչ միջոցներ գործադրելի կամ նպաստավոր կլինեն մեզ համար ապագայի այս կամ այն պայմաններում: Չտիրելով պայքարի բոլոր միջոցներին՝ մենք կարող ենք կրել խոշոր—յերբեմն նույնիսկ վճռական—պարտություն, յեթե մյուս դասակարգերի դրության մեջ մեր կամքից անկախ առաջ յեկած փոփոխությունները հերթական խնդիր դարձնեն գործունեյության այնպիսի ձև, վորի մեջ մենք առանձնապես թույլ ենք: Տիրելով պայքարի բոլոր միջոցներին, մենք անպայման կհաղթենք, քանի վոր մենք ներկայացնում ենք իսկապես առաջավոր, իսկապես հեղափոխական դասակարգի շահերը, յեթե մինչև իսկ պայմաններն արգելեն մեզ գործածել թշնամու համար ամենավտանգավոր զենքը, այն զենքը, վոր ամենից ավելի արագ մահացու հարվածներ է հասցնում: Անփորձ հեղափոխականները հաճախ կարծում են, թե պայքարի լեգալ միջոցները ոպպորտյունիստական են, քանի վոր բուրժուազիան այդ ասպարեզում առանձնապես հաճախ (մանավանդ «խաղաղ», վոչ-հեղափոխական ժամանակներում) խաբում և հիմարեցնում եր բանվորներին, մինչդեռ կռվի անլեգալ միջոցները հեղափոխական են: Բայց այս ճիշտ չէ: Ճիշտ է այն, վոր ոպպորտյունիստ և բանվոր դասակարգի դավաճաններն են այն կուսակցություններն ու ղեկավարները, վոր չեն կարողանում կամ չեն ցանկանում (մի ասիր՝ չեմ կարող, ասա՝ չեմ ուզում) գործադրել կռվի անլեգալ միջոցներ այնպիսի պայմաններում, ինչպես, օրինակ, 1914—1918 իմպերիալիստական պատերազմի տարիներում, յերբ ամենաազատ, դեմոկրատական յերկրների բուրժուազիան չլսված լկտիությամբ և դաժանությամբ խաբում եր բանվորներին, արգելելով ճշմարտությունն ասել պատերազմի ավազակային բնույթի մասին: Սակայն այն հեղա-

փոխականները, վոր չեն կարողանում կովի անլեգալ ձևերը միացնել բոլոր լեգալ ձևերին, շատ վատ հեղափոխականներ են։ Դժվար չե հեղափոխական լինել այն ժամանակ, յերբ հեղափոխությունն արդեն բռնկել ե և բոցավառվել, յերբ ամենքը և բոլորը հարում են նրան պարզապես գրավվելով, մոդայով, յերբեմն նույնիսկ անձնական կարիերի շահերից։ Այդպիսի ցավ-հեղափոխականներից «ազատագրումը» շատ դժվար ե նստում պրոլետարիատին նրա հաղթանակից հետո, պատճառելով նրան անասելի տանջանքներ, կարելի յե ասել՝ ուղղակի նահատակություն։ Շատ ավելի դժվար ե—և շատ ավելի արժեքավոր ե—կարողանալ հեղափոխական լինել այն ժամանակ, յերբ դեռ չկան ուղղակի, բացարձակ, իրոք մասսայական, իրոք հեղափոխական պայքարի պայմաններ, կարողանալ հեղափոխության շահերը պաշտպանել (պրոպագանդով, ագիտացիայով, կազմակերպությամբ) վոչ-հեղափոխական և հաճախ ուղղակի կերպով ռեակցիոն հիմնարկությունների մեջ, վոչ-հեղափոխական պարագաներում, այնպիսի մասսայի շրջանում, վոր ընդունակ չե անմիջապես ըմբռնելու գործողության հեղափոխական մեթոդի անհրաժեշտությունը։ Կարողանալ գտնել, շոշափել, ճիշտ վորոշել դեպքերի այն կոնկրետ ճանապարհը կամ առանձին ընթացքը, վոր մոտեցնում ե մասսաներին դեպի իսկական, վճռական, վերջին, մեծ հեղափոխական պայքարը—սրա մեջ ե ժամանակակից կոմմունիզմի հիմնական խնդիրը Արևմտյան Յեվրոպայում և Ամերիկայում։

Որինակ, Անգլիան։ Մենք չենք կարող իմանալ—և վոչվոք իվիճակի չե նախապես վորոշել—թե յերբ կբռնկի այնտեղ իսկական պրոլետարական հեղափոխությունը, և թե ինչ առիթ ամենից շատ կարթնացնե, կվառե, պայքարի կմղե շատ լայն և այժմ դեռ քնած մասսաներ։ Այդ պատճառով մենք պարտավոր ենք մեր նախապատրաստական աշխատանքն այնպես տանել, վոր չորս վոտքով պայտած լինենք (ինչպես սիրում եր ասել հանգուցյալ Պլեխանովը, յերբ նա դեռ մարքսիստ և հեղափոխական եր)։ Կարող ե պատահել, վոր պարլամենտական կրիզիսը «ճեղքի», «կոտրի սառույցը». կարող ե պատահել, վոր կրիզիսն առաջանա անհուսալի կերպով խճճված, հետզհետե ավելի ու ավելի հիվանդագին կերպով դասավորվող ու սրվող գաղութային և իմպերիալիստական հակամարտություններից. կարող ե պատահել և մի վորևե յերրորդ առիթ։ Մենք խոսում ենք վոչ թե այն մասին, թե ինչպիսի պայքար կվճռի պրոլետարական հեղափոխության բախտը Անգլիայում (այս խնդիրը վոչ մի կոմմունիստի մեջ կասկած չի հարուցանում, այդ խնդիրը մեզ բոլորիս համար վճռված ե, և վճռված ե հաստատ կերպով), մենք խոսում ենք այն առիթի մասին, վոր կարթնացնե այսօր դեռևս քնած պրոլետարական մասսաներին, շարժման մեջ կդնե և կտանի նրանց ուղիղ դեպի հեղափոխություն։ Չմո-



ռանանք, վոր, որինակ, ֆրանսիական բուրժուական հանրապետության մեջ, թե միջազգային և թե ներքին տեսակետներով հարյուր անգամ ավելի նվազ հեղափոխական պարագայում քան այժմ—բավական յերևաց այնպիսի «անսպասելի» և այնպիսի «մանր» առիթ, ինչպիսին ռեակցիոն զինվորականության հազար ու հազար անազնիվ արարքներից մեկն եր (Դրեյֆուսի գործը [81]), վոր ժողովրդին ուղղակի մոտեցներ քաղաքացիական պատերազմին։

Կոմմունիստներն Անգլիայում պետք ե անընդհատ, անխոնջ, անշեղ կերպով ոգտագործեն և՛ պարլամենտական ընտրությունները, և՛ բրիտանական կառավարության գաղութային, իռլանդական, համաշխարհային-իմպերիալիստական քաղաքականության բոլոր յելևեջները, և՛ հասարակական կյանքի բոլոր մյուս շրջանները, վոլորտները, կողմերը, ամեն տեղ աշխատելով նոր վոգով, կոմմունիստաբար, վոչ թե յերկրորդ, այլ յերրորդ Ինտերնացիոնալի վոգով։ Յես այստեղ ժամանակ և տեղ չունեմ նկարագրելու պարլամենտական ընտրությունների և պարլամենտական պայքարի «ռուսական», «բոլշևիստական» մասնակցության ձևերը, բայց կարող եմ հավաստիացնել արտասահմանյան կոմմունիստներին, վոր նրանք ամենևին նման չեն արևմտա-յեվրոպական սովորական պարլամենտական պայքարներին։ Այս բանից հաճախ յեզրակացություն են հանում թե—«Հա՛, այդպես ե ձեզ մոտ, Ռուսաստանում, բայց մենք ուրիշ տեսակ պարլամենտարիզմ ունենք»։ Այս յեզրակացությունը ճիշտ չե։ Հենց նրա համար ել աշխարհում ապրում են կոմմունիստները, յերրորդ Ինտերնացիոնալի կողմնակիցները բոլոր յերկրներում, վորպեսզի ամեն գծով, կյանքի բոլոր ասպարեզներում հին սոցիալիստական, տրեդ-յունիոնական, սինդիկալիստական պարլամենտական աշխատանքը փոխեն նորի, կոմմունիստականի։ Շատ և շատ բավական չափով ոպպորտյունիստական և զուտ-բուրժուական, գործեր սարքող, խարդախ-կապիտալիստական բաներ են յեղել նաև մեր ընտրություններում։ Կոմմունիստներն Արևմտյան Յեվրոպայում և Ամերիկայում պետք ե սովորեն ստեղծել նոր, վոչ-սովորական, վոչ-ոպպորտյունիստական, վոչ-կարիերիստական պարլամենտարիզմ, վորպեսզի կոմմունիստների կուսակցությունը տա իր լոզունգները, վորպեսզի իսկական պրոլետարներն անկազմակերպ և միանգամայն հետամնաց չունևորների հետ միասին թերթիկներ ցրեն և տարածեն, շրջեն ու շրջագայեն բանվորների բնակարանները, գյուղական պրոլետարների խրճիթները և գյուղացիության ամենախուլ վայրերը (Յեվրոպայում բարեբախտաբար այսպիսի գյուղական խուլ վայրերը շատ ավելի քիչ են, քան մեզանում, իսկ Անգլիայում բոլորովին քիչ են), մտնեն ամենահասարակ ժողովրդական սրճարանները, ներս թափանցեն ամենապարզ ժողովրդական միությունների, ընկերությունների, պատահական հավաքույթների մեջ, խոսեն ժողովրդի

հետ ոչ թե գիտնականի ձևով (և ոչ էլ այնքան պարլամենտական ձևով), պարլամենտի մեջ «տեղ» գրավելու հետևից չընկնեն ամենևին, այլ ամեն տեղ զարթեցնեն միտքը, գրավեն մասսան, բռնեն բուրժուազիայի սուտը, օգտագործեն նրա ստեղծած ապարատը, նրա կողմից նշանակված ընտրությունները, բոլոր ժողովրդին ուղղած նրա կոչերը, ծանոթացնեն ժողովրդին բոլշևիզմի հետ այնպես, ինչպես յերբեք չի հաջողվել ծանոթացնել (բուրժուազիայի տիրապետության ժամանակ) ընտրական պարագաներից դուրս (չհաշվելով, իհարկե, մեծ գործադուլների մոմենտը, յերբ համաժողովրդական ագիտացիայի նույնպիսի մի ապարատ աշխատել է մեզանում շատ ավելի ինտենսիվ կերպով)։ Այս բանն անել Արևմտյան Յեվրոպայում և Ամերիկայում՝ շատ դժվար է. շատ ու շատ դժվար, բայց կարելի է և պետք է անել, որովհետև առանց աշխատանքի չի կարելի լուծել կոմմունիզմի խնդիրները, իսկ չարչարվել պետք է՝ լուծելու համար գործնական խնդիրները, որ շատ բազմազան են, սերտ կերպով կապված են հասարակական կյանքի բոլոր ճյուղերի հետ, որոնք հետզհետե, մեկը մյուսի հետևից բուրժուազիայից խլում են նորանոր ասպարեզներ։

Նույն Անգլիայում, նույնպես նոր ձևով պետք է դնել (ոչ թե սոցիալիստական, այլ կոմմունիստական, ոչ թե ռեֆորմիստական, այլ հեղափոխական ձևով) պրոպագանդայի, ագիտացիայի, կազմակերպման աշխատանքը զորքի մեջ և «իր» պետության ճնշված և ոչ-իրավահավասար ազգությունների շրջանում (Իռլանդիա, գաղութներ)։ Որովհետև հասարակական կյանքի բոլոր այդ ասպարեզներն իմպերիալիզմի էպոխայում ընդհանրապես, և այժմ, պատերազմից հետո, յերբ ժողովուրդները տանջված են և յերբ արագ կերպով աչքերը բացվել են ճշմարտության վրա (հատկապես այն պատճառով, որ տասնյակ միլիոններ սպանված և հաշմված են այն խնդրի լուծման համար, թե անգլիական գիշատիչները պիտի շատ յերկրներ կողոպտեն, թե գերմանական)—հասարակական կյանքի բոլոր այդ ասպարեզներն առանձնապես լցվում են վառվող նյութով և ընդհարումների, կրիզիսների, դասակարգային պայքարի սրման հատկապես շատ առիթներ են ստեղծում։ Մենք չգիտենք և չենք կարող իմանալ, թե որ կայծը այն անթիվ կայծերից, որ այժմ բոլոր կողմերից թափվում են բոլոր յերկրներում, տնտեսական և քաղաքական համաշխարհային կրիզիսի ազդեցության տակ—կվիճակվի կլինի հրդեհը վառելու, մասսաներին առանձնապես զարթեցնելու իմաստով, և դրա համար էլ մենք պարտավոր ենք մեր նոր, կոմմունիստական սկզբունքներով «վերամշակության» յենթարկել բոլոր տեսակի, մինչև իսկ ամենահին, մռայլված և, ըստ յերևույթին, անհուսալի ասպարեզները, այլապես մենք չենք լինի խնդրի բարձրության վրա, չենք լինի բազմակողմանի, չենք տիրապետի



զենքի բոլոր տեսակներին, չենք պատրաստվի ոչ հաղթելու բուրժուազիային (որ կառուցել է հասարակական կյանքի բոլոր կողմերը և այժմ էլ կազմալուծել է բուրժուական ձևով) և ոչ էլ ամբողջ կյանքի առաջիկա կոմմունիստական վերակազմության՝ այդ հաղթանակից հետո։

Ռուսաստանի պրոլետարական հեղափոխությունից և այդ հեղափոխության՝ բուրժուազիայի ու ֆիլիստերների համար անսպասելի՝ միջազգային մասշտաբով տարած հաղթանակներից հետո ամբողջ աշխարհն այժմ այլ կերպ է դարձել, այլ է դարձել նաև բուրժուազիան ամենուրեք։ Նա վախեցած է «բոլշևիզմից», գազազած է նրա դեմ մինչև խելացնորություն և դրա համար էլ նա, մի կողմից, արագացնում է դեպքերի զարգացումը, իսկ մյուս կողմից՝ ուշադրությունը կենտրոնացնում է բոլշևիզմը բռնությամբ ճնշելու վրա, թուլացնելով այդպիսով իր դրությունը մի շարք ուրիշ ասպարեզներում։ Բոլոր առաջավոր յերկրների կոմմունիստներն իրենց տակտիկայի մեջ պետք է հաշվի առնեն այս յերկու հանգամանքները։

Յերբ ռուս կադետները և Կերենսկին կատաղի հարձակումներ սկսեցին բոլշևիկների դեմ—մանավանդ 1917 թվի ապրիլից և էլ ավելի 1917 թվի հունիսին և հուլիսին—նրանք «չափն անցան»։ Բուրժուական թերթերի միլիոնավոր օրինակներ, որ ամեն յեղանակով գոռում էին բոլշևիկների դեմ, օգնեցին մասսային հետաքրքրվելու և գնահատելու բոլշևիզմը. իսկ չէ՞ որ բացի թերթերից ամբողջ հասարակական կյանքն էլ, հենց բուրժուազիայի «ջանքերի» շնորհիվ, սնուցված էր բոլշևիզմի մասին վեճերով։ Այժմ միջազգային մասշտաբով բոլոր յերկրների միլիոնատերերն այնպես են պահում իրենց, որ մենք սրտանց շնորհակալ պիտի լինենք նրանցից։ Նրանք հալածում են բոլշևիզմն այնպիսի յեռանդով, ինչպիսի յեռանդով հալածում էյին Կերենսկին և ընկ. այս բանի մեջ նրանք նույնպես «անցնում են չափը» և նույնպես աջակցում են մեզ, որպես Կերենսկին։ Յերբ ֆրանսիական բուրժուազիան ընտրական ագիտացիայի կենտրոնական կետ է դարձնում բոլշևիզմը, նրա պատճառով հայհոյելով համեմատաբար չափավոր կամ տատանվող սոցիալիստներին, յերբ ամերիկյան բուրժուազիան գլուխը բոլորովին կորցնելով՝ հազար ու հազար մարդիկ է բռնում բոլշևիզմի մեջ կասկածելով և ամեն տեղ բոլշևիկյան դավադրությունների մասին լուրեր տարածելով ստեղծում է պանիկայի մթնոլորտ, յերբ անգլիական, աշխարհիս «ամենալուրջ» բուրժուազիան, իր ամբողջ խելքով ու փորձառությամբ՝ աններելի հիմարություններ է անում, հիմնում է հարուստ «ընկերություններ բոլշևիզմի դեմ կռվելու համար», ստեղծում է հատուկ գրականություն բոլշևիզմի մասին, բոլշևիզմի դեմ կռվելու նպատակով վարձում է հավելյալ թվով գիտնականներ, ագիտատորներ, տերտերներ—մենք պետք է գլուխ

խոնարհենք և շնորհակալ լինենք պարոն կապիտալիստներից։ Նրանք մեզ համար են աշխատում։ Նրանք ոգնում են մեզ շահագրգռելու մասսաները՝ բոլշևիզմի էության և նշանակության խնդիրներով։ Յեվ նրանք չեն կարող ուրիշ կերպ վարվել, քանի որ «լռությամբ անցնել», խեղդել բոլշևիզմը նրանք արդեն չհաջողեցին։

Բայց դրա հետ միասին բուրժուազիան բոլշևիզմի մեջ տեսնում է գրեթե նրա միայն մի կողմը—ապստամբություն, բռնություն, տերրոր, այդ պատճառով էլ բուրժուազիան առանձնապես աշխատում է պատրաստվել հետ մղելու նրան և դիմադրելու այդ ասպարեզում։ Կարող է պատահել, որ առանձին դեպքերում, առանձին յերկրներում ավելի կամ պակաս կարճ ժամանակով այդ հաջողի նրան։ Այդպիսի հնարավորությունը պետք է հաշվի առնել, և մեզ համար վոչ մի սարսափելի բան չկա, յեթե այդ նրան հաջողի։ Կոմմունիզմը «բուսնում է» ուղղակի հասարակական կյանքի բոլոր կողմերից, նրա ծիլերն ամենտեղ են փաստորեն, «վարակը» (յեթե գործածենք բուրժուազիայի և բուրժուական վոստիկանության սիրած և ամենից «հաճելի» համեմատությունը) թափանցել է օրգանիզմը խորը կերպով և բռնել է ամբողջ օրգանիզմը։ Յեթե հատուկ յեռանդով փակենք անցքերից մեկը—«վարակն» իր համար ուրիշ ճանապարհ կգտնի, յերբեմն ամենից անսպասելին։ Կյանքը իրենն անում է։ Թող բուրժուազիան գալարվի կատաղի մինչև խելացնորություն, չափն անցնի, հիմարություններ անի, նախապես բոլշևիկներից վրեժ առնի և փորձի կոտորել (Հնդկաստանում, Հունգարիայում, Գերմանիայում և այլն) ավելորդ հարյուրներով, հազարներով, հարյուր-հազարներով յերեկվա և վաղվա բոլշևիկներին։ Այդպես վարվելով բուրժուազիան վարվում է այնպես, ինչպես վարվել են պատմությունից վոչնչության դատապարտված բոլոր դասակարգերը։ Կոմմունիստները պետք է իմանան, որ ապագան, համենայն դեպս, պատկանում է նրանց, և դրա համար էլ մենք կարող ենք (և պարտավոր ենք) հեղափոխական մեծ կռվի մեջ մեծ խանդավառությունը միացնել բուրժուազիայի կատաղի գալարումների սառնասիրտ և զգաստ հաշվառության հետ։ 1905 թվի ռուսական հեղափոխությունը դաժան կերպով ճնշեցին. ռուս բոլշևիկներին ջարդեցին 1917 թվի հուլիսին[82]. ավելի քան 15,000 գերմանացի կոմմունիստներ կոտորեցին հմուտ պրովոկացիաների և ճարպիկ մանյովրների միջոցով Շայդեմանն ու Նոսկեն՝ միացած բուրժուազիայի և մոնարխիստ գեներալների հետ։ Ֆինլանդիայում և Հունգարիայում սպիտակ տերրորը մոլեգին դաժանություններ է անում։ Բայց բոլոր դեպքերում և բոլոր յերկրներում կոմմունիզմը կոփվում է և զարգանում. նրա հիմքերն այնքան խորն են, որ հալածանքները չեն թուլացնում, չեն տկարացնում, այլ զորացնում են նրան։ Միայն մի բան է պակասում, որ մենք ավելի



համոզված և հաստատուն կերպով դեպի հաղթանակ գնայինք—և այդ այն է, որ բոլոր յերկրների բոլոր կոմմունիստները միասին և մինչև վերջը մտածված կերպով գիտակցեյին, թե անհրաժեշտ է մաքսիմալ չափով ճկուն լինել մեր տակտիկայի մեջ։ Հատկապես առաջավոր յերկրներում հոյակապ կերպով զարգացող կոմմունիզմին պակասում է այժմ այդ գիտակցությունը և գործնական կյանքում այդ գիտակցությունը կիրառելու կարողությունը։

Ոգտակար դաս կարող է լինել (և պետքէ լինի) այն, ինչ պատահեց յերկրորդ Ինտերնացիոնալի ղեկավարների, սոցիալիզմին նվիրված, այնպիսի բարձր գիտնական մարքսիստների հետ, ինչպիսին են Կաուցկի, Օտտո Բաուեր և այլն։ Նրանք լիովին գիտակցում էյին ճկուն տակտիկայի անհրաժեշտությունը, նրանք սովորել են և ուրիշներին սովորեցրել են մարքսյան դիալեկտիկան (և այդ տեսակետից նրանց արածից շատ բան կմնա միշտ սոցիալիստական գրականության մեջ վորպես արժեքավոր նվաճում), բայց նրանք այդ դիալեկտիկան գործադրելիս այնպիսի սխալ գործեցին կամ գործնականի մեջ դուրս յեկան այնպես վոչ-դիալեկտիկներ, չկարողացան հաշվի առնել ձևի արագ փոփոխությունը և հին ձևերի արագ լցվելը նոր բովանդակությամբ, որ նրանց բախտը շատ ավելի նախանձելի չեղավ, քան Հայնդմանի, Գեդի և Պլեխանովի բախտը։ Նրանց սնանկության հիմնական պատճառն այն է, որ նրանք «տարվեցին» բանվորական շարժման և սոցիալիզմի աճման մի վորոշ ձևով միայն, մոռացան այդ ձևի միակողմանիությունը, վախեցան տեսնել այն կտրուկ բեկումը, որ օբյեկտիվ պայմանների ուժով անխուսափելի դարձավ, և շարունակեցին կրկնել հասարակ, անգիր արած ու առաջին հայացքից անվիճելի ճշմարտությունները, թե՝ յերեքը շատ է յերկուսից։ Բայց քաղաքականությունն ավելի նման է հանրահաշվին, քան թվաբանությանը, և շատ ավելի՝ բարձր մաթեմատիկային, քան տարրականին։ Իրականի մեջ սոցիալիստական շարժման բոլոր հին ձևերը լցվեցին նոր բովանդակությամբ, և այդ պատճառով թվերի առաջ յերևաց նոր նշան՝ «մինուս», իսկ մեր իմաստունները համառ կերպով շարունակեցին (և շարունակում են) հավատացնել իրենց և ուրիշներին, թե «մինուս յերեքը» ավելի յե «մինուս յերկուսից»։

Պետք է աշխատել, որ կոմմունիստների հետ չկրկնվի նույն սխալը միայն մյուս կողմից, կամ ավելի ճիշտ՝ շուտ սրբագրվի և արագ ու օրգանիզմի համար անվնաս ձևով վերանա միյեվնույն սխալը, միայն մյուս կողմից, որ գործում են «ձախ» կոմմունիստները։ Ձախ դոկտրինյորությունը նույնպես սխալ է, վոչ միայն աջ դոկտրինյորությունը։ Անշուշտ, ձախ դոկտրինյորության սխալը կոմմունիզմի մեջ ներկա մոմենտում հազար անգամ վտանգավոր է և պակաս նշանակալից, քան

թե աջ դոկտրինյորության (այսինքն սոցիալ-շովինիզմի և կաուցկիականության) սխալը, բայց այդ այն պատճառով, վոր ձախ կոմմունիզմը բոլորովին նոր հոսանք է, նոր-նոր միայն ծնվող։ Միայն այդ պատճառով՝ հիվանդությունը կարող է վորոշ պայմաններում հեշտությամբ բժշկվել, և անհրաժեշտ է մաքսիմալ յեռանդով դիմել նրա բուժմանը։

Հին ձևերը պայթեցին, վորովհետև յերևան յեկավ, վոր նրանց միջի նոր բովանդակությունը—հակապրոլետարական, ռեակցիոն բովանդակությունը—հասել եր անչափ զարգացման։ Միջազգային կոմմունիզմի զարգացման տեսակետից մենք այժմ աշխատանքի այնպիսի ամուր, այնպիսի ուժեղ, այնպիսի հզոր բովանդակություն ունենք (Խորհրդային իշխանության համար, պրոլետարիատի դիկտատուրայի համար), վոր նա կարող է յեվ պետք է յերևան գա վորևե ձևի մեջ՝ թե հին, թե նոր, կարող է և պետք է վերածնի, հաղթի, յենթարկի իրեն բոլոր ձևերը. վոչ միայն նոր, այլ և հին—վոչ թե հնի հետ հաշտվելու համար, այլ նրա համար, վոր կարողանա բոլոր հին և նոր ձևերը գործիք դարձնել կոմմունիզմի կատարյալ ու վերջնական, վճռական ու անդառնալի հաղթանակի համար։

Կոմմունիստները պետք է ամեն ջանք գործ դնեն՝ բանվորական շարժումը և ընդհանրապես հասարակական զարգացումը ուղղելու համար ամենաուղիղ և ամենաարագ ճանապարհով դեպի Խորհրդային իշխանության և պրոլետարիատի դիկտատուրայի համաշխարհային հաղթանակը։ Սա անվիճելի ճշմարտություն է։ Բայց բավական է մի փոքրիկ քայլ ավելի անել—թվում է թե նույն ուղղությամբ—և ճշմարտությունը սխալի կփոխվի։ Բավական է ասել—ինչպես ասում են գերմանական և անգլիական ձախ կոմմունիստները—թե մենք ընդունում ենք միայն մի, միայն ուղիղ ճանապարհ, թե մենք չենք թույլատրում համակերպում, համաձայնություն, կոմպրոմիսներ—և դա արդեն սխալ կլինի, վոր ընդունակ կլինի բերել, և վոր արդեն բերել է ու բերում է ամենալուրջ վնաս կոմմունիզմին։ Աջ դոկտրինյորությունը դեմ առավ միայն հին ձևերի ճանաչման վրա և մինչև վերջ սնանկացավ՝ չնկատելով նոր բովանդակությունը։ Ձախ դոկտրինյորությունը համառում է անպայման կերպով բացասելով վորոշ հին ձևերը, չտեսնելով, վոր նոր բովանդակությունն իր համար ճանապարհ է բաց անում ամենատեսակ ձևերի միջով, վոր մեր պարտականությունն է վորպես կոմմունիստներ տիրապետել բոլոր ձևերին, սովորել մաքսիմալ արագությամբ մի ձևը լրացնել մյուսով, մեկը փոխել մյուսով, հարմարեցնել մեր տակտիկան այն ամեն տեսակ փոփոխություններին, վոր առաջանում են վոչ մեր դասակարգից և վոչ մեր ջանքերով։

Համաշխարհային հեղափոխությունն այնքան հզորությամբ առաջ



է մղված և արագացած է համաշխարհային իմպերիալիստական պատերազմի սարսափներով, նողկանքներով, լրբություններով, նրա ստեղծած անելանելի կացության հետևանքով—այդ հեղափոխությունը լայնքով և խորքով զարգանում է այնպիսի գերազանց արագությամբ, փոփոխվող ձևերի այնպիսի հոյակապ հարստությամբ, ամեն տեսակ դոկտրինյորության այնպիսի կրթիչ գործնական հերքումով, վոր ամեն հիմք կա հուսալու, թե միջազգային կոմմունիստական շարժումը արագ և կատարյալ կերպով կբժշկվի «ձախ» կոմմունիզմի մանկական հիվանդությունից։

(Գրված է 27 ապրիլ 1920 թվին).

## ՀԱՎԵԼՎԱԾ.

Մինչև վոր հրատարակչական կազմակերպությունը մեր յերկրում—վորին պրոլետարական հեղափոխությունից վրեժ լուծելու համար ամբողջ աշխարհի իմպերիալիստները կողոպտել են և շարունակում են կողոպտել ու պաշարել՝ հակառակ իրենց բանվորներին տված բոլոր խոստումներին—մինչև վոր հրատարակչական կազմակերպությունը կկարողանար դուրս բերել բրոշյուրիս տպագրությունը, արտասահմանից ստացվեցին լրացուցիչ նյութեր։ Ամենևին չհավակնելով բրոշյուրիս մեջ ավելին տալ, քան պուբլիցիստի թռուցիկ դիտողություններ՝ յես համառոտ կերպով կշոշափեմ միքանի կետեր։

### I.

### ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ.

Կոմմունիստների պառակտումը Գերմանիայում փաստ է արդեն։ «Ձախերը» կամ «սկզբունքային օպպոզիցիան» կազմել են հատուկ «Կոմմունիստական Բանվորական կուսակցություն», տարբերվելու համար «Կոմմունիստական կուսակցությունից»։ Իտալիայում, ըստ յերևույթին, գործը նույնպես դեպի պառակտում է գնում. ասում եմ՝ ըստ յերևույթին, քանի վոր ձախ «Սովետ» («Il soviet») թերթի միայն հավելյալ թվերն ունեմ ձեռքիս (№№ 7 և 8), վորտեղ պարզ կերպով խոսվում է պառակտման հնարավորության և անհրաժեշտության մասին, դրա հետ միասին խոսվում է նաև «աբստենցիոնիստների» (կամ բոյկոտիստների, այսինքն պարլամենտին մասնակցելու հակառակորդների) այն ֆրակցիայի համագումարի մասին, վոր մինչև այժմ մնում եր Իտալական Սոցիալիստական Կուսակցության մեջ։

Կարելի յե յերկյուղ ունենալ, թե պառակտումը «ձախերի», հա-

*կապարլամենտականների հետ (մասամբ նույնպես հակա-քաղաքականների, քաղաքական կուսակցության և պրոֆմիությունների մեջ աշխատելու հակառակորդների հետ) միջազգային յերևույթ կդառնա, նման «կենտրոնականների» (կամ կաուցկիականների, լոնգետիստների, «անկախականների» և այլն) հետ ունեցած պառակտումին։ Թող այդպես լինի։ Պառակտումը, համենայն դեպս, ավելի լավ է, քան այն շփոթը, վոր խանգարում է գաղափարական, թեորիական, հեղափոխական զարգացման, կուսակցության հասունության և նրա համերաշխ ու իսկապես կազմակերպչական, իսկապես պրոլետարիատի դիկտատուրան պատրաստող գործնական աշխատանքին։*

*Թող «ձախերը» փորձվեն գործի մեջ, ազգային և միջազգային մասշտաբով, թող փորձեն նախապատրաստել (հետո նաև իրականացնել) պրոլետարիատի դիկտատուրան՝ առանց խիստ կենտրոնացած, յերկաթե դիսցիպլին ունեցող կուսակցության, առանց կարողանալու տիրապետել քաղաքական ու կուլտուրական աշխատանքի բոլոր ասպարեզներին, ճյուղերին ու տարբեր ձևերին։ Գործնական փորձը շուտ կսովորեցնի նրանց։*

*Միայն պետք է ամեն ջանք գործ դնել, վոր պառակտումը «ձախերի» հետ չդժվարացնի կամ հնարավոր չափով քիչ դժվարացնի բանվորական շարժման բոլոր մասնակիցների անհրաժեշտ և մոտ ապագայում անխուսափելի ձուլումը մի միակ կուսակցության մեջ, բոլոր մասնակիցների, վոր անկեղծորեն և բարեխղճորեն կողմնակից են Խորհրդային իշխանության և պրոլետարիատի դիկտատուրային։ Ռուսաստանում բոլշևիկների համար առանձին բախտավորություն յեղավ այն, վոր նրանք 15 տարի ունեյին՝ սիստեմատիկ և մինչև վերջը տարված կռվի համար թե մենշևիկների (այսինքն՝ ոպպորտյունիստների և «կենտրոնականների») և թե «ձախերի» դեմ, մասսայական անմիջական կռվից և պրոլետարիատի դիկտատուրայից դեռ շատ առաջ։ Յեվրոպայում և Ամերիկայում այժմ նույն աշխատանքը պիտի արվի «արագացրած քայլերով»։ Առանձին անհատներ, մանավանդ ղեկավար դառնալու անհաջողակ թեկնածուներից՝ կարող են յերկար համառել իրենց սխալների վրա (յեթե չունեն պրոլետարական դիսցիպլին և «ազնվություն իրենք իրենց հետ»), բայց բանվորական մասսաները, յերբ ժամանակը հասունանա, հեշտությամբ և արագությամբ կմիանան իրենք և կմիացնեն բոլոր անկեղծ կոմմունիստներին մի միակ կուսակցության մեջ, վոր ընդունակ կլինի իրականացնել խորհրդային կարգը և պրոլետարիատի դիկտատուրան*։*

* «Ձախ» կոմմունիստների, հակապարլամենտականների՝ ապագայում ընդհանրապես կոմմունիստների հետ ձուլման խնդրի առիթով նկատեմ նայեվ հետևյալը։ Վորքան ինձ հաջողվել ծանոթանալ գերմանական «ձախ» կոմմունիստների



## II.

## ԿՈՄՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ ՅԵՎ ԱՆԿԱԽԱԿԱՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ.

*Յես՝ բրոշյուրիս մեջ այն կարծիքը հայտնեցի, թե կոմմունիստների և անկախականների ձախ թևի միջև կոմպրոմիսն անհրաժեշտ է և օգտակար կոմմունիզմի համար, սակայն նրա իրականացումն այնքան էլ հեշտ չի լինի։ Այնուհետև ստացված թերթերի համարները հաստատեցին թե մեկը, թե մյուսը։ Գերմանիայի կոմմունիստական կուսակցության կենտր. կոմիտեյի օրգան «Կարմիր դրոշակ»-ի 32-րդ համարում* («Die rote Fahne», Centralorgan der Kommun. Partei Deutschlands, Spartacusbund, *մարտ 26. 1920 թ.) զետեղված է կենտր. կոմիտեյի «հայտարարությունը» Կապպ-Լյուտվիցի*[83] *զինվորական «պուչ»-ի (դավադրության, ավանտյուրայի) առիթով և «սոցիալիստական կառավարության» մասին։ Այս հայտարարությունը միանգամայն իրավացի յե թե հիմնական նախադրյալի և թե գործնական յեզրակացության տեսակետից։ Հիմնական նախադրյալն այն է, թե պրոլետարական դիկտատուրայի համար ներկա մոմենտին «օբյեկտիվ հիմք» չկա, քանի վոր «քաղաքի բանվորների մեծամասնությունը» կողմնակից է անկախականներին։ Յեզրակացություն՝ «լոյալ օպպոզիցիայի» խոստում*

յեվ ընդհանրապես կոմմունիստների թերթերի հետ, առաջինները այն առավելությունն ունեն, վոր նրանք ավելի լավ են կարողանում ագիտացիա մղել մասսաների մեջ, քան յերկրորդները։ Նման յերևույթ յես դիտել եմ հաճախ—միայն փոքր չափերով ու առանձին տեղական կազմակերպությունների մեջ յեվ վոչ ընդհանուր պետական մասշտաբով—նայեվ բոլշևիկյան կուսակցության պատմության մեջ։ Օրինակ, 1907—1908 թվերին «ձախ» բոլշևիկները յերբեմն յեվ այս ու այն տեղ մեզանից ավելի հաջողությամբ եյին ագիտացիա մղում մասսաների մեջ։ Այս յերևույթը մասամբ բացատրվում է նրանով, վոր հեղափոխական մոմենտում կամ հեղափոխության կենդանի հիշողությունների շրջանում ավելի հեշտ է մասսաներին մոտենալ «պարզ» բացասման տակտիկայով։ Սակայն այս դեռ ապացույց չէ այդ տակտիկայի ճշտության։ Համենայն դեպս վոչ մի կասկած չկա, վոր կոմմունիստական կուսակցությունը—վոր իրապես ուզում է լինել հեղափոխական դասակարգի, պրոլետարիատի ավանգարդը, առաջապահ գունդը յեվ վոր դրանից զատ՝ ուզում է սովորել ղեկավարել վոչ միայն պրոլետարական մասսան, այլ յեվ վոչ-պրոլետարական, աշխատավորների յեվ շահագործվածների մասսան—պարտավոր է կարողանալ յե՛վ պրոպագանդա անել, յե՛վ կազմակերպել, յե՛վ ագիտացիա մղել ամենամատչելի, ամենահասկանալի, ամենապարզ յեվ կենդանի կերպով՝ ինչպես «քաղաքի» ու գործարանային «փողոցի», նույնպես յեվ գյուղի համար։

(այսինքն՝ հրաժարում «բանի տապալման» նախապատրաստությունից) «սոցիալիստական կառավարության՝ բուրժուական-կապիտալիստական կուսակցությունների արտաքսման պայմանով»։

Այս տակտիկան, անկասկած, իր հիմքում ճիշտ է։ Բայց յեթե պետք չէ կանգ առնել ձևակերպման մանր անճշտությունների վրա, այնուամենայնիվ չի կարելի լռությամբ անցնել այն, թե չի կարելի «սոցիալիստական» անվանել (կոմմունիստական կուսակցության պաշտոնական հայտարարության մեջ) սոցիալ-դավաճանների կառավարությունը, թե չի կարելի խոսել «բուրժուական-կապիտալիստական կուսակցությունների» արտաքսման մասին, յերբ վոր թե Շայդեմանների և թե պարոններ Կաուցկիների-Կրիսպինների կուսակցությունները մանր-բուրժուական դեմոկրատական կուսակցություններ են, թե չի կարելի այնպիսի բան գրել, ինչպիսին է հայտարարության 4-րդ հոդվածը, վոր ասում է.

«...Պրոլետարական մասսաները կոմմունիզմի կողմը շարունակել գրավելու համար՝ պրոլետարական կուլտուրայի զարգացման տեսակետից ահագին կարևորություն ունի այն կացությունը, յերբ հնար լինի քաղաքական ազատությունը օգտագործել առանց սահմանափակման, և յերբ բուրժուական դեմոկրատիան չկարողանա հրապարակ գալ, վորպես կապիտալի դիկտատուրա...»։

Այսպիսի կացություն անհնարին է։ Մանր-բուրժուական ղեկավարները, գերմանական Հենդերսոնները (Շայդեմանները) և Սնոուդենները (Կրիսպինները) դուրս չեն գալիս և չեն կարող դուրս գալ բուրժուական դեմոկրատիայի շրջանակներից, վոր իր հերթին չի կարող չլինել կապիտալի դիկտատուրա։ Այս սկզբունքապես անճիշտ և քաղաքականապես վնասակար բաներն ամենևին հարկավոր չեր գրել այն գործնական հետևանքի տեսակետից, վորին ձգտում եր հասնել կոմմունիստական կուսակցության Կենտր. Կոմիտեն բոլորովին իրավացի կերպով։ Դրա համար բավական կլիներ ասել (յեթե ուզում են պարլամենտական ձևով քաղաքավարի լինել)՝ — քանի դեռ քաղաքի բանվորների մեծամասնությունը գնում է անկախականների հետևից, մենք, կոմմունիստներս, չենք կարող խանգարել այդ բանվորներին՝ սպառել իրենց վերջին մեշչանական դեմոկրատական (այսինքն՝ նույնպես «բուրժուական-կապիտալիստական») պատրանքները՝ «իրենց» կառավարության փորձով։ Այսքանը բավական է հիմնավորելու համար կոմպրոմիսը, վոր իսկապես անհրաժեշտ է և վոր պիտի լինի՝ վորոշ ժամանակ հրաժարվել բռնի միջոցներով տապալելու այն կառավարությունը, վորին վստահում է քաղաքի բանվորների մեծամասնությունը։ Իսկ ամենօրյա, մասսայական ագիտացիայի մեջ, վոր կապված չէ պաշտոնական, պարլամենտական քաղաքավարության շրջանակների հետ՝



կարելի յեր, իհարկե, ավելացնել — թող այնպիսի սրիկաները՝ ինչպես են Շայդեմանները, և այնպիսի ֆիլիստերները (քաղքենի)՝ ինչպես են Կաուցկիները-Կրիսպինները, մերկացնեն գործով, թե ինչքան են իրենք հիմարացել և հիմարացնում բանվորներին։ Նրանց «մաքուր» կառավարությունն «ամենից մաքուր» կերպով կկատարի սոցիալիզմի, սոցիալ-դեմոկրատիզմի և սոցիալ-դավաճանության մյուս բոլոր տեսակի ավգյան ախոռների «մաքրելու» աշխատանքը։

«Գերմանիայի անկախ սոցիալ-դեմոկրատ կուսակցության այժմյան ղեկավարների իսկական բնույթը (այն ղեկավարների, վորոնց մասին անճիշտ կերպով ասվում է, թե իբր նրանք կորցրել են ամեն ազդեցություն և վորոնք իրապես շատ ավելի վտանգավոր են պրոլետարիատի համար, քան հունգարական սոցիալ-դեմոկրատները, վոր իրենց կոմմունիստ անվանեցին և պրոլետարիատի դիկտատուրային «աջակցություն» խոստացան) նորից և նորից յերևան յեկավ գերմանական կորնիլովականության, այսինքն՝ պարոններ Կապպի և Լյուտվիցի հեղաշրջման ժամանակ*։ Փոքրիկ, բայց ցայտուն լուսաբանություն են տալիս Կարլ Կաուցկու և Արտուր Կրիսպինի մանր հոդվածները, առաջինը «Վճռական ժամեր» խորագրով («Entscheidende Stunden»)՝ տպագրված «Freiheit» թերթի (անկախների օրգան «Ազատություն») մեջ, 30 մարտ, 1920 թվի, իսկ յերկրորդը՝ «Քաղաքական կացության շուրջ» խորագրով, (14 ապրիլի, 1920 թ., նույն տեղ)։ Այդ պարոնները բացարձակապես չգիտեն մտածել և դատել վորպես հեղափոխականներ։ Նրանք լալկան մեշչանական դեմոկրատներ են, վորոնք հազար անգամ ավելի վտանգավոր են պրոլետարիատի համար, յեթե իրենց հայտարարում են Խորհրդային իշխանության և պրոլետարիատի դիկտատուրայի կողմնակիցներ, վորովհետև իրականի մեջ ամեն մի դժվար և վտանգավոր րոպեին նրանք անխուսափելի կերպով դավաճանություններ կկատարեն... «անկեղծ» համոզված լինելով, թե իրենք օգնում են պրոլետարիատին։ Չէ՞ վոր հունգարական սոցիալ-դեմոկրատներն էլ կոմմունիստներ մկրտվելով կամենում եյին «օգնել» պրոլետարիատին, յերբ վախից և բնութագրկությունից Խորհրդային իշխանության կացությունը Հունգարիայում անհուսալի համարեցին և սողացին Անտանտայի կապիտալիստների ագենտների և Անտանտայի դահիճների առջև։

* Այս բանը շատ պարզ, կտրուկ ու ճիշտ, մարքսիստորեն լուսաբանված է իմիջի այլոց ավստրիական կոմմունիստական կուսակցության «Կարմիր դրոշակ» օրգանի թերթում, 28 և 30 մարտ. 1920 թ. («Die rote Fahne». Wien. 1920. №№ 266 u. 267. L. L. «Ein neuer Abschnitt der deutschen Revolution»)։

III.

## ՏՈՒՐԱՏԻ ՅԵՎ ԸՆԿ. ԻՏԱԼԻԱՅՈՒՄ.

Վերևում հիշված իտալական «Սովետ» թերթի համարները լիովին հաստատում են բրոշյուրիս մեջ ասած՝ իտալական սոցիալիստական կուսակցության սխալի մասին, վոր իր շարքերում հանդուրժում է այդպիսի անդամներ և պարլամենտականների այդպիսի խմբակ։ Ավելի ևս հաստատում է այս այնպիսի մի կողմնակի վկա, ինչպիսին է անգլիական բուրժուա լիբերալ թերթ «The Manchester Guardian»-ի Հռոմի թղթակիցը, վոր այդ թերթի 1920 թվի մարտ 12-ի համարում զետեղել է իր տեսակցությունը Տուրատիի[84] հետ։

«...Սինյոր Տուրատին—գրում է այդ թղթակիցը—կարծում է, թե հեղափոխական վտանգն այնպես չէ, վոր առաջ բերի անհիմն յերկյուղ Իտալիայում։ Մաքսիմալիստները սովետական թեորիաների կրակով խաղում են միայն նրա համար, վոր մասսաները պահեն բարձր և գրգռված վիճակի մեջ։ Այդ թեորիաները, սակայն, պարզապես լեգենդական ըմբռնումներ են, տհաս ծրագիրներ, վորոնք անպետք են գործնական կիրառման համար։ Նրանք հարկավոր են միայն նրա համար, վոր աշխատավոր դասակարգերը պահեն սպասողական կացության մեջ։ Նույն այն մարդիկ, վորոնք պրոլետարական աչքերը կուրացնելու համար գործ են ածում այդ թեորիաները վորպես գրավման միջոց—իրենց հարկադրված են տեսնում ամենօրյա պայքար մղել միքանի, հաճախ աննշան տնտեսական բարելավումների նվաճման համար, այնպես, վոր հետաձգեն այն մոմենտը, յերբ բանվոր դասակարգերը կորցնեն իրենց պատրանքներն ու հավատքը՝ իրենց սիրելի առասպելների վերաբերմամբ։ Այստեղից էլ—ամեն չափի և ամեն առիթով առաջացած գործադուլների յերկար շարքը մինչև փոստային և յերկաթուղային վարչությունների վերջին գործադուլները, գործադուլներ, վորոնք ավելի ևս դժվարացնում են յերկրի առանց այն էլ դժվար կացությունը։ Յերկիրը հուզված է ադրիատիկյան պրոբլեմի հետ կապված դժվարությունների հետևանքով, ճնշված է արտաքին պարտքի պատճառով, թղթադրամների չափազանց բաց թողնելով—և չնայելով այս բոլորին, յերկիրը դեռ ամենևին չի գիտակցում, թե անհրաժեշտ է յուրացնել աշխատանքի այն դիսցիպլինը, վոր միայն կարող է վերականգնել կարգն ու բարեկեցությունը...»։

Որվա լույսի պես պարզ է, վոր անգլիական թղթակիցը դուրս է տվել այն ճշմարտությունը, ինչ հավանորեն ծածկում և պաճուճում են



թե ինքը Տուրատին և թե նրա բուրժուական պաշտպանները, գործակիցներն ու ներշնչողները Իտալիայում։ Այդ ճշմարտությունն այն է, վոր պարոններ Տուրատիի, Տրեվեսի[85], Մոդիլյանիի[86], Դուգոնիի[87] և ընկ. իդեաներն ու քաղաքական աշխատանքն իսկապես այնպես է. և իրոք այնպես է, ինչպես նկարագրում է անգլիական թղթակիցը։ Դա ամբողջությամբ սոցիալ-դավաճանություն է։ Ի՞նչ արժե կարգի և դիսցիպլինի միայն պաշտպանությունը այն բանվորների համար, վոր գտնվում են վարձու ստրկության մեջ, աշխատում են կապիտալիստներին հարստացնելու համար։ Յեվ վորքան ծանոթ են մեզ, ռուսներիս, բոլոր այդ մենշևիկյան ճառերը։ Վորքան արժեքավոր է այն խոստովանությունը, թե մասսաները խորհրդային իշխանության կողմնակից են։ Վորչափ տխմար ու ստոր-բուրժուական է՝ տարերայնորեն աճող գործադուլների հեղափոխական դերի անըմբռնողությունը։ Այո, այո, բուրժուա-լիբերալ թերթի անգլիական թղթակիցն արջի ծառայություն է արել պարոններ Տուրատիին և ընկ. և գեղեցիկ կերպով հաստատել է ընկ. Բորդիգայի[88] ու «Սովետ» թերթի նրա բարեկամների պահանջի ճշտությունը, թե՝ յեթե իտալական սոցիալիստական կուսակցությունը կամենում է իրապես կողմնակից լինել յերրորդ Ինտերնացիոնալին, ապա նա անարգանքով պիտի արտաքսի իր շարքերից պարոններ Տուրատիին և ընկ. և պիտի դառնա կոմմունիստական կուսակցություն թե անունով և թե իր գործերով։

IV.

## ՍԽԱԼ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՃԻՇՏ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻՑ.

Բայց ընկեր Բորդիգան և իր «ձախ» բարեկամները՝ պարոններ Տուրատիի և ընկ. իրենց ճիշտ քննադատությունից այն սխալ յեզրակացությունն են հանում, թե ընդհանրապես վնասակար է պարլամենտին մասնակցելը։ Այս տեսակետը պաշտպանելու համար իտալական «ձախերը» մազաչափ անգամ լուրջ պատճառաբանություն չեն կարողանում բերել։ Նրանք պարզապես չգիտեն (կամ աշխատում են մոռանալ) իրապես հեղափոխական և կոմմունիստական, պրոլետարական հեղափոխության պատրաստության տեսակետից անվիճելի կերպով շահավետ բուրժուական պարլամենտների օգտագործման միջազգային օրինակները։ Նրանք պարզապես չեն կարողանում «նորը» պատկերացնել և անվերջ կրկնելով ճչում են «հնի», պարլամենտարիզմի վոչ-բոլշևիկյան օգտագործման մասին։

Հենց այստեղ է կայանում նրանց հիմնական սխալը։ Վոչ միայն պարլամենտական, այլ և գործունեության բոլոր ասպարեզներում կոմմունիզմը պետք է մտցնի (և առանց յերկարատև, հետապնդող, համառ աշխատանքի նա չի կարող մտցնել) սկզբունքորեն նորը, վոր արմա-

տապես խզի կապերը յերկրորդ Ինտերնացիոնալի տրադիցիաների հետ (միաժամանակ պահելով և զարգացնելով լավը, որ մնացել է նրանից)։

Վերցնենք թեկուզ ժուռնալիստական աշխատանքը՝ Թերթերը, բրոշյուրները, թռուցիկները կատարում են պրոպագանդի, ագիտացիայի, կազմակերպչական անհրաժեշտ գործ։ Առանց ժուռնալիստական ապպարատի վոչ մի մասսայական շարժում չի կարող առաջ գնալ շատ թե քիչ քաղաքակրթված յերկրում։ Ցեվ «ղեկավարների» դեմ յեղած վոչ մի վոռը ու ճիչ, ղեկավարների ազդեցությունից մասսաների մաքրությունը պաշտպանելու վոչ մի յերդում չի կարող ազատել բուրժուա-ինտելլիգենտական միջավայրում սնվածների աշխատանքից օգտվելու անհրաժեշտությունից, չի կարող ազատել բուրժուա-դեմոկրատական, «սեփականատիրական» մթնոլորտից ու պայմաններից, վորոնց մեջ կատարվում է այդ աշխատանքը կապիտալիզմի շրջանում։ Մինչև իսկ բուրժուազիայի տապալումից, պրոլետարիատի միջոցով քաղաքական իշխանության գրավումից յերկու և կես տարի հետո՝ մենք մեր շուրջը տեսնում ենք այդ մթնոլորտը, մասսայական (գյուղացիական, արհեստավորական) բուրժուա-դեմոկրատական, սեփականատիրական հարաբերությունների այդ միջավայրը։

Պարլամենտարիզմը աշխատանքի մի ձեն է, ժուռնալիստականը՝ մյուս։ Բովանդակությունը յերկու տեղն էլ կարող է լինել կոմմունիստական և պետք է լինի կոմմունիստական, յերբ թե մեկ և թե մյուս ասպարեզում աշխատողներն իրոք կոմմունիստներ են, իրոք պրոլետարական, մասսայական կուսակցության անդամներ են։ Սակայն թե մեկ և թե մյուս ասպարեզում — և առհասարակ աշխատանքի վորեվե բնագավառում կապիտալիզմի ժամանակ և կամ կապիտալիզմից սոցիալիզմին անցնող շրջանում — չի կարելի խուսափել այն դժվարություններից ու այն յուրահատուկ խնդիրներից — վոր պրոլետարիատը պետք է հաղթահարի և լուծի՝ իր նպատակների համար օգտագործելու բուրժուական միջավայրից դուրս յեկածներին, հաղթելու բուրժուա ինտելլիգենտական նախապաշարումներն ու ազդեցությունները, թուլացնելու (հետագայում նաև լիովին փոխելու) մանր-բուրժուական շրջապատի դիմադրությունը։

Մինչև 1914—1918 թվականների պատերազմը չտեսանք միթե բոլոր յերկրներում չափազանց շատ օրինակներ, յերբ շատ «ձախ» անարխիստներ, սինդիկալիստներ և ուրիշները ամբակոծում եյին պարլամենտարիզմը, հեգնում եյին բուրժուայնորեն-ստորացած սոցիալիստ-պարլամենտականներին, մտրակում եյին նրանց կարիերիզմը և այլն և այլն, իսկ իրենք ժուռնալիստիկայի միջոցով, սինդիկատների (պրոֆմիությունների) մեջ տարած աշխատանքի միջոցով միթե միևնույն բուրժուական կարիերան չարին։ Միթե պարոններ Ժուոները և Մերրհեյմների



օրինակները — յեթե սահմանափակվենք Ֆրանսիայով — տիպիկական չեն։

Պարլամենտարիզմին մասնակցելու «բացասման» յերեխայությունն էլ հենց այնտեղ է, վոր այդպիսի «հասարակ», «հեշտ», իբր թե հեղափոխական միջոցով կարծում են, թե կարող են լուծել բանվորական շարժման ներսում բուրժուա-դեմոկրատական ազդեցությունների դեմ պայքարելու դժվարին խնդիրը, մինչդեռ իրոք փախչում են միայն իրենց սեփական ստվերից, միայն փակում են աչքերը դժվարության առջև, միայն բառերով են փորձում ազատվել նրանից։ Ամենաանամոթ կարիերիզմ, պարլամենտական տեղերի բուրժուական օգտագործում, պարլամենտական աշխատանքի աղաղակող ռեֆորմիստական խեղաթյուրում, մեշչանական ստոր ռուտինա — կասկած չկա, վոր այս բոլորը սովորական ու տիրապետող բնորոշ գծերն են, վոր ծնում է կապիտալիզմն ամենուրեք, և վոչ միայն բանվորական շարժումից դուրս, այլ և նրա ներսում։ Բայց նա, կապիտալիզմը և նրա ստեղծած բուրժուական շրջապատը (վոր մինչև իսկ բուրժուազիայի տապալումից հետո շատ դանդաղ կերպով է անհետանում, քանի վոր գյուղացիությունն անընդհատ վերածնում է բուրժուազիան) կյանքի և աշխատանքի բացարձակապես բոլոր ասպարեզներում ծնում են էությամբ նույնպիսի — ձևով շատ քիչ տարբերվող — բուրժուական կարիերիզմ, ազգային շովինիզմ, մեշչանական ստորություն և այլն։

Դուք ձեզ թվում եք «սարսափելի հեղափոխականներ», սիրելի բոյկոտիստներ և հակապարլամենտականներ, բայց իրապես դուք վախեցաք բանվորական շարժման ներսում բուրժուական ազդեցությունների դեմ պայքարելու համեմատաբար փոքր դժվարություններից, մինչդեռ ձեր հաղթանակը, այսինքն բուրժուազիայի տապալումը և քաղաքական իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից՝ կստեղծեն այդ նույն դժվարություններն ավելի մեծ, անսահման մեծ չափերով։ Դուք յերեխայությամբ վախեցաք այսօր ձեր առջև գտնվող փոքրիկ դժվարություններից, չհասկանալով, վոր վաղը և մյուս օրը դուք դարձյալ ստիպված պիտի լինեք սովորել ու կրկին սովորել՝ հաղթահարելու համար նույն դժվարություններն անսահման մեծ չափերով։

Խորհրդային իշխանության ժամանակ ձեր և մեր պրոլետարական կուսակցության մեջ ներս կսողոսկեն շատ ավելի բուրժուա ինտելլիգենտ ձեռեր։ Նրանք կսողոսկեն և՛ խորհուրդները, և՛ դատարանները, և՛ վարչական մարմինների մեջ, վորովհետև չի կարելի կոմմունիզմը կառուցել այլ կերպ, քան կապիտալիզմի ստեղծած մարդկային նյութից, վորովհետև չի կարելի արտաքսել և վոչնչացնել բուրժուական ինտելլիգենցիան, այլ պետք է հաղթահարել, ձևափոխել, վերամշակել ու վերադաստիարակել նրան, ինչպես պետք է վերադաստիարակել յերկարատև պայքարի մեջ, պրոլետարիատի դիկտատու-

բայի հողի վրա, նաև իրենց պրոլետարներին, վորոնք իրենց սեփական մանր-բուրժուական նախապաշարումներից ազատվում են վոչ թե միանգամից, վոչ թե հրաշքով, վոչ թե աստվածամոր կամքով, վոչ թե լոզունգի, հեղափոխության, դեկրետի հրամանով, այլ միայն յերկարատև, մասսայական պայքար մղելով մասսայական մանր բուրժուական ազդեցությունների դեմ։ Խորհրդային իշխանության ժամանակ, նույն այն խնդիրները, վոր այժմ այնպիսի գոռոզությամբ, այնպիսի մեծամտությամբ, այնպիսի թեթևամտությամբ, այնքան յերեխայաբար՝ ձեռքի մի շարժումով հետ են մղում իրենցից հակա-պարլամենտականները—Նույն այն խնդիրները վերածնվում են խորհուրդների ներսում, խորհրդային ադմինիստրացիայի ներսը, խորհրդային «իրավապաշտպանների» ներսը (մենք վոչնչացրել ենք Ռուսաստանում—և լավ ենք արել, վոր վոչնչացրել ենք—բուրժուական փաստաբանությունը, բայց նա վերածնվում է մեզանում «խորհրդային» «իրավապաշտպանների»[89] քողի տակ)։ Խորհրդային ինժեներների ներսում, խորհրդային ուսուցիչների ներսում, խորհրդային գործարանների արտոնյալ, այսինքն ամենից ավելի վորակված և ամենից լավ վարձատրված բանվորների ներսում մենք տեսնում ենք բացարձակապես բոլոր այն բուրժուական գծերի մշտական վերածնությունը, վորոնք հատուկ են բուրժուական պարլամենտարիզմին, և միայն պրոլետարական կազմակերպչականության ու դիսցիպլինի համառ, յերկարատև անդուլ, անդադրում պայքարի միջոցով մենք աստիճանաբար կհաղթենք այդ չարիքը։

Անշուշտ, բուրժուական տիրապետության ժամանակ շատ դժվար է հաղթահարել բուրժուական սովորությունները սեփական, այսինքն բանվորական կուսակցության մեջ. «դժվար է» արտաքսել կուսակցությունից սովորական, բուրժուական նախապաշարումներով անհուսալի կերպով փչացած պարլամենտական-ղեկավարներին, «դժվար է» պրոլետարական դիսցիպլինի յենթարկել բուրժուազիայից դուրս յեկած նորեկների բացարձակ կերպով անհրաժեշտ մի թիվ (վորոշ, թեև շատ սահմանափակ քանակությամբ), «դժվար է» ստեղծել բանվոր դասակարգին լիովին արժանի կոմմունիստական ֆրակցիա բուրժուական պարլամենտում, «դժվար է» հասնել այն բանին, վոր կոմմունիստ պարլամենտականները բուրժուա-պարլամենտական խաղեր չխաղան, այլ զբաղվեյին մասսաների մեջ պրոպագանդի, ագիտացիայի, կազմակերպության ամենակարևոր աշխատանքով։ Խոսք չկա, վոր այս բոլորը «դժվար է», դժվար է յեղել Ռուսաստանում, անհամեմատ կերպով դժվար է Արևմտյան Յեվրոպայում ու Ամերիկայում, ուր բուրժուազիան շատ ավելի ուժեղ է, ուժեղ է բուրժուա-դեմոկրատական տրադիցիան և այլն։

Բայց բոլոր այդ «դժվարությունները» ուղղակի յերեխայական դժվարություններ են համեմատությամբ ճիշտ նույն տեսակի խնդիր-



ների հետ, վոր անխուսափելի կերպով ամեն պարագայում պրոլետարիատը ստիպված պետք է լինի լուծել և՛ իր հաղթանակի համար, և՛ պրոլետարական հեղափոխության ժամանակ, և՛ պրոլետարիատի կողմից իշխանությունը գրավելուց հետո։ Այս իսկապես հսկայական խնդիրների համեմատությամբ—յերբ պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ հարկ պիտի լինի վերադաստիարակել միլիոնավոր գյուղացիներ և մանր տնտեսատերեր, հարյուր-հազարավոր ծառայողներ, չինովնիկներ բուրժուական ինտելլիգենտներ, նրանց բոլորին յենթարկել պրոլետարական պետության և պրոլետարական ղեկավարության, հաղթահարել նրանց մեջ բուրժուական սովորություններն ու տրադիցիաները—ահա այդ հսկայական խնդիրների համեմատությամբ յերեխայական հեշտ գործ է թվում բուրժուազիայի տիրապետության ժամանակ, բուրժուական պարլամենտում ստեղծել իսկական կոմմունիստական կուսակցության կոմմունիստական ֆրակցիա։

Յեթե «ձախ» և հակա-պարլամենտական ընկերները չսովորեն այժմ հաղթահարել նույնիսկ այդքան փոքրիկ դժվարություն, ապա կարելի յե հաստատ կերպով ասել, վոր նրանք կամ չեն կարող իրականացնել պրոլետարիատի դիկտատուրան, չեն կարող լայն մասշտաբով յենթարկել իրենց և ձևափոխել բուրժուական ինտելլիգենտներին ու բուրժուական հիմնարկությունները, կամ ստիպված պիտի լինեն շատ սովորել և այդպիսի շտապողականությամբ ահագին վնաս հասցնել պրոլետարիատի գործին, սովորականից ավելի սխալներ գործել, միջակից ավելի թուլություն և անկարողություն ցույց տալ և այլն և այլն։

Քանի դեռ բուրժուազիան տապալված չէ և, ապա, քանի դեռ չէ վերացել բոլորովին մանր տնտեսությունը և մանր-ապրանքային արտադրությունը—այնքան ժամանակ բուրժուական միջավայրը, սեփականատիրական սովորույթները, մեշչանական տրադիցիաները կըփչացնեն պրոլետարական աշխատանքը թե դուրսը և թե բանվորական շարժման ներսը, վոչ միայն գործունեյության մի ասպարիզում, պարլամենտականում, այլ և անխուսափելի կերպով հասարակական գործունեյության ամեն ասպարեզներում, առանց բացառության՝ կուլտուրական և քաղաքական բոլոր ասպարեզներում։ Յեվ խորագույն սխալ կլինի—վորի համար հետո հարկ կլինի վճարել—հրաժարվել, խուսափել «անհաճելի» խնդիրներից մեկից և կամ մի ասպարեզի աշխատանքի դժվարություններից։ Պետք է սովորել ու սովորել առանց բացառության աշխատանքի և գործունեյության բոլոր ասպարեզներին տիրելու, հաղթահարելու բոլոր դժվարությունները և բուրժուական բոլոր սովորույթները, տրադիցիաները, ավանդությունները ամեն տեղ և ամենուրեք։ Հարցն ուրիշ կերպ դնել՝ ուղղակի լուրջ չէ, ուղղակի յերեխայություն է։

(Գրված է 12 մայիս, 1920 թ.)

# ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ·

**1. Կ. Կաուցկի**—գերմանական սոցիալ-դեմոկրատիայի և 2-րդ Ինտերնացիոնալի թեորետիկ, տնտեսագետ և պատմագետ: Ծնված է Պրագայում, ծագումով կիսով չափ չեխ: Դաստիարակվել է Բենեդիկտյան աբբայության մեջ, բայց յոթանասնական թվականների կեսին համալսարան մտնելիս արդեն սոցիալիստ էր: 1880 թվին անցնելով Ցյուրիխ, աշխատում էր սոցիալիստական մամուլի մեջ Բերնշտայնի հետ միասին, որ այդ ժամանակ դեռ օրթոդոքս էր: Իր գիտական աշխատանքներն սկսելով Ֆ. Էնգելսի անմիջական ղեկավարության տակ և ընդունելով Կ. Մարքսի և Էնգելսի գրական ժառանգությունն ու կիսատ մնացած գործերը, Կաուցկին շարունակեց նրանց տեսական աշխատանքը: Գիտական մարքսիստական «Neue Zeit» հանդեսի խմբագիր էր 1887 թվից սկսած: Բերնշտայնի նախաձեռնած Մարքսի ռևիզիայից հետո հրապարակ յեկավ ռևիզիոնիզմի վճռական քննադատությամբ: Մինչև 1914—18 թվերի պատերազմը հարում էր մարքսիզմի ձախ արմատական թևին: Պատերազմի մոմենտից բռնեց ծայրաստիճան անորոշ, կիսատ մի դիրք, աշխատելով ինտերնացիոնալիզմը տեսականապես կապել հայրենիքի պաշտպանության հետ: 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հրապարակ յեկավ խորհրդային սիստեմի «գիտական» քննադատությամբ՝ պաշտպանելով դեմոկրատիան և պառլամենտարիզմը, գլորվելով մինչև ռեֆորմիզմը: Ներկայումս նա գերմանական ս.-դեմոկրատ կուսակցության անդամ է:

**2. Օտտո Բաուեր**—ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարներից մինը, որ պատերազմից առաջ հարում էր նրա ձախ թևին. պատերազմի միջոցին զորակոչի յենթարկվեց. Ռուսաստան գերի ընկավ և Սիբիր ուղարկվեց, որտեղից ազատվեց Պետերբուրգի Խորհրդի պահանջով Կերենսկու կառավարության ժամանակ: Ինքը լինելով ավստրիական հայրենիքի պաշտպանության կողմնակից, Պետերբուրգում իր կարճատև բնակության ընթացքում քաղաքականապես պաշտպանում էր ռուս պաշտպանողականների դիրքը: Ավստրիայի 1918 թվի նոյեմբերյան հեղափոխությունից հետո դարձավ ավստրիական հանրապետության կոալիցիոն կառավարության արտաքին գործերի պետական քարտուղար: Լինելով 3-րդ Ինտերնացիոնալի հակա-



ռակորդ՝ ռուս կոմմունիստների և խորհրդային սիստեմի դեմ մի գիրք հրատարակեց: Կաուցկու գաղափարակիցն է: Յերկու և կես Ինտերնացիոնալի կազմակերպիչներից մեկն է յեղել:

**3. Ֆրիդրիխ Ադլեր**—ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի ղեկավար Վիկտոր Ադլերի որդին: Լինելով հակառակորդ իմպերիալիստական պատերազմի, գազազեց այն այլասերումը տեսնելով, որ մտել էր բանվորական շարժման մեջ ղեկավարների սոցիալ-հայրենասիրական դիրքի հետևանքով և սպանեց ավստրիական մինիստր Շտյուրգկին: Դատապարտվեց կայսերական դատարանի կողմից 20 տարվա տաժանակրության և ազատվեց 1918 թվի նոյեմբերյան հեղափոխության շնորհիվ: Նրա հարվածը տանջված հոգու մի աղաղակ էր, բայց ոչ քաղաքականորեն մտածված մի ակտ: Ավստրիական հեղափոխությունից հետո պարզվեց, որ նրա աշխարհայացքն իրապես չի տարբերվում պաշտոնական սոցիալ-դեմոկրատիայի (ցենտրիստական) դոգմայից:

**4.** «Искра» («**Կայծ**»)—1901—1905 ռուս ս.-դ. հեղափոխական ուղղության օրգանը, որ արտասահմանում հրատարակվում էր Պլեխանովի, Լենինի, Պ. Ակսելրոդի, Լ. Մարտովի, Պոտրեսովի և Զասուլիչի խմբագրությամբ (հին «Իսկրա»): Ռ. Ս.-Դ. Բ Կ. 2 րդ համագումարը «Իսկրան» ճանաչեց կուսակցության կենտրոնական օրգան: 2-րդ համագումարից հետո տեղի ունեցող պառակտումը «Իսկրան» ամբողջովին հանձնեց մենշևիկներին, ստիպելով Լենինին դուրս գալ խմբագրության կազմից (Նոր «Իսկրա»):

**5. Բոլշևիզմի ծագումը**, որպես գաղափարական խմբակցություն և որպես կազմակերպություն տեղի յե ունենում 1903 թվին, յերբ Ռ. Ս.-Դ. Բ. Կ. 2-րդ համագումարին պառակտում յեղավ (տես Н. Ленин, Собрание Сочинений—հոդվածներ 4 և 5 հատորներում): Պառակտումից հետո բոլշևիկները շարունակեցին կուսակցության և հին «Իսկրա»-յի հեղափոխական տրադիցիան, որից մենշևիկները հրաժարվել էին: 1905 թվին բոլշևիկյան հոսանքն ունեցավ առաջին ինքնուրույն համագումարը, ուր վերջնականապես կազմակերպվում է Ռ. Ս.-Դ. Բ. Կ. 3-րդ համագումարը (տես Ն. Լենինի ճառերը 3-րդ համագումարում—6 հատոր, էջ 161—191): Առաջին հեղափոխության շրջանում տեղի ունեցավ ձևական միություն մենշևիկների հետ, որի արտաքին արտահայտությունները յեղան Ստոկհոլմի Միացնող և Լոնդոնի համագումարները: Բայց և այնպես բոլշևիկները միշտ պահպանում էին իրենց կազմակերպչական միությունը, որպես ինքնուրույն ֆրակցիա, ունեյին իրենց սեփական ղեկավար կենտրոնը: 1909 թվին առաջ յեկավ նոր և վերջնական պառակտում, որ կատարյալ դարձավ 1913 թվին Դումայի Ս.-Դ. ֆրակցիայի պառակտմով

(Դումայի հնգյակի կազմակերպություն), վոր պաշտոնապես կոչվում եր «Բանվորական Ս.-Դ. ֆրակցիա»: Պատերազմի և 2-րդ Ինտերնացիոնալի անկման տարիներում բոլշևիկյան կուսակցությունը ղեկավար դեր նվաճեց միջազգային սոցիալիստական շարժման մեջ, վոր մնացել ե, հավատարիմ Ինտերնացիոնալին, ձևակերպելով պրոլետարական կռվի խնդիրները համաշխարհային պատերազմի պայմաններում և ստեղծելով սոցիալիզմի հեղափոխական տարրերի մի բլոկ («ցիմմերվալդյան ձախ»): Ռ. Ս.-Դ. Բ. Կ. (բոլշևիկների) ապրիլյան կոնֆերենցիայում կուսակցության հին դիրքերը խորացվեցին համաձայն համաշխարհային փոփոխվող դեպքերի, ձևակերպվեցին ռուսական հեղափոխության խնդիրները և պատրաստվեց կոմմունիստական կուսակցության ստեղծումը: 1918 թվին 7-րդ համագումարում ընդունվեց կուսակցության նոր անուն՝ «Ռուսաստանի Կոմմունիստական Կուսակցություն»: Ռ. Կ. Կ. 9-րդ համագումարը 1919 թվին մշակեց կուսակցության նոր ծրագիր: Նույն տարում դրվեց Կոմմունիստական Ինտերնացիոնալի սկիզբը նրա 1-ին կոնգրեսում Մոսկվայում:

**6. Պետական Դումայի ընտրությունների վերաբերյալ Ստոլիպինյան ընտրական օրենքի** համաձայն, վոր 1908 թվի հունիսի 3-ին գործադրվեց հետևյալ վեց նահանգներում—Մոսկվայի, Պետերբուրգի, Կոստրոմայի, Վլադիմիրի, Խարկովի, Յեկատերինոսլավի—բանվոր ընտրողները յեռաստիճան ընտրությունների ժամանակ զատվում եյին ընտրական հատուկ կուրիաների, նրանց կողմից ընտրված լիազորները մտնում եյին նահանգական ընդհանուր ընտրական ժողովների մեջ, վորոնք պարտավոր եյին մյուս պատգամավորների թվում ընտրել վերը թված նահանգների յուրաքանչյուր բանվորական կուրիայից մեկական ներկայացուցիչ: Մյուս նահանգներում բանվորները փաստորեն զրկված եյին ընտրական իրավունքներից: 4-րդ Պետական Դումայի ընտրություններին 1912 թվին (ճիշտ այնպես, ինչպես յերրորդին 1908 թվին) մատնանշված բոլոր վեց նահանգներում բանվորական կուրիաներում հաղթեցին բոլշևիկները:

Մենշևիկներն իրենց պատգամավորներն անցկացրին կամ Կովկասի ընդհանուր կուրիաների կողմից կամ հեռավոր ծայրագավառներից մանր-բուրժուական ընտրողների ձայներով:

**7. Չորրորդ Պետական Դումայի բոլշևիկյան ֆրակցիան** պատերազմի հայտարարման րոպեյից՝ 2-րդ Ինտերնացիոնալի կուսակցությունները համակող ընդհանուր դավաճանության և մատնության որերին՝ մնաց հավատարիմ հեղափոխական ս.-դ. սկզբունքներին, ինչպես և ամբողջ բոլշևիկյան կուսակցությունը, ամբողջապես հարելով Կ.Կ.-ի այսպես կոչված «պարտողական» դիրքին: Մոսկովյան պրովոկատոր Ռոմանովի մատնությամբ ֆրակցիան ձերբակալվեց 1914 թվի նոյեմ-



բերի 4-ին տեղական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ունեցած խորհրդակցության ժամանակ, վոր հրավիրված եր պատերազմի հարցի առթիվ Կ. Կ.-ի թեզիսները քննելու համար, վորոնք մշակված եյին Լենինի կողմից և տպված արտասահմանում հրատարակվող կուսակցության կենտրոնական օրգան «Սոցիալ-Դեմոկրատի» 33-րդ համարում (տես «Собр. Сочин.», 13-րդ հատոր): Դատաստանական Պալատն աքսորի դատապարտեց Կամենևին, վոր ղեկավարում եր Դումայի ֆրակցիան և պատգամավորներ՝ Պետրովսկուն, Բադաևին, Մուրանովին, Շագովին և Սամոյլովին, վորոնք մնացին Սիբիրում մինչև փետրվարյան հեղափոխությունը:

**8. Լոնգեն** պատերազմի տարիներում բռնել եր կիսա-պաշտպանողական, կիսա-պացիֆիստական անորոշ դիրք, սակայն անփոփոխ կերպով ձայն եր տալիս հօգուտ պատերազմական վարկերի: Նախկին օպպոզիցիայի ղեկավարը կուսակցության ներսում (մինորիտերներ): 1918 թվի Ստրասբուրգյան կոնգրեսում ֆրանսիական կուսակցության մեծամասնությունն անցավ Լոնգեյի կողմը, վոր դարձավ նրա իդեոլոգն ու «Յումանիտեյի» խմբագիրը: 1920 թ. Տուրի կոնգրեսից հետո, ուր կոմմունիստները հաղթեցին, Լոնգեն իր կողմնակիցների հետ միասին դուրս յեկավ կուսակցությունից, ռեֆորմիստներին գերադասելով կոմմունիստներից: Հարում ե 2-րդ Ինտերնացիոնալին: Կարլ Մարքսի թոռն ե:

**9.** I. L. P.—**Անգլիական անկախ բանվորական կուսակցությունը** պատերազմի տարիներում վարում եր տատանվող և ծայրահեղ կերպով թույլ պացիֆիստական քաղաքականություն, չխուսափելով բուրժուազիայի հետ համաձայնելուց: 1920 թվին դուրս յեկավ 2-րդ Ինտերնացիոնալից և 1921 թվին մասնակցեց $2^{1}/_{2}$ Ինտերնացիոնալի Վիեննայի կոնֆերենցիային: Տիպիկ «ցենտրիստական» կազմակերպություն ե աջ թեքումով:

**10. Ֆաբիանական ընկերությունը** հիմնված ե 1883 թվին Անգլիայում սոցիալիստական գաղափարներ տարածելու նպատակով և այդպես ե կոչված կունկտատոր Ֆաբիուսի անունով: Նրա նպատակներն են՝ անգլիական սահմանադրության վերաքննությունը դեմոկրատական վոգով և արտադրության սոցիալիստական կազմակերպության տարածումը: Չհրաժարվելով քաղաքական պայքարից և ընտրական կամպանիաներին մասնակցելուց՝ ընդհանրապես լիբերալ կուսակցության թեկնածուներին պաշտպանելու ճանապարհով, ընկերությունը ժխտում ե դասակարգային կռիվը, քարոզելով դասակարգային համագործակցություն և չի ընդունում սոցիալական հեղափոխության անխուսափելիությունը:

**11. Տուրատի**—իտալական ռեֆորմիստների պետ, դասակարգային

համագործակցության և բուրժուական կառավարության մասնակցելուն կողմնակից, պատգամավոր պարլամենտում։ Պատերազմի ժամանակ ամբողջ խմբակի հետ միասին քվեարկեց պատերազմական վարկի դեմ՝ արտահայտվելով հօգուտ պատերազմի «դեմոկրատիկ» ձևով լուծման և վիլսոնիզմի։ Ներկայումս կանգնած է սոցիալիստական կուսակցության աջ թևում։

**12. Ֆիլիպ Շայդեման** — գերմանական սոցիալ-դեմոկրատ կուսակցության անդամ, ռայխստագի ականավոր պատգամավոր։ Պատերազմից առաջ վերջին ընտրությունների ընթացքում ս.-դ. կողմից ընտրվեց ռայխստագի փոխ-նախագահ։ Պատերազմի ժամանակ — գերմանական սոցիալ-դեմոկրատիայի օպորտյունիստ, աջ թևի լիդեր, սոցիալ-պատրիոտ, քվեարկեց հօգուտ զինվորական վարկի, պայքար մղեց Կարլ Լիբկնեխտի և «Սպարտակ» խմբի դեմ, 1918 թվի նոյեմբերյան հեղափոխությունից հետո — հանրապետական Գերմանիայի համաձայնողական կառավարության պետ, վոր գնդակահարել տվեց տասնյակ-հազարավոր պրոլետարներ։

**13. Նոսկե** — գերմանական աջ սոցիալիստ, շայդեմանական, 1919 և 1920 թվերին գերմանական կառավարության զինվորական նախարար, վոր ճնշեց պրոլետարական հեղափոխությունը, հեղեղելով Գերմանիան բանվորների արյունով։

**14. Կ. Ռեններ** — ավստրիական աջ թևի սոցիալ-դեմոկրատ։ Պատերազմի ժամանակ պաշտպանողական և համաձայնողական։ Ավստրիայի 1918 թվի նոյեմբերյան հեղափոխությունից հետո ընդունեց նախարարապետի պորտֆելը։

**15. Աուստերլից** — ավստրիական աջ թևի սոցիալ-դեմոկրատ։

**16. «48 թվականի սոցիալ-դեմոկրատներ»** — սոցիալ-դեմոկրատական կուսակցություն (այլապես «Լեռ», մոնտանյարներ) — մանրբուրժուական ռադիկալ կուսակցություն Լեդրյու-Ռոլլենի գլխավորությամբ, 1848 թվի Ֆրանսիական Սահմանադիր ժողովի օպպոզիցիան իր միապետական մեծամասնությամբ ներկայացնում եր քաղաքային մեշչանականության, գյուղացիների և պրոլետարների հետամնաց շերտերի մի խառնուրդ, իր տատանվող, անվճռական տակտիկայով դյուրացրեց խոշոր-բուրժուական ռեակցիայի հարձակումը, վոր հասցրեց Նապոլեոն 3-րդի գահակալության։

**17. Բանվորական պատգամավորների առաջին Խորհուրդները** ակիզբ առան 1905 թվին։ Իվանովո-Վոզնեսենսկում ամառային գործադուլի ժամանակ ընտրվեց համաքաղաքային Խորհուրդ։ Հոկտեմբերյան գործադուլին համընթաց բոլոր խոշոր արդյունաբերական կենտրոններում կազմակերպվեցին Բանվորական Պատգամավորների Խորհուրդներ։ Շատ քաղաքներում Խորհուրդները կազմակերպվում



եյին 1905 թվի աշնան շարժումներին ոժանդակող գործադուլային կոմիտեներից՝ ինտելլիգենտ կազմակերպությունների և ազատ պրոֆեսիաների ներկայացուցիչներին այնտեղից դուրս քշելու ճանապարհով։ Մենշևիկներն առաջ եյին քաշում Խորհուրդները վորպես «հեղափոխական ինքնավարության որգաններ», պնդելով նրանց անկուսակցական և «անկախ» լինելու վրա։ Բոլշևիկները պնդում եյին նրանց կապերը պրոլետարիատի կուսակցության հետ ամրացնելու վրա։

1905 թվի Պետերբուրգի Առաջին Խորհուրդը, 1917 թվի իր հաջորդի պես, ստանձնեց համառուսական մասշտաբով հեղափոխական շարժման ղեկավարությունը, յերեք ընդհանուր գործադուլ կազմակերպեց և ցարական կառավարությանը ֆինանսական բոյկոտի յենթարկելու կոչի մանիֆեստ բաց թողեց։ Պետերբուրգի Խորհրդի առաջին նախագահն եր Խրուստալեվ-Նոսար, հեղափոխության մեջ պատահական մի մարդ, վոր հարել եր մենշևիկներին։ Յերբ Վիտտեյի կառավարության կողմից նա ձերբակալվեց, նախագահ ընտրվեց Տրոցկին։ 1905 թվի դեկտեմբերի 3-ին Խորհուրդը ձերբակալվեց, և նրա Գործկոմն իր ամբողջ կազմով Դատաստանական Պալատի կողմից դատապարտվեց աքսորի Սիբիր։ Այնտեղ հասնելուն պես աքսորվածների մեծամասնությունը փախավ և վերադարձավ հեղափոխական գործը շարունակելու։ Պետերբուրգի Խորհրդից բավական ուշ ընտրված Մոսկվայի Խորհուրդը ղեկավար դեր խաղաց դեկտեմբերյան շարժման մեջ, ընդհանուր գործադուլ հայտարարելով և այն զինական ապստամբության վերածելով։ Նրա նախագահը յեղավ մենշևիկ Խինչուկ, վոր նույն պաշտոնի համար վերընտրվեց 1917 թվին փետրվարյան հեղափոխությունից հետո։

Բոլշևիկների և 1905 թվի Խորհուրդների հարաբերությունների մասին՝ տես Ն. Լենինի հոդվածը «Собр. соч » 7-րդ հատորում։

**18. Ռ. Ս.-Դ. Բ. Կ. (Բ) Համառուսական Կոնֆերենցիան** տեղի ունեցավ Պետրոգրադում 1917 թվի ապրիլի 24-ից մինչև 29-ը։ Այնտեղ հարուցած հարցերի կարևորությամբ, ամբողջ ռուսական հեղափոխության համար նրա ունեցած նշանակությամբ և այնտեղ նոր Կ. Կ. ընտրվելու հետևանքով, այդ կոնֆերենցիան համարվում և կուսակցական համագումար, թեև նրան մասնակցողներն իբրև այդպիսին չընդունեցին, նկատի առնելով նախապատրաստական կարճ միջոցը և տեղերում նախնական դիսկուսիաների բացակայությունը։ Որակարգի ամենակարևոր հարցերն եյին՝ ընթացիկ մոմենտ (ամբողջ ռուսական հեղափոխության հեռանկարի գնահատականը), պատերազմ, 3-րդ Ինտերնացիոնալի նախապատրաստություն, ագրարային, ծրագրային և ազգային հարցեր։ Կոնֆերենցիային ներկայացված եր կուսակցության 80,000 անդամ՝ չնայելով այն հանգամանքին, վոր փետրվա-

րյան հեղափոխությունից հետո, յերբ կուսակցությունը դուրս յեկավ լույս աշխարհ, յերկու ամիս էլ չէր անցել։

Կոնֆերենցիայում օպպոզիցիայի մի փոքր խումբ կար բաղկացած գլխավորապես Մոսկվայի և մոսկովյան շրջանի կոմիտեներից (Նոգին, Ռիկով, Սմիդովիչ, Վեդյորնիկով, Ովսյաննիկով, Անգարսկի և ուրիշներ), վոր պաշտպանում եր հեղափոխության նկատմամբ մի հայացք, մոտ 1905 թվի բոլշեվիկյան գնահատման («Պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի» ֆորմուլան)։ Դրանից վոչ շատ վաղ տեղի ունեցած մոսկովյան համաքաղաքային կոնֆերենցիայում Ի. Սկվորցովի զեկուցման համաձայն ընդունվեցին վորոշումներ, վորոնք համարյա թե 1905 թվի սխեմաների ամբողջական վերարտադրություններն եյին։ («Մոսկվացիների վորոշումը», վորի մասին խոսում ե Ն. Լենինը, ներկայացնում ե վոչ թե մոսկովյան քաղաքային կոնֆերենցիայի, այլ Մոսկվայի Շրջանային Բյուրոյի վորոշումը)։ Այդ խումբը կոնֆերենցիայում հանձնարարեց իր հակազեկուցումը Կամենևին, վոր այդ խմբի դիրքին մոտ տեսակետ ուներ։

Ներկայացվեց նաև ավելի «ձախ» տեսակետ։ Այդ տեսակետը պաշտպանվում եր Մոսկվայի Շրջանային Բյուրոյի կողմից, վորի անդամներից դելեգատ եյին Բուբնով, Գ. Ի. Ոպպոկով (Լոմով) և Սոկոլնիկով։

Առանձին դիրք եյին բռնել լեհ դելեգատները Ձերժինսկու գլխավորությամբ՝ ազգային հարցում։ Լեհացի ընկերները, վորոնք վարժված եյին պայքարել լեհական նացիոնալիզմի դեմ՝ ազգերի ինքնորոշումը մինչև նրանց Ռուսաստանից անջատվելու իրավունք հայտարարող վորոշումը գտնում եյին անընդունելի և օպպորտյունիստական։ Նրանց քննադատության հարում եր մասամբ Պյատակովը։ Ազգային հարցին վերաբերող այս վեճերը շարունակություն եյին այն դիսկուսիաների, վորոնք զբաղեցրել են կուսակցությունը 1913 թվից սկսած (տես Լենինի «Собр. соч.» 19-րդ հատոր)։

Սեկցիաներում մեծ վիճաբանություններ առաջ յեկան։ Ծրագիրը վերաքննող սեկցիայում շրջանայիններն (Ոպպոկով) առաջարկում եյին ծրագրի տեսական մասի վերամշակությունը, վոր չընդունվեց Լենինի կողմից (տես «Ծրագրի փոփոխությունների նախագիծ» հոդվածը, 14-րդ հատոր, 1 մաս, 113—119 եջ)։ Ինտերնացիոնալի սեկցիայում դելեգատների մեծամասնությունը հնարավոր եր գտնում 3-րդ Ինտերնացիոնալ կազմել վոչ միայն «ձախ ցիմմերվալդյան» տարրերից, այլ և ընդհանրապես Ցիմմերվալդի և Կինտալի տարրերից։ Զինովյևի կողմից առաջարկված վորոշման մեջ սեկցիան մտցրեց, հեղինակի կարծիքի դեմ, համապատասխան ուղղումներ, վորոնք հետո մերժվեցին պլենումի կողմից։ Կոնֆերենցիան տեղի ունեցավ Կանանց Բժշկական



Ինստիտուտի շենքում, մեկ նիստը յեղավ Լեսգաֆտի կուրսերի նեղ լսարանում, կոնֆերենցիայի նախընթաց օրը դելեգատների նախնական խորհրդակցությունը և փակման նիստը տեղի ունեցան Կշեսինսկայայի տանը։ Յերկու նիստ տեղի չունեցան շենք չգտնելու պատճառով։ Համարյա ամբողջ կոնֆերենցիան անցավ Յա. Մ. Սվերդլովի նախագահությամբ։

Կոնֆերենցիայի արձանագրությունները տարվում եյին վոչ բավարար սիստեմատիկ կերպով և մասամբ ներկայանում եյին վորպես ստենոգրամմաներ (լիքը բացերով և սխալներով), մասամբ էլ սովորական քարտուղարական գրություններ։ Նրանք չեն հրատարակված։ «Собр. Соч.» 14-րդ հատորում տպված Ն. Լենինի կոնֆերենցիայում արտասանած ճառերը խմբագրությունը թույլ տվեց իրեն տեղ-տեղ վոճական իմաստով մշակել, նկատի առնելով ստենոգրամմաների վատ հատկությունը։

**59. Գ. Վ. Պլեխանովը** ծնվել ե 1855 թվին։ Նա ջերմ մասնակցություն ե ունեցել նարոդնիկական շարժման մեջ։ 1876 թվի դեկտեմբերի 6-ին Կազանի հրապարակում կայացած ցույցի ժամանակ ճառ խոսեց, վորի հետևանքով ստիպված յեղավ անցնել անլեգալ վիճակի։ Յերբ զեմլեվոլյցիները պառակտվեցին «Նարոդնայա Վոլյա» և «Չորնիյ Պերեդել» խմբակցությունների, նա հարեց վերջինին, բայց շուտով փախավ արտասահման, ուր զբաղվեց նարոդնիկական թեորիայի ստուգումով, ուսումնասիրելով արևմտա-յեվրոպական բանվորական շարժման փորձը։ 1883 թվին հիմնեց առաջին ռուսական Ս.-Դ. «Աշխատանքի Ազատություն» խմբակ կազմակերպությունը (Վ. Զասուլիչ, Լ. Դեյչ և Պ. Բ. Ակսելրոդ), մի տարի առաջ արդեն վճռական կերպով բաժանվելով նարոդնիկությունից։ Խմբի առաջին ծրագիրը մի շարք տակտիկական զիջումներ ե արել նարոդնիկության, բայց շուտով վերամշակվել ե Պլեխանովի կողմից իբրև մաքուր ս.-դ. ծրագիր։ Միաժամանակ նա գրեց մի շարք հոդվածներ և գրքեր (նրա լեգալ կեղծանուններն եյին՝ Բելտով, Ուշակով, Պլուտանով, Վ. Վոլգին, Ն. Կամենսկի), վորոնք մասամբ հրատարակված են արտասահմանում, մասամբ տպված Ռուսաստանում և վորոնցով նա շարունակում եր իր պայքարը նարոդնիկական իդեոլոգիայի դեմ։

1895 թվի վերջում «Աշխատանքի Ազատություն» խմբակը միացավ ուրիշ ռուս ս.-դ. արտասահմանյան կազմակերպությունների հետ, կազմելով «Ռուսական Սոցիալ-Դեմոկրատների Միություն»։ 1901 թվին Պլեխանովը մտավ ս.-դ. «Իսկրա» լրագրի խմբագրության մեջ (Ն. Լենին, Լ. Մարտով, Պ. Ակսելրոդ, Վ. Զասուլիչ), նպատակ դնելով պայքարել այն ժամանակ իշխող «եկոնոմիզմի» դեմ, վոր բերնշտայնականության ռուսական տեսակն եր, և ստեղծել կենտրոնացման

ընթարկված մի հեղափոխական կուսակցություն։ «Իսկրայի» կողմից հրավիրված 1903 թվի Ռ. Ս.-Դ. Բ. Կ. 2 րդ համագումարում ռեվիզիոնիստները պարտվեցին և «իսկրովցիները» հաղթեցին։ Պլեխանովի ղեկավարությամբ ընդունվեց կուսակցական, երփուրտյան տիպին մոտ, մի ծրագիր։ Հեղափոխական շրջանի Պլեխանովին բնորոշելու համար հետաքրքիր են նրա այն հայտարարությունները, թե ընդհանուր ընտրական իրավունքը մի միջոց է միայն, որով ս.-դ. պայքարում է սոցիալիզմի համար, բայց յեթե դրա համար օգտակար լիներ դեմոկրատական յերաշխիքների դադարեցումը, կուսակցությունը դրա առաջ չպիտի կանգ առներ։ Պլեխանովը 1890-ական և 1900-ի սկզբնական տարիներում միջազգային օպորտյունիզմի (Բերնշտայն—Միլյերան) դեմ պայքարող հեղափոխական մարքսիզմի ամենաականավոր ներկայացուցիչներից մեկն էր։

Պառակտումից հետո, որ տեղի ունեցավ 2-րդ համագումարին, Պլեխանովը առժամանակյա տատանումներից հետո հարեց փոքրամասնությանը, բայց լինելով հակառակորդ լիկվիդատորական հոսանքներին, որոնք զարգացած եյին մենշևիկյան միջավայրում, նրանցից անջատվեց միայն 1911—1914 թվերի շրջանում և ժամանակավորապես Ն. Լենինի հետ միացավ պայքարելու «կուսակցության համար»։

Իմպերիալիստական պատերազմի սկզբից Պլեխանովը ֆրանսիացի «օրթոդոքս» Ժ. Գեդի նման բռնեց ծայրահեղ սոցիալ-շովինիստական, քաղաքացիական հաշտության դիրք Գ. Ալեքսինսկու և աջ էս-էռների հետ միասին, հրատարակելով Պարիզում պաշտպանողական «Призыв» («Կոչ») թերթը։ Կադետական «Ռուսսկիյե Վեդոմոստի» թերթում Պլեխանովը հանձնարարեց ռուս բանվորներին ընդհատել կռիվը ցարիզմի դեմ՝ Գերմանիային հաղթելու նպատակով։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Պլեխանովը չդադարեց կռվել «դեմոկրատիայի» համար կոմունիստների դեմ մինչև իր մահը, որ տեղի ունեցավ 1918 թվին։

Լինելով բոլոր միջազգային համագումարներում ռուս դելեգացիաների մասնակից և Միջազգային Սոցիալիստական Բյուրոյի անդամ, Պլեխանովը իրեն համախոհ Գեդի և Կաուցկու հետ միասին դարձել էր 2-րդ Ինտերնացիոնալի ամենահեղինակավոր և ամենատիպիկ ներկայացուցիչը։

**20. Եդվարդ Բերնշտայն**—գերմանական սոցիալ-դեմոկրատ, որ 1899 թ. դուրս յեկավ Կ. Մարքսի ուսմունքի վերաքննությամբ («ռեվիզիա»)։ Նրա վերաքննությունը արտահայտվում էր հետևյալ ուղղումներով. 1) դասակարգային ներհակությունները պրոլետարիատի և բուրժուազիայի միջև հարթվում են, 2) Մենք մտել ենք բուրժուազիայի հետ հաշտության, համաձայնության էպոխան, 3) պետք է ուժեղացնել այդ մոտիկությունը, դադարեցնել հեղափոխական պայքարը սոցիալիզմի համար և աշխատել հասնել հասարակության վերաշինությանը խաղաղ ռեֆորմների ուղիով։ Այսպիսով Բերնշտայնը տեսականապես պաշտպանեց այն դավաճանությունը, որ փաստացի իրագործեցին սոցիալ-համաձայնողականները (մենշևիկներ) 1914 թվին։



**21. Լեգին**—գերմանական ս.-դ. շայդեմանական կուսակցությունից, սոցիալ իմպերիալիստ, գերմանական պրոֆեսիոնալ միությունների գործիչ և դեղին—ամստերդամյան Միջազգային Պրոֆեսիոնալ Միության ղեկավար։ Մեռած է։

**22. «Սպարտակ» միություն**—անլեգալ կազմակերպություն, ստեղծված պատերազմի սկզբում Կարլ Լիբկնեխտի, Լեվ Իոգիխեսի (Տիշկո) և Ռոզա Լյուքսեմբուրգի կողմից՝ կռվելու համար պաշտոնական սոցիալ-դեմոկրատիայի դեմ, որ դավաճանել էր Ինտերնացիոնալին և հեղափոխությանը։ Սպարտակ—հռոմեական ստրուկների ապստամբություններից մեկի ղեկավարի անունն է. Նա խաչ է հանված։ Գերմանական ս. դ. կուսակցությունը 1914 թվի օգոստոսի 4-ին, յերբ նրա պարլամենտի ֆրակցիան ձայն էր տալիս պատերազմական վարկին, վճռական սպես պատերազմն ու կառավարությունը պաշտպանելու դիրք ընդունեց։ Սպարտակյանները ոչ միայն ագիտացիա եյին մղում իմպերիալիստական պատերազմի դեմ, այլ և կոչ եյին անում մասսաներին՝ դեպի հեղափոխական կռիվ սոցիալիստական հեղափոխության համար։ 1916 թվին պաշտոնական ս.-դ. կուսակցությունից «անկախների» (Հաազե, Լեդեբուր) անջատումից հետո—որոնք հրաժարվեցին ձայն տալ վարկին, բայց հրաժարվեցին նաև հեղափոխության համար ագիտացիա անելուց—«Սպարտակը» տակտիկական նկատառումով հարեց Գերմանիայի Անկախ Սոցիալ-դեմոկրատ Կուսակցության (U. S. P.), պահպանելով իր կազմակերպությունը, որպես առանձին խմբակ։ Գերմանիայում 1918 թվի նոյեմբերյան հեղափոխությունից հետո, յերբ պաշտոնական ս.-դ.-ները (շայդեմանականները) և անկախները կառավարություն կազմեցին, «Սպարտակը» վերջինիս հետ խզեց իր կապը և նույն տարվա դեկտեմբերին ընդհատեց իր գոյությունը, կազմակերպելով գերմանական կոմունիստական կուսակցությունը։

**23. Գեորգ Լեդեբուր**—հին մարքսիստ, Բեբելի և Հաազեի ընկերը, որ պատերազմի տարիներում ինտերնացիոնալիստական դիրք գրավեց, Ցիմմերվալդի մասնակից, կոնֆերենցիայի մանիֆեստի ստորագրողը, բայց «ձախ ցիմմերվալդյանի» վճռական հակառակորդ։

Յերբ գերմանական ս.-դ. կուսակցությունից «անկախներն» անջատվեցին, դարձավ նրանց լիդերներից մեկը։ Գերմանիայի նոյեմբերյան հեղափոխությունից հետո միաժամանակ մտավ կառավարու-

թյան մեջ։ Կ. Լիբկնեխտի և Շուլցեյի հետ Բեռլինում 1919 թվի հունվարյան ապստամբության միջոցին հեղափոխական կոմիտեյի անդամ եր, միաժամանակ մնալով պրոլետարիատի դիկտատուրայի հակառակորդ և «դեմոկրատիայի» պաշտպան։ 1920 թվին Հալլեյում անկախների համագումարում կոմմունիստների հաղթանակից հետո մնաց անկախների աջ թևի հետ, բայց 1922 թվին շայդեմանականների հետ անկախների միացումի միջոցին հրաժարվեց իր գաղափարակիցներին հետևելուց, կազմակերպելով սեփական ֆրակցիա։ Տիպիկ «ցենտրիստ», վոր մշտապես տատանվում է կոմմունիստների և սոցիալ-դեմոկրատների միջև։

**24. Արտուր Կրիսպին** — գերմանական անկախ ս.-դ. կուսակցության ղեկավարներից մեկը, մոտ կանգնած նրա աջ թևին։ 1920 թվի ամառը Դիտմանի հետ Մոսկվա գնաց Կոմինտերնի 2-րդ կոնգրեսին՝ միացման մասին բանակցելու համար, բայց Հալլեյի պարտայտագում, վոր քվեարկում եր այդ միությունը, Կոմինտերնի դեմ դուրս յեկավ և մնաց կուսակցության փոքրամասնության հետ, վոր հրաժարվեց ամեն տեսակի միությունից։ 1922 թվին անկախների կուսակցության մնացորդի հետ մտավ շայդեմանյան կուսակցության մեջ։

**25. Ավգուստ Բեբել** — (*1840—1913 թ.*) — գերմանական բանվորների ղեկավար, գերմանական սոցիալ-դեմոկրատ կուսակցության հիմնադիրներից մեկը, պրուսական զինվորի զավակ, բանվոր խառատ։ 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբի միջազգային բանվորական շարժման ամենախոշոր գործիչներից մեկը։ Գերմանական պարլամենտի պատգամավոր։ Առաջնակարգ հռետոր։ Աննկուն պայքար մղեց կուսակցությունը դեպի ոպորտյունիզմի ու համաձայնողականության ուղին տանող ամեն տեսակի փորձերի դեմ։ Սոցիալիզմի մասին գրած բազմաթիվ մարքսիստական աշխատությունների հեղինակ։

**26. Էնգելսի նամակը Բեբելին**, գրված 1875 թվին մարտի 18—28, նվիրված Գոթայի ծրագրի նախագծի քննադատության, վերաբերում է պետականության հարցին, թե ինչպես պրոլետարիատը պետական իշխանությունը պիտի ոգտագործի իր դասակարգային թշնամիներին ճնշելու, և թե ինչպես նրան պիտի հետևի պետության անհետացումը։ Այդ նամակն առաջին անգամ հրատարակել է ինքը Բեբելը 1911 թվին իր մեմուարների յերկրորդ հատորում, վորոնց վերնագիրն է «Իմ կյանքից»։ Այս մասին ավելի մանրամասն տես «Собр. Сочин.» 14-րդ հատոր, 2-րդ մաս, Ն. Լենինի հոդվածը՝ «Պետություն և հեղափոխություն», եջ 318 և հետևյալները։

**27. Պետական յերրորդ Դումային մասնակցելու հարցի** մասին բոլշևիկների միջև նկատելի տարաձայնություններ կային։ Ֆրակցիայի մի կարևոր մասը պնդում եր Դումային բոյկոտ անելու վրա։



Լենինը վճռական կերպով պնդում եր մասնակցել ընտրություններին։ Այս հարցի առիթով հավաքված համակուսակցական կոնֆերենցիան լենինցիների և մենշևիկների ձայներով վորոշեց մասնակցել Դումային։ Բոլշևիկների մի փոքր խմբակ Ա. Բոգդանովի, Լունաչարսկու, Ստանիսլավ Վոլսկու, Գ. Ալեքսինսկու և ուրիշների գլխավորությամբ շարունակում եր պնդել բոյկոտի տակտիկայի վրա՝ առաջարկելով մասամբ Դումայի ս.-դ. ֆրակցիային ուլտիմատում ներկայացնել («ուլտիմատիստներ»), մասամբ էլ ս.-դ. ֆրակցիային Պետական Դումայից հետ կանչել («ոտզովիստներ»)։ Ավելի ուշ «բոգդանովցիները» կազմակերպեցին ինքնուրույն մի ֆրակցիա, արտասահմանում հրատարակելով սեփական «Вперед» որգանը («վպերյոդովցիներ»), վոր բացասական վերաբերում ունեին ս.-դ.-ների Պետական Դումայում մասնակցելուն, և հնարավորության սահմաններում չընդհատելով ընդհատակյա աշխատանքները, ոգտագործում եր ընդհանրապես «լեգալ հնարավորությունները» (համագումարներին, կլուբներին և այլն մասնակցություն)։

«Վպերյոդ» խմբակը վորոշ հաջողություն ունենալով եմիգրանտական շրջանում՝ ազդեցություն չունեցավ Ռուսաստանում և հետզհետե քայքայվեց։

**28. «Ձախերի գիրքի** մասին (Բուխարինի, Ոսինսկու և ուրիշների խմբակը) Բրեստի հաշտության առթիվ՝ տես 15-րդ հատոր, 617 և հետևյալ եջերը, Ն. Ովսյաննիկովի «Կ. Կ. Ռ. Կ. Կ. և Բրեստի հաշտությունը» 15-րդ հատոր, 617-րդ եջ, նաև նույն հատորի 123-րդ եջի ծանոթությունը։

**29. Որենսխորհրդակցական** (**Բուլիգինյան**) **Պետական Դումայի հավաքումը** հայտարարվեց 1905 թ. փետրվարի 18-ին, ոգոստոսի 6 ին տեղի ունեցավ ընտրական որենքի հրատարակումը, վոր արդյունաբերական պրոլետարիատին զրկում եր ընտրություններին մասնակցելուց։ Բոլշևիկներն ընդունեցին բոյկոտի տակտիկ և պատրաստվեցին զինական ապստամբության։ Լիբերալ խմբակները համամիտ եյին ընտրություններին մասնակցելուն. մենշևիկները տատանվում եյին։ Հոկտեմբերյան ընդհանուր գործադուլը սրբեց-տարավ Բուլիգինյան Դուման, խլելով ցարից 1905 թվի հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, վոր վերաբերում եր գործարանային պրոլետարիատի ներկայացուցիչների մասնակցությամբ **որենսդիր Դումա** հրավիրելուն։

**30. Առաջին Պետական Դումայի բոյկոտը**, հոկտեմբերյան գործադուլի հետևանքով Բուլիգինյան Դումայի հաջող տապալման տպավորության տակ, առաջ տարվեց ամբողջ ս.-դ. կուսակցության, լեհական և լատիշական ս.-դ.-ի և սոցիալիստ-հեղափոխականների կողմից։ Բոլշևիկները բոյկոտը գործադրում եյին ընտրությունների առա-

ջին ստադիայում, անմիջական ագիտացիա մղելով ընտրողների մեջ։ Մենշևիկները, ընդհակառակը, մասնակցում էին ընտրական պայքարի առաջին ստադիայում, ագիտացիա էին անում Դումայի ընտրությունները կազմակերպչական նպատակներով օգտագործելու համար և բոյկոտը անց էին կացնում ընտրողների թեկնածուներից յերկրորդ և հետևյալ ստադիաներում։ Ռ. Ս.-Դ. Բ. Կ. ստոկհոլմյան համագումարը դատապարտեց բոյկոտի տակտիկը։ Կովկասյան ս.-դ. դեպուտատներին և պատահաբար Պետական Դումա անցած հատ-հատ բանվորներին օգտագործելու ուշացած փորձը քիչ եր՝ կատարված սխալն ուղղելու համար։ Ն. Լենինը և ապա, վորոշ տատանումներից հետո, բոլշևիկյան ֆրակցիան յերկրորդ և հետևյալ Պետական Դումաների ընտրությունների ժամանակ հրաժարվեցին բոյկոտի տակտիկից։

**31. Կ. Ռադեկ**—«Լեհաստանի և Լիտվայի ս.-դ.» անդամ։ Աշխատել է Ավստրիական Լեհաստանում և Գալիցիայում, ապա անցել Գերմանիա, ուր Ռ. Լյուքսեմբուրգի և բրեմենյան «Arbeiter Politik»-ի շուրջը համախմբված յերիտասարդ ս.-դ.-ների հետ կանգնել և ռադիկալներին հարած գերմանական ս.-դ. կուսակցության ձախ թևի վրա, վորի հետևանքով և արտաքսվել է Գերմանիայից։ Անցնելով Շվեյցարիա, պատերազմի հենց սկզբից Ռադեկը դուրս յեկավ «հայրենիքի պաշտպանության» և քաղաքացիական հաշտության դեմ։ 1917 թվին Ժամանակավոր Կառավարության կողմից արգելվեց Ռուսաստան մտնել և բնակություն հաստատեց Ստոկհոլմում, ուր միջնորդ հանդիսացավ ռուս բոլշևիկյան Կ. Կ.-ի և արտասահմանյան այն սոցիալիստների միջև, վորոնք հավատարիմ էին մնացել Ինտերնացիոնալին։ 1917 թվի հոկտեմբերին գնաց Պետերբուրգ և մտավ Ռ. Կ. Կ. կազմի մեջ։ 1919 թվի հունվարին Բեռլինում մասնակցեց «սպարտակյանների» համագումարին և Շայդեմանի կառավարության կողմից բանտարկվեց։

ժուրնալիստ է։

**32 Ն. Ի. Բուխարին**—ծնվել է 1889 թվին, աշակերտական նստարանից մասնակցել է ս.-դ. խմբակներում, 1906 թվին մասնակցություն է ունեցել Ռ. Ս.-Դ. Բ. Կ. (բոլշև.) Մոսկվայի Կոմիտեի աշխատանքին։ Առաջին անգամ ձերբակալվեց 1909 թվին, շուտով նորից ձերբակալվեց և աքսորվեց Արխանգելսկի նահանգը, վորտեղից խույս փախավ։ Ձերբակալվելով 1911 թվին՝ դատվեց Մոսկվայի Դատաստանական Պալատում ու գրավականով արձակվելուն պես անցավ արտասահման։ Աշխատում եր Լենինի հետ Կրակովում՝ գործակցելով արտասահմանյան «Սոցիալ-Դեմոկրատ» և Պետերբուրգյան «Պրավդա» թերթերին։ Արտասահմանում, զանազան յերկրներում հաճախ յենթարկվել է կալանքի։ Պատերազմից քիչ առաջ Ավստրիայում ձերբակալվեց և բանտարկվեց։ Փոխադրվելով Ստոկհոլմ՝ աշխատակցում եր Ժընևում



հրատարակվող լենինյան «Կոմմունիստին» և մասնակցում եր շվեդական ձախ ս.-դ. աշխատանքներին։ Հեգլունդի և ուրիշների գործով մեղադրվելով՝ ամիս ու կես բանտ նստեց և դատապարտվեց Շվեդիայի սահմաններից ընդմիշտ վտարվելուն։ Դեպի Ամերիկա գնալիս Անգլիայում նորից ձերբակալվեց։ Ամերիկայում յենթարկվեց նորից արտաքսումի. փետրվարյան հեղափոխությունը նրան դուրս բերեց ապրելու համար համապատասխան յերկիր վորոնելու դժվարությունից, ճանապարհ բաց անելով նրան դեպի հայրենիք։ Բայց այստեղ ևս, Յապոնիայի վրայով վերադարձին, Բուխարինը բանտարկության յենթարկվեց Չելյաբինսկում մենշևիկյան իշխանության կողմից «զինվորների մեջ միջազգային ագիտացիա անելու համար»։ 1917 թվի ապրիլին վերադառնալով Մոսկվա՝ Բուխարինը մտավ Մոսկվայի Կոմիտեի, Մոսկվայի Շրջանային Բյուրոյի և «Սոցիալ-Դեմոկրատի» խմբագրության մեջ։ Ռ. Ս.-Դ. Բ. Կ. 6-րդ համագումարում 1917 թվի հուլիսին ընտրվեց Կ. Կ.-ի մեջ, ուր և մնում է անփոփոխ։ Բրեստի հաշտության առիթով յեղած դիսկուսիայի և նրան հետևող վեճերի ժամանակ, Կ. Ռադեկի և Օսինսկու հետ, Բուխարինը կանգնած եր «ձախերի» գլուխը, հրատարակելով յերկշաբաթյա «Կոմմունիստը»։ Գերմանիայի նոյեմբերյան հեղափոխությունից հետո հրապարակով ընդունեց իր սխալը։ «Պրավդայի» խմբագիրը՝ նրա Մոսկվա փոխադրվելու ժամանակից, 1918 թվից սկսած, Կոմինտերնի բոլոր Գործկոմների անդամ, հրապարակախոս և էկոնոմիստ։

**33. Ռենոդել**—ֆրանսիական սոցիալիստական կուսակցության ղեկավարներից մեկը, նրա Կ. Կ.-ի անդամ, 1914 թվի հուլիսին սպանված Ժորեսից հետո «Յումանիտե» կենտրոնական օրգանի խմբագիր. պատերազմի ընթացքում սոցիալ-պատրիոտ և սոցիալ-պացիֆիստ եր։ Ներկայումս գտնվում է ֆրանսիական սոցիալիստական կուսակցության աջ թևում, վոր անջատված է կոմմունիստներից Տուրի կոնգրեսում 1920 թվին։

**34. Բրիտանական Բանվորական Կուսակցություն**—(Labour Party) լաբուրիստներ (ազատ թարգմանություն. ռուս. լեզվով «տրուդովիկ»—աշխատավորական)։ Բանվորական կուսակցությունը կազմված է տրեդ յունիոնների, անկախ բանվորական կուսակցության (I. L. P.) և այլ բանվորական կազմակերպությունների միացումից, նպատակ ունենալով գլխավորապես պարլամենտական պայքար և ընտրական կամպանիա վարել։ Բանվորական կուսակցությունը հանդիսանում է 2-րդ Ինտերնացիոնալի ղեկավար կազմակերպություններից մեկը։

**35. Ա. Ֆ. Կերենսկին** ծնվել է 1881 թվին։ Քաղաքական ասպարեզ դուրս յեկավ առաջին անգամ 1905 թվին, ստորագրելով մի հավաքական բողոքագիր ռադիկալ ինտելլիգենցիայի այն ներկայացուցիչների

բանտարկության առիթով, վորոնք աշխատում եյին կոմս Վիտտեյի և իշխան Սվյատոպոլկ-Միրսկու հետ բանակցելու ճանապարհով հունվար 9-ի գնդակահարությունների առաջն առնել։ Լինելով յերդվյալ հավատարմատար՝ հայտնի դարձավ քաղաքական պրոցեսներում իր պաշտպանի հանգամանքով։ Կերենսկին 4-րդ Պետական Դումայի անդամ ընտրվեց Սարատովի նահանգի Վոլսկ քաղաքի կողմից. լինելով սոցիալիստ-հեղափոխական, Դումայում հարեց աշխատավորականների ֆրակցիային։ Պատերազմի սկզբից սոցիալ-պատրիոտ։ Հեղափոխությունից հետո Պետերբուրգի Խորհրդի նախագահի օգնական, հակառակ Խորհրդի՝ բուրժուական կառավարություն մինիստրներ չտալու վորոշումին, մինիստրական կազմի մեջ մտավ արդարադատության մինիստրի պաշտոնով։ Գուչկովի հրաժարականից հետո ընդունից նրա զինվորական և ծովային մինիստրությունների պորտֆելը։ Դաշնակից իմպերիալիստական պետությունների պահանջով դրդեց ռուսական հոգնած և պատերազմ չցանկացող բանակին՝ հարձակման անցնել հունիսի 18-ին, վոր և վերջացավ կատարյալ անհաջողությամբ։ Պետերբուրգի պրոլետարիատի և կայազորի հուլիսյան շարժումից հետո, վոր ճնշվեց զինվորական ուժով, դառնում է պրեմյեր, մեկը մյուսին կալեյդոսկոպի արագությամբ փոխարինող մի շարք կոալիցիոն մինիստրությունների ղեկավար։ Գերագույն հրամանատար գեներալ Կորնիլովի Պետերբուրգի վրա անհաջող արշավանք կատարելուց հետո—վոր իր գործողությունն սկսել եր Կերենսկու համաձայնությամբ և վոր նրա ձեռքով էլ մատնվեց—դառնում է գերագույն հրամանատար, բայց առանց վորևէ իրական իշխանության։ Իբրև մինիստր և ապա իբրև պրեմյեր ու գերագույն հրամանատար վարում է համաձայնողական քաղաքականություն, սայթաքելով աստիճանաբար հեղափոխությունից դեպի հակահեղափոխություն և դեպի բոնապարտիզմ։ Հոկտեմբերյան հեղափոխությունն առանց վորևէ դժվարության քշեց-տարավ Կերենսկու կոալիցիոն կառավարությունը։ Նրա փորձը՝ նորից հենվել ֆրոնտին և արշավել Պետերբուրգի վրա՝ վերջացավ պարտությամբ Գատչինայում և իր փախուստով հենց իր սեփական գնդերից։ Հոկտեմբերից հետո Կերենսկին անցավ արտասահման, ուր շարունակում է մաշել բուրժուական պետությունների ներկայացուցիչների շեմքերը։ Վ. Ի. Լենինի արտահայտությամբ՝ «դատարկախոս Կերենսկին» («Болтунишка-Керенский»)։

**36. Ծովակալ Կոլչակը**—իմպերիալիստական պատերազմի սկզբում ղեկավարում եր ականանավատորմիղը Բալտիկ ծովում, իսկ ավելի ուշ—Սևծովյան նավատորմիղը։ 1917 թվի վերջում Յապոնիայի վրայով անցավ Սիբիր, ուր Դիրեկտորիայի կողմից նշանակվեց զինվորական մինիստր։ Հենվելով հին սպայության և բուրժուա-կադետական



շերտերի վրա՝ 1918 թվի նոյեմբերին Կոլչակը ցրեց Հիմնադիր Ժողովի անդամների Կոմիտեն և Դիրեկտորիան, նրա անդամներին բանտարկեց, քշեց արտասահման և իրեն հայտարարեց «Ռուսաստանի գերագույն ղեկավար», վորպիսի կոչումով ճանաչվեց Անտանտայի կողմից։ 1919-ի գարնանը նրան հաջողվեց վերակազմել կարմիր զինվորների կողմից ջախջախված արևելյան ֆրոնտը և մարտի 6-ին անցնել հարձակման։ Նրա հաջողությունները շարունակվում են մինչև մայիսի 9 ը, յերբ Կարմիր Բանակը միքանի համառ կռիվներից հետո Բուգուլմուն վերցրեց, աստիճանաբար Կոլչակին քշելով դեպի արևելք՝ գրաված շրջանների գյուղացիների ակտիվ գործակցությամբ, վորոնք մի շարք ապստամբություններ կազմակերպեցին։ Հունիսի 10-ին վերագրավվեց Ուֆան, հունիսի 13-ին—Բիրսկը, հուլիսի 13-ին—Զլատոուստը, հուլիսի 14-ին—Յեկատերինբուրգը, հուլիսի 24-ին—Չելյաբինսկը, նոյեմբերի 14-ին—Օմսկը, դեկտեմբերի 13-ին—Նովո-Նիկոլայևսկը, դեկտեմբերի 24-ին—Տայգա կայարանը, դեկտեմբերի 27-ին Իրկուտսկում բանվորներն ապստամբեցին և պարտիզանների օժանդակությամբ հինգօրյա կռվից հետո տիրեցին քաղաքին։ Նույն օրն իսկ ապստամբները Նիժնեուդինսկում բռնեցին Կոլչակին և նրա մինիստր Պեպելյայեվին։ 1920 թվի փետրվարի 7-ին Կոլչակը գնդակահարվեց Իրկուտսկի հեղկոմի վորոշման համաձայն։ 1920 թվականի ընթացքում Արևելյան Սիբիրը Արևմտյանի պես մաքրվեց սպիտակ գվարդիական զինվորներից, և վորպեսզի Խորհրդային Ռուսաստանը յապոնական օկկուպացիոն զորքերի հետ անմիջական շփումից խուսափի, կազմակերպվեց բուֆեր-պետություն—Ծայր Արևելյան Հանրապետությունը, վորի քառաստիճան ֆորմուլայի հիմունքով ընտրված հիմնադիր ժողովում ճնշող մեծամասնությամբ անցան բոլշևիկներ։ Մերձծովյան շրջանի յապոնական օկկուպացիան շարունակվեց մինչև 1922 թվի հոկտեմբերը, յերբ Կարմիր Բանակը մտավ Վլադիվոստոկ, և Ծայր-Արևելյան Հանրապետությունը կամովին միացավ Ռ. Խ. Ֆ. Ս. Հ., մտցնելով իր սահմաններում խորհուրդների իշխանությունը։

**37. Դենիկին**—ցարական հին բանակի գեներալներից մեկը, Կորնիլովի մահից հետո 1918 թվին Յեկատերինոդարի կռվի ընթացքում գրավեց «Ռուսաստանի հարավի զինական ուժերի գլխավոր հրամանատարի» կոչումը և շարունակեց իր նախորդների կողմից սկսված քաղաքացիական պատերազմը։ 1919 թվի գարնանը, յերբ Խորհրդային իշխանությունը հաստատվեց Ուկրայնայում և Դոնը Կրասնովից մաքրվեց, Դենիկինին հաջողվեց նորից Դոնը գրավել և մի շարք կռիվներից հետո սկսեց տարածվել դեպի հյուսիս։ Խորհրդային զինվորներին Ցարիցինից քշելուց և Կուբանի Թիկունքն ապահովելուց հետո՝ Դենիկինը իրեն յենթակա ճանաչեց Կոլչակին, վորպես «գերագույն ղեկավարին»,

ստանալով նրանից նրա տեղակալի կոչումը և հանդիսավոր կերպով արշավանք հայտարարեց դեպի Մոսկվա: 1919 թվի աշնանը նրան հաջողվեց գրավել ամբողջ Ուկրայնան: Հունիսի 24-ին Կարմիր Բանակը կորցրեց Խարկովը: Օգոստոսի 27-ին Դենիկինը պատռեց ճակատը և գեներալ Մամոնտովի հեծյալ կորպուսը շպրտեց խորհրդային զորքերի թիկունքը: Սեպտեմբերի 21-ին Կուրսկն ընկավ: Հոկտեմբերի 13-ին Դենիկինը վերցրեց Օրյոլը և սպառնում էր Կարմիր Բանակին մատակարարող Տուլայի զինագործարանին: Դենիկինի առաջացումը դեպի Մոսկվա զուգադիպում էր գեներալ Յուդենիչի դեպի Պետերբուրգ արշավին, վորի հետևանքով Խորհրդային Ռուսաստանը յենթարկվում էր ամենամեծ վտանգի: Սակայն ժողովրդական մասսաները կարողացան հակահարված տալ: Դենիկինյան թիկունքում սկսվեց քայքայում, ուկրայնական գյուղացիների մեջ առաջացավ պարտիզանական շարժում: Կարմիր բանակը հարձակման անցավ և հոկտեմբերի 19-ին վերագրավեց Օրյոլը: Դենիկինը սկսեց հետ գլորվել դեպի հարավ ամենամեծ արագությամբ: Դեկտեմբերի 11-ին գրավվեց Խարկովը, դեկտեմբերի 16-ին—Կիևը, հունվարի 8-ին—Ռոստովը, փետրվարի 6-ին—Օդեսսան, մարտի 25-ին—Նովոռոսսիյսկը: Դենիկինյան բանակի մնացորդները քշվելով Հյուսիսային Կովկասից՝ մասամբ կարողացան փոխադրվել Ղրիմ, մասամբ անձնատուր յեղան: Դենիկինը ստիպված յեղավ 1920 թվի մարտի 26-ին զիջել գլխավոր հրամանատարի կոչումը գեներալ Վրանգելին և անցնել Անգլիա:

**38. Գերմանիայի անկախ ս.-դ. կուսակցությունը** անջատվեց պաշտոնական կուսակցությունից 1915 թվին, տարբերվելով նրանից պատերազմի հանդեպ ունեցած իր վերաբերմունքով և պացիֆիստական տեսակետ պաշտպանելով: Նրա ամենաականավոր անդամներն էյին՝ Հաազե, Լեդեբուր, Կաուցկի, Հիլֆերդինգ և այլն: Ավելի ուշ՝ անկախների կուսակցությունից Կ. Լիբկնեխտի և Ռ. Լյուքսեմբուրգի գլխավորությամբ բաժանվեց «Սպարտակ» խմբակը, վոր սկզբում անկախների հետ ֆեդերատիվ կապ էր պահպանում և վոր 1919 թվին կազմակերպեց գերմանական կոմմունիստական կուսակցությունը: 1918 և 1919 թվերին պաշտպանելով գերմանական կոմմունիստներին շայդեմանականների դեմ՝ անկախները համաձայնեցին վերջիններիս հետ միասին մտնել ժողովրդական կոմիսարների Խորհուրդը՝ Գերմանիայի ժամանակավոր կառավարության մեջ, վոր առաջ յեկավ Նոյեմբերյան հեղափոխության հետևանքով: Սակայն Համագերմանական Խորհուրդների համագումարում 1918 թվի դեկտեմբերի 28-ին փոքրամասնություն կազմելու պատճառով ստիպված էյին դուրս գալ կառավարությունից: Խոսքով ընդունելով պրոլետարիատի դիկտատուրան և «խորհրդային սիստեմը», անկախներն աշխատում էյին վերջինս նույնացնել



հիմնադիր ժողովի իշխանության հետ, առաջ քշելով յուր բանաձևը «յերկպալատյան սիստեմ»: 3-րդ Ինտերնացիոնալի հիմնվելուց հետո՝ անկախ ս.-դ. կուսակցությունը ֆրանսիական սոցիալիստական կուսակցության, անգլիական անկախ բանվորական կուսակցության, ավստրիական սոցիալիստական կուսակցության, ռուս մենշևիկների և ուրիշների հետ միասին դուրս յեկավ 2-րդ Ինտերնացիոնալից և բանակցում էր Կոմինտերնի մեջ մտնելու համար: Հալլեյի պարտայտագը 1920 թվին ձայների յերկու յերրորդով ընդունեց «21 պայմանները»-ը Կոմինտերնի մեջ մտնելու համար և անկախների կուսակցության մեծամասնությունը, գլխավորապես նրա բանվորական վարի շերտերը միացան գերմանական կոմմունիստներին (Միացյալ Գերմանական Կոմմունիստական Կուսակցություն): Մնացած մասը շարունակեց միառժամանակ իր կղզիացած գոյությունը, հարելով $2\frac{1}{2}$ Վիեննայի Ինտերնացիոնալին և աստիճանաբար թեքվելով դեպի աջ, մինչև վոր 1922 թվին միացավ շայդեմանական ս.-դ. հետ: Լեդեբուրի աննշան խմբակը, վոր հրաժարվեց միանալ շայդեմանականների հետ, կազմում է անկախների կուսակցության վերջին բեկորը: Գերմանական անկախ ս.-դ. կուսակցությունը տիպիկ «ցենտրիստ» կազմակերպություն է, վոր կախված է հեղափոխության ալիքի բարձրությունից և վոր տատանվում է կոմմունիզմի և ս.-դ. աջ թևի միջև:

**39. Ակնարկ** 1918 **թվին գրած «Ձախ յերեխայության յեվ մանր բուրժուականության մասին»** վերնագրով հոդվածի (տես «Собр. соч.», 15-րդ հատոր), նվիրված «ձախ կոմմունիստների» դեմ պայքարելուն, վորոնք չէյին ընդունում Բրեստի դաշնագրի ստորագրության անհրաժեշտությունը և վորոնք կուսակցության ներսում կազմակերպեցին ֆրակցիա, իրենց կողմից մշակված հատուկ տակտիկական պլատֆորմով:

**40. Ռ. Կ. Կ. 9-րդ համագումարը** կայացավ 1920 թվի մարտի 29—ապրիլի 4: Ներկա էյին 716 պատգամավորներ, նրանցից 554-ը վճռական ձայնով, վորոնք ներկայացնում էյին 611.978 կուսակցական անդամ: Ներկայացված չէյին Կովկասը, Թուրքեստանը, Տոբոլսկի նահանգը և կռվող բանակներից մեկը: Համագումարն ուներ հետևյալ օրակարգը. Կ. Կ.-ի հաշվետվությունը, տնտեսական շինարարության հերթական խնդիրներ, պրոֆեսիոնալ շարժում, կազմակերպչական խնդիրներ, Կոմմունիստական Ինտերնացիոնալի խնդիրները, կոոպերացիա, միլիցիական սիստեմին անցումը և այլն: Վիճաբանությունների ամենագլխավոր նյութն էր աշխատանքի միլիտարիզացիան, ինչպես նաև պրոֆեսիոնալ և տնտեսական հարցերը («միանձնություն» և «հավաքականություն»—«единоличие» и «коллегиальность»):

**41. «Դեմոկրատական ցենտրալիզմի խմբակ»** 1920 և 1921 թվերին կոչվում էր իրեն կուսակցության մեջ մի հոսանք Օսինսկու և Սապրոնովի

գլխավորությամբ, վոր պնդում եր ներկուսակցական կյանքի միքանի
ուեֆորմների, տեղական կազմակերպությունների լայն ինքնուրույնու-
թյան, կուսակցության անդամների ինքնագործունեյության և նահան-
գական գործկոմների անկախության վրա և բողոքում եր «նշանակովի
ության» և այլնի դեմ։ Խումբը դուրս յեկավ իր թեզիսներով Ռ. կ. կ.
9-րդ («միանձնություն» և «հավաքականություն») և 10-րդ համա-
գումարներում (դիսկուսիա պրոֆմիութենների, կուսշինարարու-
թյան մասին)։ Վերջին համագումարում Ոսինսկին հայտարարեց խըմ-
բակի ինքնացրման մասին՝ պատճառաբանելով, թե խմբակի տեսա-
կետներից շատերը կուսակցության կողմից ընդունված են և կյանքում
գործադրված։ Ռ. կ. կ. 10-րդ համագումարն ամեն տեսակի ֆրակ-
ցիոնական խմբավորումներն արգելեց («Դեմոկրատական ցենտրալիզմ»
և «Բանվորական ոպպոզիցիա»—տես 18-րդ հատոր)։

**42. Ռոման Մալինովսկի**— 4-րդ Պետական Դումայի անդամ
Մոսկվայի նահանգի բանվորական շրջանի կողմից, միաժամանակ Մոս-
կվայի պահնորդական բաժնի գաղտնի աշխատակից։ Շնորհիվ իր հոե.
տորական տաղանդի մյուս պատգամավորներից առաջ անցավ։ 1913
թվի ամառը վախենալով պահնորդական բաժնի հետ ունեցած իր կա-
պի հայտնագործումից, Դումայից դուրս յեկավ և ծածկվեց արտասահ-
մանում։ 1918 թվին Մալինովսկին յեկավ Պետերբուրգ, հանձնվեց
արդարադատության ձեռքը և գնդակահարվեց բարձրագույն տրիբու-
նալի վճռով։

**43. Կուսակցության անդամների թիվը**, կուսակցական համագու-
մարների արձանագրությունների համաձայն, փոփոխվել և հետևյալ
կարգով։

1907 թվի Ռ. Ս.-Դ. Բ. կ. Լոնդոնի համագումարը (բալշևիկներ,
մենշևիկներ, Բունդ, լեհացիներ և լատիշներ)—մոտ 150 հազար։
Համառուսական ապրիլյան (1917 թ.) կոնֆերենցիա... 180 հազար.
Ռ. Ս.-Դ. կ. (բալշևիկների) 6-րդ համագումար 1917 թվի հուլի-
սին... 177 հազար։
Ռ. կ. կ. 8-րդ համագումար 1919 թվի ապրիլին... 314 հազար։
Ռ. կ. կ. 9-րդ համագումար 1920 թվի ապրիլին... 612 հազար։
Ռ. կ. կ 10-րդ համագումար 1921 թվի մարտին... 703 հազար։
Ռ. կ. կ. 11-րդ համագումար 1922 թվի մարտին... 532 հազար։
Ռ. կ. կ. 12-րդ համագումար 1923 թվի—345034, 1924 թ.—
328.520, 1925 թ.—401,481։

Վերջին թիվը մոտավոր է և բավական մեծացրած, վորովհետև
համագումարի համար յեղած ընտրությունների միջոցին կուսակցու-
թյան «զտումը» և նրա շարքերից կողմնակի, վոչ-կուսակցական տար-
րերի վտարումն ամեն տեղ դեռ չէր վերջացած։ Նույն զտումով և բա-



ցատրվում կուսակցության անդամների թվի նվազումը նախորդ հա-
մագումարի համեմատությամբ։

**44. Գեներալ Յուդենիչ**—իմպերիալիստական պատերազմի ժա-
մանակ Կովկասյան ճակատի գլխավոր հրամանատարը, «Երզրումի
ջարդի», հռչակված թյուրք ազգաբնակության վրա կատարած ջար-
դերով և բռնություններով։ 1919 թվին անցել եր «Հյուսիս-Արևմտյան
կառավարության» բանակի գլուխ, վոր կազմակերպել եյին անգլիա-
ցիները Եստոնիայում. յերկու անգամ փորձեց ճեղքել, մտնել Պետեր-
բուրգ։ Նրա առաջին արշավանքը—սկսված մայիսի 16-ին Ֆիննական
ծոցի հարավային ափի վրա գտնվող Կրասնայա Գորկա ամրության
կայազորի դավաճանությամբ, վոր հանձնվեց հին կադրի սպայությունից բաղկացած
գրավումով, վոր հանձնվեց հին կադրի սպայությունից բաղկացած
հրամկազմի կողմից—լիկվիդացիայի յենթարկվեց ոգոստոսի 5-ին Եա-
տոնիայի սահմանակից Յամբուրգ քաղաքի խորհրդային զորքերի գրա-
վումով։ Պետերբուրգի վրա հարձակվելու յերկրորդ փորձը նախաձեռ-
նվեց Խորհրդային Հանրապետության համար արտակարգ կերպով
վտանգավոր մոմենտին (1919 թվի հոկտեմբերի 12—15), յերբ Դենի-
կինը գրավել եր Որյոլը և սպառնում եր Տուլային։ Հանկարծակի մի
թռիչքով Յուդենիչին հաջողվեց առաջ խաղալ մինչև Պուլկովո, միքա-
նի վերստ հեռու Պետերբուրգից, վոր պատրաստվում եր կռվելու փո-
ղոցներում և բարրիկադներ եր կանգնեցնում։ Յուդենիչը գլխովին ջարդ-
վեց զինվորական այն մասերից, վորոնք գտնվում եյին յերկրի ներ-
սում, առանց թուլացնելու Դենիկինի դեմ կռվող հարավային ճակատը,
այնինչ Յուդենիչն իր գործողությունները նրա հետ համաձայնեցնելով՝
հենց այդ թուլացումն եր նպատակ դրել։ 1920 թվի փետրվարի 2-ին
Եստոնիան հաշտու-
Յուդենիչի համար վորպես հենարան ծառայող Եստոնիան հաշտու-
թյան դաշինք ստորագրեց Խորհրդային Ռուսաստանի հետ։

**45. Կազմբյուրո յեվ Քաղբյուրո**—Ռ. կ. կ. կ. կ. կազմակերպչա-
կան Բյուրո և Քաղաքական բյուրո—Ռ. կ. կ. կենտրոնական Կոմի-
տեյի օրգաններն են, վորոնք տանում են՝ առաջինը—կազմակերպչա-
կան խնդիրներ և յերկրորդը—կուսակցական աշխատանքների քաղա-
քական ղեկավարությունը։ Կազմբյուրոյի վորոշումները կարող են Քաղ-
բյուրոյի կողմից վերաքննվել այն դեպքում, յեթե նրանք քաղաքակա-
նության են վերաբերում և վերջինիս կոմպետենցիան են։ շոշափում։
կուսակցության ղեկավարության յենթակա ամենօրյա աշխատանք-
ները տանում է քարտուղարությունը, վոր ներկայումս կազմված է
Կ. կ. հինգ անդամներից։ Քարտուղարներից մեկը պարտադիր կերպով
մտնում է Կազմբյուրոյի և Քաղբյուրոյի մեջ կապի համար։ Կազմբյու-
րոյի և Քաղբյուրոյի անդամներն ընտրվում են կ. կ. անդամների միջից,
նրա պլենումի կողմից, վոր վճռում է կուսակցական կյանքի ամենա-
կարևոր հարցերը։ Ռ. կ. կ. կ. կ. հիշյալ կազմակերպությունը ձևա-
վորվեց աստիճանաբար 1918—1919 թ. ընթացքում։

**46. Սամուիլ Գոմպերս**—ամերիկյան Աշխատանքի Ֆեդերացիայի
նախագահ. 40 տարուց վեր պահում եր այդ պաշտոնը։ Սոցիալ-իմպե-
րիալիստ և դասակարգային շահերի համերաշխության կողմնակից, ամե-
րիկյան բանվորական շարժման մեջ «կապիտալիստների դասակարգի
բանվոր լեյտենանտը», պրոֆեսիայով—սիգար շինող։ Նրա նախաձեռ-
նությամբ է հիմնված Աշխատանքի Քաղաքացիական Ֆեդերացիան, մի
կազմակերպություն, վոր քարոզում է դասակարգային ներդաշնակու-
թյուն և պայքարում գործադուլների դեմ։ Ֆեդերացիայի նախագահն է
միլիարդեր Մորգանը, փոխ-նախագահ՝ Գոմպերսը՝ մինչև իր մահը,
վոր տեղի ունեցավ 1924 թվին։

**47. Ժուո**—ֆրանսիական Աշխատանքի Կոնֆեդերացիայի նախա-
գահ, անարխո-սինդիկալիստ։ Մինչև պատերազմ—«ամենածախ» հակա-
պարլամենտարիստներից և հակա-պատրիոտներից մեկը, ընդհանուր
գործադուլի կողմնակից։ Պատերազմի ընթացքում և նրանից հետո—
սոցիալ-պատրիոտ և սոցիալական հաշտության կողմնակից։ Ներկայումս
հանդիսանում է 2-րդ Ինտերնացիոնալի պրոֆեսիոնալ միությունների
դեղին Ամստերդամյան համամիության ղեկավարներից մեկը։

**48. Հենդերսոն**—տրեդ-յունիոնիստ, Բրիտանական բանվորական
կուսակցության գործիչ և պարլամենտի անդամ։ Աջ սոցիալ-համաձայ-
նողական և սոցիալ-շովինիստ։ 2 րդ Ինտերնացիոնալի գործիչ։

**49. Մերրհեյմ**—ֆրանսիական պրոֆեսիոնալ շարժման գործիչ,
մետալլիստների սինդիկատի քարտուղար, պատերազմի տարիներում
աջ ցիմմերվալդյան։ Ներկայումս—պրոֆեսիոնալ միությունների
Ամստերդամյան համամիության դեղին սինդիկալիստների ղեկավար,
Ժուոյի համախոհ։

**50. Աշխարհի արդյունագործական բանվորներ**— (I. W. W.)
հեղափոխական բանվորական կազմակերպություն, կազմված մի շարք
արտադրական միությունների միացումից, գործում է առավելապես
Հյուսիսային Ամերիկայի արևմտյան շտատներում։ I. W. W. նախ
առաջ յեկավ 1905 թվին Չիկագոյի հեղափոխական պրոֆեսիոնալ միու-
թյունների համագումարում և վերջնականապես վորոշվեց 1908 թվի
համագումարում, յերբ հաղթեցին քաղաքական և պարլամենտական
պայքարի հակառակորդները։ Հեղափոխական սինդիկալիզմի իդեոլո-
գիայով պճնված՝ I. W. W. ղեկավարվում է Գլխավոր Գործադիր Կոմի-
տեյով և բաղկացած է հետևյալ արտադրական միություններից—հան-
քափորներ, կառուցողներ, հողագործական բանվորներ, ծովային
փոխադրության և նավաշինարարական արդյունաբերության բան-
վորներ, յերկաթուղայիններ, ածխահատներ, տպագրիչներ, սպա-
սավորներ, ռեզինի արդյունաբերության բանվորներ, նավթա-
գործներ, կահագործներ, ձկնային արդյունաբերության բանվոր-



ներ, մետաղագործներ և մեքենագործներ։ Կանոնավոր կերպով
անդամավճար մուծողներ հաշվում են 125.000 մարդ, սեզոնային
աշխատանքների շրջանում ցույց տված թիվը կրկնապատկվում է։
I. W. W.-ի գլխավոր գործունեյությունը կայանում է նրանում, վոր
կազմակերպում է գործադուլներ առավելապես պրոլետարիատի
ամենահետամնաց ու չկազմակերպված շերտերում, կամպանիաներ է
կազմակերպում «խոսքի ազատության պաշտպանության համար»
հռետորների մասսայական յելույթների ինքնատիպ մեթոդով՝ ուշ
չդարձնելով վոստիկանական կալանքներին, և ուրիշ յելույթներ,
չհրաժարվելով վոստիկանության հետ ընդհարվելուց և ինքնապաշտ-
պանության նպատակներով մղված շատ ճակատամարտներից։ Թեև
պատերազմի տարիներում I. W. W. իբրև ապոլիտիկ կազմակերպու-
թյուն՝ նրա նկատմամբ վերաբերում չեր ցույց տալիս, սակայն մաս-
սայական գործադուլային պայքարին վերջ չեր դնում, վորի հետևանքով
յենթարկվեց ամենախիստ ճնշումների ինչպես կապիտալի, նմանապես
և կառավարական իշխանության կողմից (որենք սինդիկալիստների
դեմ, «որենք լրտեսների դեմ» և այլն)։ Ներկայումս I. W. W.-ի
կազմակերպության հազարավոր անդամները տառապում են Հյուսիս-
Ամերիկյան Հանրապետության բանտերում։

**51. Զուբատով**—Մոսկվայի պահնորդական բաժնի պետ, նախկին
հեղափոխական։ Նա, ինչպես և նրա ագենտները (բժ. Շայևիչը Օդես-
սայում, Մարիա Վիլբուշևիչը Մինսկում, Գապոնը Պետերբուրգում)
1902 – 1905 թվերի շրջանում նախաձեռնեցին վոստիկանական բանվո-
րական շարժման կազմակերպության մի փորձ։ Այս նպատակով, Զու-
բատովի միջնորդությամբ, թույլ տրվեց կազմակերպել «Մետաղային
արտադրության Բանվորների Միություն», վոր ղեկավարում եր պահ-
նորդական բաժինը իր ագենտների, այն է՝ լիբերալ պրոֆեսորների
(Օզերով, Վորմս) և խելքից հանված բանվորների օժանդակությամբ։
Միությունն աշխատում եր պաշտպանել առանձին պրոֆեսիաների
մանր տնտեսական շահեր, վարում եր գործադուլներ, 1902 թվի փե-
տըրվարի 19-ին կազմակերպեց փողոցային ցույց՝ Ալեքսանդր 2-րդի
արձանի վրա պսակ դնելով։ Այն ժամանակվա ս.-դ.-ներն ոգտագոր-
ծում եյին զուբատովյան կազմակերպությունները՝ նրանց ներսում աշ-
խատանք և ագիտացիա կատարելու համար։ «Զուբատովականությունն»
իր նախաձեռնողի համար անսպասելի հետևանքների հասցրեց. զու-
բատովյան կազմակերպությունները նպաստեցին գործադուլների զար-
գացմանը (Մինսկ, Օդեսսա, ինչպես նաև 1903 թվի հարավային գոր-
ծադուլը) և սրեցին պրոլետարիատի քաղաքական պայքարը (1905 թվի
հունվարի 9 ին Պետերբուրգում), վոր կարողացավ ոգտագործել լեգալ
վոստիկանական կազմակերպությունները, նրանց մեջ դասակարգային
բովանդակություն դնելով։

**52 և 53.** *Տես վերը, ծանոթություն 29 և 30։*

**54. Հեգլունդ** - *շվեդական սոցիալիստների ձախ թևի, այսպես կոչված յերիտասարդների ղեկավարը։ Մի ժամանակ շվեդական կոմունիստական կուսակցության անդամ, այժմ արտաքսված է կուսակցությունից իր օպպորտյունիստական թեքումների պատճառով։*

**55. Լ.-Օ. Բլանկի**—*(ծն. 1805 թ.)—ֆրանսիական հեղափոխական և սոցիալիստ։ 1830 թվի հեղափոխության ժամանակ կռվել է բարրիկադների վրա և այն օրից սկսած մասնակցել է Պարիզի բոլոր ապստամբություններին, լինելով նրանցից շատերի կազմակերպիչն ու ղեկավարը։ Իբրև խմբագիր «Ժողովրդի բարեկամների Միության» թերթի, Բլանկին դատապարտվեց մի տարի բանտարկության։ 1836 թվին նորից դատի յենթարկվեց վառոդ պատրաստելու գործով և դատապարտվեց յերկու տարվա բանտարկության։ Ներումից հետո գործոն մասնակցություն ունեցավ «Տարվա յեղանակների միության» մեջ և ապստամբության նախապատրաստության գործում, որ ճնշվեց կառավարության կողմից և որի համար 1840 թվին դատապարտվեց մահվան պատժի, որ փոխարինվեց ցմահ բանտարկությամբ։ 1848 թվի հեղափոխության շնորհիվ ազատվելով՝ Բլանկին ձեռնարկեց «Կենտրոնական Հանրապետական Միության» կազմակերպության գործին։ Յերկրորդ Հանրապետության դատարանը «Մայիսի 15-ի գործին» մասնակցելու համար նրան դատապարտեց 10 տարվա բանտարկության։ Բանտից փախչելու փորձի պատճառով՝ նա փակվեց Կորսիկա կղզու բերդում։ 1859 թվի ամնիստիայով Բլանկին ազատվեց, բայց 1861 թ. նորից դատապարտվեց 4 տարվա բանտարկության՝ գաղտնի մի ընկերության մասնակցելու պատճառով։ 1871 թվին Բլանկին ընտրվեց Կոմմունայի անդամ, բայց Տյերն շտապեց նրան բանտարկել Տորի բերդում։ Կոմմունայի փորձը՝ ձեռք բերել նրա ազատությունը ականավոր վերսալցիների հետ փոխանակելով՝ մերժվեց։ 1872 թվին յերրորդ հանրապետության զինվորական դատարանի կողմից աքսորի դատապարտվեց։ 1879 թվին նա ընտրվեց պարլամենտի անդամ, բայց կառավարությունը բեկանեց այդ ընտրությունը, միաժամանակ, սակայն, ներում շնորհեց նրան։*

*Գաղտնի դավադրություններն ու ապստամբական կազմակերպությունները—Բլանկիի գլխավոր մեթոդն էր։ Նրա կյանքն ու հեղափոխական պրակտիկան ցույց տվեցին այդ մեթոդի անհուսալիությունը, բայց և այնպես Բլանկին մնում է իբրև անկոտրուն հեղափոխականի մի օրինակ, որ չի ճանաչում համաձայնողականություն ու տատանումներ, որ անպայման նվիրված է աշխատավորների ազատագրության գործին։ Այս բանը նրան հարազատացնում է հեղափոխական մարքսիզմի նշանաբանի տակ առաջ գնացող պրոլետարական կռվին։*



**56. Մ. Ե. Վայյան**—*(ծն. 1840 թվին) Նապոլեոն 3-րդի գահընկեցությունից հետո ընտրվեց Ֆրանսիայի Ազգային Ժողովի անդամ։ Պարիզի ապստամբությունից հետո հարեց Կոմմունային և ընտրվեց նրա անդամ. վերսալցիները Վայյանին դատապարտեցին մահվան, որի հետևանքով նա ստիպված յեղավ Լոնդոն փախչել, ուր շատ մոտեցավ Մարքսին և Ենգելսին և մտավ Ինտերնացիոնալի Խորհրդի մեջ։ Վայյանը Պարիզ վերադարձավ 1884 թվի ամնիստիայից հետո և ֆրանսիական սոցիալիստական շարժման մեջ առաջնակարգ տեղ գրավեց։ Այժմ հանգուցյալ։*

**57. Ժյուլ Գեդ**—*ֆրանսիական մարքսիստների ղեկավարն ու տեսաբանը, որ մինչև պատերազմ պաշտպանում եր «օրթոդոքսալ» դիրքերը ռեվիզիոնիստների դեմ ինչպես 2-րդ Ինտերնացիոնալում, նմանապես և ֆրանսիական սոցիալիստական կուսակցության մեջ (նրա պայքարը մինիստերիալիստ Միլլերանի և Ժորեսի դեմ, որ պաշտպանում եր Միլլերանին)։ Իմպերիալիստական պատերազմի հայտարարության վայրկյանից ծայրահեղ պաշտպանողական դիրք բռնեց, քարոզելով* Union Sacrée *(Սրբազան Միություն բուրժուազիայի հետ)։ «Հայրենիքի պաշտպանության» բուրժուական նախարարությունների մեջ առանց պորտֆելի մինիստր։ Այժմ մեռած է։*

**58.** *Տես վերը՝ ծանոթություն 4։*

**59. Պ. Բ. Աքսելրոդ**—*70-ական թվերին բակունիստ, մասնակցել է նարոդնիկական շարժումներին։ Արտասահմանում Պլեխանովի հետ 1883 թվին հիմնեց «Աշխատանքի ազատագրություն» խմբակը։ «Իսկրայի» (1901 թ.) խմբագրության անդամ։ 1903 թվին կուսակցության յերկրորդ համագումարին հարեց մենշևիկներին։ Ռեակցիայի տարիներին «Բանվորական համագումարի» նախաձեռնողը, այսինքն, ս.-դ. կուսակցությունը անկուսակցական բանվորական կազմակերպությունների մեջ լուծման նախաձեռնողը, հետո լիկվիդատորության ղեկավարներից մեկը։ Մասնակցեց ցիմմերվալդյան կոնֆերենցիային, բայց հրաժարվեց հարել նրա ձախ թևին։ Սուր պայքար է վարում կոմմունիզմի դեմ։*

**60. Վերա Զասուլիչը** *յոթանասնական թվականների վերջում ատրճանակ արձակեց Պետերբուրգի գեներալ-նահանգապետ Տրեպովի վրա, յերդվյալների դատարանով արդարացավ։ Անցնելով արտասահման՝ յեղավ «Աշխատանքի ազատագրություն» խմբակի (1883 թ.) հիմնադիրների թվում։ 1896 թվին միջազգային սոցիալիստական կոնգրեսում ներկայացնում եր «Պայքարի Միությունը»։ Ռ. Ս.-Դ. Բ. Կ. (1903 թ.) 2-րդ համագումարի մասնակցող, մինչև համագումարը «Իսկրա» թերթի խմբագրության անդամ, համագումարում չընտրվեց խմբ-*

բոգրական կազմի մեջ. այս պարագան և այլ միքանի միջադեպեր,
ինչպես և կուսակցության կանոնադրության առաջին պարագրաֆի
հարցը սուր թ ավին պառակտումի։ 1903 թվից սկսած կուսակցական
կյանքում դեր չի խաղացել։ Պատերազմի տարիներում սոցիալ-պատ-
րիոտների շարքերումն էր գտնվում։

**61. Լ. Մարտով**—(Յու. Ո. Ցեդերբաում), ծնվել է 1873 թվին—
մենշևիզմի ղեկավարը։ 1900 թվի վերջում (Վ. Ի. Ուլյանով-Լենինի,
Պլեխանովի, Զասուլիչի և Պ. Աքսելրոդի հետ միասին) մտավ «Իսկրա»
թերթի խմբագրության մեջ։ Այդ թերթը վճռական դեր խաղաց սո-
ցիալ-դեմոկրատական շարժման զարգացման մեջ Ռուսաստանում։ Ռ.
Ս.-Դ. Բ. Կ. 2-րդ համագումարում, որ կայացավ 1903 թվի ամառը,
Մարտովը կազմակերպչական խնդիրներում բաժանվեց համագումարի
մեծամասնությունից («Իսկրայի» խմբագրական կազմի և կուսակցու-
թյան անդամության սահմանման վերա-
թյան անդամության առիթով)։ Կուսակցության անդամության վերա-
բերյալ պարագրաֆի խմբագրությունը անկայուն և օպորտյունիստ
տարրերին կուսակցության մեջ մուտք էր տալիս։ Տեղի ունեցող տա-
րաձայնությունների հողի վրա Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի
շարքերում առաջացան յերկու հիմնական հոսանքներ—«մեծամասնա-
կան» և «փոքրամասնական»։ Յերկրորդի ղեկավարը և ամենաականավոր
պուբլիցիստը յեղավ Մարտովը։ Պատերազմը Մարտովին գտավ մենշևիկ
ինտերնացիոնալիստների շարքերում։ Նա մասնակցեց ցիմմերվալդյան
կոնֆերենցիային (կենտրոն) և «Նովոյե Սլովոյի» խմբագիրն էր, որ
հրատարակվում էր Պարիզում։ Փետրվարյան հեղափոխությունից հետո
Մարտովը մի ամբողջ խումբ մենշևիկ-ինտերնացիոնալիստների հետ
Գերմանիայի վրայով անցավ Ռուսաստան։ Հեղափոխության առաջին
շրջանում Մարտովը կանգնած է միջազգային դիրքում և հաճախ մի
ամբողջ շարք հարցերով բաժանվում է իր կուսակցության մեծամաս-
նությունից, որ աջ սոցիալ-պաշտպանողական դիրք էր բռնել։ Խոր-
հուրդների յերկրորդ համագումարում պնդում է բոլոր սոցիալիս-
տական կուսակցությունների ներկայացուցիչներից կառավարություն
կազմելու անհրաժեշտության վրա։ Մենշևիկների և աջ էս-էրների
հետ մնում է համագումարում։ Բայց շուտով Մար-
տովը դուրս գալուց հետո մնում է համագումարում։ Բայց շուտով Մար-
տովին ամբողջովին կլանում է մենշևիկյան հեղեղը, որ հոկտեմբերյան
հեղափոխությունից հետո նրան նետում է Խորհրդային իշխանու-
թյան թշնամիների բանակը։ 1921 թվի սկզբում անցավ Բեռլին, ուր
«Սոցիալիստական Վեստնիկի» խմբագրի հանդամանքով դուրս յեկավ
մի ամբողջ շարք հոդվածներով Ռուսաստանի Խորհրդային իշխանու-
թյան դեմ և մտավ $2^1/_2$ Ինտերնացիոնալի մեջ։ Այժմ մեռած է։

**62. Պ. Բ. Ստրուվե**—ռուսական վաղեմի սոցիալ-դեմոկրատներից
մեկը. 1898 թվին կուսակցության 1 համագումարի անունից բաց թողած



Ռ. Ս.-Դ. Բ. Կ. մանիֆեստի հեղինակներից մեկը և վերջնական խմբա-
գիրը. 1896 թվին միջազգային սոցիալիստական կոնգրեսին մաս-
նակից «լեգալ մարքսիզմի» ներկայացուցիչ (Ստրուվե, Տուգան-Բարա-
նովսկի, Բուլգակով, Բերդյայև, Իզգոյև և ուրիշներ)—այն հոսանքի,
որ պաշտպանում էր մարքսիզմը նարոդնիկների դեմ լեգալ «հաստ»
ամսագրերում («Նովոյե Սլովո», «Ժիզն») և որ շուտով զբաղվեց
Մարքսի «քննադատական ստուգումով» (ռեվիզիայով)։ Լեգալ մարք-
սիզմն օգտագործեց մարքսիստական զոգման՝ նարոդնիկական ուտո-
պիաների բուրժուական հաղթահարման նպատակներով։ Ստրուվեն, ինչ-
պես նաև նրա մյուս զինակիցները, շուտով կտրվեց մարքսիզմից
և «Ազատագրություն» միության գլուխ անցավ, որ լիբերալ զեմցի-
ների կազմակերպություն էր 1904—1905 թվերին, խմբագրելով Շտուտ-
գարտում «Օսվոբոժդենիյե» ամսաթերթը։ Այդ միությունը 1905 թվին
միջուկ դարձավ «Ժողովրդական ազատության կուսակցություն»-ը
կազմելու համար (Սահմանադիր դեմոկրատական), որի Կ. Կ.-ի անդամ
յեղավ Ստրուվեն։ 1909 թվին մասնակցում է աղմուկ հանած «Վեխի»
ժողովածուին, որ հայտարարում էր ռուս ինտելիգենցիայի հրաժա-
րումը հեղափոխությունից և ծառայությունը կապիտալիզմին։ Ավելի
ուշ Ստրուվեն ժառանգեց Գոլցեից Մոսկվայի Կ.-Դ. «Ռուսսկայա Միսլ»
ժուռնալի խմբագրությունը, որի հրատարակությունը հետագայում
Ստրուվեն շարունակում է Սոֆիայում միապետական ուղղությամբ։

**63. Յերկրորդ Պետական Դումայի** ընտրությունների ժամանակ
բոլշևիկները՝ հաղթահարելու համար ընտրողական օրենքի առան-
ձնահատկությունները, յեռաստիճան և քառաստիճան ընտրությունները,
կուրիալ սիստեմը՝ կադետների դեմ կռվելու նպատակով կազմեցին
«ձախ բլոկ», պաշտպանելով էս-էրներին, աշխատավորականներին,
ձախ գյուղացիներին և այլ հեղափոխական տարրերին, բայց ընտրու-
թյունների յերկրորդ և հաջորդ աստիճաններից սկսած հրաժարվեցին
ամեն տեսակի համաձայնությունից բանվորական շրջաններում։ Մեն-
շևիկները պատճառաբանելով սև-հարյուրյակային վտանգը՝ բլոկ
կազմեցին կադետների հետ։ «Ձախ բլոկը» կրում էր ժամանակավոր
ընտրական համաձայնությունների տեխնիկական բնույթ, ոչ մի
պարտավորություն չդնելով Դումայի ս.-դ. ֆրակցիայի վրա, և սա
իբրև հակադրություն մենշևիկների, որոնք պնդում եյին կադետ-
ների հետ յերկարատև գործակցության վրա Պետական Դումայում,
կառավարությունը կգրավելու նպատակով։

**64. Չերնով Վ.**—նարոդնիկ, Միխայլովսկու աշակերտ, հետո ս.-ռ.
կուսակցության լիդեր։ Իմպերիալիստական պատերազմի ժամանակ
կանգնած էր ցիմմերվալդյան պլատֆորմի վրա։ Յերբ պայթեց ռու-
սական յերկրորդ հեղափոխությունը, մտավ Կերենսկու կոալիցիոն

կառավարության մեջ, ուր սկսեց տատանվել ինտերնացիոնալիզմի և պաշտպանողականության միջև: Հոկտեմբերյան հեղափոխությունը նետեց նրան դեպի աջ: Հիմնադիր ժողովի նախագահի պաշտոնում անհաջող դեբյուտ ունենալուց հետո, Չերնովը շուտով հայտնվում է հակահեղափոխականների բանակում, ապստամբված չեխո-սլովակների պաշտպանության տակ: Այդ ժամանակից սկսած շարունակում է կռվել Խորհրդային իշխանության դեմ:

**65. Միջազգային սոցիալիստական կոնֆերենցիան Ցիմմեր-վալդում** 1915 թվի սեպտեմբերի 9—12 հրավիրվեց պաշտոնապես իտալական սոցիալիստական կուսակցության անունից՝ դեպի պատերազմն ունենալիք վերաբերմունքի հարցի շուրջը: Կոնֆերենցիային մասնակցում էին պաշտոնական կուսակցությունների ներկայացուցիչներ, մասամբ և ինտերնացիոնալիստական տեսակետի վրա կանգնած նրանց փոքրամասնությունների, առանձին խմբերի և հոսանքների ներկայացուցիչներ՝ հետևյալ յերկրներից. Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ռուսաստան, Լեհաստան, Բալկանյան սոցիալիստական ֆեդերացիա, Շվեդիա, Նորվեգիա, Հոլլանդիա և Շվեյցարիա: Անգլիական անկախ բանվորական կուսակցությունը կոնֆերենցիային չմասնակցեց, վորովհետև անցագիր չստացավ իր կառավարությունից: Ռուս պատվիրակության մեջ մտնում էին. Կ. Կ.-ից (բոլշևիկներ) Լենին և Զինովյև, Ռ. Կ.-ից (մենշևիկներ) Մարտինով, Ակսելրոդ և Մարտով, Ս. Ր. Կ. Կ. Կ.-ից—Չերնով և Նատանսոն, Լատիշական յերկրի Ս.-Դ.-ից—Յան Բերզին, Բունդից—Լենգնիկ, Լեհաստանի և Լիտվայի Ս.-Դ.-ից Ստ. Լապինսկի, Պ. Պ. Ս.-ից (ձախ) Վարսկի (Վարշավսկի) և Պ. Պ. Ս.-ից (աջ)—Գանկևիչ:

Կոնֆերենցիան դիմեց Յեվրոպայի պրոլետարներին մի մանիֆեստով, վորով հրավիրում էր պայքարել՝ պատերազմը դադարեցնելու և հաշտություն կնքելու՝ առանց աննեկսիաների և կոնտրիբուցիաների, ազգերի ինքնորոշման հիմունքով: Իբրև ժամանակավոր կենտրոն ընտրվեց մի կոմիսսիա հետևյալ կազմով—Մորգարի (Իտալիա), Շ. Նեն, Ռ. Գրիմմ (Շվեյցարիա) և իբրև քարտուղար Անժելիկա Բալաբանովա:

Կոնֆերենցիայի ռադիկալ մասը—«ցիմմերվալդյան ձախ»-ը Լենինի գլխավորությամբ պնդում էր ավելի պարզ ձևակերպումների վրա, կոչ էր անում վճռական կռիվ մղել սոցիալական հեղափոխության և իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու համար, դիմեց բանվորներին սեփական մանիֆեստով և ընտրեց իր կենտրոնը:

1916 թվի փետրվարի 5—8 Ցիմմերվալդին հարող խմբակների խորհրդակցությունը, վոր հրավիրված էր նրա ինտերնացիոնալիստական սոցիալիստական կոմիսսիայի կողմից Բեռնում—վորոշեց հրավիրել յերկրորդ միջազգային կոնֆերենցիա, վոր տեղի ունեցավ Կինտալում:



բել յերկրորդ միջազգային կոնֆերենցիա, վոր տեղի ունեցավ Կինտա-
լում:

**66. Հեղափոխական կոմմունիստներ** —ձախ էս-էրական մի խըմբակ, վոր անջատվեց կուսակցությունից 1918 թվի հուլիսի ապստամբության ավանտյուրիստական փորձից հետո, հրաժարվեց էս-էրական նախապաշարումներից և նարոդնիկական իդեոլոգիայից և միքիչ անց ամբողջապես մտավ Ռ. Կ. Կ.-ի մեջ:

**67. Դեկրետը հողի մասին** ընդունված Խորհուրդների 2-րդ համագումարում 1917 թվի հոկտեմբերի 26-ին, ինչպես նաև հողաշինարարության հրահանգը հաստատված 2-րդ նստաշրջանի Կ. Գ. Կ. կողմից, վերարտադրում են էս-էրական ագրարային ծրագրի և նրանց ձեռքով մշակված հողի «սոցիալիզացիայի» հիմնական դրույթները: Հողի մասին դեկրետը տպագրված է «Собр. соч.» 15-րդ հատորում, 21 եջ: Տես նաև Ն. Լենինի ճառը «հողի մասին» Խորհուրդների 2-րդ համագումարում, վոր զետեղված է նույն հատորում, 19—20 եջ:

**68. Ձախ սոցիալիստ-հեղափոխականները** 1917 թվի նոյեմբերին, կարճատև տատանումներից և «համասոցիալիստական» կոալիցիոն մինիստրություն կազմելու փորձերից հետո ընդունեցին բոլշևիկների բլոկի մեջ մտնելու առաջարկը և մտան ժողովրդական Կոմիսսարների Խորհուրդը: Շտեյնբերգն ստացավ արդարադատության ժողովրդական կոմիսսարի պորտֆելը, Կոլեգայևը՝ հողագործության, Պռոշյանը՝ փոստ-հեռագրի, Սպիրիդոնովան դարձավ Կ. Գ. Կ. գյուղացիական սեկցիայի նախագահ: Կոալիցիայի հիմք ծառայեց «հողի մասին դեկրետը», վոր Խորհուրդների 2-րդ համագումարն ընդունեց 1917 թվի հոկտեմբերի 26-ին և ճանաչեց էս-էրական հողի «սոցիալիզացիայի» ընդհանուր դրույթները: Ձախ սոցիալիստ-հեղափոխականները մնացին բանվորա-գյուղացիական կառավարության մեջ մինչև Բրեստի դաշնագրի ստորագրությունը, յերբ նրանք իբրև բողոք վերջնիս դեմ դուրս յեկան Ժ. Կ. Խ.-ից: Խորհուրդների 5-րդ համագումարի ժամանակ, 1918 թվի հունիսին, ձախ էս-էրները, կամենալով լուծել այդ «անպատիվ հաշտությունը» և Խորհրդային Ռուսաստանը քաշ տալ դեպի պատերազմ Գերմանիայի դեմ, առաջ բերին ապստամբության ավանտյուրիստական մի փորձ և բոլորովին կորցնելով իրենց ժողովրդականությունը մասսաների մեջ, փաստորեն վոչընչացրին սեփական կուսակցությունը:

**69. Խորհուրդների 2-րդ համառուսական համագումարը** բացվեց Կ. Գ. Կ.-ի առաջին կազմի նախագահության անունից մենշևիկ Դանի կողմից, պրոլետարական հեղափոխության առաջին որը, Պետերբուրգում, 1917 թվի հոկտեմբերի 25-ին, յերեկոյան 10 ժամ 40 րոպեյին, այն միջոցին, յերբ Ձմեռային պալատի շուրջը դեռ կռիվ

էր բորբոքվում։ Դանը բանալով համագումարը՝ անմիջապես նախագահությունը հանձնեց Լ. Բ. Կամենևին։ Համագումարն ընթանում էր շատ աղմկալից։ Համագումարին ներկա էին 670 պատգամավորներ, վորոնցից բոլշևիկ—390, ձախ էս-էր—179, ս.-դ. ինտերնացիոնալիստ—35, ուկրաինացի—21։ Բացի այդ մանդատ ունեյին աջ էս-էրներ, Բունդ, Պոալեյ-Ցիոն, անարխիստներ, մենշևիկներ, անկուսակցականներ։ Նախագահությունը կազմված էր բոլշևիկներից և ձախ էս-էրներից՝ Կամենևի գլխավորությամբ։ Մենշևիկներն ու աջ էս-էրները ցույցի ձևով հեռացան ժողովից, բայց նրանց պատգամավորներից շատերը չենթարկվեցին իրենց ֆրակցիայի վորոշումին և մնացին համագումարում։ Համագումարից հեռացող պատգամավորների թիվը տարբեր թվարկումներով տատանվում է 25-ից—51-ի մեջ։ Հոկտեմբերի 25-ի ժողովը, վոր շարունակվեց մինչև առավոտյան 6 ժամը, ամբողջովին զբաղվեց դեկլարատիվ հայտարարություններով և աջ թևի դեմ պայքարով։

Յերկրորդ և վերջին նիստը, հոկտեմբերի 26-ին, վոր յերեկոյան ժամը 9-ից շարունակվեց մինչև առավոտյան 7 ժամը, հաստատվեց հաշտության և հողի կարևորագույն դեկրետներին։

Ն. Լենինը խոսեց յերկու հարցերի մասին էլ։ Այսպես կոչված «հաշտության մասին դեկրետն» ընդունվեց ամբողջ համագումարի կողմից միաձայն (բացակայությամբ արդեն հեռացած մենշևիկների և աջ էս-էրների)։ Հողի մասին դեկրետն ընդունվեց բոլորի կողմից մեկի դեմ, 8-ի ձեռնպահությամբ և նույն հեռացածների բացակայությամբ։ Իշխանության և կառավարության կազմակերպման հարցն առաջ բերեց մեծ վիճաբանություններ։ Ս.-Դ. և ինտերնացիոնալիստները պահանջում էին, վոր իշխանությունը տրվի «դեմոկրատիայի», այսինքն սոցիալիստների կոալիցիայի ձեռքը։ Ձախ էս-էրների կողմից Կարելինը մի շփոթ պատճառաբանություն տվեց, վորի մեջ հայտարարեց, թե իրենք անհրաժեշտ են գտնում պաշտպանել բոլշևիկներին, «վորովհետև նրանց տապալումը կլինի հեղափոխության տապալում», բայց և այնպես իրենք քվեարկում են «Խորհուրդների իշխանության կազմության դեմ»։

Համագումարն ընտրեց նոր Կ. Գ. Կ. 102 անդամների կազմով, մինչև վերջ համագումարում մնացող և ընտրություններին մասնակցել ցանկացող ֆրակցիաների պատգամավորների թվի համեմատական չափով և իրավունք տվեց խոշոր զինվորական մասերին իրենց լրացուցիչ ներկայացուցիչներին ուղարկել։ Ընտրվածների թվում էին 62 բոլշևիկ, 20 ձախ էս-էր, ս.-դ. ինտերնացիոնալիստներ և այլ փոքր ֆրակցիաներ։ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի մեջ մտան միայն բոլշևիկներ, հետևյալ կազմով. նախագահ՝ Վ. Ի. Ուլյանով



(Լենին), ներքին գործերի ժողովրդական կոմիսար—Ա. Ի. Ռիկով, հողագործության—Վ. Պ. Միլյուտին, աշխատանքի—Ա. Գ. Շլյապնիկով, զինվորական և ծովային գործերի հետևյալ կազմով կոմիտե՝ Վ. Ա. Ովսեյենկո՝ (Անտոնով), Ն. Վ. Կրիլենկո և Դիբենկո, ժողովրդական լուսավորության—Ա. Վ. Լունաչարսկի, ֆինանսների—Ի. Ի. Սկվորցով, արտաքին գործերի—Լ. Դ. Տրոցկի, արդարադատության—Գ. Ի. Ոպպոկով (Լոմով), պարենավորման գործերի—Ի. Ա. Տեոդորովիչ, փոստ և հեռագրի—Ն. Պ. Ավիլով (Գլեբով), ազգությունների գործերի խորհրդի նախագահ—Ի. Վ. Ջուգաշվիլի (Ստալին)։ Յերկաթուղու գործերի ժողովրդական կոմիսարի պաշտոնը ժամանակավորապես մնաց չբռնված։

Խորհուրդների 2-րդ համագումարի արձանագրությունները ներկայացնում են հասարակ, խիստ կրճատված քարտուղարական գրություն։ Ճառերի ստենոգրամմա չի կատարվել, վորովհետև ստենոգրաֆիստուհիները, առաջին նստաշրջանի Կ. Գ. Կ. նախագահության կողմից հրավիրված լինելով, մենշևիկների և էս-էրների հետ միասին թողեցին համագումարը։

**70. Հունգարական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը** կազմվեց 1919 թվի մարտի 21-ին։ Կոմս Կարոլիի մանր-բուրժուական կառավարությունը յերկրում հեղինակություն չվայելելով, չհամարձակվեց պատասխանատվություն վերցնել իր վրա՝ ընդունելու համար Անտանտայի կողմից Հունգարիայի վրա դրված չափազանց ծանր զինվորական պահանջները և հեղափոխական մասսաների ճնշման տակ ստիպված յեղավ քաշվել իշխանությունից, հանձնելով այն սոցիալ-դեմոկրատներին։ Հունգարական սոցիալ-դեմոկրատ կուսակցությունը պատերազմի ժամանակ կորցրած լինելով պրոլետարիատի վստահությունը, վոր 1918 թվի նոյեմբերյան հեղափոխությունից հետո պաշտպանում էր կոմմունիստական լոզունգները, նույն մասսաների ճնշման տակ առաջարկեց այդ միջոցին բանտում գտնվող հունգարական կոմմունիստական կուսակցության ղեկավարներին՝ իշխանությունը բաժանել իր հետ։ Սոցիալ-դեմոկրատների և կոմմունիստների ստորագրության համաձայն յերկու կուսակցությունները վերածվում էին մեկի՝ կոմմունիստական ծրագիրն ընդունելու հիմունքով։ Կազմվեց Հունգարական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ, վորի կազմի մեջ մտան ինչպես կոմմունիստներ (Բելա-Կուն—նախագահ, Տիբոր Սամուելի—զինժողկոմ, Վարգա—հողժողկոմ և այլն), նմանապես և ս.-դ., իսկ տեղերում կազմվեցին Խորհուրդներ։ Հունգարական բուրժուազիան ռուսական հեղափոխության փորձը նկատի առնելով, չհամարձակվեց բաց կռիվ սկսել՝ սպասելով ավելի բարենպաստ մոմենտի։

Անտանտան պատասխանեց բլոկադայով և պատերազմով Կարմիր

Հունգարիայի վրա նետել տալով Ռումինիայի և Չեխո-Սլովակիայի սպիտակ զորքերը։ Հունգարական կոմունիստները կազմակերպեցին թվով մինչև 280.000-ի հասնող Կարմիր Բանակ, օգտագործելով իմպերիալիստական բանակի հին մասերը, կազմակերպելով նոր բանվորական զորամասեր։ Չեխերի և ռումինների առաջին հարձակումը 600 կիլոմետր տարածությամբ ճակատով Բուդապեշտի բանվորների յեռանդուն պաշտպանությամբ հետ մղվեց և Կարմիր Բանակը մտավ Սլովակիայի սահմանները։ Այդ ժամանակ յերկրի ներսում սկսվեց տատանում։ Կոմունիստները լուծվելով պրոլետարական հեղափոխության և նրա սաբոտաժի միջև անընդհատ յերերվող սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ, բավական փոքրաթիվ եյին և անփորձ, վորպեսզի շաղախ կազմող ցեմենտը դառնային։ Բլոկադայի հետևանքով առաջ յեկած ապրանքների և սննդի մթերքների սակավությունը, խանութպանների և գյուղական կուլակների խորհրդային դրամի դեմ բոյկոտը, իշխանության փորձված գործակալների պակասը առաջ եյին բերում դժգոհություն գյուղացիների մեջ, վորոնք հող չեյին ստացել ագրարային հարցի լուծման նկատմամբ կոմունիստների ցույց տված տատանումների հետևանքով, ինչպես և առաջ եյին բերում անվստահություն քաղաքային պրոլետարիատի հետամնաց շերտերում, վորոնք քայքայվում եյին սոցիալ-դեմոկրատների հակա-հեղափոխական ագիտացիայի ազդեցության տակ։ Դեպի Ռուսաստան մի խորհրդային կորիդոր բաց անելու հույսը խորտակվում է աջափնյա Ուկրայնայում ատաման Գրիգորյեի ապստամբության պատճառով, վորի բանակը պիտի մասնակցեր դեպի Հունգարիա անցք բանալու գործողությանը։ Ռումինների նոր հարձակման շրջանում, վորոնց օգնում եյին չեխերը, հունգարական Կարմիր Բանակը պարտություն կրեց և ռումինները պատռելով ճակատը գտնվեցին Բուդապեշտից 30 վերստ հեռավորության վրա։ Անտանտան իր վրա ընդունեց ռումինների արշավանքը կանգնեցնելու, բլոկադան վերացնելու, Հունգարիայի պարեն հայթհայթելու և վորևե «բանվորական» կառավարության օժանդակություն ցույց տալու պարտականությունը՝ պայմանով վոր կառավարության մեջ կոմունիստներ չլինեն։ 1919 թվի օգոստոսի 1-ին Բուդապեշտում սոցիալ-դեմոկրատների պահանջով վորոշվեց կազմել սոցիալ-դեմոկրատական պարլամենտական կառավարություն առանց կոմունիստների, հակառակ վերջինների յեռանդուն բողոքներին և հակա-ագիտացիային։ Անտանտան, սակայն, չկատարեց իր խոստումները, ռումինական բանակը գրավեց Բուդապեշտը, ցրվեց սոցիալ-դեմոկրատական կառավարությունը և հաստատեց ծովակալ Հորտիի արյունոտ դիկտատուրան։ Կոմունիստների մի մասը կոտորվեց ճակատի կռիվներում։ Տիբոր Սամուելի, Կարմիր բանակի կազմակերպողը ինքնասպանություն գործեց, մյուսները փախան



Ավստրիա, ուր յենթարկվեցին կալանքի. մի մասն էլ բանտարկվեց և մահվան պատժից ազատվեց միայն Խորհրդային Ռուսաստանի միջամտության շնորհիվ, վորին հաջողվեց փոխանակել նրանց հունգարացի ազնվական սպաների հետ, վորոնք իմպերիալիստական պատերազմի ընթացքում գերի եյին ընկել։ Տասնյակ-հազարավոր կոմունիստներ և պրոլետարներ յենթարկվեցին գնդակահարման։ Հունգարիայում թագավորեց սպիտակ տեռորը և զինվորական դիկտատուրան, բայց պրոլետարիատի հեղափոխական յեռանդը չթուլացավ, և նա ուժ է հավաքում նոր կռիվների համար։

**71. Սիլվիա Պանկխերստ**—«ձախ» անգլիական կոմունիստուհի, պարլամենտի բոյկոտի, անգլիական կոմունիստների բրիտանական բանվորական կուսակցության մեջ չմտնելու և այլ նման հայացքների կողմնակից։ Մասնակցել է Կոմինտերնի 2-րդ կոնգրեսին։ Առաջներում յեղել է Անգլիայի սուֆրաժիստական շարժման առաջին յեռանդուն գործիչներից մեկը։

**72. Անգլիայի կոմունիստական կուսակցության՝ բանվորական կուսակցության մեջ մտնելու հարցը** քննվեց Կոմունիստական Ինտերնացիոնալի 2-րդ կոնգրեսում 1920 թվին և վճռվեց դրական իմաստով. Լենինը դուրս յեկավ մի մեծ ճառով այդ խնդրի առիթով, վոր զետեղված է «Собр. соч.» 17-րդ հատորում, 301 և հաջորդ եջերում։

**73. Ռամսեյ Մակդոնալդ**—անգլիական անկախ բանվորական կուսակցության ղեկավար, պատգամավոր, պատերազմի ժամանակ լիբերալների հետ մտավ պարլամենտական բլոկի մեջ, պրոֆմիությունների ամստերդամական միության պետերից և ներշնչողներից մեկը։

**74. Ֆիլիպպ Սնոուդեն**—անգլիական անկախ բանվորական կուսակցության ղեկավարներից մեկը, հարած նրա աջ թևին, համայնքների պալատի անդամ։

**75. Լլոյդ-Ջորջ**—Մեծ Բրիտանիայի նախկին պրեմյեր-մինիստր, լիբերալ կուսակցության անդամ։ Մինչև պատերազմը յեռանդով անց եր կացնում դեմոկրատիկ բարենորոգումներ, զրկելով լորդերի պալատն անսպայման վետոյի իրավունքից (ստորին պալատի ընդունած օրենքները մերժելու իրավունք), ընդարձակում եր ընտրական իրավունքը, փորձում եր Իռլանդիայի համար լայն Հոմրուլ (ինքնավարություն) անցկացնել, կանանց ընտրական իրավունքին համաձայնություն տվեց, խոստացավ օրենսդրական ճանապարհով ուժեղացնել տրեդ-յունիոնների իրավունքները։ Պատերազմի շրջանում կոնսերվատորների հետ բլոկ կազմած անցկացրեց կառավարության դիկտատուրան՝ վոչնչացնելով բանվորական դասակարգի նվաճումները և անգլիական սահմանադրության հիմնական սկզբունքները, անցկացրեց պարտադիր զինվորական ծառայություն, հրով ու սրով խաղա-

ղացրեց Իռլանդիան, անգլիական գանձարանի միջոցներով յերեք տարվա ընթացքում ղեկավարեց ռուս սպիտակ-գվարդիականների կռիվը Խորհրդային իշխանության դեմ։

76. **Ասկվիթ**—լիդեր անգլիական լիբերալների պարլամենտական ֆրակցիայի, վորոնք չեն հարել Լլոյդ-Ջորջի ղեկավարության տակ գտնվող կոնսերվատորների հետ կոալիցիային։

77. **Լորդ Չերչիլլ**—պահպանողական մինիստր Լլոյդ-Ջորջի կոալիցիոն կաբինետում, Խորհրդային Ռուսաստանի ամենակատաղի թշնամին։

78. Տպագրված չկան Հիմնադիր Ժողովի կազմը բնորոշող ամբողջական պաշտոնական տվյալներ։ Համեմատաբար լրիվ (բայց ամենևին վոչ անաչառ) թվեր կարելի յե գտնել աջ էս-եր Ն. Վ. Սվյատիցկու հոդվածում «Год русской революции» ժողովածուի մեջ (հրատ. «Земля и Воля», Մոսկվա, 1918 թ.)։ Նրա հաշվով ամեն գույնի էսերներն ստացել են տրված ձայների 58 տոկոսը և անց են կացրել 338 դեպուտատ, վորոնցից 239 պատկանում եյին աջերին, 69—ուկրայնականներին, և 39—ձախերին։ Մենշևիկներն ստացել են ձայների 2 տոկոսը (առանց Անդրկովկասի) և ունեցել են 1 տեղ։ Ժողովրդական սոցիալիստները—1 տոկոս և 2 դեպուտատի մանդատ։ Կադետները—5 տոկոս և 14 դեպուտատ։ Բոլշևիկները—25 տոկոս և 156 դեպուտատի տեղ։ Ձայների մի փոքր թիվ բաժան-բաժան յեղավ միքանի ազգայնական խմբերի, կոոպերատորների, հողային սեփականատերերի միության և այլ աջ կազմակերպությունների ու պլեխանովյան «Յեդինստվո» միության մեջ։ Յեթե Հիմնադիր ժողովի 601 անդամ ունեցող կազմից—վոր ընտրված են Սվյատիցկու հետազոտության յենթարկած շրջաններից—հանենք 69 ուկրայնական էս-երներին, վորոնք ամբողջ քվեարկության ժամանակ ձեռնպահ մնացին՝ չկամենալով ձայների միջոցով կապել իրանց Համառուսական Հիմնադիր ժողովին, և 14 կադետներին, վորոնք ժողովին չներկայացան, ապա հունվարի 5-ի ժողովում հակա-հեղափոխական և բուրժուա-դեմոկրատական հողի վրա կանգնած 323 ձայների դեմ մնում եյին Խորհուրդների համար պայքարող բոլշևիկների և ձախ էս-երների 195 ձայները (կամ համապատասխան տոկոսներով՝ 61 տոկոսը բուրժուական ձայներ և 39 տոկոս Խորհուրդների կողմնակիցներ)։ Հիմնադիր ժողովի ընտրությունների վերլուծությունը տես Ն. Լենինի «Հ. Ժ.-ի ընտրությունները և պրոլետարիատի դիկտատուրան» հոդվածը՝ զետեղված «Собр. соч.» 16 հատ.)։

79. **Ժամանակավոր կառավարությունը** և հատկապես զինվորական հրամանատարությունը ամբողջ բուրժուական «հասարակական կարծիքի» հետ համերաշխ՝ ամառվա վերջը և աշնան սկիզբը բոլոր միջոցները գործ եյին դնում, վորպեսզի ջախջախեն հեղափոխությունը և ամրացնեն դիկտատուրան։ Հակառակ Պետերբուրգի Խորհրդի Կ. Գ. Կ.-ի հետ մարտի 2-ին ունեցած պայմանագրին՝ միքանի անգամ փորձեր կատարվեցին դուրս բերել Պետերբուրգից հեղափոխական զորքերը։



Օգոստոսի 26-ին գլխավոր հրամանատար Կորնիլովը, Կերենսկու հետ ունեցած նախնական համաձայնությամբ—ինչպես ավելի ուշ մերկացրեց բուրժուական մամուլը—ճակատից Պետերբուրգի վրա շարժեց հակահեղափոխականապես տրամադրված կազակային զորամասերը և այսպես կոչված վայրի դիվիզիան։ Յենթադրվում եր դիկտատուրա հայտարարել հանձին Կերենսկու, Կորնիլովի և այլն, զինվորական մինիստր Բ. Սավինկովի, հյուսիսային ճակատի կոմիսար Ֆիլոնենկոյի, բայց վերջին մոմենտին համաձայնությունը խախտվեց, ինչ-ինչ աղբյուրների համաձայն, անձնավորությունների շուրջ վեճ ծագելու պատճառով։ Կերենսկին պատռեց համաձայնությունը և դուրս յեկավ Կորնիլովի դեմ։ Բուրժուազիան և ամբողջ բուրժուական մամուլը Կորնիլովի կողմն եյին։ Հեղափոխության պաշտպանության գլուխ եյին անցել Պետերբուրգի և Մոսկվայի Խորհուրդները։ Պետերբուրգի մոտ քաղաքացիական ճակատ դուրս յեկան հեղափոխական զորքերը և բանվորներից կազմակերպված կարմիր գվարդիական զորամասերը։ Պետերբուրգի զինվորական գործարանների բանվորներն ուժեղացրին զենքի պատրաստությունը և շատ զինվեցին։ Մոսկվայի մենշևիկ-էս-երական Խորհուրդը ստիպված յեղավ խուզարկություններ կատարել միքանի հակահեղափոխական կազմակերպությունների մոտ, վորոշեց Կարմիր Գվարդիա կազմակերպել, բուրժուական մամուլը յենթարկեց նախնական գրաքննության և թույլ տվեց բոլշևիկների մուտքը զորանոցները, վորի դեմ առաջ յեռանդուն կերպով կռվում եր։ Կորնիլովյան օրերում բոլշևիկյան կազմակերպությունները, հատկապես զինվորականները Պետերբուրգում և Մոսկվայում, վճռական դեր խաղացին։ Վտանգը միաժամանակ սպառնում եր հարավից, ուր Դոնի շրջանը բռնած ատաման Կալեդինը սպառնում եր Հյուսիսը կտրել մթերքներով առատ շրջաններից։

Կորնիլովի կողմից առաջ քշված զորամասերը դեռ Պետերբուրգ չհասած՝ խորհրդային ագիտացիայի ազդեցության շնորհիվ քայքայվեցին և հրաժարվեցին կռվել։ Միքանի գեներալներ Ժամանակավոր Կառավարության կողմից յենթարկվեցին բանտարկության pro forma։ Կորնիլովն իր վրա հսկողություն կատարող կազակների հարյուրակի հետ միասին փախավ դեպի Դոն։

80. **Կապպյան հեղաշրջումը Գերմանիայում** 1919 թվին ս.-դ. զինվորական մինիստր Նոսկեյի կողմից բանվորական ապստամբությունների սիստեմատիկ ճնշումների հետևանքն յեղավ. նա իր բա-

նակը կազմակերպել էր հին սպաների ու յունկերների կողմից, վորի հետևանքով զինվորական մասերը փաստորեն գտնվեցին հակահեղափոխության և նրա ղեկավար գեներալ Լյուդենդորֆի տրամադրության տակ, վոր Վիլհելմի ամենամոտ գործակիցն էր իմպերիալիստական պատերազմի ժամանակ։ 1920 թվի մարտի 12-ին Բեռլինից վոչ հեռու Դեբերիցում տեղավորված զինվորական բանակատեղում սկսվեց հակահեղափոխական շարժում գեներալ Երհարդտի բրիգադայի գլխավորությամբ։ Կառավարության բանակցությունները ապստամբողների հետ վոչ մի հետևանքի չհասցրին։ Բեռլինում գտնվող զորքերի ռեակցիոն հրամանատարները հրաժարվեցին պաշտպանել կառավարությունը՝ պատճառաբանելով զինվորների անհուսալիությունը։ Շայդեմանականներից և բուրժուա-դեմոկրատներից կազմված կոալիցիոն կառավարությունը ավտոմոբիլներով փախավ Դրեզդեն, թողնելով մայրաքաղաքը բախտի քմահաճույքին։ Մարտի 13-ին գեներալ Լյուտվիցի և Երհարդտի զորքերը վոչ մի դիմադրության չհանդիպելով մտան Բեռլին։ Կառավարական զորքերը յեղբայրացան ապստամբների հետ։ Կառավարությունն հայտարարվեց տապալված, նրա տեղ կազմվեց «աշխատանքի կառավարություն» Լյուդենդորֆի արբանյակ դոկտոր Կապպի գլխավորությամբ։ Միաժամանակ գավառներում առաջ յեկան հեղաշրջումի փորձեր, վորոնք տեղ-տեղ հաջողություն ունեցան։ Խոշոր բուրժուազիան վողջունեց Կապպին։ Պրոլետարիատը պատասխանեց ընդհանուր գործադուլով՝ կանգնեցնելով մինչև իսկ հեռագիրը, պոստը և յերկաթուղին։ Կառավարական հիմնարկությունների պաշտոնյաները միացան գործադուլին։ Մանր բուրժուազիայի դեմոկրատիկ շերտերը դուրս յեկան պետական հեղաշրջման դեմ։ Խոշոր արդյունաբերական կենտրոններում պրոլետարիատը շտապ զենքի պաշար հավաքեց և պատրաստվեց կռվի։ Հակա-հեղափոխությունը թույլ դուրս յեկավ և Կապպը ստիպված յեղավ հեռանալ՝ իշխանությունը վերադարձնելով «օրինական» կառավարությանը։ Գավառական արդյունագործական կենտրոններում և հատկապես Ռուրի քարածխային ավազանում բանվորները կոմմունիստների ղեկավարությամբ շարունակում էին կռիվը, պահանջելով ապստամբ զորքերի ցրում, հակա-հեղափոխական սպաների դատի հանձնում և բանվորական միլիցիայի կազմակերպում։ Նոսկեն պատասխանեց զինվորական դրությամբ, մասսայական գնդակահարություններով և զինվորա-դաշտային դատարաններով, կապպյան զինվորներին օգտագործելով պրոլետարիատի շարժումները ճնշելու համար։ Հակահեղափոխական ապստամբության մասնակիցները մնացին անպատիժ։ Գերմանիայում ռեակցիան ուժեղացավ։

**81. Դրեյֆուսի գործը** առաջ յեկավ 1894 թվին և տևեց միքանի տարի։ Ֆրանսիական գլխավոր շտաբի սպա Դրեյֆուսը, հրեա, դատապարտվեց պետական դավաճանության և լրտեսության համար։ Հակասեմիտները Դրեյֆուսի գործն օգտագործեցին իրենց պրոպագանդն ուժեղացնելու համար։ Նացիոնալիստներն ու մոնարխիստները տարածեցին իրենց ագիտացիան և պետական հեղաշրջում էին պատրաստում։ Բայց շուտով շատերի համար ակներև դարձավ Դրեյֆուսի անմեղությունը, վոր դատապարտվել էր կեղծ, գլխավոր շտաբում հերյուրված դոկումենտների հիման վրա։ Ռադիկալները և սոցիալիստական շրջանակներն ագիտացիա բարձրացրին Դրեյֆուսի գործը վերաքննելու ոգտին։ Այդ գործին հատկապես ջերմ մասնակցություն ցույց տվին Զոլան, Ժորեսը և Կլեմանսոն։ Ռեակցիան բոլոր միջոցներով ընդդիմացավ, բայց ընկճվեց։ Դրեյֆուսի գործի պատճառով առաջ յեկած մի շարք պրոցեսներից հետո Դրեյֆուսը ներվեց նախագահի կողմից, իսկ ավելի ուշ դատարանը վերականգնեց նրա անմեղությունը։



**82. Հուլիս 3—5 1917 թիվ.** — 1917 թվի հունիսի կեսից սկսած մասսաների դժգոհությունն աճում էր ժամանակավոր կառավարության քաղաքականության դեմ։ Հունիսի 18-ի ցույցի ժամանակ մասսաները դուրս յեկան «կորչեն 10 կապիտալիստ-մինիստրները», «ամբողջ իշխանությունը Խորհուրդներին» լոզունգներով։ Հունիսի 19-ին Կերենսկու նախաձեռնած ճակատի հարձակման անհաջողությունը և դաշնակիցների հաճույքի համար կրած զոհերն ավելի ևս հեղափոխականացրին մասսաներին։ 40 տարեկանից վեր պահեստի զինվորները պահանջում էին անհապաղ զորացրում։ Արդարադատության մինիստր Պերեվերզևը կոնֆլիկտը սաստկացրեց՝ փորձելով զինական ուժի միջոցով դուրս քշել անարխիստներին և միքանի պրոֆեսիոնալ միությունների բանվորների կողմից գրաված Դուրնովոյի ամառանոցից։ Պետերբուրգի գնդերը հուզվեցին, յերբ իմացան, վոր կառավարությունը մտադիր է՝ հակառակ Պետերբուրգի Խորհրդի Գ. Կ.-ի հետ ունեցած փետրվարի 27-ի պայմանագրի՝ դուրս բերել նրանց դեպի ճակատ՝ հեղափոխության նվիրված զորքից մայրաքաղաքն ազատելու համար։ Հակահեղափոխական գեներալներն սպառնում էին մայրաքաղաքը գերմանացիներին հանձնել։

Շարժման վերջին հարվածն յեղավ կադետ-մինիստրների հրաժարականը, վոր պատրվակ բռնեցին ուկրայնական Ռադայի սեպարատիզմը և այն համաձայնությունը, վոր նրա հետ կնքել են Տերեշչենկոն ու Ծերեթելին կառավարության անունից։ Շարժման կենտրոնը բռնեց գնդացիրային գունդը, վորի պատվիրակները հայտնվեցին Կշեսինսկու տանը, բոլշևիկների համաքաղաքային կոնֆերենցիային, վոր քննում էր քաղաքային խնդիրը, և հայտնեցին, թե գունդն իր պատվիրակներին ուղարկել է բոլոր զինվորական մասերին դուրս

գալու կոչով ու խնդրեցին բայլշևիկների օգնությունը։ Կոնֆերեն-
ցիան պատասխանից մերժումով, շարժումը վաղաժամ համարելով։
Ցերեկոյան Կշեսինսկու տանը մոտեցան յերկու գունդ՝ «Ամբողջ իշխա-
նությունը Խորհուրդներին» լոզունգը դրոշակների վրա։ Լաշևիչը և
Կուրայևը, վորոնք պատգամբում կանգնած Կ. Կ.-ի անունից հրավի-
րում եյին դեպի զորանոցները վերադառնալ, դիմավորվեցին «կորչի»
աղաղակներով։ Քիչ անց մոտեցավ բանվորական ցույցը նույն լոզունգ-
ներով ընդդեմ կոալիցիայի։ Ցերեկոյան ժամը 10-ին հավաքված Կ. Կ.
հաշվի առնելով մասսաների տրամադրությունը, խաղաղ ցույցի լոզունգ
տվեց։ Պետերբուրգի Խորհրդի բանվորական սեկցիան, Կամենևի առա-
ջարկով յերկու-յերրորդ ձայներով վորոշեց դուրս գալ՝ ղեկավարության
համար ընտրելով 15 անդամից ժամանակավոր կոմիտե։ Վաղաժամ դուրս
գալուց հրաժարվելու կոչը, վոր ցերեկն ուղարկված եր «Պրավդա»-յին
Կ. Կ.-ի կարգադրությամբ գիշերը կորվեց տեքստից՝ փոխարի-
նելու համար խաղաղ ցույցի լոզունգով։ Բայց ուշ լինելու պատճա-
ռով չաջողվեց այդ, և «Պրավդան» հուլիսի 4-ին դուրս յեկավ սպիտակ
թերթով։

Հուլիսի 4-ին շարժմանը մասնակցում եյին կես միլիոնից ավելի
բանվորներ և զինվորներ։ Ցույցերը ձգվում եյին դեպի Տավրիկյան
պալատ։ Կրոնշտադտից յեկան նավաստիներ։ Պետրոպավլովյան բերդը
ցուցարարների կողմն եր։ Քաղաքում տիրում եր օրինակելի կարգա-
պահություն։ Մասսաները չեյին գործադրում հիմնարկությունների
բռնագրավում կամ բռնություն։ Նևսկու և Սադովայայի անկյունում
ցուցարարների վրա դավադրական կրակ բացվեց, վորին բանվորներն
ու զինվորները պատասխանեցին։ Իշխանությունը վերցնելու առաջա-
դրված պահանջին՝ Խորհուրդների Կենտգործկոմը, վոր գտնվում եր
մենշևիկների և ես-երների ձեռքում, մերժումով պատասխանեց։

Շարժումը փակուղու հանդիպեց։ Զինվորների մի մասը դարձավ
զորանոցները, մյուս մասը մնաց փողոցում։ Հուլիսի 5-ին Ալեքսին-
սկու և Պանկրատովի անունով հակա-խուղարկների կողմից սարքված
փաստաթղթեր հրապարակվեցին, վորոնք նպատակ ունեյին մասսա-
ները բարոյալքել, պնդելով, թե Լենինը գործում է գերմանական գլ-
խավոր շտաբի հանձնարարությամբ։ Ցերեկոյան ճակատից հասան Կե-
րենսկու բերած հակահեղափոխական զորքերը և Պետերբուրգի շրջա-
կայքից յունկերներ, վորոնք գրավեցին քաղաքը, բաց արին կամուրջ-
ները և սկսեցին բանտարկել, խուզարկել և ջարդել։

Շարժումը ճնշվեց։ Հուլիսի 6-ին Կ. Գ. Կ. հայտարարեց դիկտա-
տուրա և վորոշեց զինաթափ անել բանվորներին, զինվորներին և նա-
վաստիներին։

**83.** Տես վերև, ծանոթություն 80։



**84.** **Տրեվես**—իտալական սոցիալիստական կուսակցության ամե-
նահին անդամներից մեկը, մինչև 1912 թիվը կուսակցության կենտ րո-
նական օրգան «Ավանտիի» խմբագիրը, իտալական ռեֆորմիզմի տե-
սաբանը, Տուրատիի կողմնակից, պացիֆիստ, Պալատի դեպուտատ։

**85.** **Մոդիլյանի**—իտալական սոցիալիստական կուսակցության
անդամ, սոցիալ-համաձայնողական, կանգնած նրա ծայրահեղ աջ թե-
վում։ Նրա բնութագիրը տես Ն. Լենինի Սերրատիի հետ ունեցած
պոլեմիկայում, «Կեղծ ճառեր ազատության մասին» հոդվածը, «Собр.
соч.» եջ 370, 17-րդ հատոր։

**86.** **Դուգոնի**—իտալական աջ ռեֆորմիստ, Տուրատիի կողմնակից։

**87.** **Բորդիգա**—իտալական սոցիալիստական կուսակցության ան-
դամ, պատերազմի տարիներում ինտերնացիոնալիստ և իտալական
կոմունիստական կուսակցության հիմնադիրներից մեկը։ Կոմինտերնի
2-րդ կոնգրեսում դուրս յեկավ վորպես կից-զեկուցանող պարլամեն-
տարիզմի հարցի առիթով, պնդելով բոյկոտի տակտիկի վրա։

**88.** **Իրավապաշտպանների ինստիտուտը** հիմնվեց 1918 թվին՝
դեկրետով լուծված բուրժուական ադվոկատուրայի փոխարեն։ Իրա-
վապաշտպանները համարվում եյին խորհրդային աշխատավորներ, ռո-
ճիկ եյին ստանում և պարտավորված եյին առանց վարձատրության
դուրս գալ դատարանում պաշտպանների և մեղադրողների դերում։ Փաս-
տացի կերպով իրավապաշտպանները վոչնչով չեյին տարբերվում հին
փաստաբաններից՝ վոչ-լեգալ կերպով հաճախորդներից «հոնորար»
ստանալով և ամեն կերպ խուսափելով հասարակական մեղադրանքի
պարտականությունները կատարելուց։ Իրավապաշտպանների կոլեգիա-
յի փոխարեն ստեղծվեց կոնսուլտանտների ինստիտուտ, վորոնք պար-
տական եյին առանց վարձատրության իրավաբանական խորհուրդներ
տալ՝ շրջանային խորհուրդներին և դատարաններին կից առանձին
կոնսուլտացիաներում։ Կոնսուլտանտներն իրենց գործունեյությամբ
հազիվ թե տարբերվում եյին իրավապաշտպաններից։ Նոր տնտեսա-
կան քաղաքականության անցնելու հետ 1922 թվին վերականգնեց
ինքնալար ադվոկատուրան խորհրդային հսկողության տակ։

# ՑԱՆԿ

Էջ


I. Ի՞նչ մաքով կարելի յե խոսել ռուսական հեղափոխության միջազգային նշանակության մասին . . . 3

II. Բոլշևիկների հաջողության հիմնական պատճառներից մեկը 5

III. Բոլշևիզմի պատմության գլխավոր էտապները . . 8

IV. Բանվորական շարժման ներսում ինչպիսի թշնամիների հետ կռվելով աճեց, ամրացավ և կոփվեց բոլշևիզմը 13

V. «Ձախ» կոմմունիզմը Գերմանիայում։ Ղեկավարներ—կուսակցություն—դասակարգ—մասսա . . . 21

VI. Արդյոք հեղափոխականները պե՞տք է աշխատեն ռեակցիոն պրոֆմիություններում մեջ . . . . . 28

VII. Մասնակցե՞լ արդյոք բուրժուական պարլամենտներին . 38

VIII. Վոչ մի կոմպրոմի՞սս . . . . . . 48

IX. «Ձախ» կոմմունիզմն Անգլիայում . . . . 59

X. Մի քանի յեզրակացություններ . . . . . 73


## ՀԱՎԵԼՎԱԾ


I Գերմանական կոմմունիստների պառակտումը . . 87

II. Կոմմունիստները և անկախականները Գերմանիայում . 89

III. Տուրատի և ընկ. Իտալիայում . . . . . 92

IV. Սխալ յեզրակացություններ ճիշտ նախադրյալներից . 93

Ծանոթություններ . . . . . . . 98



ՊԵՏ ԿԱՆ ԳՐ. ԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. им А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0174637

ՀՍԽՀ ՊԵՏՀՐԱՏ

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

Հրատարակված Լենինյան գրականության բաժն. ֆոնդի հաշվին